Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Վ. Գ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
Ա. Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ - 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Վ. Գ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Ա. Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտագործնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ

2020

ՀՏԴ 340.6(07)
ԳՄԴ 67.5g7
Ե 472

**Երաշխավորվել է տպագրության
ՀՀ արդարադատության ակադեմիայի և
ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի
գիտական խորհուրդների կողմից:**

Գիտական խմբագիր ՝
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արդարադատության
ակադեմիայի ռեկտոր **Ս. Վ. Առաքելյան**

Հեղինակներ ՝
Ենգիբարյան Վահե Գուրգենի
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր
Հովսեփյան Արգամ Նորայրի
բժշկական գիտությունների թեկնածու,
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ենգիբարյան Վ. Գ., Հովսեփյան Ա. Ն.
Ե 472 Դատական փորձաքննությունների տեսական և գործնական արդի հիմնախնդիրները/ Վ. Գ. Ենգիբարյան, Ա. Ն. Հովսեփյան.- Եր.: ՀՀ արդարադատության ակադեմիա, 2020.- 332 էջ:

Սույն ձեռնարկը նվիրված է դատական փորձագիտության տեսաիրավական հիմքերի ու գործնական հիմնախնդիրների բացահայտմանը, դրանց վերլուծմանն ու կատարելագործման հեռանկարների նախանշմանը:

Աշխատանքում ներկայացված են դատական փորձաքննությունների նշանակման և կատարման, ինչպես նաև դրանց արդյունքների դատավարական նշանակության վերաբերյալ առավել հրատապ հիմնախնդիրները, որոնց վերաբերյալ լուծումներ գտնելը կարևոր է ոչ միայն նոր իրավակարգավորումների սահմանելու, այլ նաև՝ միասնական իրավակիրառ և փորձագիտական պրակտիկա ձևավորելու համար:

Աշխատանքն օգտակար կարող է լինել իրավաբանական բուհերի և ֆակուլտետների բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողների, հետբուհական կրթության ունկնդիրների, դասախոսների, ասպիրանտների, հայցորդների, դատական փորձագիտության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող իրավաբանների, ինչպես նաև իրավակիրառ և իրավապահ համակարգի տարբեր մարմինների համար:

ՀՏԴ 340.6(07)
ԳՄԴ 67.5g7

ISBN 978-9939-9240-3-8

© Ենգիբարյան Վ. Գ., Հովսեփյան Ա. Ն., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5
ԳԼՈՒԽ 1.
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 8
§ 1.Դատական փորձաքննության հասկացությունն ու բովանդակությունը 8
§ 2. Դատական փորձաքննության նպատակն ու խնդիրները 18
§ 3. Դատական փորձաքննության առարկան և օբյեկտները (նմուշները) 24
§ 4. Դատական փորձաքննության նշանակման հիմքերն ու կարգը 33
ԳԼՈՒԽ 2.
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 64
§ 1. Փորձագետի եզրակացության կառուցվածքն ու բովանդակությունը 64
§ 2. Փորձագետի եզրակացության գնահատման չափանիշները 87
ԳԼՈՒԽ 3.
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 153
§ 1. Փորձաքննությունների դասակարգման հիմքերն ու հիմնական տեսակները 153
§ 2. Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտներն ու խնդիրները: Փորձագետին առաջադրվող տիպային_(հնարավոր) հարցերի շրջանակը՝ ըստ առանձին տեսակի փորձաքննությունների 182

§ 2.1. Ֆոտոտեխնիկական, դիմանկարային փորձաքննություններ 182
§ 2.2. Տեսաձայնագրային և աուդիոձայնագրային փորձաքննություններ 184
§ 2.3. Դատահաշվապահական և դատատնտեսագիտական փորձաքննություններ 188
§ 2.4. Սննդամթերքի և խմիչքների փորձաքննություններ..... 189
§ 2.5. Համակարգչատեխնիկական փորձաքննություններ..... 195
§ 2.6. Դատահոգեբանական փորձաքննություններ..... 204
§ 2.7. Էկոլոգիական փորձաքննություններ..... 219
§ 2.8. Ֆիզիկատեխնիկական հետազոտություններ և քիմիական փորձաքննություններ..... 228
§ 2.9. Դատաձգաբանական փորձաքննություններ..... 235
§ 2.10. Ձեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական փորձաքննություններ 243
§ 2.11. Ճարտարագիտատեխնիկական փորձաքննություններ 249
§ 2.12. Դատահետքաբանական փորձաքննություններ 253
§ 2.13. Ավտոտեխնիկական փորձաքննություններ 260
§ 2.14. Մշակութաբանական փորձաքննություններ..... 266
§ 2.15. Ապրանքագիտական փորձաքննություններ 271
§ 2.16. Հրդեհատեխնիկական փորձաքննություններ 276
§ 2.17. Պայթունատեխնիկական փորձաքննություններ 284
§ 2.18. Դատաբժշկական փորձաքննություններ..... 291
§ 2.19. Դատակենսաբանական փորձաքննություններ 311
§ 2.20. Շինարարատեխնիկական փորձաքննություն..... 313

ՆԱԽԱԲԱՆ

Արդարադատության արդյունավետ իրականացման կարևորագույն գրավականներից է ապացուցման գործընթացում հատուկ գիտելիքների ճիշտ և ռացիոնալ օգտագործումը: Հատուկ գիտելիքների կիրառման դատավարական եղանակներից ավանդականը դատական փորձաքննությունների նշանակումն ու կատարումն է: Դատական փորձաքննությունների լիարժեք ուսումնասիրման տեսանկյունից հարկ է դիտարկել դրանց էության պարադիգման կամ երկակի բնույթը: Բանն այն է, որ դատական փորձաքննությունների հիմնախնդիրներն ուսումնասիրվում են գիտական ամենատարբեր հետաքրքրությունների տեսանկյունից՝ հիմքում ունենալով գիտության որոշակի ճյուղի ուսումնասիրության առարկայի շրջանակներն ու առանձնահատկությունները:

Դատական փորձաքննությունների տարբեր հիմնախնդիրներն ուսումնասիրող գիտության ճյուղերի ու տեսությունների շարքում, թերևս, կարելի է առանձնացնել դատական փորձագիտության տեսության և իրավագիտության դերն ու հիմնարար նշանակությունը: Այս տեսանկյունից՝ փորձաքննության ինստիտուտը մի կողմից ուսումնասիրվում է որպես գիտական հետազոտության տարատեսակ, իսկ մյուս կողմից՝ որպես դատավարական ինստիտուտ: Առաջին դեպքում այն հանդիսանում է դատական փորձագիտության տեսության ուսումնասիրության առարկա, իսկ երկրորդ դեպքում՝ դատավարական իրավունքի գիտության ուսումնասիրության առարկա:

Հետևաբար դատական փորձաքննությունների տեսական ու գործնական հիմնախնդիրների ամբողջական և համալիր վերհանման, դրանց հետազոտման տեսանկյունից՝ միանգամայն արդարացված է դատական փորձաքննությունները դիտարկել և միասնական ուսումնասիրել դրա դատավարական և գիտական կողմերը: Միայն այս դեպքում հնարավոր կլինի բացահայտել փորձաքննությունների ինստիտուտի տեսահրավական և գործնական հիմնախնդիրները, որով էլ պայմանավորված է սույն աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը:

Ներկայացվող աշխատանքը բաղկացած է երկու մասից, որոնք ունեն որոշակի ներքին տրամաբանական կապ՝ ընդհանուրից՝ մասնավոր սկզբունքի պահպանմամբ: Առաջին մասում ուսումնասիրության թիրախում են ոլորտի հիմնադրույթները, որոնք առավելապես տեսահրավական և համընդհանուր նշանակություն ունեն, իսկ երկրորդ մասը որոշիչ առումով գործնական ուղղվածության է:

Անշուշտ, աշխատանքի վերը ներկայացված բաժանումը՝ տեսականի ու գործնականի, հարաբերական է, ամբողջի մեջ դրանք փոխլրացնում են միմյանց:

Հարկ է նկատել, որ աշխատանքում որոշակի հիմնախնդիրներ ներկայացված են նախադեպային իրավունքի համատեքստում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ բարձրագույն դատական ատյանների իրավական դիրքորոշումների լույսի ներքո:

Աշխատանքի երկրորդ մասը մշակվել է որոշակի մեթոդաբանությամբ ու կառուցվածքով՝ ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի գործառնական կառուցվածքն ու

փորձը հաշվի առնելով: Հատկանշական է, որ աշխատանքում ներկայացված թե՛ փորձաքննությունների տեսակները, և թե՛ հետազոտման օբյեկտներն ու դրանցով լուծվող հարցերի շրջանակն ամբողջապես մշակված են ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի փորձագիտական աշխատանքների արդյունքներով:

Եվ վերջապես, անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների շրջանակում մշակված և շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), ի տարբերություն գործող ՀՀ ՔԴՕ-ի, դատական փորձաքննությունների հարցում որդեգրել է նորովի, գործող իրավակարգավորումներից էականորեն տարբերվող մոտեցումներ, ինչը ենթադրում է մոտ ապագայում ոչ միայն քննչական, դատական և փորձագիտական պրակտիկայի վերանայում, այլ նաև ոլորտի վերաբերյալ լրջագույն հետազոտությունների իրականացում:

Այսպիսով, ընթերցողին է ներկայացվում փորձագիտական գործունեության ոլորտի տեսաիրավական ու գործնական հիմնախնդիրների վերաբերյալ համալիր հետազոտություն, որը հավակնում է համալրելու համապատասխան իրավասու մարմինների աշխատակիցների սեղանի գրքերի շարքը:

ԳԼՈՒԽ 1.
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

§ 1.Դատական փորձաքննության հասկացությունն ու բովանդակությունը

Փորձաքննությունը գիտական հետազոտության տարատեսակ է, որը քրեական դատավարությունում ուղղված է հատուկ գիտելիքների կիրառմամբ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալների տրամադրմանը:

«Փորձաքննություն» եզրույթն առաջացել է լատիներեն «expertus» բառից, որը նշանակում է փորձառու, իրազեկ[1]: Իսկ «Peritus»՝ լատիներենից թարգմանաբար նշանակում է իրավասու, ձեռնահաս, որոշակի ոլորտում փորձ ունեցող անձ[2]:

Փորձագիտական գործունեությունը, ըստ էության, ուղղված է վարույթն իրականացնող մարմնին որոշակի փաստական տվյալներով ապահովելուն, որոնք որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են որպես դատական ապացույցներ և դրվում են գործով կայացվող այս կամ այն որոշման հիմքում: Այս տեսանկյունից դատական փորձագիտական-հետազոտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի հետ, որն իրականաց-

---

[1] Տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.,*** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 30:

[2] Տե՛ս ***Jeandos Y.,*** Dictionnaire de droit criminnel et penal: dimension historique, Paris, 2011, էջ 79:

վում է հատուկ գիտելիքների կիրառմամբ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով:

Մասնագիտական գրականության մեջ «դատական փորձաքննություն» հասկացության վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ: Որոշ հեղինակներ այն բնութագրում են որպես հետազոտություն, որն իրականացնում է փորձագետը՝ հատուկ գիտելիքների հիման վրա[3], իսկ ոմանց կարծիքով էլ՝ հատուկ դատավարական գործողությունների համակցություն է[4]:

Կարևոր է նաև փորձաքննության բովանդակության ճիշտ ընկալումը: Մասնագիտական գրականության մեջ փորձաքննության բովանդակության մասին միասնական կարծիք նույնպես գոյություն չունի: Այս հարցի վերաբերյալ գիտնականների կարծիքները պայմանականորեն բաժանվում են երեք խմբի:

1. Գիտնականների մի մասը կարծում է, որ փորձաքննությունն իրենից ներկայացնում է գիտական հետազոտության գործընթաց[5]:

2. Մյուս տեսակետի կողմնակիցները կարծում են, որ փորձաքննությունը պրակտիկ գործունեություն է[6]:

---

[3] Տե՛ս ***Давтян А. Г.,*** Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջ 17:

[4] Տե՛ս ***Саханов Т. В.,*** Судебные докозательства, М., 2000, էջ 14:

[5] Տե՛ս ***Ермоленко Б. П.,*** О судебной экспертизе как процессе научного познания, Криминалистика и судебная экспертиза, Респ. межведомств. науч.-метод. сб., Вып. 12, Киев, 1976, էջ 58:

[6] Տե՛ս ***Шапронов Ю. И.,*** Предмет судебной экспертизы как практической деятельности, Актуальные проблемы теории и практики судебной экспертизы, Сб. науч. тр. ВНИИСЭ, М., 1989, էջ 185:

3. Մյուսներն էլ միավորում են վերոնշյալ կարծիքները՝ նմանեցնելով փորձագիտական հետազոտությունը գիտապրակտիկ գործունեությանը[7]:

Կարծում ենք, որ գործնական տեսանկյունից տվյալ խնդիրը կարող է դիտարկվել գիտական և փորձագիտական հետազոտության համատեքստում:

Դատական փորձաքննությունն ապացուցման գործուն միջոց է, քանի որ այն վարույթն իրականացնող մարմնին հաղորդում է գիտահետազոտական բնույթի տեղեկատվություն՝ գործի նյութերը հատուկ գիտելիքների կիրառմամբ հետազոտելու արդյունքում: Այս առումով փորձագետի եզրակացությունը, ըստ առաջացման աղբյուրի՝ խառն ապացույց է, քանի որ այն ձևավորվում է փորձագետի մասնակցությամբ՝ նրա հատուկ գիտելիքների կիրառմամբ և գործի նյութերի օգտագործմամբ:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նախնառաջ պարզաբանել փորձագիտական հետազոտության ընթացքում կիրառվող հատուկ գիտելիքների հասկացությունն ու բովանդակությունը, ինչպես նաև փորձաքննության նպատակը, խնդիրները, օբյեկտներն ու առարկան:

Դատական փորձագիտության տեսության և «Կրիմինալիստիկա» գիտության մեջ «հատուկ գիտելիքներ» հասկացության բովանդակությունը տարատեսակ քննարկումների առիթ է տվել:

---

[7] Տե՛ս ***Лисиченко В. К.,*** Использование данных естесвенных и теıнических наук в следсвенной и судебной практике, Учебное пособие, Киев, Вища школа, 1979, էջ 85; ***Бычкова С. Ф.,*** Судебная экспертиза: научные, организационно-правовые и методические основы, Алматы: «Жеті жаргы», 2002, էջ 142:

Իրավաբանական գրականության մեջ, մեկնաբանելով նշված հասկացության բովանդակությունը, իրավացիորեն նշվում է, որ դրանց մեջ չեն մտնում հանրահայտ, ինչպես նաև իրավաբանական գիտելիքները[8]:

Իմացաբանական տեսությունում «հատուկ[9] գիտելիքներ», «հատուկ գիտական գիտելիքներ» բառակապակցություններ գոյություն չունեն, դրանք բնորոշ են միայն իրավական ոլորտին: Իրավաբանական ռուսալեզու գրականությունում «знания» (գիտելիք)[10] եզրույթի փոխարեն հավասարապես օգտագործվում է նաև «познания» (իմացություն)[11] եզրույթը[12]: Մասնավորապես՝ Վ. Կ. Լիսիչենկոյի և Վ. Վ. Ցիրկալի կարծիքով՝ «հատուկ գիտելիքներ» և «հատուկ իմացություն» եզրույթները

---

[8] Տե՛ս. ***Белкин Р. С.,*** Криминалистическая энциклопедия, М., 2000; ***Додин Е. В.,*** Доказивание и доказательства в правоприменительной деятельности органов советского государственного управления, Киев; Одесса, 1976; Энциклопедия судебной экспертизы, Под ред***. Т. В. Аверьянова и Е. Р. Россинской***, М., 1999:

[9] Հատուկ - 1.առանձնակի, կարևոր, 2.առանձին նշանակություն՝ կարևորություն ունեցող, 3.առանձնահատուկ, բացառիկ, տե՛ս ***Աղայան Է. Բ.,*** Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, Ա-Ձ, էջ 840:

[10] Գիտելիք - մարդու՝ որևէ բնագավառի վերաբերյալ իմացածների՝ գիտեցածների ամբողջությունը, տե՛ս վերը նշված աշխատությունը, էջ 240:

[11] Իմացություն - 1.իմանալը, 2.իմացական կարողություն, 3. կեցության արտացոլումը մտածողության մեջ, օբյեկտիվ աշխարհի ճանաչողությունը, տե՛ս վերը նշված աշխատությունը, էջ 488:

[12] Տե՛ս ***Зуйков Г. Г.,*** Общие вопросы использования специальных познаний в процессе предварительного расследования//Криминалистическая экспертиза, Вып. № 1, М., 1966, էջեր 113-125; ***Сорокотягин И. Н.,*** Специальные познания в расследовании преступлений. Ростов-на-Дону, 1984, էջ 5; ***Шиканов В. И.,*** Актуальные вопросы уголовного судопроизводства и криминалистики в условиях современного научно-техническо прогресса, Иркутск, 1978 և այլն:

միարժեք են և վկայում են փորձագետի մասնագիտական գիտելիքների բազմազանության մասին[13]:

Մի շարք հեղինակներ էլ կարծում են, որ «հատուկ գիտելիքներ» եզրույթի օգտագործումն առավել ընդունելի է և ճիշտ[14]:

Դատական փորձագիտության տեսության և կրիմինալիստիկայի գիտության մեջ հիմնարար է համարվում Ա. Ա. Էյսմանի այն ձևակերպումը, որ հատուկ գիտելիքները սահմանվում են որպես գիտելիքներ, որոնց չի տիրապետում ապացուցման հասցեատերը. *«Այդ գիտելիքները հանրաճանաչ, հանրամատչելի չեն և չունեն լայն տարածում...»* [15]:

Անուամենայնիվ, պարզ չէ, թե ինչ կարելի է հասկանալ՝ «ոչ հանրաճանաչ, ոչ հանրամատչելի և զանգվածային տարածում չունեցող գիտելիքներ» ասելով, և որոնք են դրանց սահմանազատման չափանիշները:

Այս կապակցությամբ միանգամայն ընդունելի է Ա. Չախոյանի այն տեսակետը, ըստ որի՝ բոլոր դեպքերում «հատուկ գիտելիքը»՝

- չի կարող լինել քրեական և քրեադատավարական գիտելիքը,

---

[13] Տե՛ս ***Лисиченко В. К., Циркаль В. В.,*** Использование специальных знаний в следственной и судебной практике, Киев, 1987, էջ 17:

[14] Տե՛ս ***Надгорный Г. М.,*** Гнесеологические аспекты понятия «специальные знания», Криминалистика и судебная экспертиза, Вып. 21, Киев, 1980, էջ 37; ***Махов В. Н.,*** Использование знаний сведущих лиц при расследовании преступлений, М., 2000, էջեր 38-39; ***Сахнова Т. В.,*** Судебная экспертиза, М., 2000, էջեր 9-10:

[15] Տե՛ս ***Эйсман Э. Э.,*** Заключение эксперта, М., 1967, էջ 91:

- չի կարող հանդիսանալ հանրահայտ կամ հանրամատչելի գիտելիքը,
- մարդու մասնագիտական պատրաստվածության և մասնագիտական փորձի արդյունք է,
- այն կիրառվում է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ ապացուցողական կամ կողմնորոշիչ տեղեկություններ ստանալու նպատակով[16]:

Ելնելով տարբեր հեղինակների կարծիքների և ՀՀ քրեադատավարական օրենսդրության նորմերի ընդհանուր վերլուծությունից՝ պարզ է դառնում, որ հատուկ գիտելիքներն իրավագիտության շրջանակից դուրս գիտելիքներ են, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ ՀՀ ՔԴՕ) 85-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ *«Քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում»,* իսկ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետև՝ Նախագիծ) 59-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Քրեական գործով վարույթին Հայաստանի Հանրապետության իրավունքի կամ միջազգային իրավունքի հարցերով փորձագետ չի ներգրավվում»:*

Իհարկե, մասնագիտական գրականության մեջ վիճելի է իրավաբանական որոշ գիտելիքների՝ հատուկ գիտելիքներին վերագրման հարցը, սակայն վերջին տարիներին իրավաբանական գրականության մեջ գերակշռում են հանցագործությունների քննության ընթացքում իրավագիտության բնագա-

---

[16] Տե՛ս ***Չախոյան Ա. Ս.,*** Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 80:

վառի գիտելիքների՝ հատուկ գիտելիքներին վերագրման հարցի կապակցությամբ տեսակետները[17]:

Վերո նշված խնդրո առարկայի վերաբերյալ խիստ բացասական վերաբերմունքը վերջին տարիներին աստիճանաբար իր տեղը զիջում է առավել հանդուրժողական մոտեցմանը: Տ. Վ. Ավերյանովան[18], ով խիստ դեմ է եղել իրավական որոշ գիտելիքներ հատուկ գիտելիք համարելուն, վերջիվերջո խոստովանում է, որ հետաքրքիր է Յու. Գ. Օրլովի այն տեսակետը, որ. *«Իրավաբանական փորձաքննության առարկա, եթե այդպիսին կպահանջվի, կարող է լինել միայն հարցն այն մասին, թե որ օրենքը կամ ենթաօրենսդրական ակտն է ենթակա կիրառման տվյալ գործով»* [19]:

Իսկ Ե. Ռ. Ռոսինսկայայի կարծիքով՝ *«հասունացել է անհրաժեշտությունն օրինականացնելու իրավաբանական փորձաքննությունների կատարումն այն դեպքերում, երբ քրեական, քաղաքացիական կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով անհրաժեշտ են ուսումնասիրություններ հատուկ իրավաբանական գիտելիքների կիրառ-*

---

[17] Տե՛ս ***Эксархопуло А. А.,*** Специальные знания и их применение в исследовании материалов уголовного дела, СПБ, 2005, էջեր 62-92; ***Россинская Е. Р.,*** Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе, М., 2005, էջ 17; ***Россинская Е. Р.,*** Специальные познания и современные проблемы их использования в судопроизводстве, Журнал Российского права, № 5, 2001, էջեր 5-7; ***Չախոյան Ս. Ս.,*** Հատուկ գիտելիքների հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում, Պետություն և իրավունք, № 2, (28), Երևան, 2005, էջեր 76-77:

[18] Տե՛ս ***Аверьянова Т. В.,*** Судебная экспертиза, Курс общей теории, М., «Норма», 2006, էջ 81:

[19] Տե՛ս ***Орлов Ю. К.,*** Судебная экспертиза как средство доказывания в уголовном судопроизводстве, М., 2005, էջ 20:

մամբ, որոնց չեն տիրապետում քննիչը, դատարանը կամ վարչական իրավախախտում քննող անձը»[20]:

Իրավաբանական գրականության մեջ կարծիքներ կան փորձագետներին իրավական հարցեր առաջադրելու թույլատրելիության վերաբերյալ,[21] և առաջարկվում է հանցագործության առանձին տեսակների քննության ժամանակ «իրավական փորձաքննության» նշանակելու թույլատրելիության մասին, չնայած իրավաբանական գիտելիքների օգտագործման հարցը փորձագետի եզրակացության մեջ չպետք է նշվի[22]:

Իսկ օրինակ, Գերմանիայի Դաշնության օրենսդրությունը, այս կամ այն կերպ չսահմանափակելով հատուկ գիտելիքների պատկանելության ոլորտը, թույլատրում է փորձաքննություն նշանակել նաև իրավաբանական բնույթի հարցերի պարզաբանման համար, երբ դատավորը բավարար գիտելիքներ չունի տվյալ իրավական ոլորտի վերաբերյալ[23]: Նման մոտեցումն արդարացի է այն պարզ պատճառով, որ դատավորը չի կարող տիրապետել հայրենական և օտարերկրյա իրավունքի բոլոր աղբյուրներին, և նման դեպքերում ավելի արդյունավետ կլինի դատավորին իրավական օգնություն ցուցաբերել, քան վերջի-

---

[20] Տե՛ս ***Россинская Е. Р.,*** Судебная экспертиза в гражданском, арбитражном, административном и уголовном процессе, М., 2005, էջ17:

[21] Տե՛ս ***Арсеньев В. Д., Заболоцкий В. Г.,*** Использование специальных знаний при установлений фактических обстоятельств уголовного дела, Красноярск, 1986, էջեր 1-5; ***Грамович Г. И.,*** Тактика испоьзования специальных знаний в раскрытии и расследовании преступлений, МВШ МВД СССР, 1987, էջեր 10-11:

[22] Տե՛ս ***Нестеров А. В.,*** Концептуальные основы использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений, Автореф. дисс., М., 2001, էջեր 15-16:

[23] Տե՛ս ***Давтян А. Г.,*** Гражданский процесс в Германии и странах СНГ, Ереван, 2000, էջ 68:

նիս թողնել ինքնուրույն պարզաբանել, ենթադրենք, իրեն քիչ հայտնի օտարերկրյա իրավունքի որևէ օրենսդրական ակտ:

Կարծում ենք՝ հանցագործությունների քննության և լուծման ընթացքում քննիչները և դատավորներն իրավական խնդիրները պետք է կարողանան ինքնուրույն լուծել և «հատուկ գիտելիքներ» հասկացությունը պետք է թույլատրվի միայն առանձին իրավաբանական գիտելիքների հետ կապված:

Քննարկվող հարցի վերաբերյալ առավել ընդունելի է Վ. Ն. Մախովի առաջարկը, համաձայն որի՝ «հատուկ գիտելիքների» թվին պետք է դասել նաև որոշ իրավական գիտելիքներ՝ բացառելով քննիչների և դատավորների մասնագիտական գիտելիքները: *«…Քննիչի (դատավորի) մասնագիտական գիտելիքներն իրավական գիտելիքներ են: Բայց ոչ բոլորը, այլ ամենից առաջ քրեական իրավունքի, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի գիտելիքները: Բուհում ուսումնասիրելով տնտեսական, աշխատանքային, միջազգային իրավունք և մի շարք այլ ճյուղային իրավական գիտություններ, քննիչները կարող են իրենք իսկ տիրապետել իրավունքի համապատասխան ճյուղերի՝ ոչ բարդ իրավաբանական հարցերում: Բայց իրավաբանների մեջ նույնպես կա մասնագիտացում: Միալ կլիներ քննիչի կողմից անտեսել իրավական գործունեության նեղ ոլորտում մասնագիտացող իրավաբանների՝ իրենց մասնագիտական գործունեության սահմաններից անցնող խոր գիտելիքները»*[24]:

---

[24] Տե՛ս ***Махов В. Н.,*** Использование знаний сведущих лиц при расследовании преступлений, М., 2000, էջեր 46-47:

Այսպիսով, ինչպես նկատում ենք, հատուկ գիտելիքների հասկացության բովանդակության սահմանման հարցում մասնագետների տեսակետները տարբերվում են միմյանցից: Հայրենական մասնագիտական գրականության մեջ հատուկ գիտելիքների հասկացության խնդիրներին անդրադարձել է նաև Ա. Ս. Չախոյանը, ով, վերլուծելով դրանց բովանդակությունը, փոխհարաբերակցությունն իրավաբանական գիտելիքների բովանդակության հետ, հանգում է այն եզրակացության, որ հատուկ գիտելիքները քրեական իրավունքի և քրեական դատավարության հետ կապ չունեցող գիտելիքներն են՝ հանրակրթական ծրագրերի շրջանակից դուրս գտնվող բովանդակությամբ, որոնք օգտագործվում են քրեական դատավարության ընթացքում՝ գործի համար ապացուցողական կամ կողմնորոշիչ տեղեկություն ստանալու նպատակով[25]:

Ավելացնենք նաև, որ հատուկ գիտելիքներ եզրույթի հետ սերտորեն կապված է նաև «հմտություններ» հասկացությունը, որը պայմանավորված է փորձաքննությունների կատարման համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների կիրառական նշանակությամբ: Անշուշտ, հատուկ գիտելիքների կիրառումը փորձագետից պահանջում է նաև նշված բնագավառում որոշակի հմտություններ: Թերևս այս տրամաբանությամբ է Նախագծի 59-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում «հատուկ գիտելիքներ կամ հմտություններ» արտահայտությունը[26]:

---

[25] Մանրամասն տե՛ս ***Չախոյան Ա. Ս.,*** Մասնագետի գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջեր 79-82:

[26] Սակայն հարկ է նշել, որ Նախագծի նույն 59-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արհեստի, արվեստի կամ այլ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների,

§ 2. Դատական փորձաքննության նպատակն ու խնդիրները

Ի տարբերություն ՀՀ ՔԴՕ 243-րդ հոդվածի, որը սահմանում է միայն փորձաքննություն նշանակելու ու կատարելու հիմքերը, Նախագծի 252-րդ հոդվածը վերնագրված է հետևյալ կերպ. *«Փորձաքննության նպատակը և սահմանները»* ՝նախատեսելով հետևյալը.

«1. Փորձաքննություն կատարվում է, երբ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ:

2. Փորձաքննությունը կատարվում է անկախ վարույթին ներգրավված այլ անձանց մոտ հատուկ գիտելիքների առկայությունից:

3. Վկայի և տուժողի նկատմամբ փորձաքննություն կատարվում է միայն նրանց, իսկ անչափահասի դեպքում՝ նրանց օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ բացառությամբ սույն օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված դեպքերի»:

մինչդեռ «հմտություններ»-ի տիրապետման մասին որևէ նշում գոյություն չունի, այն դեպքում, երբ Նախագծի 91-րդ հոդվածում փորձագետի եզրակացությունը սահմանվում է որպես՝ գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների ***կամ հմտությունների*** օգտագործմամբ, վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն առաջադրած, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ գրավոր հիմնավորված հետևություններն են, որոնց փորձագետը հանգել է՝ վարույթի համապատասխան նյութերը, դիակը կամ վարույթին ներգրավված համապատասխան անձին հետազոտելով:

Փաստորեն՝ օրենսդիրը Նախագծում առանձնացրել է ոչ միայն փորձաքննության բուն նպատակը, այլ նաև՝ դրա կատարման սահմանները, որոնք համահունչ են սահմանված նպատակին, ինչը, կարծում ենք, միանգամայն արդարացված է:

Ինչ վերաբերում է փորձաքննության կատարման հիմքերին, ապա նույն Նախագծի 253-րդ հոդվածը, որը վերնագրված է *«Փորձաքննություն կատարելու հիմքը»,* 1-ին մասում սահմանում է, որ փորձաքննությունը կատարվում է քննիչի որոշման հիման վրա:

Խոսելով փորձագիտական հետազոտության՝ որպես գիտական հետազոտության տեսակի մասին, անհրաժեշտ ենք համարում վերլուծել կրիմինալիստիկական հետազոտությունների ***խնդիրները***: Նշենք, որ դրանք միանշանակ պետք է համապատասխանեն կատարվող ժամանակակից հետազոտության հնարավորություններին, հակառակ դեպքում դրանք տվյալ հետազոտությունների շրջանակում իրենց լուծումը չեն կարող ստանալ, հետևաբար, կվերածվեն ձևական իրողությունների: Բացի դրանից՝ ցանկացած տեսակի հետազոտման խնդիրները չեն սահմանափակվում միայն այդ տեսակի հետազոտմամբ լուծվող հարցերի շրջանակով, այլ ընդգրկում են նաև հետազոտվող օբյեկտների հետ աշխատելու կանոնների մշակումը, մեթոդիկաների կատարելագործումը և այլն:

Ընդ որում՝ դատական փորձագիտության տեսության մեջ առավել կարևորվում է դրանց դասակարգման հարցը: Մասնագիտական գրականության մեջ այս հարցին անդրադարձել են տարբեր հեղինակներ: Մասնավորապես՝ Ե. Ռ. Ռոսինսկայայի կարծիքով՝ փորձաքննությունների միջոցով լուծվող կա-

ընոր խնդիրների շարքում կարելի է առանձնացնել օբյեկտների նույնացումը (իդենտիֆիկացիա), որտեղ կարելի է ներառել մարդկանց, կենդանիների, փաստաթղթերի, իրերի նույնացումը: Օրինակ՝ ձեռագրի հիման վրա անձի ճանաչումը:

Խնդիրների մյուս խումբը դիագնոստիկականն է, որի էությունն է գործողության տեղի, ժամանակի, հանցագործության միջոցների, հանցագործի անձի միջև եղած պատճառահետևանքային կապի բացահայտումը, օրինակ, ինչպիսի կապ կարող է լինել հրդեհի և հրդեհի պատճառ հանդիսացող անձի միջև:

Խնդիրների հաջորդ խումբը կապված է փորձաքննությունների միջոցով հանցագործությունների կանխարգելման հետ, որի էությունն է նախապատրաստվող հանցագործությունների բացահայտումը փորձագիտական տվյալների հիման վրա, օրինակ, դրամ կեղծելը կանխելուն ուղղված միջոցառումները[27]:

Գոյություն ունեն այլ տեսակետներ ևս, սակայն, առավել հաջողված կարելի է համարել Յու. Կ. Օրլովի տեսակետը, ով ուշադրությունը կենտրոնացնում է հետևյալ տիպային խնդիրների և դրանց համապատասխան փորձագիտական հետազոտությունների տեսակների գոյությանը՝

- նույնացման,
- դասակարգման,
- դիագնոստիկ,
- որոշող,
- իրավիճակային,

---

[27] Տե՛ս ***Россинская Е. Р., Галяшина Е. И.,*** Судебная экспертиза, М., 2010, էջ 10; ***Россинская Е. Р.,*** Профессия – эксперт, М., 1999, էջ 25:

- կազուալ կամ դիպվածային,
- չափորոշող (այս կամ այն արարքի համապատասխանությունը հատուկ կանոնների)[28]:

Կրիմինալիստիկական հրազենագիտության ոլորտում Վ. Վ. Զիրյանովի և Վ. Ա. Խվալինի ուսումնասիրությունները թույլ են տալիս լրացնելու նշված խնդիրների շրջանակը ևս երկուսով՝ վերականգնման և վերակառուցման[29]:

Հեղինակների մեկ այլ խումբ էլ, հիմնվելով որոշակի տեսակի քրեական գործերի ուսումնասիրության տվյալների վրա, առանձնացնում է փորձաքննությունների հետևյալ խնդիրները.

- նույնացման,
- դասակարգման,
- դիագնոստիկ,
- չափորոշիչ,
- վերականգնողակառուցողական խնդիրներ[30]:

Միևնույն ժամանակ մասնագիտական գրականության մեջ փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտման խնդիրները դասակարգվում են հետևյալ կերպ. դիագնոստիկ խնդիրներ, նույնացման խնդիրներ և դասակարգման խնդիրներ[31]:

---

[28] Տե՛ս ***Орлов Ю. К.,*** Основы теории доказательств в уголовном процессе, М., 2000, էջ 21:

[29] ***Зырянов В. В.,*** Проблемы криминалистического оружиеведения: Автореф. дисс. канд. юрид. наук, Омск, 1988, էջ 35:

[30] Տե՛ս ***Бертовский Л. В., Образцов В. А.,*** Выявление и расследование экономических преступлений, М., 2003, էջ 98:

[31] Տե՛ս Криминалистика, Institutiones, Под ред. ***В. А. Образцова,*** М.,1997, էջ 181:

Այսպես, առաջինների թվին դասվում են փաստաթղթի պատրաստման եղանակի, փաստաթղթի կամ դրա առանձին մասերի պատրաստման ժամանակի պարզաբանումը, փաստաթղթի տեքստում կատարված փոփոխության փաստի և եղանակի պարզաբանումը, ինչպես նաև սկզբնական տեքստի վերականգնումը:

Երկրորդների շարքում նշվում են առանձին մասերը մեկ փաստաթղթին պատկանելու փաստը պարզաբանելը, փաստաթուղթը պատրաստելու կամ դրա մեջ փոփոխություններ մտցնելու համար կիրառվող տեխնիկական միջոցների, ինչպես նաև փաստաթղթի կամ դրանում փոփոխություններ կատարելու համար կիրառվող նյութերի նույնացումը, մեքենագրողին պարզաբանելը:

Երրորդների թվում նշվում է որոշակի օբյեկտի առարկաների որոշակի խմբին պատկանելու փաստի վերհանումը, օրինակ, մեքենագիր տեքստը հետազոտելով՝ փորձագետը հետևություններ է անում գրամեքենայի տեսակի, մակնիշի և այլնի մասին[32]:

Գտնում ենք, որ կրիմինալիստիկական հետազոտման խնդիրներին անդրադառնալը, կարևոր նշանակություն ունի այն իմաստով, որ շատ հաճախ կրիմինալիստիկական հետազոտման խնդիրները շփոթում են տվյալ հետազոտմամբ լուծվող հարցերի հետ: Այս առումով մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ փորձագիտական հետազոտման խնդիրներն այդ հետազոտմամբ լուծվող հարցերից հստակ տարանջատելու համար հարկ է հաշվի առնել, որ այդ տեսա-

---

[32] Տե՛ս Совеременные возможности судебной экспертизы, Авт. колл., науч. ред. ***Ю. Г. Корухов,*** М., 2000, РФЦСЭ, էջ 25:

կի հետազոտման խնդիրները կարող են դասակարգվել հիմնականում երեք խմբի՝ դիագնոստիկ, նույնացման հետ կապված և նույնացման հետ չկապված խնդիրներ, իսկ հետազոտման ընթացքում լուծվող հարցերը թեև բխում են այդ խնդիրներից, սակայն կարող են դասակարգվել՝ ըստ տարբեր հիմքերի և առավել մանրամասն[33]:

Այնամենայնիվ՝ պետք է հավաստենք, որ որոշակի հետազոտության խնդիրներն ավելի ընդհանրական բնույթ ունեն, քան դրա ընթացքում հնարավոր լուծվող հարցերը: Միայն ավելացնենք, որ որոշակի հետազոտման ընթացքում առաջադրված որոշակի հարցերի լուծումն անուղղակիորեն վկայում է նաև տվյալ հետազոտության համար նախատեսված խնդիրների իրականացման մասին:

---

[33] Տե՛ս Назначение и производство судебных экспертиз, Пособие для следователей, судей и экспертов, ВНИИСЭ, отв. ред. ***Г. П. Аринушкин, А. Р. Шляхов,*** М., «Юридическая литература», 1988, էջ 63; Криминалистика, Под ред. ***И. Ф. Герасимова и Л. Я. Драпкина,*** М., «Высшая школа», էջ 175:

§ 3. Դատական փորձաքննության առարկան և օբյեկտները (նմուշները)

Փորձաքննության օբյեկտի հասկացությունը ևս հարկ է դիտարկել գիտության ու պրակտիկայի տեսանկյունից: Դատական փորձաքննության գիտության հասկացության առումով դատական փորձաքննության օբյեկտն այն օբյեկտների տեսակը (ձևը), առարկաների որևէ կարգը, կատեգորիան է, որոնք բնորոշվում են որոշակի հատկանիշներով: Փորձագիտական պրակտիկայում դա փորձագետի հետազոտման համար ստացվող որոշակի առարկան է (առարկաներ): Դրանք հիմնականում իրեղեն ապացույցներ են: Դրանց թվին են դասվում՝ մարդկանց և կենդանիների, առարկաների, մեխանիզմների պատկերները, այդ առարկաների մասերը, իրերը, նյութերը, փաստաթղթերը և տպագրական արտադրանքը, մարդու, կենդանիների դիակները և դրանց մասերը, բուսական եւ կենդանական ծագում ունեցող տարաբնույթ օբյեկտները և այլն:

Բացի դրանից՝ փորձաքննության օբյեկտների թվին են դասվում իրադարձությունները, փաստերը, երևույթներն ու ոչ նյութական այլ օբյեկտները, որոնց ուսումնասիրման անհրաժեշտությունը քրեական գործի քննության ընթացքում պահանջում է հատուկ գիտելիքներ ու փորձագիտական հետազոտության կատարում: Սակայն այդ իրադարձությունների, փաստերի, երևույթների և ոչ նյութական այլ օբյեկտների ուսումնասիրությունն իրականացվում է դրանց մասին տեղեկատվության նյութական կրիչների հետազոտման միջոցով:

Փորձաքննության առարկա և օբյեկտ հասկացությունների հետ սերտորեն կապված է «համեմատական հետազոտման նմուշներ» հասկացությունը, որը փորձագետի հետազոտական գործունեության հիմնական գործոններից մեկն է և բավականին մեծ տեսական և գործնական հետաքրքրություն է առաջացնում: Որակյալ փորձագիտական հետազոտության նախապայման է հանդիսանում նմուշների իմացաբանական (գնոսեոլոգիական) և իրավաբանական բնույթի պարզաբանումը: Սրանից ելնելով՝ ենթադրում ենք, որ անհրաժեշտ է ավելի մանրամասն կանգ առնել «համեմատական հետազոտման նմուշներ» հասկացության վրա:

«Համեմատական հետազոտման նմուշ» հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականությունում տարբեր տեսակետներ կան: Իհարկե, յուրաքանչյուր հրատարակված սահմանում պարունակում է համեմատական հետազոտման նմուշի հասկացության ճիշտ ընկալման համար հիմնական բնութագրումներ[34]: Թերևս, ոչ բոլոր առաջարկված սահմանումներին կարելի է համաձայնել:

Որոշ ձևակերպումներում այնքան էլ հաջող չեն օգտագործված եզրույթները, չի պարունակվում «նմուշ» հասկացությունը՝ առարկաների առումով, կամ էլ մեկնաբանությունը

---

[34] Տե՛ս ***Дулов А. В.,*** Права и обязанности участников судебной экспертизы, Минск, 1962, էջ 165; ***Петрухин И. Л.,*** Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 37; ***Жбанков В. А.,*** Понятие и процессуальное положение образцов для сравнительного исследования. Минск, 1965, էջ 71; ***Винберг А. И.,*** Производные вещественные доказательства и образцы для сравнительного исследования в советском уголовном процессе, Соц. Законность, № 3, 1966, էջ 22; ***Грамович Г. И.,*** Тактика использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений, Минск, 1987, էջ 32:

հաշվի չի առնում այն բոլոր քննչական գործողությունները, որոնց ընթացքում կարող են նմուշներ վերցվել[35]:

Համեմատական հետազոտման նմուշ ասելով՝ հասկացվում է. *«...նյութական օբյեկտ, որն անկասկած սերում է այլ օբյեկտից և հանդիսանում է նրա մասը կամ արտացոլում է նրա հատկությունները, որն ստացվում է հատուկ հետազոտությունների կատարման համար, ճանաչվող օբյեկտի սեռային (խմբային) պատկանելության վերականգնման և ինքնության ճանաչման նպատակով, ինչպես նաև քննվող հանցագործության այլ հանգամանքների վերականգնման համար»*[36]:

Նշենք, որ այլ օբյեկտից անկասկած ծագման դեպքում ոչ բոլոր համեմատելի օբյեկտները կարող են համարվել նմուշներ: Օրինակ՝ ֆոնոգրամման մարդու ձայնի ձայնագրումն է մագնիսային կրիչի վրա և այն չի ծագում այլ օբյեկտից: Նմանապես, եթե դատաձգաբանական փորձաքննության կատարման ընթացքում որպես համեմատական նյութ ներկայացվի հրազեն, ապա այն չի ծագում այլ օբյեկտից, այլև պատրաստված է արտադրական պայմաններում՝ որպես սկզբնական օբյեկտ, և այդ դեպքում կհամեմատվեն հրազենի չափանիշները:

Մեկ այլ սահմանման համաձայն. *«Նմուշներն առարկաներ են, որոնք ստեղծվել կամ փոփոխվել են իրենեն ապա-*

---

[35] Տե՛ս ***Дулов А. В.,*** Права и обязанности участников судебной экспертизы, Минск, 1962, էջ 165; ***Петрухин И. Л.,*** Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 37; ***Жбанков В. А.,*** Понятие и процессуальное положение образцов для сравнительного исследования, Минск, 1965, էջ 71; ***Винберг А. И.,*** Производные вещественные доказательства и образцы для сравнительного исследования в советском уголовном процессе, Соц. Законность, № 3, 1966, էջ 22:

[36] Տե՛ս ***Долженко Н. И.,*** Понятие образцов для сравнительного исследования и их природа, Вестник криминалистики, Вып. 1, М., 2000, էջ 47:

ցույցների ձևավորման եղանակին նման ձևով և հենց այդ օբյեկտի ազդեցության ներքո»[37]:

Գրեթե բոլոր սահմանումներում տրված է նմուշի գլխավոր ատրիբուտը՝ համեմատական հետազոտության համար անհրաժեշտ հատկանիշների առկայությունը նմուշում: Անկախ նրանից՝ դրանք ստեղծվել են, թե ստացվել են այլ օբյեկտից, նմուշը պետք է իր մեջ պարունակի համեմատության համար բավարար և օգտակար տվյալներ՝ իդենտիֆիկացիայի խնդիրների իրականացման համար:

Այնուամենայնիվ, մենք հակված ենք կարծելու, որ անկախ համեմատական հետազոտման նմուշի տարաբնույթ սահմանումներից, համեմատական հետազոտման նմուշը նյութական առարկա, օբյեկտ է, որն ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով պիտանի է համեմատական հետազոտում իրականացնելու համար:

Քննարկման առիթ է հանդիսանում համեմատական հետազոտման նմուշների դատավարական բնույթի խնդիրը: Գործող օրենսդրությունը չի սահմանում, թե արդյոք դրանք ինքնուրույն ապացույցի արժեք ունեն: Գոյություն ունեն երկու տեսակետներ: Ըստ առաջինի՝ համեմատական հետազոտման նմուշներն ապացույցի ինքնուրույն տեսակ են և բնորոշվում են որպես իրեղեն ապացույցի տարատեսակ[38]: Համաձայն երկ-

---

[37] Տե՛ս ***Орлов Ю. К.,*** Гносеологическая сущность и процессуальная форма образцов для сравнительного исследования, Труды ВНИИСЕ, Вып. 5, М., 1973, էջ 178:

[38] Տե՛ս ***Дулов А. В.,*** Права и обязанности участников судебной экспертизы, Минск, 1962, էջեր 168-169; ***Галкин В. М.,*** Средства доказывания в уголовном процессе, Ч. 1, М., 1967, էջ 32; ***Рахунов Р. Д.,*** Вещественные и письменные

որդի՝ համեմատական հետազոտման նմուշներն ինքնուրույն ապացույցի արժեք չունեն[39]:

Մեր կարծիքով՝ պետք է ելնել հենց իրեղեն ապացույցի հասկացությունից: Ըստ ծագման բնույթի՝ իրեղեն ապացույց են հանդիսանում այն նյութական օբյեկտները, որոնք ծագել են հանցագործության ընթացքում կամ օգտագործվել են հանցագործության իրականացման ժամանակ, հանցագործության նախապատրաստվելիս և այլն: Կարծում ենք, որ համեմատական հետազոտման նմուշների ձևը կախված է հենց օբյեկտի բնույթից: Նմուշների սահմանման ժամանակ կարելի է հիմք ընդունել ձևավորման գործընթացը:

Նմուշները, որոնք հատկապես ձեռք են բերվել համեմատական հետազոտման իրականացման համար, իրեղեն ապացույց չեն: Չի կարելի իրեղեն ապացույցների թվին դասել այն օբյեկտները, որոնք ծագել են մինչև հետազոտվող դեպքի տեղի ունենալը և կապված չեն դրա հետ: Համեմատական հետազոտման նմուշները միայն առանձին դեպքերում կարող են լինել իրեղեն ապացույցներ, եթե մինչ այդ դրանք բնորոշվել են որպես այդպիսին:

Մեր քրեադատավարական օրենսդրությունում բացակայում է փորձագիտական հետազոտության օբյեկտների հասկացությունը, նրանց տեղափոխման կարգը և նրանց հետ վե-

---

доказательства в советском уголовном процессе, Ученые записки ВИЮН, Вып. 10, М., 1959, էջեր 208-209:

[39] Տե՛ս ***Белкин Р. С.,*** Эксперимент в следственной, судебной и экспертной практике, М., 1964, էջեր 166-167; ***Винберг А. И.,*** Образцы для сравнительного исследования, М., 1962, էջեր 45-49; ***Жбанков В. А.,*** Получение образцов для сравнительного исследования, М., 1992, էջ 5; ***Селиванов Н. А.,*** Вещественные доказательства, М., 1971, էջեր 12,15:

բաբերվելու պայմանները: Տեղին կլինի նշել հետևյալ հասկացությունը՝ օգտագործելով օբյեկտների հայտնի սահմանումը՝ *«Փորձագիտական հետազոտության օբյեկտը նյութական առարկա է, որը պարունակում է փորձագիտական խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկատվություն. իրեղեն ապացույցներ, դիակ, համեմատական հետազոտության համար օգտագործվող նմուշներ, քրեական գործի այլ նյութեր»*[40]: Նորմում պետք է նշել, որ փորձագիտական հետազոտության օբյեկտների հավաստիությունը և թույլատրելիությունը երաշխավորում է փորձաքննությունը նշանակած մարմինը:

Ավելին, նմուշներ ստանալու հարցի կարևոր նշանակությամբ է, թերևս, պայմանավորված ՀՀ ՔԴՕ-ի 55-րդ հոդվածի չորրորդ մասի առաջին ենթակետում կատարված փոփոխությունը, համաձայն որի՝ քննիչին իրավունք վերապահվեց մինչև քրեական գործ հարուցելը նախապատրաստվող նյութերով նաև հետազոտման համար վերցնել նմուշներ:

Միևնույն ժամանակ Նախագծի 254-րդ հոդվածով կարգավորվում է նաև փորձաքննության համար նմուշներ ստանալու կարգը, տեսակները, մինչդեռ ՀՀ ՔԴՕ-ն հետազոտման համար նմուշներ ստանալը համարում է առանձին քննչական գործողություն, որին նվիրված է առանձին գլուխ *(Գլուխ 36)*:

Սակայն Նախագիծը հետազոտման համար նմուշների ստացումն առանձին քննչական գործողություն չնախատեսելով՝ չի բացառում նաև քննչական գործողության ընթացքում փորձաքննության համար նմուշ ստանալը: Այսինքն՝ չնայած այն հանգամանքին, որ Նախագծով հետազոտման կամ փոր-

---

[40] Տե՛ս ***Белкин Р. С.,*** Криминалистика, Учебный словарь-справочник, М., 1999, էջ 127:

ձաքննության համար նմուշ ստանալու համար առանձին քննչական գործողություն նախատեսված չէ, այնուամենայնիվ քննիչն իրավունք ունի ցանկացած քննչական գործողության ընթացքում վերցնելու փորձաքննության համար նմուշներ՝ բացառությամբ մարդուց ստացվող նմուշների: Չնայած Նախագծով ուղղակիորեն սահմանված չէ, բայց ենթադրվում է, որ քննիչը մարդուց նմուշներ կարող է ստանալ միայն փորձագետի մասնակցության դեպքում կամ էլ մարդուց նմուշներ կարող է ստանալ միայն փորձագետը, հակառակ դեպքում մարդուց նմուշների ստացումը ևս թույլատրելի կլիներ քննչական գործողությունների ընթացքում:

Այսպես, համաձայն Նախագծի 32-րդ գլխի դրույթների՝ մինչև փորձաքննություն նշանակելը կամ դրա կատարման ընթացքում քննիչը կամ նրա հանձնարարությամբ փորձագետը իրավասու է վերցնել մարդու, դիակի, կենդանու, նյութի կամ այլ օբյեկտի հատկությունները բնութագրող նմուշներ, եթե դրանք անհրաժեշտ են փորձաքննության կատարման համար: Նմուշ կարող են լինել արյունը, սերմնահեղուկը, մազը, եղունգների կտրվածքները, մաշկի մանրադիտակային քերվածքները, թուքը, քրտինքը և այլ արտաթորանքները, մաշկի գծանախշերի դրոշմը, ատամների և վերջավորությունների կաղապարները, ձեռագիրը, ստորագրությունը, մարդու հմտությունն արտահայտող այլ նյութերը, ձայնագրությունը, պատրաստի արտադրանքի, հումքի, նյութերի փորձնական նմուշները, զենքը, պարկուճը, գնդակը, փամփուշտը, այլ նյութերը և առարկաները:

Փորձաքննության համար նմուշ ստանալու մասին որոշումը կայացնում է քննիչը: Այդ որոշման մեջ պետք է նշվեն

նմուշ ստացող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, եթե նմուշը ստացվում է անձից, ապա նրա անունը, ազգանունը և կարգավիճակը, եթե նմուշը ստացվում է նյութից կամ այլ օբյեկտից, ապա դրա գտնվելու վայրը և դրա մասին այլ վերաբերելի տվյալներ, ստացման ենթակա նմուշի տեսակը, չափը կամ քանակը, եթե նմուշը ստացվում է անձից, ապա նմուշ հանձնելու համար նրա ներկայանալու տեղը և ժամանակը, նմուշը ստանալու նպատակը:

Քննիչն անձին հրավիրում է իր մոտ կամ գնում է նրա գտնվելու վայրը, ստորագրությամբ ծանոթացնում է նրան նմուշ ստանալու մասին որոշմանը և բացատրում նրա իրավունքներն ու պարտականությունները: Բացի փաստաթղթերից, մյուս նմուշները փաթեթավորվում և կնքվում են: Փորձաքննության համար նմուշ ստանալու մասին կազմվում է արձանագրություն, որում նաև նկարագրվում են ստացված նմուշները: Ստացված նմուշները պատշաճ փաթեթավորվում են, կնքվում և կցվում արձանագրությանը:

Ինչ վերաբերում է փորձաքննության *առարկայի* հասկացությանը, ապա դրա բովանդակությունն անհրաժեշտ է դիտարկել երկու դիրքորոշումից՝ գիտական և գործնական: Մի կողմից, դատական փորձաքննության առարկա են հանդիսանում օբյեկտների հատկանիշների և դրանց փոխակերպումների օրինաչափությունները՝ կապված հանցագործության դեպքի կատարման հետ, իսկ մյուս կողմից՝ դատական փորձաքննության առարկա են հանդիսանում գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառներում հատուկ գիտելիքների հիման վրա բացահայտվող փաստացի տվյալները

(գործի հանգամանքները) և քրեական գործի նյութերի հետազոտությունը:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ փորձաքննությունը բովանդակային առումով համարվում է գիտական հետազոտության յուրահատուկ տեսակ՝ ենթարկվելով գիտական հետազոտությանը ներկայացվող պահանջներին:

Կարող ենք հավաստել, որ փորձաքննությունը բնութագրող առանձնահատուկ գծերն են. նախ այն կատարվում է որոշակի բնագավառում հատուկ գիտելիքներ ունեցող անձի կողմից՝ հատուկ գիտական մեթոդիկաների կիրառմամբ, ապա հստակ դատավարական կանոնակարգված կարգով, իսկ դրա արդյունքները, թեև դատավարական առումով հավասարազոր են մյուս ապացույցներին, այնուամենայնիվ, ի տարբերություն մյուս ապացույցների, ծագում են գիտական հիմքերի վրա:

Այսպիսով՝ փորձաքննությունը առանձին գիտական հետազոտության իրականացում է, որը կատարվում է քրեական գործերով փաստական տվյալների բացահայտման նպատակով գործող քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան, այն անձանց կողմից, ովքեր տիրապետում են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի հատուկ գիտելիքների:

§ 4. Դատական փորձաքննության նշանակման հիմքերն ու կարգը

Փորձաքննության նշանակման և կատարման յուրահատուկ բնույթն ու բովանդակությունը պայմանավորված է այս քննչական գործողության քրեադատավարական կարգավորման առանձնահատկություններով. այն *նշանակում է* վարույթն իրականացնող մարմինը, սակայն *կատարում է* փորձագետը: Թեև փորձաքննության կատարման ընթացքում վարույթն իրականացնող մարմինը նույնպես օժտված է որոշակի իրավունքներով, այնուամենայնիվ վերջինս չի կարող փոխարինել փորձագետին, առավել ևս՝ միջամտել նրա գործունեությանը: Այսինքն՝ այս քննչական գործողությունն ունի երկու բաղադրիչ, որոնցից յուրաքանչյուրն անմիջականորեն իրականացում են քրեադատավարական տարբեր սուբյեկտներ, սակայն դրա միասնական արդյունքում ձևավորվում է առանձին տեսակի դատական ապացույց՝ փորձագետի եզրակացություն:

Այս քննչական գործողության առանձնահատկություններից է նաև սկզբնական, անհետաձգելի բնույթը, ավելին, երբեմն դրա արդյունքներով է պայմանավորված ընդհանրապես քրեական գործով վարույթ սկսելու անհրաժեշտության հարցի լուծումը: Թերևս այս տրամաբանությամբ է առաջնորդվել օրենսդիրը՝ ՀՀ ՔԴՕ-ի առանձին նորմերով *(ՀՀ ՔԴՕ 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետ, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ, 180-րդ հոդվածի 2-րդ մաս)* նախատեսելով փորձաքննության նշանակումը և կատարումը մինչև քրեական գործ հարուցելը: Այս իմաստով միանգամայն տրամաբանական է նաև,

որ օրենսդիրը մինչև քրեական գործի հարուցումը նախատեսում է այնպիսի քննչական գործողությունների կատարումը, ինչպիսիք են՝ դեպքի տեղի զննությունը և նմուշների ստացումը, քանի որ դրանք փորձաքննության կատարման համար ապահովում են անհրաժեշտ ելակետների ստացումը: Միևնույն ժամանակ, այս քննչական գործողությունների կատարման ընթացքում առավել է ընդգծվում հատուկ կամ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կիրառման անհրաժեշտությունը:

Նախագիծը, կարևորելով փորձաքննության ինստիտուտը, արդարացիորեն, դրա նշանակումը չի համարում որպես քննչական գործողություն, ինչպես նախատեսված է գործող ՀՀ ՔԴՕ-ում, այլ նախատեսում է որպես քրեական դատավարության առանձին ինստիտուտ: ՀՀ ՔԴՕ գլուխ 35-ը կոչվում էր *«Փորձաքննություն կատարելը»,* որը հետագայում հասկանալիորեն փոփոխության ենթարկվեց և անվանվեց *«Փորձաքննություն նշանակելը և կատարելը»,* սակայն, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ ՔԴՕ 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետում, 57-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում, ինչպես նաև 180-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվում է միայն *«փորձաքննություն նշանակել»* արտահայտությունը, որը, կարծում ենք, ճիշտ չէ:

Որպես առանձին ապացուցողական գործողություն, Նախագծով փորձաքննությանը վերաբերող հարցերը կարգավորված են գլուխ 32-ով, որը վերնագրված է *«Փորձաքննությունը»*:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 243-րդ հոդվածի՝ *«Փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար*

անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետի, ընթերակաների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:

Համաձայն Նախագծի 252-րդ հոդվածի 1-ին մասի՝ *«Փորձաքննություն կատարվում է, երբ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու նպատակով անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ»*:

Ակնհայտ է, որ Նախագիծն ընդլայնել կամ չի սահմանափակել փորձաքննություն նշանակելու համար անհրաժեշտ հատուկ գիտելիքների շրջանակը՝ սահմանելով *«..... կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ»* արտահայտությունը, որը, կարծում ենք, միանգամայն տեղին է՝ նկատի ունենալով արդի ժամանակաշրջանի գիտական ու տեխնոլոգիական առաջընթացի աննախադեպ տեմպերը և դրանց կիրառումը փորձագիտական հետազոտությունների ընթացքում:

Փորձաքննության նախաձեռնման կարգի ամբողջական վերլուծության և դրա առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից կարևորվում է նաև ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված փորձա-

քննություն նշանակելու իրավասություն ունեցող *սուբյեկտների շրջանակը,* որի հստակեցումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն ներպետական մակարդակով հանցագործությունների քննության գործընթացում, այլ նաև քրեական գործերով միջազգային իրավական օգնության շրջանակներում փորձաքննության նշանակման, կատարման և փորձագետի եզրակացության ձեռքբերման և գնահատման գործում:

ՀՀ ՔԴՕ 244-րդ հոդվածում, որը կարգավորում է փորձաքննություն նշանակելու մասին որոշման կառուցվածքն ու բովանդակությունը, նման որոշում կայացնելու իրավասությամբ օժտել է *քրեական հետապնդման մարմնին:* ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ քրեական հետապնդման մարմիններն են՝ դատախազը (մեղադրողը), քննիչը, հետաքննության մարմինը: Փաստորեն, ՀՀ ՔԴՕ 244-րդ հոդվածն անարդարացիորեն փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելու իրավասությամբ օժտել է դատախազին և նման որոշում կայացնելու իրավասությունից զրկել դատարանին[41]:

Այս տեսանկյունից հարկ ենք համարում նշել, որ Նախագիծը փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի հարցում դրսևորել է առավել որոշակի մոտեցում՝ 253-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանելով, որ փորձաքննությունը կատարվում է քննիչի որոշման հիման վրա: Սակայն միևնույն ժամանակ 333-րդ հոդվածի 1-ին

---

[41] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ., Դավթյան Լ., Չախոյան Ա.,*** Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները), Գիտական ձեռնարկ, Խմբ. ***Վ. Գ. Ենգիբարյան,*** Երևան, Անտարես, 2012, էջեր 235-246:

մասում սահմանված է. *«Դատարանը կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ իրավասու է* ***նշանակել*** *(ընդգծումը մերն է) դատական փորձաքննություն՝ սույն օրենսգրքի 252-258-րդ հոդվածներում սահմանված վերաբերելի կանոնների պահպանմամբ»:* Դատարանին՝ որպես փորձաքննություն նախաձեռնող մարմին, փորձաքննություններին վերաբերող ընդհանուր նորմերում նախատեսելու արդյունավետությանն արդեն անդրադարձել ենք, այդուհանդերձ խնդրահարույց է նաև քննարկվող նորմի ձևակերպման մեջ փորձաքննության «նշանակում» եզրույթի օգտագործումն այն դեպքում, երբ փորձաքննությունների կատարման ընդհանուր պայմանները սահմանող Նախագծի 32-րդ գլուխը, ի տարբերություն գործող ՀՀ ՔԴՕ-ի, նվիրված է միայն փորձաքննության կատարմանը, և որևէ նշում չի պարունակում, առավել ևս գոյություն չունի որևէ ձևակերպում «փորձաքննություն նշանակելու» մասին:

Այսպիսով, փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակի վերաբերյալ քրեադատավարական դրույթները, մեր կարծիքով, բոլորովին հակասական են, թերի ու անկատար, ուստի վերանայման կարիք ունեն: Այդ հակասականության վերացման առաջին ճանապարհը համապատասխան իրավական նորմերում փորձաքննություն նշանակող սուբյեկտների հստակ և լրիվ շրջանակի ամրագրումն է: Ընդ որում՝ փորձաքննության նշանակման հետ կապված այլ հոդվածներում այդ սուբյեկտների ամբողջական շարքն անընդհատ թվարկելուց և կրկնություններից խուսափելու համար առաջարկում ենք քրեադատավարական համապատասխան նորմերում փորձաքննություն նշանակելու

իրավասություն ունեցող սուբյեկտներին կոչել *փորձաքննություն նախաձեռնող կամ փորձաքննություն նշանակող անձ*[42]: Այսպիսի մոտեցումն իրավաբանական տեխնիկայի առումով առավել մատչելի կդարձնի քրեադատավարական համապատասխան դրույթների կիրառումը:

Այսպիսով, փորձաքննություն նշանակելու համար հիմք են հանդիսանում այն փաստական տվյալները, որոնք մատնանշում են հանցագործության դեպքի, հանցագործության կատարման մեջ որոշակի անձի մեղավորության, ինչպես նաև արարքի հանցավորությունն ու պատժելիությունը բացառող և քրեական գործով պարզաբանման ենթակա այլ հանգամանքների ապացուցման համար հատուկ գիտելիքների օգտագործման անհրաժեշտությունը:

Հասկանալի է, որ քրեական հետապնդման մարմինն իր հայեցողությամբ է լուծում քրեական գործով փորձաքննության կատարման անհրաժեշտության հարցը, թեև իրականում քրեական հետապնդման մարմնի այդ հնարավորությունն օրենսդիրը որոշակի առումով սահմանափակել է՝ ուղղակի նախատեսելով մի շարք դեպքերում փորձաքննության նշանակման պարտադիր դեպքեր:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 108-րդ հոդվածի՝ *«քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով.*

---

[42] Ուշագրավ է, որ ՀՀ ՔԴՕ 249-րդ և 250-րդ հոդվածներում խոսվում է «փորձաքննություն նշանակած» և «փորձաքննություն նշանակող անձի» մասին: Ցավոք, օրենսդիրը չի հստակեցրել փորձաքննություն նշանակող անձի օրենսդրական հասկացությունը, և այդ նույն հասկացությունը չի կիրառել բոլոր անհրաժեշտ դեպքերի համար:

1. մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը.

2. հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը.

3. վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու կամ վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.

4. գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատաբժշկական կամ դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացությունները»::

Այդուհանդերձ, պետք է նշել, որ քննչական պրակտիկայում, ելնելով քննվող գործի որոշակի հանգամանքներից, ինչպես նաև ՀՀ ՔՕ-ի համապատասխան նորմի դիսպոզիցիայի ձևակերպումից, որոշակի հանգամանքների հաստատման համար փորձաքննության նշանակումը և կատարումը պարտադիր է, թեև ՀՀ ՔԴՕ-ում այդպիսի պահանջ ուղղակի նախատեսված չէ: Օրինակ՝ ավտոտեխնիկական փորձաքննության նշանակումը և կատարումը՝ ՃՏՊ-ների վերաբերյալ քրեական գործերով *(ՀՀ ՔՕ 241-247-րդ հոդվածներ)*, փաստաթղթաբանական փորձաքննությունները՝ կեղծ փողեր կամ

արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու, կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու և իրացնելու կամ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու վերաբերյալ քրեական գործերով *(ՀՀ ՔՕ 202-րդ, 203-րդ և 325-րդ հոդվածներ),* ինչպես նաև ՀՀ ՔՕ-ի բլանկետային դիսպոզիցիաներ պարունակող հոդվածներով նախատեսված արարքների վերաբերյալ քննվող գործերով և այլն:

Փորձաքննություն նշանակելու մասին որոշումը պետք է բովանդակի փորձաքննություն նշանակելու հիմքերը, փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները, նշելով՝ երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել, իսկ քրեական գործի նյութերով փորձաքննություն կատարելիս՝ տեղեկություններ, որոնց վրա կարող են հիմնվել փորձագետի հետևությունները, փորձագետին առաջադրված հարցերը, փորձագիտական հիմնարկի անվանումը կամ անձի ազգանունը, ում հանձնարարվում է փորձաքննության կատարումը *(ՀՀ ՔԴՕ 244-րդ հոդված):*

ՀՀ ՔԴՕ 247-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ փորձաքննություն նշանակելիս և կատարելիս կասկածյալը, մեղադրյալը և տուժողն ունեն որոշակի իրավունքներ.

1. Մինչև փորձաքննություն կատարելը ծանոթանալ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը և ստանալ իրենց իրավունքների պարզաբանում:
2. Բացարկ հայտնել փորձագետին:
3. Միջնորդել, որ փորձագետ նշանակվի իր մատնանշած անձանց թվից:

4. Փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն:

5. Փորձագետին առաջադրել լրացուցիչ հարցեր:

6. Քննիչի թույլտվությամբ ներկա գտնվել փորձաքննության կատարմանը:

7. Բացատրություններ տալ փորձագետին:

8. Քննիչի կողմից փորձագետի եզրակացությունն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալ փորձագետի եզրակացությանը:

9. Մասնակցել իր միջնորդությամբ կատարվող՝ փորձագետի հարցաքննությանը:

Թվարկված իրավունքներից օգտվում է նաև այն անձը, ում նկատմամբ պետք է լուծվի բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հարցը, եթե դա թույլ է տալիս նրա հոգեկան վիճակը:

Օրենսդիրը, փորձաքննություն նշանակելու և կատարելու հետ կապված, անարդարացիորեն սահմանափակել է ՀՀ ՔԴՕ 247-րդ հոդվածում նշված սուբյեկտների շրջանակը՝ համապատասխան իրավունքներից զրկելով կասկածյալի, մեղադրյալի պաշտպանին, ինչպես նաև տուժողի ներկայացուցչին ու օրինական ներկայացուցչին[43]:

Քննիչը փորձաքննություն նշանակելու մասին իր կայացրած որոշումը, հետազոտման ենթակա օբյեկտը և մյուս անհրաժեշտ նյութերը, երբեմն նաև քրեական գործն ուղարկում է փորձագիտական հիմնարկի ղեկավարին: Փորձաքննությունը

---

[43] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 186:

կատարում է այն փորձագետը, ում ազգանունը նշված է որոշման մեջ: Իսկ եթե որոշման մեջ որոշակի փորձագետ նշված չէ, ապա փորձագիտական հիմնարկի ղեկավարը պետք է որոշի, թե տվյալ փորձագիտական հիմնարկում աշխատող որ փորձագետն է այն կատարելու *(ՀՀ ՔԴՕ 248-րդ հոդվածի 1-ին մաս):*

Համաձայն ՀՀ ՔԴՕ 244-րդ հոդվածի՝ փորձաքննություն նշանակելու որոշման մեջ քննիչը պետք է ցույց տա, թե ինչ նյութեր են ուղարկվում փորձաքննության: Եթե քրեական գործը չի ուղարկվում, կողմնորոշող տվյալները պետք է գրվեն որոշման նկարագրական մասում: Պետք է նշել. երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են հայտնաբերվել կամ ձեռք բերվել հետազոտման ենթակա իրեղեն ապացույցները: Որոշման մեջ նշվում են նաև փորձագիտական լուծման ենթակա հարցերը և այլն:

Հարկ է ընդգծել, որ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտության հարցի լուծումից՝ համապատասխան որոշման ընդունումից հետո որոշումը, անհրաժեշտ նյութերով հանդերձ, փորձագետին (փորձագիտական հիմնարկին) տրամադրելու միջև ընկած ժամանակահատվածի չհիմնավորված երկարատևությունը կարող է բացասական անդրադառնալ ոչ միայն փորձաքննության կատարման ընթացքի ու արդյունքների, այլ նաև՝ գործի քննության արդյունավետության վրա:

Պետք է նշել, որ քննչական պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ փորձաքննության նյութերի տրամադրման անհարկի ձգձգումները քննիչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են հանդիսացել:

Այսպես, ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովը 2016 թվականի սեպտեմբերի 23-ի ԿՀՈ 30 որոշմամբ անդրադարձել է քննիչի կողմից դատահաշվապահական փորձաքննություն չնշանակելու իրավաչափության հարցին: Համաձայն այդ որոշման՝ *«ՀՀ ՔԿ ՏՔՎԳՎ գլխավոր վարչության պետ Թ.Պետրոսյանի՝ նախնական ուսումնասիրություն անցկացնելու զեկուցագրի առթիվ, ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Հ.Մ.-ի նկատմամբ կատարված նախնական ուսումնասիրությամբ պարզվել է, որ իր լիազորություններն իրականացնելիս քննիչն առանց իրավաչափ նպատակի տնական ժամանակով՝ 2.5 ամիս դրսևորել է անգործություն, այն է՝ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում առանձին գործողություններ չի կատարել, առերևույթ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:*

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է հետևյալ դրվագը:

Քննիչ Հ.Մ-ն գործով ձեռք բերված բավարար հիմքերի և հետազոտվող նյութերի առկայության պայմաններում ավելի քան 2.5 ամիս դատահաշվապահական փորձաքննություն չի նշանակել, որով պայմանավորված՝ չի լուծել քրեական գործով հետագա ընթացքը:

Քննիչը բացատրություն տվեց, որ տուժողը խոստացել էր լրացուցիչ այլ նյութեր ներկայացնել, որպիսիք, սակայն չի ներկայացրել, ինչի համար ձգձգվել է դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելը:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու համար առկա է եղել անհրաժեշտ փաստական տվյալներ, մինչդեռ քննիչը չի կատարել իր դատավարական պարտականությունը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը»[44]:

Մեկ այլ դեպքում ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովն իր՝ 2016 թվականի նոյեմբերի 7-ի ԿՀՈ 37 որոշմամբ անդրադարձել է քննիչի կողմից փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հանձնաժողովի նախագահին չհանձնելու իրավաչափության հարցին:

Նշված որոշմամբ պարզվել է, որ. ***«Քրեական գործով ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի նախագահին չի հանձնվել, որպիսի հանգամանքը պարզվել է միայն փորձաքննության որոշումը կայացնելուց հետո՝ շուրջ 4 ամիս անց, ինչի հետևանքով ձգձգվել են նախաքննության ժամկետները՝ արդյունքում չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 197-րդ հոդվածի պահանջները:***

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս. Ղ.-ն Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 2016 թվականի հունիսի 18-ին /շաբաթ օր/ ներկայացել է ՀՀ ՊՆ վարչական համալիր՝ ռազմագիտական փոր-

---

[44] Մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 2016 թվականի որոշումների ժողովածու», Հատոր 2, Երևան, 2017, էջեր 121-122:

ձաքննություն իրականացնելու հանձնաժողովի անդամներին հանդիպելու, նրանց փորձագետ ճանաչելու մասին որոշումներին ծանոթացնելու, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանելու, ինչպես նաև որոշումը՝ կից գրությամբ հանձնելու նպատակով: ՀՀ ՊՆ վարչական համալիրի հսկիչ-անցագրային կետում գտնվող ներքին հեռախոսահամարներից զանգահարել է հանձնաժողովի նախագահին և տեղեկացել, որ նա գտնվում է գործուղման մեջ, որից հետո զանգահարել է նրա բջջային հեռախոսին, սակայն անհասանելի է եղել: Այդ պատճառով միայն ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը՝ կից գրությամբ թողել է հսկիչ-անցագրային կետի ծառայողների մոտ՝ այն հանձնաժողովի նախագահին փոխանցելու համար, որից հետո վերադարձել է ԷՂՀ: Այնուհետև հերթական հեռախոսազրույցի ընթացքում հանձնաժողովի նախագահ Ա.Մաքսուդյանից տեղեկացել է, որ փորձաքննություն նշանակելու մասին որոշումն իր մոտ չի և ինքն այն չի ստացել:

Ս.Ղ-ն հայտնեց նաև, որ որոշումը կից գրության հետ առձեռն չպետք է հանձներ հսկիչ-անցագրային կետում ծառայություն իրականացնող անձանց կամ հանձնելու դեպքում պետք է համապատասխան նշում կատարվեր, որպեսզի այդ հանգամանքը հավաստող որևէ փաստ լիներ իր մոտ, ինչը տվյալ պարագայում առկա չէ:

Ս.Ղ-ն նշեց նաև, որ քրեական գործով դեռևս 2015թ. սեպտեմբերին որոշում է կայացրել դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին, որի եզրակացությունը դեռևս չի ստացվել և այն ստանալուց հետո նոր միայն հնարավոր կլինի որոշել քրեական գործի վերջնական ընթացքը, բացի

այդ, 2016թ. հոկտեմբերին ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հանձնել է հանձնաժողովի նախագահին և մոտ օրերս եզրակացությունը պատրաստ կլինի:

Կարգապահական հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց նաև ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնի փաստաթղթերի ելքի գրանցամատյանի քաղվածքը, համաձայն որի 2016 թվականի հունիսի 25-ին քննչական բաժնից ելքագրվել է թիվ 90865515 քրեական գործով ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը:

Ուսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը ռազմագիտական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հաշվառել է գրասենյակում, սակայն փորձագիտական հիմնարկից դուրս կատարվող փորձաքննության պարագայում ուշացմամբ է կատարել /4 ամիս/ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի պահանջները: Տվյալ պարագայում, թեև հանձնաժողովը գտնում է, որ առկա է օրենքի խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գործողությունը չկատարելը չի հանգեցրել և ողջամտորեն չէր կարող հանգեցնել ապացույցի կորստի, իսկ գործի քննության հետագա ընթացքի համար կարևորություն ունեցող մեկ այլ փորձաքննության արդյունքները ստացված չեն եղել և սույն որոշման կայացման օրվա դրությամբ դեռևս չեն ստացվել, հանձնաժողովը եզրակացնում է, որ նման խախտումը չի կարող գնահատվել որպես կոպիտ»[45]:

---

[45] Մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 2016 թվականի որոշումների ժողովածու», Հատոր 2, Երևան, 2017, էջեր 138-140:

Այս ենթատեքստում հարկ է նշել, որ փորձաքննություն նշանակելու որոշման կատարումը, ինչպես նաև դրա կատարման ընթացքը վերահսկելը ոչ միայն քրեադատավարական, այլ նաև կազմակերպական բնույթի գործունեություն է, ուստի դրա ժամանակին և պատշաճ կատարման համար պատասխանատու է ոչ միայն այն նշանակող մարմնի պաշտոնատար անձը, այլ նաև՝ համապատասխան ստորաբաժանման ղեկավարը: Այս առումով ուշագրավ է ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի ԿՀՈ 28 որոշումը, որը վերաբերում է քննիչի կողմից դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը տնական ժամանակով փորձաքրեագիտական վարչություն չհանձնելու իրավաչափության հարցին:

Համաձայն վերոնշյալ որոշման պարզաբանող մասի 1-ին կետի՝ ***«Քննիչ Ա.Գ-ն առանց իրավաչափ նպատակի նախապատրաստված նյութերով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը տնական ժամանակով չի հանձնել փորձաքրեագիտական վարչություն:***

Քննիչը բացատրություն տվեց, որ դատաձգաբանական փորձաքննության փորձանմուշը հանդիսացել է ակոսափող հրացան, սակայն իր անձնական օգտագործման ավտոմեքենան անսարք է եղել, ուստիև՝ չի կարողացել անձամբ այն Երևան տեղափոխել և հանձնել փորձաքրեագիտական վարչություն:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը իրավական ակտերով սահմանված կարգով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը հաշվառել է գրասենյակում, որի պայմաններում կատարել է օրենքով

սահմանված իր պարտականությունները: Դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը և ակոսափող հրացան փորձագիտական հիմնարկ ներկայացնելու հարաբերությունները կազմակերպահրավական բնույթի են, որի ապահովման պարտականությունը գտնվում է առավելապես քննչական բաժնի պետի գործառույթների տիրույթում:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

2. Քննչական բաժնի պետ Ա.Հ-ն, հանդիսանալով ստորաբաժանման ղեկավար, չի ապահովել ստորաբաժանման առջև դրված խնդիրները, այն է՝ հաստատապես իմանալով, որ նախապատրաստված նյութերով դատաձգաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը չի ուղարկվել փորձաքրեագիտական կենտրոն, միջոցներ չի ձեռնարկել դրա հանձնումը կազմակերպելու ուղղությամբ՝ խախտելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ ՔԿ նախագահի 10.06.2015թ. N 55 Լ հրամանի 14-րդ մասի 1- ին և 3-րդ կետերը:

Ա.Հ.-ն բացատրություն տվեց, որ քննիչը որոշել է անձամբ որոշումն ու փորձանմուշը հանձնել փորձագետներին: Նկատի ունենալով, որ նա պարտաճանաչ և կատարող անձ է, չի մտածել, որ դրա հանձնումը կձգձգի, հետևաբար, ուշադրություն չի դարձրել նշված հանգամանքին:

Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննչական բաժնի պետ Ա.Հ-ն պատասխանատվություն է կրում նախաքննության արդյունավետ կազմակերպման համար, նա պարտավոր էր կազմակերպել քննչական բաժնի գրասենյակում մուտքագրված՝ դատաձգաբանական փորձաքննություն

նշանակելու մասին որոշումը փորձագիտական հիմնարկ փոխանցելու աշխատանքները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննչական բաժնի պետի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը»[46]:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ փորձաքննության նշանակման փուլի համար բնորոշ են ինչպես քրեադատավարական, այնպես էլ տակտիկական բնույթի որոշակի միջոցառումների ձեռնարկումը:

Որպես կանոն, այս փուլում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

- փորձաքննության նշանակման անհրաժեշտության հարցի որոշումը, բացառությամբ ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված պարտադիր կամ գործնականում ուղղակի անհրաժեշտ դեպքերի,
- փորձագետին առաջադրվելիք հարցերի շրջանակի որոշումը,
- փորձաքննության ուղարկվող օբյեկտների, ըստ քանակի ու որակի՝ անհրաժեշտ նմուշների ստացումը և դրանց ապահովումը,
- փորձագիտական հիմնարկի կամ փորձագետի որոշակիացումը,
- փորձաքննություն նշանակելու մասին որոշման կայացումը և ուղեկցող փաստաթղթի պատրաստումը,

---

[46] Մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի 2016 թվականի որոշումների ժողովածու», Հատոր 2, Երևան, 2017, էջեր 114-116:

- կամ անձին որպես փորձագետ ճանաչելու մասին որոշման կայացումը և նրան իր իրավունքներն ու պարտականությունները բացատրելը և նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացնելը:

Կարող ենք փաստել, որ, թեև իրավաբանորեն փորձաքննության նշանակման փուլն ավարտվում է համապատասխան փորձաքննություն նշանակելու մասին որոշման կայացմամբ, այդուհանդերձ գործնականում դրան հետևում են նաև կազմակերպական որոշ միջոցառումներ, մասնավորապես որոշման, օբյեկտների ու նմուշների պատշաճ կարգով փորձագետին կամ փորձագիտական հիմնարկին հանձնելը, որն էական նշանակություն ունի հետագայում փորձագետի եզրակացության, ինչպես նաև դրանում արտացոլված տվյալների, հեզատազոտված օբյեկտների համապատասխանության ու արժանահավատության գնահատման համար:

Քրեադատավարական ու տակտիկական որոշակի յուրահատկությամբ օժտված է նաև փորձաքննությունների կատարման փուլը:

Այսպես, ինչպես նկատում ենք, որակական փոփոխությունների է ենթարկվել Նախագծի ամբողջ բովանդակությունը: Դա տեղի է ունեցել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կոնցեպտուալ իրավական գաղափարներով սահմանվող հարցերի առաջադրման շնորհիվ, որը ներառվել է քրեական դատավարության ոլորտ՝ հատուկ գիտելիքների միջոցով: Հայաստանի հանրապետությունում մարդու իրավունքների իրագործման երաշխիք է հանդիսանում դատավարության մրցակցային ձևը: Մրցակցության սկզբունքի գործնական իրագործումն հանդիսացավ 1998 թ.-ի

ՀՀ ՔԴՕ-ի ընդունումը, որով կարգավորվում է քննչական և դատավարական գործողությունների իրականցման կարգը՝ հիմնված դատավարության մեղադրական և պաշտպանական գործառույթներն իրականացնող սուբյեկտների իրավունքների սահմանման վրա, ընդ որում՝ նշանակալից կերպով մեծացել են պաշտպանի իրավունքները *(ՀՀ ՔԴՕ 73-րդ հոդված),* իսկ դրա հետագա կատարելագործումը կհանդիսանա Նախագծի ընդունումը:

Գիտնականների մոտ միանշանակ մոտեցում չկա նաև փորձաքննությունների իրականացման ընթացքում մրցակցության սկզբունքի ապահովման կապակցությամբ, ընդ որում՝ կարծիքները ինչպես դրական,[47] այնպես էլ՝ բացասական են[48]:

Ինչպես հայտնի է, դատական փորձաքննության կատարման մրցակցության սկզբունքն ավելի մեծ կիրառություն ունի դատավարության անգլոսաքսոնական համակարգի երկրներում:

ԱՊՀ մոդելային քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է, որ կասկածյալը կամ մեղադրյալն իրավունք ունի իր իսկ նախաձեռնությամբ և իր հաշվին կատարել այլընտրանքային փորձաքննություն և այդ անձանց պահանջով փորձագետի եզրակացությունը կարող է կցվել քրեական գործին *(ԱՊՀ մոդելային ՔԴՕ-ի 289-րդ հոդված):*

---

[47] Տե՛ս ***Дулов А. В.,*** Процессуальные проблемы судебной экспертизы, Минск, 1963, ***Джумайни М.,*** О действии принципа состязательности при проведении судебной экспертизы по уголовным делам в странах с англо-американской системой правосудия, Организационно-правовые проблемы судебной экспертизы: Сб. науч. тр. ВНИИСЭ, М., 1982, էջ 115:

[48] Տե՛ս ***Савицкий В. М.,*** О принципах уголовного процесса, М., 1961; ***Белкин Р. С.,*** Курс криминалистики, Т. 3, М., 1997, էջ 117:

Դատավարության մրցակցության, անձի իրավունքների անձեռնմխելիության, իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու, անմեղության կանխավարկածի, դատավարության ցանկացած փուլում իրավաբանական օգնության և պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքների հիմքում ընկած են այնպիսի դատավարական նորմեր, որոնք կարգավորում են քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների օգտագործման և, առաջին հերթին, դատական փորձաքննության ինստիտուտը:

Քանի որ փորձագետի եզրակացությունը քրեական վարույթի ապացույցներից մեկն է, ուստի դատական փորձաքննության նշանակումը և իրականացումն առնչվում է դատավարության մասնակիցների որոշակի իրավունքների հետ: Բացի դրանից՝ դատական փորձաքննությունը հանդիսանում է օբյեկտիվ տեղեկությունների աղբյուր, որը ստացվում է հատուկ գիտելիքների շնորհիվ: Ուրեմն պետք է խոսել ոչ թե փորձաքննության մրցակցության, այլև՝ քրեական դատավարությանը մասնակցող կողմերի մրցակցության մասին: Դրանից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ փորձաքննության իրականացման ժամանակ կիրառվող մրցակցության սկզբունքի հանդեպ դրական վերաբերմունքը կնպաստի դատավարության բոլոր մասնակիցների հավասարության սկզբունքի անշեղ իրականացմանը: Մրցակցության սկզբունքը համարվում է ՀՀ ՔԴՕ-ի գլխավոր արժանիքներից մեկը, և, լինելով նոր և քիչ ուսումնասիրված, կարիք ունի կատարելագործման՝ նորմերի բովանդակության, դրանց ներքին փոխկապակցվածության իմաստով, ինչն էլ, մեր կարծիքով, արվել է Նախագծում:

Վերոգրյալի համատեքստում, հատկապես ընդգծվում է ***փորձագիտական նախաձեռնության*** իրավական կարգավորման հիմնահարցը:

Այսպես, փորձագիտական հետազոտման ժամանակ փորձագետն իր մասնագիտական ու աշխատանքային փորձի վրա հիմնվելով՝ կարող է պարզել հետազոտման հետ կապված այնպիսի հարցեր, որոնք առաջադրված չեն եղել իրեն փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ: Վերջինս իսկապես կարևոր կրիմինալիստիկական ու դատավարական նշանակություն ունեցող հարց է և երկար ժամանակ մասնագիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել: Ուստի, հաշվի առնելով քննարկվող հիմնահարցի կարևոր նշանակությունը, կցանկանայինք մեր դիրքորոշումն արտահայտել դրա վերաբերյալ, հատկապես, եթե նկատի ունենանք, որ հարցի ճիշտ ու հստակեցված լուծումը կարող է էական դերակատարություն ունենալ փորձագետի եզրակացության գնահատման գործում:

Փորձագիտական նախաձեռնության կապակցությամբ նշենք, որ համաձայն ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի՝ փորձագետը պարտավոր է եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլ նաև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով:

Նշենք, որ փորձագիտական նախաձեռնության հարցը գրականության մեջ տեսական վեճերի տեղիք է տվել: Բանն այն է, որ, իրոք, հետազոտություն կատարելիս փորձագետն անձամբ կարող է պարզել որոշակի հանգամանքներ, որոնք կարող են գործի քննության համար էական նշանակություն

ունենալ: Բացի դրանից՝ որոշ դեպքերում փորձագետը գործի հանգամանքները, իրեղեն ապացույցներն ուսումնասիրելով, հենվելով իր մասնագիտական փորձի վրա, կարող է ավելի ճիշտ որոշել այն հարցերի շրջանակը, որոնք ենթակա են փորձագիտական հետազոտման, ինչպես նաև առաջադրել հարցեր, որոնց լուծումը հնարավոր է փորձաքննության միջոցով, ի տարբերություն փորձաքննություն նշանակող մարմնի, որը կարող է տեղյակ չլինել տվյալ փորձաքննության տվյալ տեսակի հնարավորությունների մասին: Ավելին, որոշ հարցեր կարող են ի հայտ գալ, օրինակ, դիահերձման, հետազոտվող օբյեկտնի ներքին կառուցվածքի, միկրոռելիեֆի ուսումնասիրման ընթացքում, որոնք փորձաքննությունը նշանակող մարմնի համար ակնառու կամ ակնհայտ չեն եղել և չէին էլ կարող լինել:

Սակայն վերը նշվածի առնչությամբ առաջանում են որոշ իրավական բնույթի խնդիրներ, որոնք էլ տարակարծությունների տեղիք են տվել. մասնավորապես փորձագետն իրավասու է իր նախաձեռնությամբ ընդլայնել հետազոտության շրջանակները, թե՝ ոչ: Այս կապակցությամբ Վ. Մ. Նիկիֆորովը նշում է. *«Փորձագետը կարող է և պարտավոր է նախաձեռնություն դրսևորել իր հետազոտության սահմաններն ընդլայնելու ուղղությամբ, դատարանի կամ քննիչի ուշադրությունը հրավիրել առանձին հանգամանքների վրա, սակայն միայն այն բնագավառում, որտեղ անհրաժեշտ են նրա հատուկ գիտելիքները*[49]»: Մյուս հեղինակներն այդպիսի նախաձեռնության դրսևորումը հնարավոր են համարում միայն փորձա-

[49] Տե՛ս ***Никифоров В. М.,*** Вопросы советской криминалистики, М., 1951, էջ 15:

քննություն նշանակած անձի հետ նախապես համաձայնեցնելուց հետո[50]:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ որոշ հեղինակներ փորձագիտական նախաձեռնության իրավունքը գնահատելով որպես բացառիկ՝ այնուամենայնիվ դրա իրականացումը հնարավոր են համարում որոշակի պայմանների առկայության դեպքում՝ նշելով, որ փորձագետն իրավունք ունի իր նախաձեռնությամբ ցույց տալ այն հանգամանքները, որոնց վերաբերյալ իրեն հարցեր չեն առաջադրվել, սակայն հետևյալ պահանջների պահպանման դեպքում. եթե այդ հանգամանքները վերհանվել են իր հատուկ գիտելիքների կիրառման հիման վրա և դուրս չեն գալիս փորձագետի իրավասության սահմաններից, եթե դրանք վերհանվել են փորձագիտական հետազոտման ընթացքում և բխում են դրանից, եթե դրանք նշանակություն ունեն փորձագիտական հետազոտության կատարման ընթացքում պարզաբանված հանգամանքների համար և անմիջականորեն կապված են դրանց հետ, այսինքն՝ բացահայտում, լրացնում, ճշգրտում են տվյալ փորձաքննության առարկան կազմող հանգամանքները և, վերջապես, եթե օբյեկտիվ պատճառներով փորձագետը չի կարողացել խորհրդակցել փորձաքննությունը նշանակած անձի հետ եզրակացության

---

[50] Տե՛ս ***Комиссарова Я. В.,*** Процессуальные и нравственные проблемы производства экспертизы на предварительном следствии, Дисс. на соиск. к.ю.н., Саратов, 1996, էջ 59; ***Чельцов М. А., Чельцова Н. В.,*** Проведение экспертизы в советском уголовном процессе, М., 1954, էջ 130; ***Шляхов А. Р.,*** Судебная экспертиза: организация и проведение, М., «Юридическая литература», 1979, էջեր 90-91:

մեջ նշված հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ ներառելու առիթով[51]:

Վերը շարադրվածի կապակցությամբ նշենք, որ միանշանակ համաձայն ենք այն հեղինակների այն տեսակետին, որ լրացուցիչ հանգամանքների վերհանումը չպետք է դուրս գա փորձագետի իրավասության սահմաններից, և պետք է պարզաբանի փորձագետը հետազոտություն կատարելիս նրա հատուկ գիտելիքների կիրառման հիման վրա, սակայն հետազոտության սահմանների հարցի առնչությամբ, մեր խորին համոզմամբ՝ նախ որևէ հետազոտություն չի կարող ունենալ սահմաններ, այլ հարց է, եթե խոսքը վերաբերում է որոշակի տեսակի հետազոտությանը: Անգամ այս պարագայում, գտնում ենք, որ եթե նույնիսկ փորձագետն իր նախաձեռնությամբ ընդլայնում է հետազոտության սահմանները կամ թեկուզև ծավալը՝ գործի քննության համար նշանակություն ունեցող որևէ փաստ, երևույթ կամ հանգամանք վերհանելու կամ պարզելու նպատակով, ապա այն արդարացի կարելի է համարել: Որպես ասվածի հիմնավորում՝ ընդգծենք, որ հաճախ հնարավոր է փորձագետի նոր հայտնաբերած հանգամանքները հետագա հետազոտությունների ընթացքում չբացահայտվեն՝ նկատի ունենալով, որ իրեղեն ապացույցները, փորձաքննության ուղարկված նյութը, առարկան կարող են ենթարկվել արտաքին ու ներքին տարբեր ազդեցությունների ու կրել ֆիզիկական, քիմիական, կազմաբանական կամ այլ տեսակի փոփոխություններ: Արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունեցող որոշ հանգամանքներ կարող

---

[51] Տե՛ս ***Бурков И. В., Мурзиков А. В.,*** Заключение эксперта как вид доказательств, Владимир, изд. Транзит-Икс, 2001, էջ 66:

են այդպես էլ մնալ չպարզված: Իսկ նման կարևոր ու անհրաժեշտ նշանակություն ունեցող գործողություն կատարելու հնարավորություն փորձագետին չընձեռելը կամ այդ հնարավորության ընձեռումը փորձաքննություն նշանակող անձի հայեցողությանը թողնելը, մեր կարծիքով, մեղմ ասած, անընդունելի է, առավել ևս, եթե հաշվի առնենք, որ օրենսդիրն այդ ճանապարհով արդեն գնացել է և ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով փորձագետին ոչ թե իրավունք է վերապահել, այլև պարտավորեցրել է եզրակացություն տալ նաև փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով: Բացի դրանից՝ քննարկվող հարցն ուղղակիորեն բխում է դատական փորձագիտության խնդիրների ու փորձագետի ինքնուրույնության բովանդակությունից:

Մասնագիտական գրականության մեջ նշվում է նաև, որ փորձագիտական նախաձեռնության հետ կապված որոշ խնդիրներ են առաջանում նաև փորձագետի կողմից նոր հարցեր ձևակերպելու ու դրանց պատասխանելու առնչությամբ: Մասնավորապես Պ. Ֆ. Տելնովը քննադատում է փորձագետի նախաձեռնությամբ նոր՝ լրացուցիչ հարցեր առաջադրելու հնարավորության հարցը: Վերջինս հիմնավորում է նրանով, որ հարցեր առաջադրելու իրավունքը վերապահված է փորձաքննություն նշանակած անձին և, ավելին, մինչև փորձաքննություն կատարելը մեղադրյալին[52] իրավունք է վերապահ-

[52] Հեղինակը նշում է միայն մեղադրյալին, սակայն, մեր կարծիքով, նման իրավունքով օժտված են նաև կասկածյալը՝ նախնական քննության և հետաքննության ընթացքում, ամբաստանյալը՝ դատական քննության ընթացքում: Բացի դրանից՝ համաձայն ՀՀ ՔԴՕ 247-րդ հոդվածի՝ քննարկվող իրավունքից օգտվում են ոչ միայն կասկածյալը, մեղադրյալը, այլ նաև տուժողը: Թեև հոդվածի ձևակերպման մեջ չի նշվում ամբաստանյալի մասին, սակայն

ված ծանոթանալու փորձագետին առաջադրված հարցերին, որն իրավասու է իր վերաբերմունքն արտահայտել դրանց վերաբերյալ և միջնորդել առաջադրել լրացուցիչ հարցեր: Իսկ փորձագետի կողմից այդ հարցերն առաջադրելիս մեղադրյալի այդ իրավունքը չի պահպանվում[53]: Իսկ Ի. Լ. Պետրուխինի կարծիքով՝ փորձագետի կողմից գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ հայտնաբերելիս, որոնք դուրս են գալիս իրեն առաջադրված հարցերի շրջանակից, փորձագետը կարող է այդ մասին հայտնել փորձաքննություն նշանակած մարմնին՝ որոշման մեջ համապատասխան հարցերը ներառելու և մեղադրյալին, իսկ դատարանում՝ ամբաստանյալին, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցներին դրանց ծանոթացնելու համար[54]:

Միանգամայն համաձայնելով հեղինակների այն տեսակետին, որ փորձաքննություն նշանակելիս, ինչպես նաև կատարելիս պետք է պաշտպանել նաև մեղադրյալի և դատավարության այլ մասնակիցների շահերը և հարգել իրավունքները, այնուամենայնիվ, ընդգծենք, որ վերջիններիս իրավունքը

համաձայն ՀՀ ՔԴՕ 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մեղադրյալը, ում վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության, կոչվում է ամբաստանյալ: Կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում մեղադրյալի այդ իրավունքից կարող է օգտվել նաև ամբաստանյալը դատական քննության ընթացքում: Վերջինս բխում է նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքի բովանդակությունից (քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու հնարավորությունը *(ՀՀ ՔԴՕ 19-րդ հոդվածի 2-րդ մաս))*:

[53] Տե՛ս ***Тельнов П. Ф.,*** Процессуальные вопросы судебной экспертизы (пособие для экспертов), ЦНИИСЭ, М.,1967, էջ 23:

[54] Տե՛ս ***Петрухин И. Л.,*** Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 111:

տվյալ դեպքում փորձաքննություն նշանակելիս արտահայտվում է փորձաքննություն նշանակելու մասին համապատասխան մարմնի որոշմանը ծանոթանալով և ընդամենը փորձագետին լրացուցիչ հարցեր առաջադրելով: Կարծում ենք, շատ դեպքերում փորձագետին դատավարական օրենսդրությամբ լրացուցիչ հարցեր առաջադրելու իրավունք ունեցող անձինք (կասկածյալ, մեղադրյալ, տուժող, դատավարության այլ մասնակից) նույնպես կարող են վրիպել կամ շրջանցել այնպիսի հարցեր, որոնք կարող են առաջադրվել ու լուծվել փորձագետի կողմից տվյալ հետազոտության ընթացքում և, վերջին հաշվով, չի բացառվում, որ փորձագետի նախաձեռնությամբ առաջադրված հարցերն ուղղակի բխեն գործի արդարացի քննության շահերից: Ստացվում է, որ իսկապես, որոշ դեպքերում փորձագետն իր նախաձեռնության իրավունքից օգտվելով՝ կարող է նպաստել, այլ ոչ թե խոչընդոտել մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացմանը: Բացի դրանից՝ մեղադրյալի և մյուս անձանց հարուցած միջնորդությունները՝ փորձագետին լրացուցիչ հարցեր առաջադրելու վերաբերյալ, հնարավոր է նաև մերժվեն վարույթն իրականացնող մարմնի կողմից և, վերջապես, փորձագետի կողմից առաջադրվող լրացուցիչ հարցերը բխում են կատարվող հետազոտությունից և կոչված են լրացնելու այն:

Ինչ վերաբերում է Ի. Լ. Պետրուխինի այն պնդմանը, թե լրացուցիչ հարցերի մասին փորձագետը նախօրոք կարող է հայտնել փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացրած անձին՝ մեղադրյալին, ինչպես նաև օրենքով նման իրավունքով օժտված դատավարության այլ մասնակիցներին տեղյակ պահելու համար, ապա չենք կարծում, որ այդ քայլին

չդիմելու դեպքում մեղադրյալի և դատավարության մյուս մասնակիցների իրավունքները կարող են խախտվել, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, օբյեկտիվորեն հնարավոր է նաև, որ փորձագետի առաջադրած հարցերը բխեն հենց մեղադրյալի կամ այլոց շահերից և բարելավվեն վերջիններիս վիճակը: Իսկ փորձագետի առաջադրած հարցերի շուրջ կասկածներ կամ այլ առարկություններ ունենալու դեպքում թվարկված անձինք կարող են օգտվելով իրենց մեկ այլ իրավունքից, այն է՝ փորձագետի եզրակացությանը համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն *(ՀՀ ՔԴՕ 247-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):*

Եվ, վերջապես, փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նշում է պարունակվում փորձագետի համար առ այն, որ վերջինս պատասխանի այդ թվում նաև հետազոտության ընթացքում առաջացող լրացուցիչ հարցերին, և այդ որոշմանը մեղադրյալը և դատավարական օրենսդրությամբ այդ իրավունքից օգտվող այլ անձինք ծանոթացվում են, այսինքն՝ նախապես տեղեկացվում են փորձագիտական նախաձեռնությամբ առաջադրվող հարցերի հնարավորության մասին, հետևաբար, անհրաժեշտության դեպքում վերը շարադրված կարգով (լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն կատարելու միջնորդությամբ) կարող են միջոցներ ձեռնարկել, եթե գտնեն, որ փորձագետին կարելի էր առաջադրել այլ հարցեր: Միևնույն ժամանակ, որպես կանոն, սկզբնական փորձաքննությունը, որպես անհետաձգելի սկզբնական քննչական գործողություն, նշանակվում է քննության դեռևս վաղ փուլում, անգամ մինչև քրեական գործ հարուցելը, երբ հնարավոր է, որ

կասկածյալը կամ մեղադրյալը դեռևս չեն հայտնաբերվել կամ գտնվում են հետախուզման մեջ:

Բացի դրանից՝ գրականության մեջ քննադատության է ենթարկվում նաև փորձագետին առաջադրվող հարցերի բաժանումը հիմնականի ու լրացուցիչի, քանի որ լրացուցիչ հարցերը կարող են ավելի կարևոր տեղեկություններ պարունակել, քան հիմնական հարցերը, և, ավելին, հարցերի նման բաժանումը կարող է խառնաշփոթ առաջացնել՝ հիմնական և լրացուցիչ փորձաքննությունների հետ կապված[55]:

Մեր կարծիքով՝ միանշանակ պետք է համաձայնել վերը ներկայացված տեսակետին, քանի որ իսկապես անընդունելի է փորձագիտական հետազոտմամբ լուծվող հարցերն ընդհանրապես դասակարգել հիմնականի և լրացուցիչի, որովհետև գործի քննության ցանկացած փուլում լրացուցիչ թվացող ցանկացած հարց հաջողությամբ կարող է էական հանգամանք պարզելու հիմք դառնալ: Բացի դրանից՝ փորձագետի կողմից առաջադրվող «լրացուցիչ» հարցերը կարող են առավել արժեքավոր լինել, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, փորձագետը հիմնվելով իր մասնագիտական հմտությունների, հատուկ փորձի վրա՝ կարող է իր նախաձեռնությամբ առաջ քաշել և լուծել տվյալ հետազոտության, ինչպես նաև գործի քննության համար էական նշանակություն ունեցող հարցեր: Թեև ՀՀ ՔԴՕ-ն չի օգտագործում լրացուցիչ հարցեր արտահայտությունը, այնուամենայնիվ, մեր պատկերացմամբ, այն ընդհանուր առմամբ կարող է կիրառվել միայն նշելու համար փոր-

---

[55] Տե՛ս ***Саматов Т. А.,*** К вопросу о процессуальной регламентации экспертной инициативы, Криминалистика и вопросы судебной экспертизы, Ташкент, изд. ТашГУ, 1988, էջ 10:

ձագետի պարզած հարցերը, այլ ոչ թե՝ պակաս հետաքրքրություն ներկայացնող հարցերի իմաստով:

Այս իմաստով, պետք է դրական գնահատել նաև Նախագծի 60-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի ձևակերպումը, այն է՝ *«Փորձագետը պարտավոր է եզրակացություն կամ կարծիք տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլև իր իրավասության շրջանակի մեջ մտնող և հետազոտության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով»:*

Հոդվածի այսօրինակ ձևակերպումից միանգամայն պարզ է դառնում, որ փորձագիտական նախաձեռնությունը Նախագծում նույնպես ամրագրված է որպես իմպերատիվ իրողություն, և անկախ նրանից, թե որոշման մեջ փորձաքննություն նշանակող մարմինն այդ մասին նշում կատարում է, թե՝ ոչ, միևնույն է այն փորձագետի համար սահմանված է որպես քրեադատավարական պարտականություն:

Հարկ է նշել, որ փորձագետի եզրակացության օգտագործումը քրեական վարույթի ընթացքում անխզելիորեն կապված է մարդու իրավունքների պաշտպանության հետ: Փորձագետի եզրակացության և մարդու իրավունքների պաշտպանության միջև կապը միջնորդավորված է փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությամբ: Փորձագետի եզրակացությունը քաղաքացիական, վարչական, քրեական, արբիտրաժային կամ այլ գործերով վարույթում, որտեղ քննարկվում են մարդու իրավունքներին և օրինական շահերին առնչվող բազմաբնույթ հարցեր, օգտագործվում է որպես ապացույց, որն այլ ապացույցների հետ համակցությամբ հիմնավորում է մարդու իրավունքների խախտման առկայությունը կամ բացակայությունը, խախտման բնույթն ու ծանրության աստիճանը, հասց-

ված վնասի չափն ու դրա վերականգնման հնարավորությունները և այլն[56]: Այս առումով փորձագետի եզրակացությունն ու մարդու իրավունքները փոխկապված են ապացուցման իրավունքի ինստիտուտի միջոցով, որը կանոնակարգում է փորձաքննության նշանակման և կատարման, ինչպես նաև դրա արդյունքի՝ փորձագետի եզրակացության ձեռքբերման և գնահատման հետ կապված իրավահարաբերությունները՝ որպես քրեական դատավարության նպատակների նվաճման և խնդիրների լուծման միջոցներից մեկը:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ փորձաքննության նշանակումը և կատարումը գիտական հետազոտության իրականացում է, որը կատարվում է քրեական գործով փաստական տվյալների բացահայտման նպատակով գործող քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան, այն անձանց կողմից, ովքեր տիրապետում են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի վերաբերյալ հատուկ գիտելիքների:

---

[56] Տե՛ս ***Ենգիբարյան Վ., Դավթյան Լ., Չախոյան Ա.,*** Դատական փորձագիտության տեսություն (Ծագումնաբանությունը, արդի հիմնախնդիրները և կատարելագործման հեռանկարները), Գիտական ձեռնարկ, Խմբ. ***Վ. Գ. Ենգիբարյան***, Երևան, «Անտարես», 2012, էջ 110:

ԳԼՈՒԽ 2.
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՑՈՒՅՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

§ 1. Փորձագետի եզրակացության կառուցվածքն ու բովանդակությունը

Փորձագիտական հետազոտության ընթացքն ու արդյունքներն ամրագրվում են փորձագետի եզրակացության մեջ: Փորձագետի եզրակացությունը տարբեր երկրներում տարբեր կերպ է անվանվում: Մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ընդունված է փորձագետի եզրակացությունն անվանել expert testimony[57], Մեծ Բրիտանիայում, Ավստրալիայում և ընդհանուր իրավունքի այլ երկրներում՝ expert report կամ expert opinion[58]: Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը շեշտելու համար տարբեր երկրներում օգտագործվում են նաև expert evidence, forensic evidence կամ scientific evidence տերմինները[59]: Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե փորձագետի եզրակացությունն ինչպիսի անվանում ունի այս կամ այն երկրում, թե՛ ռոմանոգերմանական, թե՛ անգլոսաքսոնական իրավական համակարգե-

---

[57] Տե՛ս ***Henderson C.,*** Expert witness, In ***Siegel J. A., Saukko P. J., Knupfer G. C. (Eds.),*** Encyclopedia of Forensic Sciences, New York, 2000, Volume 2, էջ 724:

[58] Տե՛ս ***Freckelton I . Selby H.,*** Expert evidence, Holmes Beach, Florida, 1993, էջեր 1/5021-1/5026:

[59] Տե՛ս ***Giannelli P. C., Imwinkelried E. J.,*** Scientific evidence, Virginia, 1986, էջեր 149-174:

րում, այն քրեական գործով վարույթի ընթացքում օգտագործվում է որպես ապացույց:

Այս իմաստով, հարկ ենք համարում ընդգծել, որ Նախագծով ապացույց է համարվում ոչ միայն փորձագետի եզրակացությունը, այլ նաև փորձագետի կարծիքը և փորձագետի ցուցմունքը *(Նախագծի 86-րդ հոդված)*, ինչը կապված է փորձագետի՝ որպես քրեական դատավարության սուբյեկտի դատավարական վիճակի որոշակի փոփոխության հետ:

Անշուշտ, գործող ՀՀ ՔԴՕ-ի իրավակարգավորումների պայմաններում մասնագետի կարծիքը չի կարող փոխարինել փորձագետի եզրկացությանը: Նշված հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանն *Արտեմ Արմենի Հարությունյանի գործով իր 2016 թ.-ի նոյեմբերի 1-ի ՍԴ3/0226/01/14 որոշման* մեջ: Մասնավորապես՝ վերլուծելով ՀՀ ՔԴՕ-ի համապատասխան նորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. *«Այսպիսով, փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին:*

Ինչ վերաբերում է մասնագետին, ապա վերջինս հետազոտություններ չի իրականացնում և եզրակացություն չի տալիս, այլ որևէ բնագավառում իր ունեցած հմտություններով և գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին այս կամ այն քննչական կամ այլ դատավարական գործողությունը կատարելիս: Այլ խոսքով՝ վերջինիս կողմից տրվող կարծիքը ոչ թե հետազոտության արդյունք է, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կամ փոր-

ձի վրա հիմնված դիրքորոշում: Ուստի պատահական չէ, որ օրենքով մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և այն չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդատվական նշանակություն»[60]:

ՀՀ ՔԴՕ 114-րդ հոդվածի 1-ին մասում տրված է փորձագետի եզրակացության սահմանումը. *«Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրված հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով»:*

Վերը ներկայացված ձևակերպման մեջ ուշագրավ է *«գործի համապատասխան նյութեր»* արտահայտությունը, քանի որ համաձայն ՀՀ ՔԴՕ 6-րդ հոդվածի 3-րդ կետի՝ նյութեր ասելով՝ պետք է հասկանալ փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք գործի բաղկացուցիչ մասն են կամ ներկայացված են գործին կցվելու համար, հաղորդումներ, ինչպես նաև փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք կարող են նպաստել գործով վարույթի ընթացքում նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելուն:

Քրեադատավարական նորմերի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ քրեական դատավարությունում

---

[60] Մանրամասն տե՛ս Արտեմ Արմենի Հարությունյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թ.-ի նոյեմբերի 1-ի ՍԴ3/0226/01/14 որոշման 16; 16.1-րդ կետերը:

փորձագետի եզրակացությունը կարող է տրվել միայն փաստաթղթեր կամ տարբեր տեսակի առարկաներ հետազոտելու արդյունքում: Ստացվում է, որ, օրինակ, դիակը չի կարող դատաբժշկական հետազոտության օբյեկտ համարվել, քանի որ այն ո՛չ փաստաթուղթ, ո՛չ էլ, առավել ևս, առարկա չէ, հետևաբար դատաբժշկական փորձագետի եզրակացության տալու համար հիմք (նյութ) չէ: Ընդ որում՝ օրենսդրորեն հստակեցված չէ նաև իրեղեն ապացույցների, դեպքի տեղից հայտնաբերված տարաբնույթ նյութերի, օբյեկտների, որպես քրեական գործի նյութեր, փորձագիտական հետազոտման օբյեկտներ դիտարկելու պայմանները և այլն:

Կարծում ենք, որ քրեադատավարական վերը նշված նորմերը դեռևս կատարելագործման, վերախմբագրման կարիք ունեն քննչական ու դատական պրակտիկայում անճշտություններից ու սխալներից խուսափելու նպատակով:

Այս առումով՝ հարկ է դրական գնահատել Նախագծի 91-րդ հոդվածի ձևակերպումը, որը, ըստ էության, լուծում է նշված խնդիրը՝ սահմանելով. «*Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների կամ հմտությունների օգտագործմամբ, վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն առաջադրած, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի վերաբերյալ գրավոր հիմնավորված հետևություններն են, որոնց փորձագետը հանգել է՝ վարույթի համապատասխան նյութերը, դիակը կամ վարույթին ներգրավված համապատասխան անձին հետազոտելով*»:

ՀՀ ՔԴՕ նորմերում իր արտացոլումն է գտել այն ձևակերպումը, երբ փորձագետը ստորագրություն է տալիս առ այն, որ

հատուկ նախազգուշացվել է եզրակացություն տալուց խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին: ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասով և 5-րդ կետով սահմանվում է, որ փորձագետը պարտավոր է իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ տալ հիմնավորված և օբյեկտիվ եզրակացություն: Փորձագետի՝ իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Ի տարբերություն ՀՍՍՀ 1961 թ.-ի ՔԴՕ-ի՝ գործող ՀՀ ՔԴՕ-ն սահմանում է, որ փորձագետի եզրակացության մեջ նշվում է, թե *«...ովքեր են մասնակցել, քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ» (ՀՀ ՔԴՕ 250-րդ հոդվածի 2-րդ մաս):*

Այնուհետև, փորձագետի եզրակացության բովանդակության լրիվության, ինչպես նաև դրա հետագա գնահատման համար էական նշանակություն ունի օրենքի այն պահանջը, համաձայն որի. *«Փորձագետի եզրակացությանը պետք է կցվեն հետազոտված իրեղեն ապացույցները, նմուշները և այլ նյութեր, ինչպես նաև փորձագետի հետևությունները պարզաբանող լուսանկարները, սխեմաները» (ՀՀ ՔԴՕ 250-րդ հոդվածի 3-րդ մաս):*

ՀՀ ՔԴՕ 250-րդ հոդվածում մանրամասն կանոնակարգվում է փորձագետի եզրակացության բովանդակությունը: Հոդ-

վածում նշված է, որ անհրաժեշտ հետազոտությունների կատարումից հետո փորձագետը կազմում է եզրակացություն, որում պետք է նշվի՝ երբ, որտեղ, ում կողմից (ազգանուն, անուն եւ հայրանուն, կրթություն, գիտական աստիճան և կոչում, զբաղեցրած պաշտոն), ինչ հիմքերով է կատարվել փորձաքննությունը, ով է մասնակցել փորձաքննությունը կատարելիս, ինչ նյութեր է փորձագետն օգտագործել, ինչ հետազոտություններ է կատարել, փորձագետին ինչ հարցեր են առաջադրվել և նրա պատճառաբանված պատասխանները: Եթե փորձաքննություն կատարելիս փորձագետը պարզում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնց առնչությամբ իրեն հարցեր չեն առաջադրվել, նա դրանք նշում է իր եզրակացության մեջ:

Փորձագետի եզրակացությունը կազմվում է երեք մասից՝ ներածական, հետազոտական և հետեւություններ:

Ներածական մասում նշվում են հետևյալ տվյալները.

- եզրակացության համարը և կազմման ամսաթիվը, փորձագետի պաշտոնը, փորձագիտական - քրեագիտական ստորաբաժանման անվանումը, փորձագետի ազգանունը, անունը, հայրանունը, կրթությունը, մասնագիտությունը, փորձագիտական աշխատանքի ստաժը,
- փորձաքննության կատարման համար հիմքերը (քննիչի, հետաքաննության մարմնի աշխատակցի կամ դատարանի որոշումը),
- քրեական գործի կամ վարչական իրավախախտման մասին գործի համարը, կատարված հանցագործության կամ վարչական արարքի՝ փորձաքննության առարկա-

յին վերաբերող հանգամանքների հակիրճ շարադրումը,

- փորձաքննության տեսակը,
- փորձաքննության ներկայացված օբյեկտների ցանկը,
- լուծման համար փորձագետի առջև դրված հարցերի ցանկը,
- կրկնակի փորձաքննության դեպքում եզրակացության ներածական մասում լրացուցիչ նշվում են սկզբնական փորձաքննությունը կատարած փորձագետի մասին տեղեկությունները, սկզբնական փորձաքննության հետևությունները, ինչպես նաև կրկնակի փորձաքննությունն նշանակելու շարժառիթները:

Եզրակացության հետազոտական մասում շարադրվում է հետազոտության գործընթացը.

- հետազոտվող օբյեկտների հակիրճ նկարագրությունը,
- հետազոտության ժամանակ կիրառված քրեագիտական միջոցները, մեթոդները և ստացված արդյունքները,
- կատարված փորձերը (դրանց նպատակը, բովանդակությունը, պայմանները, քանակը, ստացված արդյունքների հաստատունությունը, դրանց հաստատագրման համար օգտագործված միջոցները և մեթոդները),
- օբյեկտի հետազոտության արդյունքում բացահայտված էական տվյալները և հատկանիշները,
- ի հայտ եկած հատկանիշների համեմատական հետազոտության եղանակները և ձևերը, դրանց համընկնում-

ների և տարբերությունների գնահատման արդյունքնե-
ը:

Կրկնակի փորձաքննություն կատարելիս նշվում է՝ հաստատում է, արդյոք, այն սկզբնական փորձաքննության հետևությունները. տարբերության դեպքում՝ պարզաբանվում են տարբերվելու պատճառները:

Եզրափակիչ մասում շարադրվում են փորձագետի հետևությունները: Հետևություններում հակիրճ, հստակ, տարբեր մեկնաբանություններից զերծ ձևով շարադրվում են փորձագետին առաջադրված հարցերի պատասխանները:

Յուրաքանչյուր հարցի պատասխանը պետք է տրվի ըստ էության, իսկ անհնարինության դեպքում հարկ է ցույց տալ հարցի լուծման անհնարինությունը:

Փորձագետի եզրակացությանը կցվում են հետազոտությունից հետո մնացած իրեղեն ապացույցները, նմուշները, ինչպես նաև ֆոտոաղյուսակները, սխեմաները, գծանկարները և փորձագետի հետևությունները հաստատող այլ նյութեր: Եզրակացության հետազոտական մասի տեքստում դրանց հղումներ են կատարվում: Յուրաքանչյուր հավելված ուղեկցվում է բացատրական մակագրություններով և ստորագրում է փորձագետը:

Փորձաքննություն նշանակելու արդյունքներով, բացի փորձագետի եզրակացությունից, կարող է նաև կազմվել եզրակացություն տալու անհնարինության մասին փաստաթուղթ:

Փորձագիտական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականորեն մշակված է այն հիմքերի ցանկը, որոնց պարագայում պատրաստվում է եզրակացություն տա-

լու անհնարինության մասին փաստաթուղթ (կատարման անհնարինության ակտ).

- եթե առաջադրված հարցը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից *(ՀՀ ՔԴՕ 250-րդ հոդված)*: Փորձագետին երբեմն առաջադրվում են իրավական բնույթի հարցեր, օրինակ, ներկայացված անձնագիրը կամ թղթադրամները կեղծ են, թե՝ ոչ: Բացի դրանից՝ երբեմն հարցերը հասցեագրվում են ոչ անհրաժեշտ մասնագիտությամբ փորձագետին:
- Եզրակացություն տալու համար փորձագետին ներկայացված նյութերի ոչ պիտանիության ու անբավարարության նկատառումով: Դա հաճախ պայմանավորված է նմուշների սակավությամբ կամ նույնացվող օբյեկտի նվազ տեղեկատվությամբ (օրինակ, մատնահետքում չեն պատկերվել պապիլյար գծանախշի կառուցվածքի անհրաժեշտ քանակությամբ առանձնահատկություններ):
- Գիտության և փորձագիտական պրակտիկայի ժամանակակից վիճակը հնարավորություն չի ընձեռում լուծել փորձագետին առաջադրված հարցը:

Երբեմն փորձագետի առջև դրվում են հարցեր, որոնց մի մասը նա կարող է լուծել, իսկ մյուս մասն ի վիճակի չէ լուծելու: Այդպիսի դեպքերում կազմվում է եզրակացություն, որում, ըստ էության, հետևություններից հետո փորձագետը նշում է, թե որ հարցերին և ինչու նա չի կարող պատասխանել:

Հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ նյութը վերադարձվում է փորձաքննությունը նշանակած անձին՝ առանց փորձաքննության կատարման: Դա կարող է պատահել.

- փորձաքննության նշանակման դատավարական կարգի խախտման դեպքում,
- այն հիմնարկում, որտեղ ստացվել է նյութը, անհրաժեշտ մասնագետների, սարքավորումների կամ հետազոտության կատարման համար պահանջվող նյութերի բացակայության դեպքերում:

ՀՀ ՔԴՕ 104-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը համարվում է ապացույցի տեսակ:

Կարծում ենք փորձագետի եզրակացությունը, որպես ապացույցի առանձին տեսակ, ունի որոշակի առանձնահատկություն այն պատճառով, որ դրա ձևավորման համար կիրառվում են հատուկ գիտելիքներ ու մեթոդիկաներ: Այս հանգամանքն իր դրսևորումն է ստանում նաև փորձագետի եզրակացության հասկացությունը սահմանելիս: Փորձագետի եզրակացության հասկացության մասին խոսելիս՝ Մ. Ա. Չելցովը և Ն. Վ. Չելցովան նշում են. *«Եթե որոշակի փաստի առկայության կամ բացակայության մասին չկա հատուկ փորձի վրա հիմնված հետևություն, չի կարող լինել նաև փորձագետի եզրակացություն»*[61]: Նման տեսակետի կողմնակից է նաև Մ. Ս. Ստրոգովիչը՝ խոսելով փորձագետի եզրակացության հասկացության մասին[62]:

Մասնագիտական գրականության մեջ, քննարկելով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի տեսակի, առանձնահատկությունները, առանձնացվում են երեք հիմնա-

---

[61] Տե՛ս ***Чельцов М. А., Чельцова Н. В.,*** Проведение экспертизы в советском уголовном процессе, М., 1954, էջ 25;

[62] Տե՛ս ***Строгович М. С.,*** Курс советского уголовного процесса, М., 1958, էջ 231:

կան հատկանիշներ, որոնք բնորոշ են փորձագետի եզրակացությանը՝ որպես ապացույցի առանձին տեսակ: Դրանք են. նախ եզրակացությունը տրվում է գիտական հետազոտություն կատարելու արդյունքում, ուստի նման հետազոտությունը կատարվում է միայն հատուկ գիտելիքներով օժտված անձի կամ անձանց կողմից, այսինքն՝ կիրառվում են հատուկ գիտելիքներ և, վերջապես, ապացուցողական տեղեկատվությունը տրվում է եզրակացություն՝ գրավոր ակտ կազմելու միջոցով[63]: Միևնույն ժամանակ գոյություն ունի նաև տեսակետ, համաձայն որի՝ թեև փորձագետի եզրակացությունը վերը նշված հատկանիշներով պայմանավորված ապացույցի մյուս տեսակների շարքում ունի որոշակի առավելություններ, այնուամենայնիվ դա հիմք չէ փորձագետի եզրակացությունը ապացույցի մյուս տեսակների նկատմամբ գնահատել որպես առավելություն ունեցող հատուկ, բացառիկ ապացույց[64]:

Կարծում ենք՝ չի կարելի չհամաձայնել նման տեսակետի հետ, քանի որ թեև օրենսդրությամբ սահմանված ապացույցի տեսակներից որևէ մեկն արժանահավատությունը որոշակիորեն երաշխավորող առանձնահատկություններ ունի, սակայն դա չի կարող ընդհանուր առմամբ այդ ապացույցին առավելություն տվող հանգամանք դիտվել: Մեր կարծիքով, յուրաքանչյուր ապացույցի արժեքը կարող է ի հայտ գալ միայն այլ ապացույցների համակցությամբ դրա գնահատման արդյունքում: Այլ հարց է, որ որոշակի գործերով փորձագետի եզրա-

---

[63] Տե՛ս ***Давтян А. Г.,*** Экспертиза в гравданском процессе, М., «Спарк», 1995, էջ 67:

[64] Տե՛ս ***Треушников М. К.,*** Оценка отдельных видов доказательств по гражданским делам, Советская юстиция № 1, 1985, էջ 24:

կացությունը կարող է վճռորոշ դեր խաղալ գործի քննության ընթացքի և ընդհանրապես դրա բացահայտման համար: Մասնավորապես կեղծ փաստաթղթեր պատրաստելու վերաբերյալ գործերի քննության ժամանակ փորձագետի կողմից փաստաթղթի տեքստի սկզբնական բովանդակության փոփոխման փաստի հատկանիշների հայտնաբերումը հիմնական նշանակություն ունի այլ ապացույցների հետ մեկտեղ կեղծարարության փաստն ապացուցելու համար: Ասվածը հիմնավորվում է նաև Վերաքննիչ դատարանում մեր կատարած գործերի ուսումնասիրության արդյունքներով: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ փաստաթղթերի կեղծման համար մեղադրանքի ապացուցման հիմքում դատարանը հիմնական գնահատականը տալիս է փորձագետի տված եզրակացությանը, որով հաստատվում է դրանում կատարված փոփոխությունների փաստը[65]:

Ընդհանրապես փորձագետի եզրակացությունն ապացույցի մյուս տեսակների նման պետք է վստահություն ներշնչի, որը կարող է ապահովվել միայն հետազոտման ընթացքի շարադրման պարզության, մատչելիության, ինչպես նաև հետևությունների գիտական հիմնավորվածության, արժանահավատության և փաստարկվածության դեպքում: Այս իմաստով,

---

[65] Տե՛ս ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի արխիվ, վարույթ № 370/99 քրեական գործով ըստ մեղադրանքի Վ. Մ.-ի ՀՀ ՔՕ 15-78-րդ հոդվածի 1-ին մաս և 213-րդ հոդվածի 3-րդ մասերով, 17.11.1999 թ., վարույթ № 405/2000 քրեական գործով ըստ մեղադրանքի Ա. Գ.-ի ՀՀ ՔՕ 213-րդ հոդվածի 1-ին մասով 05.10.2000 թ., վարույթ №10/555/02 ըստ մեղադրանքի Է. Ս.-ի ՀՀ ՔՕ 89-րդ հոդվածի, 162^4 -րդ հոդվածի, 213 հոդվ. 2-րդ մաս, 159^1 -րդ հոդվածի 1-ին մասերով, 14.02.2002 թ., վարույթ № 184/99 ըստ մեղադրանքի Ռ. Շ.-ի ՀՀ ՔՕ 89-րդ հոդվածի 4-րդ մաս, 213-րդ հոդվածի 3-րդ մաս, 231-րդ հոդվածի 1-ին մաս 2-րդ կետի, 25.06.1999 թ. և այլն:

կարևոր ենք համարում ընդգծել, որ փորձագետը հետազոտման արդյունքները շարադրելիս ընդհանրապես պետք է ձեռնպահ մնա առանց անհրաժեշտության հատուկ հասկացություններ ու եզրույթներ, օտարահունչ բառեր կիրառելուց, որպեսզի հետագայում եզրակացության բովանդակության վերաբերյալ տարակարծություններ չառաջանան: Ավելացնենք, որ բոլոր դեպքերում կիրառվող տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներով պայմանավորված՝ եզրակացության մեջ կարող են օգտագործվել այդ բնագավառի հատուկ եզրույթներ ու արտահայտություններ[66]: Այս իմաստով «փորձագիտական լեզուն» անընդհատ կատարելագործման կարիք ունի[67]:

Փորձագետի եզրակացության ներածական մասում սովորաբար հարցերը շարադրվում են այն հաջորդականությամբ, ինչպես դրանք նշված են փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ: Այս կապակցությամբ նշենք, որ փորձագետի կողմից իրեն առաջադրված հարցերի ձևակերպումները փոփոխելու հնարավորության հարցի շուրջ առկա են տարակարծություններ: Որոշ հեղինակներ գտնում են, որ փորձագետն իրավասու չէ փոխել իրեն առաջադրված հարցերի ձևակերպումները, բացառությամբ քերականական սխալների, վրիպակների դեպքերի[68], իսկ այլ հեղինակներ գտնում են, որ

---

[66] Նման դեպքերում հարցին լուծում տալու համար օրենսդիրը ՀՀ ՔԴՕ 252-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել է, որ փորձագետը կարող է հարցաքննվել նաև իր կողմից եզրակացության մեջ օգտագործված հասկացությունները ճշգրտելու նպատակով:

[67] Տե՛ս ***Леденчук А. К.*** Заключение судебного эксперта: логика, истинность, достоверность: Дисс… на соиск. докт. юрид. наук, М., 1995, էջ 57:

[68] Տե՛ս Назначение и производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов. ВНИИСЭ, отв. ред. ***Г. П. Аринушкин, А. Р. Шляхов,*** М., изд-во «Юридическая литература», 1988, էջ 28:

եթե փորձագետին հասկանալի է հարցի իմաստը, սակայն գտնում է, որ այն պետք է վերաձևակերպվի, ապա փորձագետը կարող է հարցը վերաձևակերպել այնպես, ինչպես նա հասկանում է իր հատուկ գիտելիքներին համապատասխան, սակայն պարտադիր կերպով նշելով նաև հարցի սկզբնական ձևակերպումը[69]:

Մեր կարծիքով՝ բոլոր դեպքերում նպատակահարմար է փորձագետին իրավունք վերապահել փոխելու իրեն առաջադրված հարցերի ձևակերպումները հետևյալ երկու պայմանների պահպանման դեպքում. նախ վերաձևակերպումը չպետք է փոխի կամ կասկած առաջացնի առաջադրված հարցի բովանդակության վերաբերյալ, ապա պարտադիր կերպով պետք է նշվի նաև հարցի սկզբնական ձևակերպումը: Վերջին հաշվով, փորձագիտական հետազոտման և եզրակացության հետագա գնահատման տեսանկյունից էականը հարցի բովանդակության ճիշտ ընկալումն է, այլ ոչ թե ձևակերպման ոճը կամ ձևը, որը փորձագետը կարող է փոխել իր մասնագիտական ընկալման աստիճանին կամ պատկերացումներին համապատասխան:

Ներածական մասում նշվում են նաև լրացուցիչ հարցերը, որոնց լուծումը փորձագետն անհրաժեշտ է համարում սեփական նախաձեռնությամբ՝ փորձաքննության ամբողջականությունն ու գործի արդարացի քննությունն ապահովելու նպատակով:

Փորձագետի կատարած հետազոտության ընթացքի և արդյունքների ամրագրման, ինչպես նաև եզրակացության

---

[69] Տե՛ս ***Бурков И. В., Мурзиков А. В.,*** Заключение эксперта как вид доказательств, Владимир, изд. «Транзит-Икс», 2001, էջ 26:

գնահատման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե փորձագետն իրավասու է, արդյոք, որպես ելակետային տվյալներ օգտագործել մասնագիտական կամ այլ անհրաժեշտ գրականության աղբյուրներից ստացված տվյալները, թե՝ միայն պետք է սահմանափակվի իր անմիջական հետազոտության տվյալներով: Այս կապակցությամբ նշենք, որ հաճախ տարաբնույթ փորձագիտական հետազոտությունների կատարման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում օգտվել գրականության տարբեր աղբյուրներից, տեղեկագրերից կամ այլ հետազոտությունների արդյունքում հաստատված տվյալներից՝ գիտականորեն հիմնավորված եզրակացություն տալու համար: Որպես ելակետային տվյալներ՝ փորձագետը կարող է երբեմն հաշվի առնել նաև փորձարարական-գիտական հետազոտությունների արդյունքները, որոնք կատարվել են ուրիշ հիմնարկներում: Դրանք կապված չեն որոշակի գործի հետ, սակայն կարող են կարևոր նշանակություն ունենալ եզրակացություն տալու համար: Մասնավորապես՝ փաստաթղթերի փորձագիտական հետազոտման ժամանակ փորձագետը կարող է հարցում կատարել առանձին ներկանյութերի որոշակի տվյալների վերաբերյալ, այդ տվյալները տրամադրելու կամ տվյալ դեպքում որոշակի մեթոդիկայի կիրառման բնութագրիչների մասին և այլն: Այս բոլոր տվյալները կրում են խորհրդատվական բնույթ և նման են տարբեր տեղեկագրերում պարունակվող տվյալներին: Համապատասխան փաստաթղթերը կարող են կցվել եզրակացությանը կամ էլ եզրակացության մեջ նշվում է այդ տվյալների ստացման աղբյուրը: Ընդ որում՝ նույնիսկ մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ նման գիտամեթոդա-

կան ձեռնարկների ու տեղեկագրերի տվյալների կիրառումը բարձրացնում է եզրակացության գիտական հիմնավորվածության արժեքը, քանի որ վերջիններս պարունակում են գործնականում արդեն փորձարկված և իրենց արդյունավետությունն ու հիմնավորվածությունը հաստատած այս կամ այն բնագավառի տվյալներ[70]: Ընդ որում՝ փորձագետն իր աշխատանքի ընթացքում կիրառում է ոչ թե ուղղակի գիտության ու տեխնիկայի տվյալները, այլև գիտականորեն հիմնավորվածություն ունեցող, հատուկ փորձարկված ու մշակված մեթոդներ, կանոններ ու դրույթներ, որոնք կարող են օգտագործվել փորձագիտական խնդիրների լուծման համար[71]:

Պ. Ֆ. Տելնովի կարծիքով՝ փորձագետը կարող է խորհրդակցել այլ մասնագետների հետ, օգտվել գրականության տվյալներից, որոնք որևէ դատավարական նշանակություն չունեն: Կարևորն այն է, որ փորձագետը եզրակացությունը տալիս է իր անունից և չի կարող այլ մասնագետի կատարած հետազոտության արդյունքներով եզրակացություն տալ[72]:

Միանշանակ համաձայնելով հեղինակի վերը նշված կարծիքի հետ՝ հավելենք, որ փորձագետն իր կատարած հետազոտության համար կրում է անձնական պատասխանատվություն, բնականաբար, վերջինս ենթադրում է, որ հետազոտությունը պետք է անմիջականորեն կատարի միայն ինքը, թեև հետազոտության ընթացքում կարող է օգտվել այլ՝

---

[70] Տե՛ս ***Бурков И. В., Мурзиков А. В.,*** Заключение эксперта как вид доказательств, Владимир, изд. «Транзит-Икс», 2001, էջեր13-14:

[71] Տե՛ս ***Педенчук А. К.,*** Заключение судебного эксперта: логика, истинность, достоверность: Дисс… на соиск. докт. юрид. наук, М., 1995, էջեր 50-51:

[72] Տե՛ս ***Тельнов П. Ф.,*** Процессуальные вопросы судебной экспертизы, (пособие для экспертов) ЦНИИСЭ, М., 1967, էջ 8:

առավել փորձառու մասնագետների խորհուրդներից, տարբեր տեղեկագրերից և այլ տվյալներից, սակայն եզրակացությունը պետք է հիմնավորի անմիջականորեն իր կատարած հետազոտությունների արդյունքներով:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ հետազոտման ընթացքում տեղեկատուների կամ գրականության տվյալները, որպես ելակետային, օգտագործելու դեպքում նպատակահարմար է այդ մասին հայտնել փորձաքննություն նշանակած մարմնին[73]:

Կարծում ենք, որ դրա անհրաժեշտությունը չկա, նախ՝ քանի որ դրանք սկզբնական տվյալներ են, ապա՝ խորհրդատվական բնույթի, և այնուհետև նշված մարմիններին տեղեկացնելը որևէ հետևանք չի կարող ունենալ՝ նկատի ունենալով, որ վերջիններս իրավասու չեն ուղղորդել հետազոտման ընթացքը, առավել ևս՝ վերահսկել այն:

Եզրակացության հետազոտական մասում շարադրվում են փորձագետի կիրառած տեխնիկական միջոցներն ու մեթոդները՝ մանրադիտակային, լուսանկարչական, ֆիզիկական, քիմիական և այլն: Ընդ որում, պարտադիր պետք է նշել տարբեր սարքերի ու մեթոդների կիրառման տեխնիկական պայմանների մասին, քանի որ դրանք մեծ ազդեցություն ունեն ամբողջ հետազոտության կատարման ընթացքի, հետևությունների հիմնավորման և գնահատման համար: Հետազոտման մեթոդները և բարդ սարքերի աշխատանքի տեխնոլոգիական ռեժիմը, ստացված արդյունքները եզրակացության մեջ, կարծում ենք, այնքանով մանրամասնված պետք է նշվեն, որպեսզի հե-

---

[73] Տե՛ս ***Шляхов А. Р.,*** Судебная экспертиза: организация и проведение, М., 1979, էջ 127:

տագայում հնարավոր լինի ստուգել հետևությունների ճշմարտացիությունը՝ կրկնելով հետազոտման մեթոդիկան, այլ կերպ՝ եզրակացության հիմնավորվածությունը:

Հետազոտման ընթացքում կիրառված մեթոդիկաների շարադրման հարցի հետ կապված՝ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ փորձագետը կարող է հիմնվել տարբեր գիտնականների հեղինակած տեսությունների ու դրույթների վրա[74], իսկ այլ հեղինակներ էլ նշում են, որ նման դեպքերում փորձագետը ոչ միայն պետք է նշի որոշակի մեթոդիկայի հեղինակի և գրականության աղբյուրի մասին, այլ նաև պետք է տվյալներ նշի դրա պաշտոնական հաստատման մասին, եթե այն պաշտոնապես երաշխավորվել է[75]: Համակարծիք ենք, որ ցանկացած դեպքում որևէ հեղինակի մասնավոր մեթոդիկա կիրառելիս՝ հարկ է նաև նշել դրա պաշտոնական հաստատման վերաբերյալ տվյալներ կիրառված մեթոդիկայի արդյունքների ստացման արժանահավատությունը մեծացնելու և ընդհանրապես եզրակացության ապացուցողական արժեքը բարձրացնելու նպատակով:

Եզրակացության հետազոտական մասում հետազոտվող օբյեկտի ձևը նկարագրելիս նպատակահարմար է օգտվել համընդհանուր կիրառում ունեցող երկրաչափական հասկացություններից և խուսափել համանուններ կիրառելուց: Մասնավորապես գույնի նկարագրման ժամանակ, կարծում ենք, առավել նպատակահարմար է օգտվել դրա ֆիզիկական բնու-

---

[74] Տե՛ս ***Владимиров Л. Е.,*** Учение об уголовных доказательствах, Тула, изд. «Автограф», 2000, էջ 244:

[75] Տե՛ս ***Бурков И. В., Мурзиков А. В.,*** Заключение эксперта как вид доказательств, Владимир, изд. «Транзит-Икс», 2001, էջ 46:

թագրիչներից, մասնավորապես օգտվել գունավոր ապակիների հավաքածուից՝ նշելով գույնի խտության աստիճանը, ասենք՝ բաց (մուգ) կարմիր և այլն: Գտնում ենք, որ պետք է ձեռնպահ մնալ գունային համեմատություններ կիրառելուց: Նույնը վերաբերում է նաև չափի, քաշի, ծավալի և այլնի բնութագրումներին, եթե դրանք անհրաժեշտ են փաստաթղթերի փորձագիտական հետազոտման ընթացքի ու արդյունքների ամրագրման ժամանակ:

Հետազոտման ընթացքի և արդյունքների շարադրումը նպատակ ունի փորձաքննություն նշանակած անձին հնարավորություն ընձեռել համոզվելու հետազոտման մեթոդիկայի ամբողջականության ու գիտական հիմնավորվածության, դրա կիրառման ստույգության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, եզրակացության հետազոտական մասում պարտադիր կերպով մանրամասն պետք է նկարագրել հետազոտման ընթացքում կիրառված գիտատեխնիկական մեթոդները: Այս իմաստով կցանկանայինք կարևորել նոր գիտատեխնիկական մեթոդիկաների կիրառման ընթացքի շարադրման հարցը: Խոսքը մասնավորապես համակարգչային նոր տեխնիկայի և ծրագրերի կիրառման մասին է: Այդ դեպքում մանրամասն պետք է շարադրել համակարգչային տեխնիկայի ու այն ծրագրի տեխնիկական տվյալները, որոնք կիրառվել են հետազոտություններ կատարելիս, որպեսզի հնարավոր լինի ծանոթանալ կիրառված մեթոդիկայի հնարավորություններին ու արժանահավատությանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ վերարտադրել այն:

Կարծում ենք, որ այսօրինակ հարցերի ավելի խոր քննարկումը հրատապ է՝ հաշվի առնելով համակարգչային տեխնի-

կայի զարգացման ու դրա կիրառման համընդհանրության ժամանակակից վիճակն ու հեռանկարները:

Շարադրելով անջատ և համեմատական հետազոտությունների տվյալները՝ փորձագետը եզրակացության մեջ դրանց տալիս է գիտական գնահատական: Փորձագետը ոչ միայն պետք է հավաստի ստացված արդյունքները, հատկանիշների նույնությունը կամ տարբերությունը, այլ պետք է գիտականորեն հիմնավորի հետազոտվող օբյեկտները բնութագրող հատկանիշների նշանակությունը:

Այս կապակցությամբ նշենք, որ մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա՝ եթե կատարված հետազոտության արդյունքում փորձագետը պարզում է, որ իր հայտնաբերած հատկանիշները բավարար են որոշակի (կատեգորիկ) դրական եզրակացություն տալու համար, իսկ որոշ հատկանիշների տարբերությունները չեն կարող ազդել այդ եզրահանգման վրա, ապա փորձագետն իր եզրակացության մեջ պարտավոր է պարզաբանել, թե ինչու հայտնաբերված տարբերությունները չեն կարող ազդել իր կատեգորիկ եզրահանգման վրա[76]:

Եզրափակիչ մասում նշվում են փորձագետի հետևությունները: Փորձագետի հետևություններն իրեն առաջադրված հարցերի պատասխաններն են, որոնցում հատուկ գիտելիքների կիրառման հիման վրա հաստատվում է որոշակի փաստի, հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը և այլն: Եզրակացության մեջ դրանք շարադրվում են այն հաջորդականությամբ, որով դրանք դրվել են փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ: Դրա հետ մեկտեղ նշվում են նաև

---

[76] Տե՛ս ***Яблоков Н. П.,*** Криминалистическое исследование материалов документов, М., изд. Московского университета, 1961, էջ 33:

այն փաստերը, որոնք բացահայտվել են փորձագետի սեփական նախաձեռնությամբ:

Պատասխանները պետք է խստորեն համապատասխանեն առաջադրված հարցերի բովանդակությանը: Պատասխանները ձևակերպվում են հստակ ու պարզ, դրանք չպետք է լինեն երկիմաստ և տարբեր մեկնաբանությունների տեղիք տվող:

Հետևությունները ձևակերպելիս նպատակահարմար չէ օգտագործել իրավական գնահատական պարունակող արտահայտություններ, մասնավորապես, փաստաթղթերի հետազոտման դեպքում՝ «կեղծ փաստաթուղթ», «ստորագրությունը կեղծված է», «կեղծ կնիք» և այլն: Սակայն երբեմն փորձագետներին հենց փորձաքննություն նշանակող մարմիններն են առաջադրում այդպիսի հարցեր, օրինակ, օրինական է, արդյոք, Կ.-ին տրված վարորդական իրավունքի վկայականը, պատրաստված է, արդյոք, այն Կ.-ի կողմից թե՝ ոչ[77]: Հասկանալի է, որ նշված հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է կատարել քննչական փորձարարություն, այլ ոչ թե նշանակել փորձաքննություն:

Փորձագիտական պրակտիկայում հանդիպում են նաև այլ ձևակերպումներ: Մասնավորապես փորձագետներին առաջադրվում են հետևյալ հարցերը. *«Փորձաքննության ներկայացված թղթադրամները կեղծ են, թե՝ ոչ, եթե՝ այո, ապա ինչ եղանակով»*, *«Փորձաքննությանը ներկայացված ԱՄՆ 100 դոլարանոց թղթադրամները կեղծ են, թե՝ ոչ, եթե՝ այո, ապա ինչ եղանակով, կեղծված լինելու դեպքում դրանք համեմատել*

---

[77] Տե՛ս ***Шляхов А. Р.,*** Общие положения методики криминалис¬тической экспертизы, Учебно-методическое пособие, М., 1961, էջ 117:

հայտնաբերված ՀՀ կեղծ թղթադրամների հետ՝ պատրաստման եղանակի նույնացում կատարելու նպատակով», կամ *«փորձաքննությանը ներկայացված ծխախոտի վրա փակցված հարկային դրոշմանիշերը կեղծ են, թե՝ ոչ, եթե կեղծ են, ինչ եղանակով և ինչ հատկանիշներով են տարբերվում պետական չափորոշիչով պատրաստված դրոշմանիշերից»*: Նման դեպքերում ճիշտ կլինի հարցեր առաջադրել հետևյալ կերպ. փորձաքննությանը ներկայացված թղթադրամները համապատասխանում են ՀՀ կամ ԱՄՆ պետական չափորոշիչ թողարկմանը, թե՝ ոչ, ինչ եղանակով են դրանք պատրաստվել և այլն, այսինքն՝ այն կերպ, ինչպես փորձագետները ձևակերպել են իրենց պատասխանները նշված եզրակացությունների հետևությունների մասում: Միանգամայն ճշգրիտ կարելի է համարել փորձաքննությանն առաջադրվող հարցերի հետևյալ ձևակերպումները. «ներկայացված փաստաթղթի սկզբնական տեքստը փոփոխման ենթարկվել է, թե՝ ոչ, եթե՝ այո, ապա ինչ եղանակով է ենթարկվել փոփոխման և ինչպիսին է եղել նախորդ տեքստը. վկայականում լուսանկարի փոփոխում եղել է, թե՝ ոչ. վկայականի վրա եղած կնիքները ինչ եղանակով են պատրաստված՝ տնայնագործական, թե՝ գործարանային, ինչ եղանակով են կնիքները թողնված վկայականի ներդիրի և լուսանկարի վրա»:

Փաստենք, որ նման դեպքերում փորձագետն ուղղակի պետք է եզրակացության մեջ արձանագրի միայն տեքստում փոփոխության հայտնաբերման փաստը՝ դրա իրավաբանական որակումը թողնելով փորձաքննություն նշանակող մարմնի իրավասությանը:

Եզրակացության մեջ փորձագետի շարադրած հետևությունները պետք է համապատասխանեն կատարված հետազոտման ծավալներին, այլ կերպ ասած՝ հետևությունները անհրաժեշտորեն պետք է բխեն հետազոտական մասի շարադրանքից[78]: Կարծում ենք, նման համադրում կատարելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել եզրակացության ներածական մասում փորձագետին առաջադրված հարցերի բովանդակությունը ևս:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ նպատակահարմար չէ մի կողմից անհարկի ծանրաբեռնել եզրակացությունը գիտական տարաբնույթ եզրույթներով ու տվյալներով, իսկ մյուս կողմից էլ՝ սահմանափակվել մակերեսային շարադրանքով: Կարծում ենք, փորձագետի համար նման դեպքերում որպես ելակետ, ուղենիշ պետք է ընդունվի կրկնակի փորձաքննության կատարման հնարավորությունը, երբ իր բացակայության դեպքում իր իսկ կողմից կազմված եզրակացությունը հնարավություն կտա նույնությամբ վերարտադրել փորձագիտական հետազոտման ողջ ընթացքը, ստուգել կիրառված մեթոդիկաների արժանահավատությունը, հետևությունների հիմնավորվածությունը և այլն:

---

[78] Տե՛ս ***Бурков И. В., Мурзиков А. В.,*** Заключение эксперта как вид доказательств, Владимир, изд. «Транзит-Икс», 2001, էջ 53:

§ 2. Փորձագետի եզրակացության գնահատման չափանիշները

Փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով:

Փորձաքննության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, գնահատվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից, որն իրականացվում է ապացույցների գնահատման ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով ապացույցի այս տեսակի առանձնահատկությունները:

ՀՀ ՔԴՕ 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից»:*

Փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է որոշակի գործով վարույթն իրականացնող մարմնի մոտ ներքին համոզմունքի ձևավորում եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև

դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ[79]:

Մեր կարծիքով՝ փորձագետի եզրակացության գնահատումը կարելի է սահմանել որպես հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի կամ դատախազի մտավոր տրամաբանական գործունեություն, որի արդյունքում գնահատող սուբյեկտի մոտ ձևավորվում է ներքին համոզմունք եզրակացության թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության, գիտական հիմնավորվածության վերաբերյալ, հետևություններ են արվում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման գործում փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստական տվյալների դերի և նշանակության մասին:

Փորձագետի եզրակացության գնահատման հարցում հատկապես կարևոր նշանակություն ունի գնահատող սուբյեկտի մոտ ներքին համոզմունքի ձևավորումը: Մասնագիտական գրականության մեջ ներքին համոզմունքը դիտվում է որպես ապացույցների գնահատման մեթոդ, հնարք, սկզբունք, որպես գնահատման չափանիշ կամ արդյունք[80]: Ընդ որում՝ որոշակի անհայտ փաստը փորձագետը պարզում է իրեն հայտնի այլ փաստերի հետազոտության արդյունքում՝ իր ներքին համոզմունքին համապատասխան[81]: Վարույթն իրականացնող մարմինը, իր հերթին, ներքին համոզման է գալիս

---

[79] Տե՛ս Судебно-почерковедческая экспертиза. Под ред. ***Е. Д. Добровольская, А. И. Манцветова, В. Ф. Орлова,*** М., 1971, էջ 314:

[80] Մանրամասն տե՛ս ***Новик В. В.,*** Криминалистические аспекты доказывания по уголовным делам: проблемы теории и практики, СПб, 2005, էջեր 354-365:

[81] Տե՛ս ***Соколовский З. М.,*** Оценка заключений криминалистической экспертизы письма, М., 1959, էջ 13:

փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու վերաբերյալ:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանն *Ա. Ավագյանի և Վ. Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը դիտարկում է որպես «ապացույցների բավարարության» որոշման չափանիշ:

Այնուհետև, վերը նշված մոտեցման համատեքստում *Արայիկ Խաչատրյանի* գործով *2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման* մեջ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացույցի առանձին տեսակը՝ փորձագետի եզրակացությունը գնահատելու խնդրին: Նշված գործով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը հանգում է նրան, որ.

«(…) փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: (…) փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալ հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Միևնույն ժամանակ այն դեպ-

քում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը:

(…) [Մասնավորապես] հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձը արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ»[82]:

---

[82] Հիմք ընդունելով վերոհիշյալ իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տուժողի՝ գործի համար էական նշանակություն ունեցող փաստերն ընկալելու և դրանք վերարտադրելու ունակությունը պարզելու համար նշանակված դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության եզրակացության մեջ առկա են անհստակություններ, հակասություններ, իսկ ստորադաս դատարանների կողմից դրանք վերացնելուն ուղղված միջոցներ չեն ձեռնարկել, ուստի որոշել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության՝ ձեռնարկելու համար նաև օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ (փորձագետի հարցաքննություն կամ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության նշանակում) որոշմամբ արձանագրված հակասությունները վերացնելու համար: *Մանրամասն տե՛ս* Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որո-

Պետք է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ փորձագետի եզրակացության գնահատման վերաբերյալ օգտագործվում են տարբեր եզրույթներ. մի դեպքում՝ խոսվում է եզրակացության գնահատման «տարրերի»[83], մեկ այլ դեպքում՝ գնահատման «չափանիշների»[84], երրորդ դեպքում՝ փորձագետի եզրակացության գնահատման «տեսակետների»[85] (կողմերի) մասին: Ընդ որում, երբեմն նշված եզրույթները միաժամանակ օգտագործվում են փորձագետի եզրակացության գնահատման ենթակա միևնույն հատկանիշը մատնանշելու համար:

Կարծում ենք, վերը նշված հասկացությունները, չնայած ունեցած սերտ կապին, էականորեն տարբերվում են: Ուստի, անհրաժեշտ է նշված հասկացությունները որոշակիորեն տարանջատել միմյանցից, հստակեցնել դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը:

Փորձագետի եզրակացության գնահատման *«տարրերը»,* մեր կարծիքով, եզրակացության՝ գնահատման ենթակա այն հատկանիշները կամ կողմերն են, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու համար: Այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը հանգեցնում է փորձա-

---

շումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 3-րդ, Երևան, Ասողիկ, 2016, էջեր 316-317:

[83] Տե՛ս ***Сахнова Т. В.,*** Судебная экспертиза, М., 2000, էջեր 253-254:

[84] Տե՛ս ***Притузова В. А.,*** Оценка заключения криминалистической экспертизы вышестоящим судом, М., 1960, էջ 8:

[85] Տե՛ս ***Новик В. В.,*** Криминалистические аспекты доказывания по уголовным делам: проблемы теории и практики, СПб., 2005, էջեր 365-376:

գետի եզրակացության ապացուցողական նշանակության կորստին:

Փորձագետի եզրակացության գնահատման *«չափանիշները»* գիտությամբ և պրակտիկայով մշակված այն կողմնորոշիչներն են, որոնց գնահատման արդյունքում վարույթն իրականացնող մարմնի մոտ ձևավորվում է ներքին համոզմունք փորձագետի եզրակացության այս կամ այն տարրի առկայության կամ բացակայության մասին: Այլ կերպ ասած՝ եզրակացության գնահատման չափանիշները ծառայում են դրա տարրերի գնահատման նպատակին: Այդ չափանիշները հանդես են գալիս որպես փորձագետի եզրակացության՝ գնահատման ենթակա տարրերի առկայության կամ բացակայության որոշման պայմաններ:

Մասնագիտական գրականության մեջ, ինչպես նշեցինք, շատ դեպքերում փորձագետի եզրակացության գնահատման տարրերն ու չափանիշները չեն տարանջատվում և դրանք ներկայացվում են միասնական թվարկով: Այսպես, Ե. Ի. Գալյաշինան փորձագետի եզրակացության գնահատման գործընթացում առանձնացնում է գնահատման ենթակա հետևյալ տարրերը.

- *փորձաքննության նշանակման և կատարման դատավարական կարգը,*
- *փորձագետի եզրակացության կազմման ճշտությունը և դրա մեջ օրենքով նախատեսված բոլոր ռեկվիզիտների առկայությունը,*
- *փորձագետի ձեռնհասությունը,*
- *գործի ելքով փորձագետի շահագրգռվածությունը,*

- *հետազոտության ներկայացված օբյեկտների ձեռքբերման և պահպանման դատավարական կարգի պահպանումը,*
- *փորձագետի եզրակացության արժանահավատությունը, դրանում շարադրված հետևությունների գիտական հիմնավորվածությունը, պատճառաբանվածությունը, հետևությունների համապատասխանությունը կատարված հետազոտություններին, կիրառված մեթոդիկաների արժանահավատությունը և մեթոդների հիմնավորվածությունը,*
- *գիտական հիմնավորվածության ստուգումը, որը ենթադրում է հետևությունների տրամաբանական կապը կատարված հետազոտությունների հետ,*
- *փորձագետին ներկայացված նյութերի ամբողջականությունը*[86]:

Այլ հեղինակներ փորձագետի եզրակացության գնահատումը բաժանում են երկու փոխկապակցված մասերի՝

ա) փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, պատճառաբանվածության, նրա հետևությունների մանրամասն, բազմակողմանի և օբյեկտիվ ստուգումը,

բ) փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստերի ապացուցողական նշանակության որոշումը, գործով

---

[86] Տե՛ս ***Галяшина Е. И.,*** Назначение, производство и оценка заключения судебной экспертизы, http://www.rusexpert.ru/books/cena_slova3/029.htm, (20.04.2010):

ձեռք բերված այլ ապացույցների հետ դրանց կապի և հարաբերության պարզումը[87]:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է տարանջատել փորձագետի եզրակացության գնահատման ենթակա տարրերը և յուրաքանչյուր տարրի համար առանձնացնել դրա գնահատման համապատասխան չափանիշները: Այս տեսակետից փորձագետի եզրակացության գնահատումը, կարծում ենք՝ ներառում է գնահատման ենթակա երեք հիմնական տարրերի ամբողջություն՝

ա) փորձաքննության նախապատրաստման, նշանակման և կատարման դատավարական կարգի պահպանման (եզրակացության՝ որպես ապացույցի թույլատրելիության) գնահատումը,

բ) եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումը,

գ) եզրակացության մեջ շարադրված փաստերի՝ որպես ապացույցների վերաբերելիության, եզրակացության դերի և նշանակության գնահատումը գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում:

Այս տարրերից յուրաքանչյուրն ունի դրա բովանդակությունը կազմող որոշակի չափանիշների համակարգ, որոնց գնահատմամբ որոշվում է փորձագետի եզրակացության վերը թվարկված տարրերի բովանդակությունը, դրանց առկայությունը կամ բացակայությունը և, ի վերջո, դրա ապացուցողական նշանակությունն ու գործով կայացվող որոշման հիմքում դնելու հարցը: Ընդ որում, այդ տարրերը սերտորեն փոխկա-

---

[87] Տե՛ս Судебно-почерковедческая экспертиза, Под ред. ***Е. Д. Добровольская, А. И. Манцветова, В. Ф. Орлова,*** М., 1971, էջ 314:

պակցված և փոխպայմանավորված են, և դրանցից մեկի գնահատման արդյունքներն ազդում են մյուսի գնահատման արդյունքների վրա:

Փորձագետի եզրակացության գնահատման տարրերն ու չափանիշները քննարկելիս, կարծում ենք, անհրաժեշտ է նաև որոշակիորեն անդրադառնալ ՀՀ-ում և այլ երկրներում փորձագետի եզրակացության գնահատման իրավական կարգավորման հիմնահարցերին:

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական գործունեությունը կարգավորող առանձին միասնական օրենք մինչ այսօր ընդունված չէ: Այս ոլորտը մեր երկրում կարգավորվում է դատավարական օրենսգրքերով, առանձին օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, ինչը, ինչպես բազմիցս քննարկվել է մասնագիտական գրականության մեջ[88], բավարար չի կարող համարվել հասարակական կյանքի այս բնագավառը միասնական, համապարփակ և որակյալ կարգավորման ենթարկելու համար: Ճիշտ է, դատավարական օրենսգրքերով կարգավորված են փորձաքննություն նշանակելու և կատարելու, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման հետ կապված հարցերը, սակայն, կարծում ենք, փորձագիտական գործունեության միասնական իրավական կարգավորման բացակայությունն ազդում է, նախ՝ փորձագիտական գործունեության կազմակերպական ապահովման և, վերջին հաշվով՝ փորձագետի եզրակացութ-

---

[88] Տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.,*** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 5: ***Դավթյան Լ.,*** Հայոց լեզվով կատարված տեքստերի կրիմինալիստիկական հետազոտումը հեղինակին պարզելու նպատակով, Թեկն. ատենախոս., Երևան, 2010, էջեր 121-123:

յունը գործով որպես ապացույց օգտագործելու արդյունավետության վրա: Այս առումով ՀՀ-ում փորձագիտական գործունեության միասնական իրավական կարգավորման հիմնախնդիրը խիստ արդիական է, որի հրատապ լուծումը կնպաստի մեր երկրում այդ գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ երաշխիքներ ստեղծելով ՀՀ փորձագիտական գործունեության համակարգման և փորձաքննությունների առավել որակյալ կազմակերպման համար, ինչն էլ, իր հերթին, կնպաստի փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության ապահովմանը, եզրակացության նշանակության ընդլայնմանը և քրեական, քաղաքացիական, վարչական գործերով ապացույցի այս աղբյուրի լայնորեն կիրառմանն ու գործերի ճիշտ լուծմանը:

Նույն համատեքստում նշենք, որ արտասահմանյան երկրներում փորձագիտական գործունեության իրավական կարգավորումները տարբեր են: Այսպես՝ ԱՄՆ-ում, Ավստրալիայում, ՌԴ-ում համապատասխան ոլորտի հարաբերությունները կարգավորվում են առանձին իրավական ակտերով, Գերմանիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում՝ դատավարական օրենսդրությամբ, Մեծ Բրիտանիայում՝ ընդհանուր իրավունքի սկզբունքներով և այլն:

Ռուսաստանի Դաշնությունում պետական փորձագիտական գործունեությունը կարգավորվում է 2001 թվականին ընդունված՝ «Ռուսաստանի Դաշնությունում պետական դատական-փորձագիտական գործունեության մասին» դաշնային օրենքով,[89] որը սահմանում է Ռուսաստանի Դաշնությունում

[89] Տե՛ս Федеральный закон от 31 мая 2001г. No 73-ФЗ «О государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации»:

քրեական, քաղաքացիական և վարչական գործերով պետական փորձագիտական գործունեության իրավական հիմքերը, կազմակերպման սկզբունքները և այդպիսի գործունեության իրականացման հիմնական ուղղությունները: Ընդ որում՝ դատավարության առանձին տեսակների առանձնահատկությունների հաշվառմամբ՝ փորձաքննությունների նշանակման, կատարման և դրանց արդյունքների օգտագործման հարցերը կարգավորվում են համապատասխան դատավարական օրենսգրքերով[90]:

ԱՄՆ-ն առաջին երկրներից է, որտեղ դատական նախադեպերի հիման վրա մանրամասնորեն մշակվել են փորձագետի եզրակացության գնահատման իրավական չափորոշիչներ: Այսպես՝ 1975 թ.-ի ԱՄՆ Գերագույն դատարանի ընդունած և Կոնգրեսի հաստատած Դատական ապացույցների վերաբերյալ դաշնային կանոնների[91] 702-րդ կանոնի համաձայն՝ *«Եթե գիտական, տեխնիկական կամ այլ հատուկ գիտելիքները կօգնեն փաստերը որոշող անձին փաստական տվյալները հաս-*

---

[90] Մանրամասն տե՛ս Памятка по вопросам назначения судебной лингвистической экспертизы: для судей, следователей, дознавателей, прокуроров, экспертов, адвокатов и юрисконсультов, Под ред. проф. ***М. В. Горбаневского,*** М., 2004, էջ 7:

[91] ԱՄՆ Դատական ապացույցների վերաբերյալ դաշնային կանոնների և դրա փոփոխությունների հիմքն են կազմում մի շարք դատական նախադեպեր, որոնք էական նշանակություն ունեն փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հարցում: Մասնավորապես՝ այդ դատական նախադեպերն են՝ *USA Suprume Court, Frye v. United States, 293 F, App. D.C. Cir. 1923; Daubert v. Merrell Dow Pharmaceuticals, Inc. 509 U.S. 579, 1993; General Electric Co. v. Joiner, 522 U.S. 136, 1997; Kumho Tire Company v. Carmichael 526 US, 137, 1999* (տե՞ս Կանոնների պաշտոնական վեբ-կայքը՝ USA Federal Rules of Evidence, http://federalevidence.com/rules-of-evidence, (20.04.2010)):

կանալու կամ վիճելի հարցը լուծելու գործում, իր գիտելիքների, հմտությունների, փորձի, ուսուցման կամ կրթության ուժով որպես փորձագետ որակավորված անձը կարող է համապատասխան փաստական տվյալի մասին վկայություն տալ՝ եզրակացության կամ այլ ընդունելի ձևով, եթե՝

ա) փորձագետի հետևությունները հիմնված են բավարար գիտական տվյալների վրա,

բ) եզրակացությունը վստահելի սկզբունքների և մեթոդների արդյունք է,

գ) փորձագետը համապատասխան սկզբունքներն ու մեթոդները ճշգրտորեն կիրառել է գործի փաստերի նկատմամբ»[92]:

Տարբեր երկրների համապատասխան իրավական ակտերի համադրությունն ու վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ում գործող հատուկ գիտելիքների կիրառմամբ ձեռք բերված ապացույցների թույլատրելիության և արժանահավատության գնահատման չափանիշներն ամենախիստն են և բավականին մանրամասնորեն սահմանում են փորձագետի եզրակացության գնահատման հիմնադրույթները:

Ինչ վերաբերում է Եվրոպական կոնվենցիային, ապա ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայում փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության և դրա գնահատման միջազգային իրավական երաշխիքը դիտարկվում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետի՝ արդար դա-

---

[92] Տե՛ս ***Solan L. M., Tiersma P. M.,*** Author Identification in American Courts, “Applied Linguistics”, Oxford, 2004, Volume 25, Number 4, էջ 453:

տաքննության իրավունքի շրջանակներում[93]: Այդ կետի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներում[94] հատուկ նշել է, որ անկողմնակալ փորձագետի կազմած գիտականորեն հիմնավորված փորձագիտական եզրակացությունը յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի մասն է[95]:

Հանցագործությունների քննության գործընթացում փորձագետի եզրակացության դերն ու նշանակությունը որոշելու համար անհրաժեշտ է քննարկել դրա՝ *գնահատման ենթակա տարրերի և չափանիշների բովանդակությունը և դրանց նշանակությունը:*

---

[93] Տե՛ս ***Livia E. M. P. Jakobs, Wim J. J. M. Sprangers,*** A European View on Forensic Expertise and Counter-Expertise, "Criminal Law Forum", Amsterdam, 2000, Volume 11, Number 3, էջեր 375-392:

[94] Տե՛ս, օրինակ, Brandstetter v. Austria, 28 August 1991; Eskelinen and others v. Finland, 8 August 2006; Kamasinski v. Austria, 19 December 1989 գործերով Եվրոպական դատարանի վճիռները (***Livia E. M. P. Jakobs, Wim J. J. M. Sprangers.*** A European View on Forensic Expertise and Counter-Expertise. "Criminal Law Forum". Amsterdam, 2000, Volume 11, Number 3, էջեր 375-392); Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով վճիռը 19.06.2001 (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Վճիռների ժողովածու, ***խմբ. Դ. Ավետիսյան,*** Երևան., 2006, էջեր 9-36):

[95] Մանրամասն տե՛ս նաև ***Մելքոնյան Դ.,*** Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները, Պետություն և իրավունք, № 4 (42), 2008, էջեր 14-19:

Ինչպես արդեն նշել ենք, փորձագետի եզրակացության՝ գնահատման ենթակա առաջին տարրը *փորձաքննության նախապատրաստման, նշանակման և կատարման դատավարական կարգի պահպանման (եզրակացության թույլատրելիության)* գնահատումն է: Այն, ըստ էության, բխում է ապացույցների թույլատրելիության օրենսդրական ընդհանուր պահանջից, մասնավորապես՝ 2015 թ.-ի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթից, որն արգելում է հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումը:

Ապացույցի ձեռքբերման դատավարական կարգի պահպանվածության՝ փորձագետի եզրակացության թույլատրելիության տեսանկյունից, ստուգվում է, թե արդյոք որպես փորձագետ է նշանակվել համապատասխան բնագավառում ձեռնհաս և գործով չշահագրգռված անձը *(ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվածի 1-ին մաս)*, չկան, արդյոք, փորձագետին բացարկ հայտնելու հիմքեր *(ՀՀ ՔԴՕ 97-րդ հոդված),* պահպանվել է փորձաքննություն նշանակելու և կատարելու դատավարական կարգը *(ՀՀ ՔԴՕ 243-252-րդ հոդվածներ)*, փորձագետին բացատրվել են նրա իրավունքներն ու պարտականությունները, փորձագետը նախազգուշացվել է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին *(ՀՀ ՔԴՕ 248-րդ հոդվածի 2-րդ մաս, 249-րդ հոդվածի 2-րդ - մաս)*, փորձագետի եզրակացության կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանում են, արդյոք, ՀՀ ՔԴՕ-ով սահմանված պահանջներին *(ՀՀ ՔԴՕ 250-րդ հոդվածի 2-րդ -*

մաս) և այլն: Այս և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ դրույթները փորձագետի եզրակացության թույլատրելիության գնահատման հիմքերն են, և դրանց չպահպանումը հանգեցնում է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությանը:

Փորձագետի եզրակացության թույլատրելիությունը գնահատելիս պետք է ստուգել նաև, թե փորձագիտական հետազոտության ներկայացված օբյեկտները, համեմատական նմուշները կամ այլ նյութերը ձեռք բերելիս պահպանվել են, արդյոք, քրեադատավարական օրենսդրության պահանջները, և այդ նմուշները կարող են, արդյոք, գործով օգտագործվել որպես թույլատրելի ապացույցներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է «թունավորված ծառի պտուղների մասին» հայտնի կանոնին, որի համաձայն՝ օրենքի խախտմամբ կատարված քննչական գործողության արդյունքում պետք է անթույլատրելի ճանաչել ոչ միայն տվյալ քննչական գործողության արձանագրությունը, այլ նաև դրա ընթացքում ձեռք բերված բոլոր նյութերն ու դրանց հետազոտման արդյունքները[96]: Օրինակ, անթույլատրելի պետք է ճանաչել ոչ միայն օրենքի խախտմամբ կատարված խուզարկության կամ առգրավման արձանագրությունը և դրա արդյունքում ձեռք բերված իրեղեն ապացույցները, այլ նաև դրանց փորձագիտական հետազոտության արդյունքում տրված փորձագետի եզրակացությունը: Կամ՝ անթույլատրելի է ոչ միայն բռնությամբ, սպառնալիքով կամ

---

[96] Մանրամասն տե՛ս ***Մելքոնյան Դ.,*** Ապացույցների թույլատրելիության պայմանների ընդհանուր բնութագիրը, Իրավագիտության հարցեր, № 4, 2005, էջեր 47-55: ***Ղուկասյան Հ.,*** Ապացույցներն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգն ու հետևանքները, Պետություն և իրավունք, № 1 (15), 2002, էջեր 42-53:

խաբեությամբ *(ՀՀ ՔԴՕ 105-րդ հոդվածի, 1-ին մասի 1-ին կետ)* համեմատական հետազոտության համար ձեռքբերված նմուշների, այլ նաև դրանց կապակցությամբ տրված փորձագետի եզրակացության օգտագործումը որպես ապացույց և այլն:

Ճիշտ է, «թունավորված ծառի պտուղների մասին» կանոնն անմիջականորեն իր ամրագրումը չի ստացել ՀՀ ՔԴՕ-ում, սակայն պրակտիկայում այն լայնորեն կիրառվում է: Օրինակ, Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում, կասկածի տակ դնելով դատաքիմիական փորձաքննության եզրակացության արժանահավատության հարցը, նշում է. *«Ինչ վերաբերում է փորձագետի կողմից անձամբ ավտոմեքենայից վերցված մանրաթելի նմուշին, որը նույնացվել է տուժողի հագուստի մանրաթելերի հետ, ապա պետք է քննարկման առարկա դարձվի այն հարցը, թե ավտոմեքենայից նմուշ վերցնելիս արդյոք պահպանվել է ՀՀ ՔԴՕ 253-256-րդ հոդվածներով նախատեսված հետազոտման համար նմուշներ ստանալու վերաբերյալ օրենսդրության պահանջները և ըստ այդմ որոշել փորձաքննության եզրակացության այդ մասը մեղադրող ապացույց դիտելու կամ չդիտելու հարցը»*[97]:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունից բխող ապացույցների թույլատրելիության հարցին, վերը վկայակոչված՝ *Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔՐԴ/0295/01/08 որոշ*ման մեջ ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որ «օրենքի խախտմամբ ձեռք բերված

[97] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու, հատ. 3, Երևան, 2001, էջ 195:

ապացույցի» ներքո անհրաժեշտ է հասկանալ նաև այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել թեկուզ առանց օրենքի խախտման, սակայն օրենքի խախտմամբ կատարված քննչական կամ դատավարական գործողության արդյունքում կամ այն ապացույցների հիման վրա, որոնք ձեռք էին բերվել օրենքի խախտմամբ կամ անթույլատրելի ապացույցի հետ գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ: Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը հաստատել է ՀՀ ներպետական իրավունքում «թունավոր ծառի պտուղների» կանոնի առկայությունը[98]:

Նշված կանոնն իր կիրառությունն է գտել նաև ՀՀ դատական պրակտիկայում: Այսպես, ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը *Մ. Օհանյանի գործով 2015թ. հոկտեմբերի 21-ի* դատավճռում *«ՀՀ վճռաբեկ դատարանի Ա. Սարգսյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Մ. Օհանյանի վերաբերյալ քրեական գործով ամբաստանյալի մեղադրանքի հիմքում դրված **Տոքսիկոքիմիական փորձաքննությունների թիվ 14-2255 և 14-2258 եզրակացությունները**՝ գտել է, որ դրանք անթույլատրելի են, քանի որ հիմնված են օրենքի խախտմամբ կատարված քննչական գործողության և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցի վրա:*

Դատարանը, մասնավորապես, հիմք ընդունելով այն փաստը, որ սույն քրեական գործով ամբաստանյալ Մ. Օհա-

---

[98] Մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔՐԴ/0295/01/08 որոշման 15-17-րդ կետերը:

նյանից և վկա Ա. Մուրադյանից մազի և մեզի նմուշները ստացվել և փորձաքննությունները նշանակվել են օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներով, մասնավորապես՝ կատարվել է ոչ պատշաճ սուբյեկտի կողմից, նմուշներ վերցնելու մասին որոշումները կայացվել, այնուհետև փորձանմուշները վերցվել և արձանագրությունները կազմվել են քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների ակնհայտ և կոպիտ խախտումներով, որոնց ուժով նմուշներ վերցնելու արձանագրությունը և դրա հիման վրա ստացված նմուշներն անթույլատրելի են, ուստի թունավոր ծառի պտուղների սկզբունքով անթույլատրելի են նաև ***Տոքսիկոքիմիական փորձաքննությունների թիվ 14-2255 և 14-2258 եզրակացությունները****, քանի որ բացի այն, որ դրանց կատարման իրավական հիմքը հանդիսացող որոշումը կայացրել է ոչ պատշաճ սուբյեկտը, այլև՝ դրանց բովանդակությունն անմիջականորեն բխում են օրենքի խախտմամբ կատարված նմուշներ ստանալու արձանագրություններից և փորձաքննություն նշանակելու մասին որոշումներից, այսինքն՝ այդ ապացույցները գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ»*[99]:

Ուշագրավ է նաև այն, որ քննարկվող քրեական գործով փորձագետի եզրակացությունը դատարանն արդարացիորեն գնահատել է փորձագիտական հետազոտման ներկայացված օբյեկտների՝ նմուշների ձեռքբերման հավաստիության տեսանկյունից՝ արձանագրելով, որ անթույլատրելի է ճանաչում փորձագետի եզրակացությունը *«...նաև այն տեսանկյունից, որ*

---

[99] ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թ. հոկտեմբերի 21-ի ԱՐԱԴ1/0010/01/15 դատավճիռը, (1.3.-րդ կետ):

փորձանմուշները վերցվել և փորձաքննությունները նշանակվել են քրեադատավարական օրենքի պահանջների ***<u>էական խախտումներով:</u>***

Հիշյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է ինչպես փորձաքննություն նշանակելու իրավասություն ունեցող անձանց, փորձաքննություն նշանակելու հիմքերը, պայմանները, այնպես էլ՝ փորձաքննություն նշանակելու որոշման ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես այն, որ նրանում պետք է նշվեն՝ փորձաքննությունը նշանակելու հիմքերը, ***<u>փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները՝ նշելով՝ երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել,</u>*** *փորձագետին առաջադրված հարցերը,* ***<u>փորձագիտական հիմնարկի անվանումը կամ անձի ազգանունը,</u>*** *որին հանձնարարված է փորձաքննության կատարումը և այլն:*

*Դատարանի գնահատմամբ՝ այդ պահանջների սահմանումն ինքնանպատակ չէ, դրանք, նախևառաջ, ապահովում են փորձաքննության եզրակացության արժանահավատությունը և վերաբերելիությունը քննվող դեպքին, հատկապես, երբ խոսքը վերաբերում է՝ <<****<u>փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները՝ նշելով՝ երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել</u>>>*** *հանգամանքները նշելու պահանջներին:*

Դատարանի կարծիքով, այդ հանգամանքների վերաբերյալ տվյալները փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նշելը նպատակ է հետապնդում ապահովելու, որպեսզի հետագայում փորձաքննության եզրակացությունը

գնահատելիս հնարավոր լինի ստուգելու, թե իրոք եզրակացությունը վերաբերում է այն նմուշների, օբյեկտների հետազոտմանը, որոնք վերաբերում են կոնկրետ դեպքին, անձին և այլն: Եթե նախապես չի վերցվել փորձանմուշը և այն մանրամասն նկարագրված չէ փորձաքննություն նշանակելու որոշման մեջ, ապա անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից հնարավոր չէ միանշանակ հետևություն անել, որ հենց այն նմուշների, ապացույցների կամ այլ օբյեկտների հետազոտման կապակցությամբ է կազմվել փորձագետի եզրակացությունը, որոնք վերցված են եղել անձից կամ որոնք վերաբերում են կոնկրետ դեպքին և այլն: Դատարանն արձանագրում է, որ փորձաքննություն նշանակելը միշտ պետք է հաջորդի նմուշներ ստանալուն, որպեսզի փորձաքննություն նշանակելու որոշման մեջ հնարավոր լինի նշել այն օբյեկտները, նյութերը և այլնը, որի հետազոտման կապակցությամբ նշանակվում է փորձաքննությունը:

Սույն քրեական գործով Մ. Օհանյանից վերցված փորձանմուշներով դատաքիմիական փորձաքննություն նշանակելու մասին 11.08.2014 թվականի որոշման և Ա. Մուրադյանից վերցված փորձանմուշներով դատաքիմիական փորձաքննություն նշանակելու մասին 12.08.2014 թվականի որոշման ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դրանք չեն համապատասխանում Օրենսգրքի 243-244-րդ հոդվածներով նախատեսված փորձաքննություն նշանակելու որոշմանը ներկայացվող պահանջներին: Այդ որոշումներում իսպառ բացակայում են՝ «փորձաքննությունը նշանակելու հիմքերը, փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները՝ նշելով՝ երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են

<u>դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել>></u> հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները:

....

*Այդ որոշումների վերլուծությունից պարզ է դառնում, որ փորձաքննությունները նշանակվել են առանց փորձաքննության ուղարկվող նյութերի, ապացույցների կամ այլ օբյեկտների, դրանք փորձաքննություն նշանակելուց առկա չեն եղել: Դատարանի հետևությունն ուղղակիորեն բխում է հենց փորձաքննություն նշանակելու որոշումներից, որոնցում ուղղակիորեն նշված է, որ **<u>անհրաժեշտ է</u> ստանալ գլխի մազի և մեզի փորձանմուշներ պարզելու համար,** մինչդեռ օրենքի իմպերատիվ պահանջն է, որպեսզի որոշման մեջ նշվի և պատճառաբանվի, թե ինչ հանգամանքներ են անհրաժեշտ պարզաբանել, որ անհրաժեշտություն է առաջացել նշանակելու փորձաքննություն և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ եղած **ինչ իրեղեն ապացույցներ, նյութեր և այլ օբյեկտներ են ուղարկվում փորձաքննության, <u>երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել</u>** և այլն:*

.....

Քննարկվող որոշումների վերլուծության հիման վրա դատարանը նաև արձանագրում է, որ, ըստ էության, որոշումը վերաբերում է ոչ թե փորձաքննություն նշանակելուն, այլ՝ փորձանմուշ վերցնելուն, թեև վերնագրված է՝ որպես փորձաքննություն նշանակելու մասին որոշում:

Կոնկրետ քննարկվող որոշումներում օրենքով սահմանված իմպերատիվ պահանջների վերաբերյալ փաստական տվյալների և պատճառաբանությունների բացակայությունը

դատարանին հնարավորություն չի տալիս միանշանակ հետևություն անել այն մասին, որ փորձագետի եզրակացությունը վերաբերում է Մ. Օհանյանից և Ա. Մուրադյանից վերցված մեզի և մազի հետազոտմանը:

Դատարանը գտնում է, որ առանց փորձանմուշ վերցնելու և դրա մասին տվյալների մատնանշման փորձաքննություն նշանակելու մասին որոշումը կայացվել է օրենքի կոպիտ խախտումներով, որպիսի հանգամանքը հանգեցնում է այդ որոշումների անօրինականության և որպես հետևանք՝ դրանց հիման վրա կատարված փորձաքննության եզրակացությունների անօրինական և անթույլատրելի լինելուն»[100]*:*

Այս ենթատեքստում հարկ ենք համարում ընդգծել, որ, ի տարբերություն ապացույցի մյուս տեսակների, փորձագետի եզրակացության պատշաճ և լիարժեք գնահատումը ենթադրում է այն վերլուծել ու գնահատել դրա հիմքերի ամբողջականության ու արժանահավատության տեսանկյունից, այլ կերպ՝ փորձագետի եզրակացության գնահատման գործընթացը նպատակահարմար է դիտարկել դրա ***իրավական*** (փորձաքննություն նշանակելու մասին որոշման, փորձանմուշներ վերցնելու մասին արձանագրության) և ***փաստական*** (նմուշների ու օբյեկտների հավաստիության, պատշաճության, համապատասխանության) հիմքերի հարաբերակցության ու միասնականության մեջ:

Վճռաբեկ դատարանը *Արայիկ Օնիկի Խաչատրյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի ԿԴ 1/0006/01/14* որոշման մեջ,

---

[100] ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015 թ. հոկտեմբերի 21-ի ԱՐԱԴ1/0010/01/15 դատավճիռը (1.2.-րդ կետ):

վերլուծելով ՀՀ ՔԴՕ 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, 108-րդ հոդվածի, 250-րդ հոդվածի 2-րդ մասի, 25-րդ հոդվածի պահանջները, արձանագրում է.

§*Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու տուժողի ունակությունը կասկածի տակ դնելու հիմքերի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է նշանակի փորձաքննություն: Իսկ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները կարող է հաստատվել միայն դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ:*

…….

Այսպես, փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-252-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ փորձագետի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ: Այլ խոսքով փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունե-

նա հասկանալ հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Միևնույն ժամանակ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում հիմնավորվածության, բավարար չափով հստակության կամ լրիվության պահանջներին, այն չի կարող գնահատվել որպես արժանահավատ ապացույց, քանի դեռ օրենքով սահմանված միջոցներով չեն վերացվել այդ խախտումները»[101]:

Փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի օգտագործումը գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով էապես կախված է հաջորդ տարրի՝ *եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումից:* Վերջինն էլ, իր հերթին, հիմք է հանդիսանում ապացույցի այս աղբյուրի ապացուցողական նշանակության գնահատման համար:

---

[101] Մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արայիկ Օնիկի Խաչատրյանի 2015 թվականի մարտի 27-ի ԿԴ1/0006/01/14 որոշման 15-17-րդ կետերը:

Նախ՝ հարկ է նշել, որ եզրակացության արժանահավատության[102] ներքո ընդունված է հասկանալ եզրակացության ճշմարտացիությունը՝ դրանում շարադրված հետևությունների համապատասխանությունն օբյեկտիվ իրականությանը[103]: Փորձագետի եզրակացությունը ճիշտ է՝ նշանակում է դրանում շարադրված մտքերը համապատասխանում են օբյեկտիվ իրականության փաստերին[104]:

Վ. Ա. Պրիտուզովայի կարծիքով՝ *«Փորձագետի եզրակացությունը գնահատելիս՝ անհրաժեշտ է ելնել ոչ միայն փորձագետի պարզած փաստից, այլ նաև այդ փաստի արժանահավատությունից, այսինքն՝ փորձագետի հետևություններն անհրաժեշտ է դիտարկել դրանց հիմնավորվածության տեսանկյունից»*[105]:

Ասվածը նշանակում է, որ փորձագետի եզրակացության արժանահավատությունը սերտորեն կապված է դրա գիտա-

---

[102] Հարկ է նշել, որ ՀՀ ՔԴՕ 127-րդ հոդվածի 2-րդ մասում ապացույցի գնահատման տարրերի մեջ ապացույցի արժանահավատությունն անարդարացիորեն չի հիշատակվում, ի տարբերություն ՌԴ ՔԴՕ 88-րդ հոդվածի 1-ին մասի, որտեղ ապացույցի արժանահավատությունը դիտվում է որպես ապացույցի գնահատման ենթակա ինքնուրույն տարր: Այնուամենայնիվ Վճռաբեկ դատարանն ապացույցի արժանահավատության հարցի վերաբերյալ իրավական դիրքորոշում է հայտնել Ա. Ավագյանի և Վ. Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման մեջ (31.3-րդ կետ), Այս մասին մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Հատոր 3, Երևան, 2016, «Ասողիկ», էջեր 316-317:

[103] Տե՛ս Судебная почерковедческая экспертиза, Под ред. ***Е. Д. Добровольская, А. И. Манцветова, В. Ф. Орлова,*** М., 1971, էջ 313:

[104] Տե՛ս ***Эйсман А. А.,*** Заключение эксперта (структура и научное обоснование), М., 1967, էջ 98:

[105] Տե՛ս ***Притузова В. А.,*** Заключение эксперта как доказательство в советском уголовном процессе, М., Госюриздат, 1959, էջ 15:

կան հիմնավորվածության տարրի հետ: Փորձագետի եզրակացության մեջ շարադրված հետևությունները կարող են լինել ճիշտ, այսինքն՝ համապատասխանեն օբյեկտիվ իրականությանը, սակայն հիմնավորված չլինեն: Միևնույն ժամանակ, այդ հիմնավորվածությունը պետք է լինի գիտական, քանի որ համապատասխան հետևությունների հանգելու համար փորձագետն օգտագործում է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ: Պարզ ասած՝ փորձագետի եզրակացության արժանահավատության գնահատումը, ըստ էության, իրականացվում է առաջին հերթին դրա գիտական հիմնավորվածության գնահատման ճանապարհով:

Այս առնչությամբ տեղին է հիշատակել Տ. Վ. Սախնովայի մոտեցումը, ով եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատումը դիտում է որպես եզրակացության արժանահավատության գնահատման բաղկացուցիչ մաս[106]: Նրա կարծիքով՝ *«Գնահատել փորձագետի եզրակացության արժանահավատությունը՝ նշանակում է գնահատել փորձագետի հետևությունների համապատասխանությունն իրականությանը և այս տեսանկյունից՝ փորձագետի կողմից կիրառված մեթոդիկայի հուսալիությունը»:* Ընդ որում, եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատումը՝ եզրակացության արժանահավատության գնահատման բաղադրատարր դիտելու մոտեցումը հատկապես ընդունված է քրեադատավարական դոկտրինայում[107]:

---

[106] Տե՛ս ***Сахнова Т. В.,*** Судебная экспертиза, М., 2000, էջ 254:

[107] Տե՛ս ***Орлов Ю. К.,*** Производство экспертизы в уголовном процессе, М., 1982, էջեր 72-76:

Եզրակացության արժանահավատության գնահատման բովանդակությունը ներառում է նաև կիրառված մեթոդների հուսալիությունը,[108] իսկ կիրառված մեթոդների հուսալիությունն, ինքնին, ինչպես կներկայացվի ստորև, եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման չափանիշներից է: Ընդ որում, գրականության մեջ, հաշվի առնելով փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության փոխադարձ կապն ու փոխպայմանավորվածությունը, շատ դեպքերում գիտական հիմնավորվածության փոխարեն օգտագործվում է «գիտական արժանահավատություն» եզրույթը[109]:

Հարկ է նաև նկատել, որ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունն ու արժանահավատությունը սերտորեն կապված են նաև գնահատման ենթակա առաջին տարրի՝ եզրակացության թույլատրելիության հետ: Փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի թույլատրելիությունը կարևոր պայման է դրա արժանահավատության գնահատման համար: Եթե խախտվել է եզրակացության թույլատրելիության օրենսդրական պահանջը, ապա այդ եզրակացությունը չի կարող համարվել արժանահավատ ապացույց: Օրինակ, փորձագետի եզրակացության արժանահավատությունը կախված է այն մեթոդների արժանահավատությունից, որոնք կիրառվել են հետազոտության ժամանակ: Այս առումով՝ ՀՀ ՔԴՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է. *«Քրեական գոր-*

---

[108] Տե՛ս ***Орлов Ю. К.,*** Заключение эксперта и его оценка по уголовным делам, М., 1995, էջ 4:

[109] Տե՛ս, օրինակ, ***Притузова В. А.,*** Заключение эксперта как доказательство в советском уголовном процессе, М., Госюриздат, 1959, էջ 21:

ծով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ ... ժամանակակից գիտական պատկերացումներին հակասող մեթոդների կիրառման արդյունքում»: Քրեադատավարական այս նորմը փորձագետի եզրակացության թույլատրելիությունը կանխորոշող պահանջներից է, որի բովանդակությունը վկայում է փորձագետի եզրակացության թույլատրելիության, արժանահավատության և գիտական հիմնավորվածության տարրերի փոխադարձ կապի և հարաբերակցության մասին:

Միևնույն ժամանակ, փորձագետի եզրակացության թույլատրելիության պահանջի առկայությունը դեռևս չի նշանակում դրա արժանահավատության պահանջի պահպանում: Այլ կերպ ասած՝ եզրակացությունը թույլատրելի ճանաչելը չի կանխորոշում դրա արժանահավատության առկայությունը. թույլատրելիությունն անհրաժեշտ, սակայն բավարար պայման չէ փորձագետի եզրակացությունն արժանահավատ ապացույց ճանաչելու համար: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ փաստական տվյալներն ինչպիսի արժանահավատ տեղեկատվություն էլ պարունակեն, ինչ չափով էլ համապատասխանեն արտացոլվող իրականությանը, միևնույնն է, չեն կարող ապացույց ճանաչվել, եթե չեն անցել պատշաճ իրավական ընթացակարգ և չեն ստացել օրենքով սահմանված դատավարական ձև[110]: Այսպիսով, փորձագետի եզրակացության գնահատման այս երկու տարրերը սերտորեն փոխկապակցված լինելով՝ չեն փոխարինում մեկը մյուսին և գնա-

---

[110] Տե՛ս ***Ղուկասյան Հ.,*** Ապացույցների թույլատրելիության որոշ հիմնահարցեր, Պետություն և իրավունք, № 4 (14), 2001, էջ 44:

հատվում են՝ առանձին չափանիշների հաշվառմամբ: Ընդ որում, ինչպես արդեն նշել ենք, թույլատրելիության պահանջի խախտումը կասկածի տակ է դնում փորձագետի եզրակացության արժանահավատությունը:

Այս առումով, թերևս, հատկանշական է Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան: Մասնավորապես, *Արայիկ Խաչատրյանի վերաբերյալ գործով (2015 թ. մարտի 27-ի ՀՀ վճռաբեկ դատարանի Î¸1/0006/01/14 որոշում)* Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձը արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալի և տուժողի մրցակցող իրավունքները (համապատասխանաբար՝ արդար դատաքննության և իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության), ինչպես նաև տուժողի վերոնշյալ ունակությունների հանգամանքը հաստատելու համար փորձագետի եզրակացության անփոխարինելիությունը[a] վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները փորձագետի եզրակացության արժանահավատությունն ապահովելու համար:

Այսպես՝ փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-252-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ փորձագետի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ: Այլ խոսքով փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալ հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Միևնույն ժամանակ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում հիմնավորվածության, բավարար

չափով հստակության կամ լրիվության պահանջներին, այն չի կարող գնահատվել որպես արժանահավատ ապացույց, քանի դեռ օրենքով սահմանված միջոցներով չեն վերացվել այդ խախտումները:

Սույն գործով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Փորձագիտական եզրակացության հետևություններում առկա են հակասություններ: Մասնավորապես, դրանում նշված է «ախտորոշմանը բնորոշ փոփոխությունները /զառանցական մտքերի առկայությունը, մտածողության անկապությունը, դատողությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը/ արտահայտված են այն աստիճան, ***որ զրկում են երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից»***, միևնույն ժամանակ նշված է, *որ «իր ներկա հոգեկան վիճակով Աննա Ավակիմյանը* ***կարող է աղավաղել*** *իր հետ կատարված և կատարվող գործողությունները»*, ավելին՝ *«Աննա Ավակիմյանը բավարար տեղեկացված է սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ»*: Մեջբերված հետևություններից բավարար չափով պարզ չէ՝ Ա.Ավակիմյանը կարող է աղավաղել օբյեկտիվ իրականության փաստերը, թե աղավաղում է դրանք, և արդյոք *«սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ»* հանգամանքների մասին *«բավարար տեղեկացված լինելու»* պայմաններում նա զրկված է այդպիսի բնույթի փաստերը ճիշտ ընկալելու, գիտակցելու և վերարտադրելու ունակությունից: Բացի այդ Փորձագիտական եզրակացությունը թերի է, քանի որ դրանում առկա չեն Ա.Ավակիմյանի հիվանդության զարգացման ընթացքի և փու-

լի, դրանց դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկություններ:

Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, չձեռնարկելով Փորձագիտական եզրակացությունում առկա վերը նշված անհստակությունները, հակասությունները և բացը վերացնելուն ուղղված որևէ միջոց, գտել է, որ *«թեև փորձագետի եզրակացության համաձայն՝ տուժող Աննա Ավակիմյանը տառապել և տառապում է «Շիզոֆրենիա՝ պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ, ինչի բնորոշ փոփոխություններն (զառանցական մտքերի առկայությունը, մտածողության անկապակցվածությունը, դատողությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը) արտահայտված են այն աստիճան, որ զրկում են երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից, նա կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները, նրան բնորոշ է զառանցական մտքերի առկայությունը, սակայն Դատարանը գտնում է, որ սույն դեպքի կապակցությամբ Աննա Ավակիմյանի ցուցմունքն արժանահավատ է և այն պետք է դնել սույն դատավճռի հիմքում, քանի որ սույն գործի օրինական «հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների տեսանկյունից նշված ցուցմունքում դեպքի կապակցությամբ նրա կողմից հայտնված տվյալների մի մասը, ինչպես միմյանց, այնպես էլ սույն քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցներով ստացված տվյալների հետ համընկնում ու փոխկապակցվում են»:* Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ «գործի փաստական տվյալներով չի արձանագրվել որևէ հանգամանք, որը կարող էր հիմք հան-

դիսանալ տուժող Աննա Ավակիմյանի կողմից տված ցուցմունքներն անարժանահավատ համարելու համար»:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փորձագիտական եզրակացության վերոնշյալ անհստակությունների, հակասությունների և բացի վերացնելուն ուղղված միջոցներ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-252-րդ հոդվածներով նախատեսված) ստորադաս դատարանների կողմից չեն ձեռնարկվել:

Պետք է նշել, որ գրականության մեջ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության կամ գիտական արժանահավատության բովանդակության մեջ հիմնականում ներառվում են՝

ա) փորձագետի ընտրած հետազոտության մեթոդների ճշմարտացիությունը,

բ) դրանց համապատասխանությունը գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակին,

գ) հետազոտության փուլերի տրամաբանական հաջորդականությունը և այլն[111]:

Որոշ հեղինակներ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության բովանդակությունը կազմող հատկանիշները ներկայացնում են ավելի մանրամասն թվարկով: Ըստ այդ հեղինակների՝ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատելիս ստուգվում է, թե՝

ա) տվյալ փորձաքննությունն ունի, արդյոք, անհրաժեշտ գիտական հիմքեր,

---

[111] Մանրամասն տե՛ս ***Сахнова Т. В.,*** Судебная экспертиза, М., 2000, էջ 254:

բ) փորձաքննությունը հիմնված է գիտական տվյալների և փորձագետի հատուկ գիտելիքների վրա,

գ) փորձագետի հետևությունները համապատասխանում են, արդյոք, իրականացված հետազոտություններին, տրամաբանորեն կապված են, արդյոք, հետազոտության բովանդակությունն ու դրա արդյունքում արված հետևությունները,

դ) փորձագետը կիրառել է հետազոտության առավել արդյունավետ մեթոդներ, դրանք համապատասխանում են, արդյոք, գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակին և գիտության վերջին նվաճումներին,

ե) հետազոտության ներկայացված նյութերը բավարար են, արդյոք, որոշակի հետևությունների հանգելու համար,

զ) ճիշտ են, արդյոք, բացահայտվել և գնահատվել հետազոտվող օբյեկտի հատկանիշներն ու էությունը[112] :

Ինչպես փորձագետի եզրակացության գնահատման ենթակա մյուս տարրերի, այնպես էլ եզրակացության գիտական հիմնավորվածության բովանդակությունը որոշվում է՝ որոշակի չափանիշներից ելնելով: Կարելի է առանձնացնել փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հետևյալ *չափանիշները.*

ա) փորձագետի ձեռնհասությունը, փորձաքննության կատարումը համապատասխան փորձաքննության առարկայի սահմաններում,

բ) փորձաքննության ներկայացված օբյեկտի և համեմատական հետազոտության նմուշների անհրաժեշտ և բավարար քանակի ու որակի առկայությունը,

---

[112] Տե՛ս ***Калиновский К. Б.,*** Заключения эксперта, Особенности оценки заключения эксперта, http://kalinovsky-k.boom.ru/b/td-1973-13.htm, (17.04.2010):

գ) փորձագիտական հետազոտության ժամանակ կիրառված մեթոդիկայի արժանահավատությունը, հետազոտությունների և հետևությունների միջև տրամաբանական կապի առկայությունը,

դ) կատարված հետազոտությունների և եզրակացության լրիվությունը:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման առաջին չափանիշը փորձագետի *ձեռնհասության և տվյալ գործով նշանակված փորձաքննության առարկայի* գնահատումն է:

Հայտնի է, որ փորձագետի ձեռնհասությունը փորձաքննության առարկային վերաբերող առաջադրված հարցերը լուծելու ունակությունն է, որը հիմնված է փորձագետի հատուկ գիտելիքների վրա[113]: Ինչպես արդեն նշել ենք, մասնագիտական գրականության մեջ «հատուկ գիտելիքներ» ասելով՝ գլխավորապես նկատի է առնվում գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի բնագավառում գիտական տվյալների ամբողջությունը, որոնց տիրապետում են հասարակության առանձին անդամներ՝ համապատասխան մասնագետները:

Այսպիսով՝ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատվում է համապատասխան բնագավառում նրա հատուկ գիտելիքների բավարարության ստուգմամբ, որը կազմում է նրա ձեռնհասության բովանդակությունը:

Եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատելիս՝ վարույթն իրականացնող մարմինը պարզում է

---

[113] Տե՛ս ***Давтян А. Г.,*** Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջեր 19-20:

նաև, թե փորձագետը փորձաքննությունը կատարել է, արդյոք, իր հատուկ գիտելիքների շրջանակներում: Այս առումով ստուգվում է, թե փորձագետը դուրս չի եկել, արդյոք՝

ա) համապատասխան փորձաքննության առարկայի սահմաններից,

բ) համապատասխան բնագավառում իր ձեռնհասության սահմաններից:

Առաջին դեպքում փորձագետի եզրակացությունը չի կարող գիտականորեն հիմնավորված համարվել, եթե փորձագետը լուծել է հարցեր, որոնք նշանակված փորձաքննության առարկային չեն վերաբերում: Օրինակ, երբ փորձագետը լուծել է իրավական բնույթի հարցեր կամ տվել է իրավական գնահատականներ: Ընդ որում, ինչպես արդեն նշել ենք, շատ դեպքերում փորձագիտական պրակտիկայում փորձաքննություն նշանակող մարմինն ինքն է այդպիսի հարցեր առաջադրում փորձագետին՝ պահանջելով պատասխանել, օրինակ, տրված փաստաթղթի «օրինական» կամ «կեղծված» լինելու հարցին[114]: Բոլոր դեպքերում փորձագետը պետք է խուսափի իրեն առաջադրված հարցերին իրավական գնահատականներ տալուց:

Այս կապակցությամբ Տ. Վ. Ավերյանովան գրում է. *«Դատական պրակտիկային հայտնի են փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելուց հրաժարվելու բազմաթիվ դեպքեր այն հիմքով, որ փորձագետն իր հետևությունները հիմնավորելիս դուրս է եկել համապատաս-*

---

[114] Տե՛ս, օրինակ, ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթներ՝ № 03-116/1421, 30.10.1998 թ., ըստ № 70901598 քրեական գործի № 03-144/1723, 21.12.1998 թ., ըստ № 44202498 քրեական գործի № 03-20/291, 13.03.1998 թ., ըստ № 14101398 քրեական գործի և այլն:

խան գիտության սահմաններից և իրեն վերապահել է դատական և քննչական մարմինների գործառույթներ՝ գնահատելով գործում առկա ապացույցները»[115]:

Փորձագետը նշանակված դատական փորձաքննության առարկայի սահմաններից կարող է դուրս գալ նաև այն դեպքում, երբ հետևություններ է անում մեկ այլ փորձաքննության առարկային վերաբերող հարցերի մասին (օրինակ, երբ հեղինակագետ-փորձագետը եզրակացության մեջ նշում է, որ վիճելի տեքստում կատարված ձեռագրի հատկանիշները չեն պատկանում դրա հեղինակին):

Երկրորդ դեպքում փորձագետի եզրակացությունը գիտականորեն հիմնավորված չէ, եթե փորձագետի լուծած հարցերը վերաբերում են նշանակված փորձաքննությանը, սակայն դուրս են տվյալ փորձագետի ձեռնհասության սահմաններից, այսինքն՝ տվյալ հարցը դուրս է տվյալ փորձագետի հատուկ գիտելիքների շրջանակներից կամ վերջինս չունի համապատասխան մեթոդիկան կիրառելու իրավասություն:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հաջորդ չափանիշը *փորձաքննության ներկայացված վիճելի և համեմատվող օբյեկտների անհրաժեշտ և բավարար ծավալի և որակի* առկայությունն է: Այս առումով փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը մեծապես կախված է հետազոտության ներկայացված վիճելի օբյեկտի բնույթից և ծավալից, ինչպես նաև համեմատական հետազոտման նմուշների որակից և քանակից:

---

[115] Տե՛ս ***Аверьянова Т. В.,*** Субъекты экспертной деятельности, Вестник криминалистики, Вып. 2, М., 2001, էջ 33:

Ինչպես արդեն նշել ենք, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունն զգալիորեն կախված է *փորձագիտական հետազոտության մեթոդիկայից:* Կրիմինալիստիկական և քրեադատավարական գրականության մեջ բազմիցս տարակարծությունների տեղիք է տվել վարույթն իրականացնող մարմնի կողմից փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հնարավորության հարցը՝ կիրառված մեթոդիկայի տեսանկյունից[116]:

Այսպես՝ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման, մասնավորապես կիրառված մեթոդիկայի ճշտության գնահատման հնարավորության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են երկու հակադիր մոտեցումներ:

Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ վարույթն իրականացնող մարմինն ի վիճակի չէ ճիշտ գնահատելու փորձագետի կիրառած մեթոդների գիտական հիմքերը, կիրառված մեթոդի ընտրության ճշտությունը, դրանց համապատասխանությունը գիտատեխնիկական զարգացման ժամանակակից մակարդակին՝ վարույթն իրականացնող սուբյեկտի՝ համապատասխան բնագավառում հատուկ գիտելիքների չտիրապետելու պատճառով: Ըստ այս խումբը ներկայացնող հեղինակների՝ վարույթն իրականացնող սուբյեկտը կարող է ընդամենը գնահատել փորձագետի եզրակացության լրիվությունը, պարզել, թե փորձագետը պատասխանել է, արդյոք, իրեն առաջադրված բոլոր հարցերին, որոշել այդ պատաս-

---

[116] Տե՛ս ***Вул С. М.,*** Особенности оценки заключения идентификационной судебно-авторoведческой экспертизы следователем и судом, Криминалистика и судебная экспертиза, Вып. 24, Киев., 1982, էջեր 81-82:

խանների բնույթը, ստուգել փորձագետի կողմից փորձաքննություն կատարելիս դատավարական պահանջներին պահպանումը և եզրակացությունը կազմելիս դրա մեջ օրենքով պահանջվող բոլոր ռեկվիզիտները շարադրումը: Այս կարծիքին են Ա. Ի. Վինբերգը[117], Ռ. Ս. Բելկինը[118], Ե. Ռ. Ռոսինսկայան[119], Ա. Ռ. Բելկինը[120] և ուրիշներ:

Գիտնականների մյուս խումբը, ի տարբերություն առաջին մոտեցման, գտնում է, որ սխալ է կարծել, թե դատավորն ու քննիչը չեն կարող գնահատել եզրակացության տեսական հիմքերն ու կիրառված որոշակի մեթոդիկաներն այն պատճառաբանությամբ, թե դատավարության այդ սուբյեկտները փորձաքննությունների առանձին կարգերի և տեսակների տեսության և մեթոդիկաների բնագավառում հատուկ գիտելիքների չեն տիրապետում[121]:

Կարծում ենք, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, մասնավորապես կիրառված մեթոդիկայի ճշտության գնահատման հնարավորությունը հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի բա-

---

[117] Տե՛ս ***Винберг А. И.,*** Криминалистическая экспертиза письма, М., 1940, էջ 141:

[118] Մանրամասն տե՛ս ***Белкин Р. С.,*** Криминалистика: проблемы, тенденции, перспективы, От теории – к практике, М., 1988, էջեր 43-56:

[119] Տե՛ս ***Россинская Е. Р.,*** Комментарий к федеральному закону «О государственной судебно-экспертной деятельности в Российской Федерации», М., 2002, էջ 107:

[120] Տե՛ս ***Белкин А. Р.,*** Теория доказывания, М., 1999, էջեր 233-236:

[121] Տե՛ս ***Шейфер С. А.,*** Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение, Самара, 2004, էջեր 204-207; ***Шляхов А. Р.,*** Назначение и производствосудебных экспертиз: пособие для следователей, судей и экспертов, М., 1988, էջեր 51-62; ***Пашинский В. В.,*** Оценка достоверности заключения эксперта, Судебная экспертиза, №1 (17), 2009, էջ 5:

ցառելու մոտեցումն արդարացի չէ: Ճիշտ է, առանձին տեսակի փորձաքննությունների բնագավառի հատուկ գիտելիքներին խորապես տիրապետում են համապատասխան ոլորտի մասնագետները, սակայն դա չի նշանակում, որ վարույթն իրականացնող մարմինն ի վիճակի չէ գնահատելու փորձագետի կիրառած մեթոդների գիտական հիմնավորվածությունը, կիրառված մեթոդի հիմքում ընկած գիտական դրույթների ճշտությունը և դրանց համապատասխանությունը գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակին:

Բանն այն է, որ նախևառաջ վարույթն իրականացնող մարմինը որոշակի չափով տիրապետում է կրիմինալիստիկայի գիտության հիմնադրույթներին, կրիմինալիստիկական նույնացման տեսությանը, ինչպես նաև առանձին տեսակի փորձաքննությունների տեսական հիմքերին, որոնք հնարավորություն են տալիս այդ հիմնադրույթներից ելնելով՝ որոշել փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը:

Այս կապակցությամբ տեղին է մեջբերել նաև Զ. Մ. Սոկոլովսկու մոտեցումը, ըստ որի՝ գրի կրիմինալիստիկական հետազոտության հիմքում ընկած են այնպիսի գիտական դրույթներ, որոնք կազմում են փորձաքննության այս տեսակի էությունը: Այդ գիտական դրույթները կրում են ընդհանուր բնույթ և իրենց համակցությամբ կազմում են գրի միջոցով անձին նույնացնելու տեսական հիմքերը: Դրանց համընդհանուր և անվիճելի բնույթը վարույթն իրականացնող մարմնին թույլ չի տա-

լիս կասկածի տակ դնել այդ դրույթների գիտական հիմնավորվածությունը[122]:

Երկրորդ ՝ եզրակացության մեջ մասնագիտական եզրութաբանության հետ միաժամանակ ոչ մասնագիտական հասկացությունների օգտագործումը, համապատասխան եզրույթների բացատրությունն ու պարզաբանումը, եզրակացության բովանդակության կառուցվածքային բոլոր մասերի շարադրումը հստակ, մատչելի, պարզ ու հասկանալի ձևակերպումներով՝ վարույթն իրականացնող մարմնի համար հնարավորություն են ստեղծում լուծելու փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հարցը:

Երրորդ ՝ փորձագետի եզրակացության մեջ գրականության այն աղբյուրների մատնանշումը, որոնք օգտագործել է փորձագետը հետազոտություններ կատարելիս, կարևորագույն միջոցներ են փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման համար: Բանն այն է, որ եզրակացությունը գնահատելիս դրա գիտական հիմնավորվածության առնչությամբ հարցեր ծագելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է օգտվել գրականության համապատասխան աղբյուրներից: Բացի դրանից՝ փորձագետի եզրակացությանը կցվող հավելվածները, սխեմաները, լուսանկարները, գծագրերն օգնում են հեշտությամբ ընկալելու կիրառված մեթոդների բովանդակությունը և համոզվելու դրանց գիտական հիմնավորվածության և արժանահավատության հարցում:

---

[122] Տե՛ս ***Соколовский З. М.,*** Оценка заключений криминалистической экспертизы письма, М., 1959, էջ 22:

Փորձագետի եզրակացության հետազոտական մասում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, որպեսզի կարելի լինի հասկանալ հետազոտության էությունը, գնահատել հետազոտության արդյունքները: Դա վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն կտա համոզվելու հետազոտման մեթոդիկայի ամբողջականության ու գիտական հիմնավորվածության, դրա կիրառման ճշտության հարցում[123]:

Չորրորդ՝ մեր օրենսդրությամբ նախատեսված է փորձաքննությունների նշանակման ու կատարման այնպիսի կարգ և փորձագետի եզրակացության այնպիսի կառուցվածք, որը վարույթն իրականացնող մարմնին, ըստ էության, հնարավորություն է տալիս ապահովելու և գնահատելու եզրակացության գիտական հիմնավորվածությունը: Օրինակ, եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման ապահովման կարևոր միջոց է փորձագետի հարցաքննությունը, լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունները՝ պարզելու համար կիրառված մեթոդիկաների էությունը: Դատավարական այս ինստիտուտները, ըստ էության, ոչ միայն ուղղված են փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովմանը, այլ նաև՝ վարույթն իրականացնող մարմ-

---

[123] Մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ.,*** Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ընթացքի և արդյունքների ամրագրումը, Պետություն և իրավունք, № 1 (15), 2002, էջեր 66-67:

նին եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հնարավորություն ընձեռելուն[124]:

Կարծում ենք՝ վարույթն իրականացնող մարմինն ի վիճակի է որոշակի հետևությունների հանգելու փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, մասնավորապես կիրառված մեթոդիկայի գիտական հիմքերի և դրա ճշտության կապակցությամբ: Փորձագետի՝ համապատասխան մեթոդների կիրառման վերաբերյալ բերված փաստարկներն ու հիմնավորումները, կարծում ենք, բավարար են փորձագետի հետևությունների գիտական հիմնավորվածության և արժանահավատության վերաբերյալ գնահատող սուբյեկտի մոտ որոշակի ներքին համոզմունքի ձևավորման համար:

Փորձագետի եզրակացությունը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ստուգի, թե փորձագետի եզրակացության հիմքում ընկած են համապատասխան բնագավառի անհրաժեշտ գիտական տվյալներ, և արդյոք, փորձագետի եզրակացությունը հիմնված է փորձագետի հատուկ գիտելիքների վրա: Եթե փորձագետի եզրակացությունը հիմնված է համապատասխան բնագավառում կասկածելի գիտական տվյալների և վիճահարույց դրույթների վրա, այն չի կարող գիտականորեն հիմնավորված համարվել և դրվել գործով կայացվող որոշման հիմքում:

Այս առումով Ա. Ի. Վինբերգը նշում է. *«Սխալ մեթոդիկան տանում է սխալ հետևությունների. փորձագետի եզրակացութ-*

---

[124] Տե՛ս ***Шейфер С. А.,*** Следственные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение. Самара, 2004, էջեր 206-207; ***Аверьянова Т. В.,*** Судебная экспертиза: курс общей теории, М., 2007, էջեր 454-459:

յունը, որը հիմնված է հետազոտությունների ոչ ճիշտ մեթոդների վրա, չի կարող լիարժեք ապացույց համարվել»[125]:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը որոշում է նաև, թե կիրառվել են, արդյոք, անհրաժեշտ բոլոր մեթոդները և արդյոք այդ մեթոդները բավարար են հետազոտվող օբյեկտների հատկանիշների բացահայտման ու գնահատման և վիճելի փաստի կամ փաստերի վերաբերյալ որոշակի հետևության հանգելու համար: Փորձագետի եզրակացությունը չի կարող գիտականորեն հիմնավորված համարվել, ինչպես արդեն նշել ենք, եթե վիճելի և համեմատվող օբյեկտների անջատ հետազոտությանը չի հաջորդել դրանց ընդհանուր և մասնավոր հատկանիշների համեմատական հետազոտությունը, կամ եթե համեմատական հետազոտության արդյունքում փորձագետը չի գնահատել համընկնող և տարբերվող հատկանիշների նույնացման արժեքը: Փորձագետի եզրակացությունը գիտականորեն հիմնավորված չի կարող համարվել նաև այն դեպքում, եթե օբյեկտների համընկնող հատկանիշների նույնության վերաբերյալ դրական հետևության հանգելուց հետո փորձագետը չի հիմնավորել տարբերվող հատկանիշների տարբերության պատճառները և այլն:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հաջորդ կարևոր չափանիշը *եզրակացության տրամաբանվածությունն* է՝ կատարված հետազոտությունների և եզրակացության միջև փորձագետի հետևությունների տրամաբանական կապի առկայությունը, դրանում

---

[125] Տե՛ս ***Винберг А. И.,*** Криминалистическая экспертиза в советском уголовном процессе, М., 1956, էջ 145:

իմաստային հակասությունների բացակայությունը՝ ներքին անհակասականությունը: Այս առումով փորձագետի եզրակացությունը կարող է համարվել գիտականորեն չհիմնավորված, եթե, օրինակ, (վերլուծության) անալիզի և (համադրության) սինթեզի միջև առկա է տրամաբանական հակասություն, կամ երբ վերլուծությունում նկարագրվում են համընկնող բոլոր հատկանիշները, իսկ սինթեզում արվում է բացասական հետևություն: Ընդ որում՝ փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման հարցում, թեև հիմնական նշանակություն ունի եզրակացության հետազոտական մասը, քանի որ այդ բաժնում, ըստ էության, շարադրվում են հետազոտման բուն ընթացքն ու արդյունքները, այնուամենայնիվ եզրակացության գիտական հիմնավորվածությունը և ապացուցողական արժեքը գնահատվում է եզրակացության բոլոր կառուցվածքային մասերի հետ մեկտեղ[126]:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման կարևոր չափանիշ է հանդիսանում *հետազոտությունների և եզրակացության լրիվությունը:* Եզրակացության լրիվությունը գնահատելիս՝ վարույթն իրականացնող մարմինը ստուգում է, թե փորձագետն օգտագործել է, արդյոք, փորձաքննության ներկայացված բոլոր վիճելի և համեմատվող օբյեկտները, կիրառել է, արդյոք, տարբեր, միմյանց փոխլրացնող մեթոդներ՝ իրեն առաջադրված բոլոր հարցերին արժանահավատ պատասխաններ տալու համար, արդյոք փորձագետը պատասխանել է իրեն առաջադրված բոլոր հարցերին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև իր իրավա-

---

[126] Տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.,*** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 104:

սության մեջ մտնող, փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով, որոնց կապակցությամբ իրեն հարցեր չեն առաջադրվել:

Հետազոտությունների լրիվության և, դրանով իսկ, եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովման կարևորագույն իրավական երաշխիքներից մեկն օրենքով նախատեսված այն դրույթն է, համաձայն որի՝ փորձագետը կարող է եզրակացություն տալ ոչ միայն իրեն առաջադրված հարցերի, այլ նաև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքների վերաբերյալ *(ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 4-րդ կետեր):* Այս դրույթը, ըստ էության, ուղղված է փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության ապահովմանը, որն իրականացվում է հետազոտությունների լրիվությունն ապահովելու ճանապարհով:

Այն դեպքում, երբ առաջադրված հարցերին պատասխանելն անհնար է, փորձագետը շարադրում է այդ հարցերին պատասխանելու անհնարինությունը և դրա հիմնավորված պատճառները (օրինակ, ներկայացված օբյեկտների կամ նմուշների ծավալի անբավարարությունը կամ նմուշների անհամապատասխանությունը և այլն): Եթե ներկայացված նյութերն անբավարար են կամ հարցի լուծումը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից, փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի առաջադրված բոլոր կամ որոշ հարցերին պատասխանելու անհնարինության մասին հիմնավորում *(ՀՀ ՔԴՕ 250-րդ հոդվածի 4-րդ մաս)*:

Փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության գնահատման վերը թվարկված չափանիշները սերտո-

բեն կապված են միմյանց հետ և փոխպայմանավորված են միմյանցով: Այդ չափանիշներից մեկի կամ մյուսի գնահատականն ազդում է մյուս չափանիշների գնահատման արդյունքների վրա, ինչն էլ, իր հերթին, որոշիչ է փորձաքննության արդյունքում կազմված փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածության հարցում դրական կամ բացասական հետևության հանգելու համար:

Այսպիսով, փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածությունը նշանակում է, որ այն կատարվել է համապատասխան բնագավառի գիտական հիմքերին և մեթոդիկաներին համապատասխան, եզրակացության մեջ շարադրված հետազոտությունների և փորձագետի հետևությունների միջև առկա է տրամաբանական կապ, հետազոտությունները կատարվել են փորձագետի ձեռնհասության և համապատասխան փորձագիտական հետազոտության առարկայի շրջանակներում, վիճելի և համեմատական հետազոտության ներկայացված որակյալ նյութերի բավարար քանակության օգտագործմամբ, դրանց նույնացման հատկանիշների լրիվ հետազոտմամբ և նույնացման արժեքի հաշվառմամբ:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից փորձագետի եզրակացության՝ գնահատման ենթակա հաջորդ տարրը *եզրակացության մեջ ապացույցների վերաբերելիությունն ու գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում շարադրված փաստական տվյալների ապացուցողական նշանակությունն է:* Փորձագետի եզրակացության արժանահավատության գնահատումն իրականացվում է ոչ միայն եզրակացության վերը նշված հատկանիշների գնահատման միջոցով, այլ նաև փորձագետի եզրակացությունը գործով ձեռք բերված այլ ապա-

ցույցների հետ համադրելու ճանապարհով: Այս առումով կարևոր նշանակություն ունի փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության և գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում դրա տեղի և դերի որոշումը: Հարկ է նշել, որ համապատասխան գործերով փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը հավասարարժեք է այլ ապացույցների ապացուցողական նշանակությանը: Ընդ որում, գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրումը և ապացույցների ամբողջ համակցությամբ փորձագետի եզրակացության գնահատումը դրա արժանահավատության կարևորագույն երաշխիքներից են:

Փորձագետի եզրակացությունը վարույթն իրականացնող մարմինը սկզբում գնահատում է վերը քննարկված տարրերի և չափանիշների տեսանկյունից, ապա՝ գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցության մեջ: Ապացույցների համակցությամբ փորձագետի եզրակացության գնահատումը եզրակացության արժանահավատության գնահատման միջոց է:

Այս ենթատեքստում հատկանշական է մեջբերել *Գ. Գրիգորյանի վերաբերյալ 2015 թ. փետրվար 27-ի ԳԴ/0002/01/14 որոշման* մեջ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, սույն գործով վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերից հետևում է, որ.

- վարույթն իրականացնող մարմնի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի՝ քրեական գործով դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ փորձագետներին առաջադրվել է հարց այն մասին, թե *«գ) Ըստ վնասվածքի կառուցվածքային և չափային առանձ-*

նահատկությունների՝ ինչ տրամաչափի է եղել վնասվածք առաջացրած հրազենի տեսակը և փամփուշտի գնդակի տրամաչափը» (տե՛ս հատոր 1-ին, գ.թ. 143-144),

- դատաքիմիական և դատաձգաբանական համալիր փորձաքննության եզրակացության համաձայն՝ Մ.Կարապետյանի կոշիկի վրա առկա վնասվածքների պատճառումը հնարավոր էր 5,5-9 մմ տրամաչափի գնդակով: Միևնույն ժամանակ եզրակացությունը չի պարունակում տվյալներ հանցագործության առարկա հանդիսացող հրազենի և դրա փամփուշտների տեսակի վերաբերյալ (տե՛ս սույն որոշման 7-րդ կետը),

- դատաձգաբանական մասն իրականացրած փորձագետ Ա.Պողոսյանն իր նախաքննական ցուցմունքներով ***պարզաբանել է*** 5,5-9 մմ չափային միջանցքում գտնվող փամփուշտների և դրանք կրակող հրազենի տիպերը՝ նշելով միայն ակոսափող տեսակի զենքերը, իսկ դատաքննական ցուցմունքներով լրացրել է նախորդ ցուցմունքերը և ***հայտնել,*** որ 5,5-9 մմ տրամաչափի փամփուշտները կարող են կրակվել նաև ինքնաշեն հարթափող կամ ոչ ինքնաշեն գործարանային հարթափող զենքերից (տե՛ս սույն որոշման 8-րդ և 9-րդ կետերը):

Մասնավորապես, փորձագետ Ա.Պողոսյանը 2014 թվականի մարտի 20-ի դատական նիստում ցուցմունք է տվել այն մասին, որ *«(…) 5.5-ից 9 մմ տրամաչափի փամփուշտները կարող են կրակվել նաև ինքնաշեն հարթափող կամ նույնիսկ ոչ ինքնաշեն գործարանային հարթափող զենքերից, թեև նրանք արտադրված են գործարանային արտադրության ակոսափող զենքերի համար: Որպես փորձագետ չի կարող պատկերացնել Մակարովին նմանվող ուրիշ ատրճանակ: Փամփուշտի (…) ռազմամթերք հանդիսանալու փաստը որոշվում է համապա-*

տասխան փորձաքննությամբ ու իրեղեն ապացույց օբյեկտի առկայության ժամանակ: Եթե փորձագետը չունենա փամփուշտ, չի կարող ասել՝ այն ռազմամթերք հանդիսանում է, թե՝ ոչ (...): Քրեական գործում առկա տվյալներով որոշել Գ.Գրիգորյանի մոտ առկա հրազենը ակոսափող է եղել, թե՝ ոչ, հնարավոր չէ» (տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 60-62*)*:

Վերոգրյալից հետևում է, որ փորձագետ Ա.Պողոսյանի նախաքննական և դատաքննական ցուցմունքներում հակասություններ առկա չեն, ինչպես նաև փորձագետի ցուցմունքները չեն փոխարինել փորձագիտական եզրակացությանը, քանի որ նրա հարցաքննությունը կատարվել է փորձագիտական եզրակացության այնպիսի բացի վերաբերյալ, որի կապակցությամբ չի պահանջվել լրացուցիչ հետազոտություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե գործում առկա կոնկրետ որ ապացույցներն են տեղեկություններ պարունակում Գ.Գրիգորյանին մեղսագրվող հանցագործության առարկայի առկայության մասին, որոնք Առաջին ատյանի դատարանը պատշաճ գնահատման չի ենթարկել: Իսկ ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչված փորձաքննությունների եզրակացություններին (տե՛ս սույն որոշման 6-7-րդ կետեր), ապա դրանք կրում են հավանական բնույթ և ինչպես առանձին, այնպես էլ այլ ապացույցների հետ համակցության մեջ չեն պարունակում այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ կտան՝ հիմնավոր կասկածից վեր՝ ապացուցողական չափանիշին համապատասխան եզրահանգումներ կատարել

հանցագործության առարկայի, դրա տեսակի կամ հատկանիշների վերաբերյալ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը, որպես գործի նոր քննության ծավալ սահմանելով գործում առկա ապացույցները կրկին գնահատելը և փորձագետներին հարցաքննելը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում համապատասխան փորձաքննություն նշանակելը, չի պատճառաբանել՝

- դատաբժշկական կամ դատաքիմիական փորձաքննություն իրականացրած փորձագետները զենքի կամ փամփուշտների տեսակի հետ կապված ինչպիսի հարցեր կարող են պարզաբանել,
- ինչ տվյալ ձեռք բերելուն կարող է ուղղված լինել համապատասխան փորձաքննություն նշանակելն այն պայմաններում, երբ հանցագործության առարկան՝ հրազենը և դրա փամփուշտները (անգամ պարկուճը կամ գնդակը) չեն հայտաբերվել, իսկ տուժողի կոշիկի հիման վրա փորձաքննություն արդեն իսկ իրականացվել է: Ավելին[a] փորձաքննության դատաձգաբանական մասն իրականացրած փորձագետի դատաքննական ցուցմունքի համաձայն քրեական գործում առկա տվյալներով Գ.Գրիգորյանի մոտ առկա հրազենը ակոսափող է եղել, թե՝ ոչ, հնարավոր չէ որոշել, իսկ եթե փորձագետը չունենա փամփուշտ, չի կարող ասել այն ռազմամթերք է, թե՝ ոչ (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը):

Նման պայմաններում ստացվում է, որ Վերաքննիչ դատարանը տուժողի կոշիկի հետազոտման համար նոր փորձաքննություն նշանակելու դեպքում առանց հիմնավորման հնարավոր է համարել հանցագործության առարկայի՝ հրազենի և փամփուշտների նույնացումն անգամ այն դեպքում, երբ

փորձագետի պնդմամբ սույն գործում առկա տվյալներով դա անհնարին է:

Ամփոփելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ.Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով կայացված արդարացման դատավճիռը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն:

Մեջբերված քրեադատավարական դրույթների վերլուծությունից երևում է, որ անմեղության կանխավարկածի պահանջով անձի մեղավորությունը հանցանք կատարելու մեջ պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, **որ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով ապացուցման առարկայի շրջանակում՝ որպես հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ կետ), ի թիվս այլնի, ընդգրկվում է հանցագործության առարկան: Այսինքն՝ քննարկվող հոդվածով անձին մեղավոր ճանաչելիս գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ պետք է ապացուցվի նաև հանցագործության առարկայի (հրազեն, բացի ողորկափող հրազենից և դրա փամփուշտներից, ռազմամթերք, ակոսափող հրազենի փամփուշտներ, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր) առկայությունը:** (Տե՛ս սույն որոշման 20-րդ կետը):

Այսպիսով, կարող ենք փաստել, որ փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց կարող է օգտագործվել, եթե այն ճանաչվում է *վերաբերելի* ապացույց, այսինքն՝ եթե փորձագետի եզրակացությունը պիտանի է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները հաստատելու համար:

Հարկ է նկատել, որ փորձագետի եզրակացության վերաբերելիության և թույլատրելիության տարրերը սերտորեն փոխկապակցված և փոխպայմանավորված են: Եզրակացության թույլատրելիության հարցը ծագում է միայն այն դեպքում, եթե այն վերաբերում է գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքներին, իսկ վերաբերելի կարող է ճանաչվել միայն թույլատրելի եզրակացությունը: Ընդ որում՝ փորձագետի եզրակացության վերաբերելիությունը ենթադրում է դրա կապն ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների հետ, որը գնահատվում է գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, փորձագետի եզրակացությունը կազմվում է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքների օգտագործմամբ համապատասխան հետազոտություններ կատարելու ճանապարհով, առանձին դատավարական փաստաթուղթ՝ եզրակացություն տալու միջոցով, այնուամենայնիվ այն չպետք է դիտել որպես ապացույցի առանձնահատուկ տեսակ: Սակայն, բոլոր դեպքերում, պետք է նկատի ունենալ, որ, ի տարբերություն ապացույցի այլ տեսակների, փորձագիտական եզրակացության ձևավորման համար քրեական դատավարության մեջ ներգրավվում է նոր առանձնահատուկ սուբյեկտ՝ փորձագետը, ով, իր մասնագիտական պատրաստվածության ուժով, ի վիճակի է հետևություններ անել գործի հա-

մար նշանակություն ունեցող այն հանգամանքների մասին, որոնց պարզաբանումը պահանջում է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ: Պատահական չէ, որ հատուկ գիտելիքների կիրառման անհրաժեշտության պարագայում փորձագետի մասնակցությունը դատավարությանը պարտադիր է նույնիսկ այն դեպքում, եթե վարույթն իրականացնող մարմինը տիրապետում է համապատասխան բնագավառի հատուկ գիտելիքների: Այս առումով էլ ՀՀ ՔԴՕ 243-րդ հոդվածը սահմանում է. *«…Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետների, ընթերակաների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննություն նշանակելու անհրաժեշտությունից»:*

Այլ ապացույցների շարքում փորձագետի եզրակացության տեղի հարցը քննարկելիս՝ կարծում ենք, կարելի է առանձնացնել դրա դատավարական և ճանաչողական նշանակությունը և հարցը քննարկել այդ երկու տեսանկյուններից:

Դատավարական նշանակության տեսանկյունից փորձագետի եզրակացության, ինչպես և մյուս ապացույցների ապացուցողական արժեքը, որոշվում է այլ ապացույցների համակցությամբ դրա գնահատման արդյունքում: Այս առումով ՀՀ ՔԴՕ 25-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանա-

կություն տան՝ մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:

Փորձագետի եզրակացության մեջ առկա անճշտությունները և դրանց ապացուցողական նշանակության գնահատման անհրաժեշտությունը հատկապես ծագում է այն ժամանակ, երբ փորձագետի եզրակացությունը հակասում է գործով անվիճելիորեն հաստատված ապացույցներին[127]: Պետք է նկատի ունենալ, որ այլ ապացույցներին հակասելու փաստը, ինքնին, չի նշանակում, որ փորձագետի եզրակացությունն արժանահավատ չէ, այլ անհրաժեշտ է այն համադրել այլ ապացույցների հետ և ապացույցները գնահատել գործով ձեռք բերված այլ ապացույցների բավարար համակցությամբ: Այս մասին է վկայում նաև ՎՃռաբեկ դատարանի դատական պրակտիկան[128]:

Ասվածը նշանակում է՝ անկախ նրանից, որ փորձագետի եզրակացությունը որոշակի բնագավառում կիրառված գիտելիքների արդյունքում ստացված, գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ տեղեկատվութ-

---

[127] Տե՛ս ***Соколовский З. М.,*** Оценка заключений криминалистической экспертизы письма, М., 1959, էջ 57:

[128] ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 17.02.2009 թ. № ՎԲ-01/09 որոշման (ՀՀՊՏ 2009/27 (693) 27.05.09 թ.) 37-րդ կետով սահմանված է. «*...Ինչ վերաբերում է վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, թե սպանության դեպքը 2002 թ. մարտի 13-ի գիշերը՝ ժամը 00-ի սահմաններում, կատարված լինելու փաստը չի համընկնում տուժողի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ վերջինիս մահվան վրա հասնելու տվյալներին, ապա ՎՃռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը փորձագետի եզրակացությունը գնահատել է՝ հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքներն իրենց համակցության մեջ»:* Տե՛ս նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2008 թ. № ԱՎԴ2/0059/01/08 (ՀՀՊՏ 2009/2 (668) 14.01.09). 30.08.2007 թ. № ՎԲ 135/07 (ՀՀՊՏ 2007/54 (578) 07.11.07 թ.) որոշումները:

յուն է, այնուամենայնիվ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը չեն կարող կանխակալ մոտեցում ցուցաբերել փորձագետի եզրակացությանը՝ որպես առավել կարևոր ապացույցի տեսակի:

Ճանաչողական առումով փորձագետի եզրակացությունը գործի հանգամանքների և փաստերի գիտական մեկնաբանությունն է, ընդ որում, այն փաստերի ու հանգամանքների, որոնց ուսումնասիրությունն ու պարզաբանումը պահանջում են որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ: Այս տեսակետից հատուկ գիտելիքների կիրառման արդյունքում կազմվող փորձագիտական եզրակացության տեղը մեծ է համապատասխան հանգամանքների պարզաբանման գործում: Առանց հատուկ գիտելիքների կիրառման, փաստորեն, շատ հանգամանքներ կմնան չբացահատված և չպարզաբանված: Այս իմաստով փորձագետի եզրակացության ճանաչողական նշանակությունն անփոխարինելի է, սակայն սա չի նսեմացնում մյուս ապացույցների դերն ու նշանակությունը քրեական դատավարությունում: Միևնույն ժամանակ ճանաչողական առումով որոշ գործերով փորձագետի եզրակացությունը կարող է վճռորոշ դեր կատարել գործի քննության ընթացքի և, ընդհանրապես, դրա բացահայտման համար: Որոշ դեպքերում նույնիսկ այն կարող է հանդիսանալ հիմնական ապացույցը գործի հանգամանքների բացահայտման համար: Բոլոր դեպքերում՝ թե՛ փորձագետի եզրակացությունը, թե՛ մյուս ապացույցները, ի վերջո, ուղղված են անցյալի՝ դեպքի կամ դրա առանձին մանրամասների (դետալների) վերականգնմանը, և այդ գործընթացում դրանցից յուրաքանչյուրն ունի իր հատուկ տեղն ու նշանակությունը, ինչը բացառում է փորձագետի եզրակա-

ցության՝ այլ ապացույցների նկատմամբ առավելություն ունենալու հանգամանքը:

Այսպիսով, փորձագիտական եզրակացության՝ որպես ապացույցի գնահատումը վարույթն իրականացնող մարմինն իրականացում է գործով ձեռք բերված բոլոր ապացույցների համակցությամբ՝ առանց դրանցից մեկին կամ մյուսին առավելություն տալու:

Տ. Վ. Սախնովայի խոսքերով՝ *«Այն հավասար է հավասարների մեջ»*[129]:

Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակությունը քննարկելիս անհրաժեշտ ենք համարում որոշակիորեն անդրադառնալ նաև փորձագետի *հավանական եզրակացության* ապացուցողական նշանակության հարցին:

Հայտնի է, որ կրիմինալիստիկական, դատափորձագիտական և դատավարական գրականության մեջ բազմիցս տարակարծությունների տեղիք է տվել փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության հարցը[130]: Նշված հարցի հետ կապված, ինչպես հայտնի է, գրականության մեջ արտահայտվել են տարբեր մոտեցումներ: Առաջին մոտեցման կողմնակիցները գտնում են, որ փորձագետի հավանական եզրակացությունն ունի ապացուցողական նշանա-

---

[129] Տե՛ս ***Сахнова Т. В.,*** Судебная экспертиза, М., 2000, էջ 251:

[130] Տե՛ս ***Давтян А. Г.,*** Экспертиза в гражданском процессе, М., 1995, էջ 73; Уголовный процесс, Под общей ред. ***К. Ф. Гуценко,*** М., 1996, էջ 125; ***Безлепкин Б. Т.,*** Уголовный процесс России, Общая часть и досудебные стадии (курс лекции), М., 1998, էջ 104:

կություն. այն նույնպես ապացույց է[131]: Այս հեղինակների հակառակորդները ժխտում են փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակությունը[132], իսկ երրորդ խումբ հեղինակները գտնում են, որ փորձագետի հավանական եզրակացությունը կարող է օգտագործվել միայն որպես անուղղակի ապացույց, ուստիև՝ ունենալ որոշակի ապացուցողական արժեք[133]: Այսպիսով, ծագում է փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության որոշման հարցը:

Նախ հարկ է նշել, որ հավանականությունը որոշակի տեղեկատվության վրա հիմնված պնդման կամ ենթադրության ճշմարտացիության մեջ գնահատող սուբյեկտի հավատի (ներքին համոզմունքի) աստիճանն է: Ենթադրությունը, պնդումը կամ վարկածն ինքնին կարող է լինել ճիշտ կամ սխալ, արժանահավատ կամ ոչ արժանահավատ[134]:

Համոզմունքի հավանականության աստիճանը կախված է այն վարկածներից և տեղեկատվությունից, որոնք օգտագործվում են հետևության հավանականությունը գնահատելու համար: Հետևաբար՝ համապատասխան հետևության կամ պնդման հավանականությունը կարող է այլ կերպ գնահատվել

---

131 Տե՛ս ***Винберг А. И.,*** Криминалистическая экспертиза в советском уголовном процессе, М., 1956, էջեր 127-134; ***Оганян Л. П.,*** Вероятное заключение эксперта в системе доказательств, Ереван, 1970, էջ 15:

132 Տե՛ս ***Рахунов Р. Д.,*** Теория и практика экспертизы в советском уголовном процессе, М., 1953, էջ 208:

133 Տե՛ս ***Сахнова Т. В.,*** Судебная экспертиза, М., 2000, էջ 235:

134 Տե՛ս ***Robertson B., Vignaux G. A.,*** Interpreting Evidence: Evaluating Forensic Science in Courtroom. Chichester, 1995, էջ 14; ***Aitken C. G.,*** Statistical Interpretation of Evidence. In ***Siegel J. A., Saukko P. J., Knupfer G. C. (Eds.),*** Encyclopedia of Forensic Sciences, New York, 2000, Volume 2, էջեր 717-718:

որոշակի փաստական տվյալների օգտագործման դեպքում, իսկ առանց դրանց օգտագործման՝ այլ կերպ:

Կարծում ենք՝ փորձագետի հավանական եզրակացության ապացուցողական նշանակության բացառման մոտեցումն արդարացի չէ: Մեր կարծիքով՝ փորձագետի հավանական եզրակացությունը գործով կարող է ունենալ որոշակի ապացուցողական նշանակություն և օգտագործվել որպես անուղղակի ապացույց: Բանն այն է, որ ինչպես փորձագետի որոշակի (կատեգորիկ)՝ հաստատող կամ ժխտող, այնպես էլ հավանական եզրակացությունը գնահատվում է ապացույցների ամբողջ համակցությամբ: Քրեադատավարական, վերն արդեն քննարկված պահանջի համաձայն՝ ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի:

Այսպիսով՝ փորձագետի եզրակացությունը, անկախ հավանական կամ որոշակի լինելուց, պետք է համադրվի գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ և գնահատվի ապացույցների ամբողջ համակցությամբ:

Իհարկե, այլ հարց է, որ փորձագետի հավանական եզրակացությունը, վարույթն իրականացնող մարմնին վիճելի փաստի վերաբերյալ ներքին համոզման հանգեցնելու հնարավորության տեսանկյունից, ավելի «թույլ» է, քան որոշակի եզրակացությունը: Այս առումով, ինչպես դիպուկ նշում է Լ. Պ. Օհանյանը՝ *«որոշակի և հավանական եզրակացությունների միակ տարբերությունն այն է, որ որոշակի եզրակացությունը վարույթն իրականացնող մարմնին ավելի է մոտեցնում որոնվող ճշմարտությանը»*[135]:

---

[135] Տե՛ս ***Оганян Л. П.,*** Вероятное заключение эксперта в системе доказательств, Ереван, 1970, էջ 10:

Այսպիսով՝ հավանական եզրակացությունը, ինչպես և որոշակին, նույնպես կարող է գործով օգտագործվել որպես գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ ներքին համոզմունք ձևավորելու միջոց գնահատող սուբյեկտի համար: Օրինակ, երբ հեղինակագետ-փորձագետը եզրակացության հետևությունների մասում նշում է, որ հավանական է, որ վիճելի տեքստի հեղինակը կասկածյալն է (այսինքն՝ հավանական է նաև, որ վիճելի տեքստի հեղինակը կասկածյալը չէ), ճանաչողական առումով ապացուցողական նվազ նշանակություն ունի, քան այն եզրակացությունը, որտեղ փորձագետը որոշակի կերպով հետևություն է անում տեքստի որոշակի հեղինակի մասին: Այնուամենայնիվ հեղինակագետ-փորձագետի հավանական եզրակացության մեջ շարադրված ենթադրական դատողությունները կարող են գործով օգտագործվել որպես տեքստի հեղինակի կամ դրա կատարման հանգամանքների և պայմանների վերաբերյալ *անուղղակի ապացույցներ*:

Ապացույցների տեսությունից հայտնի է, որ ապացույցներն ուղղակիի և անուղղակիի բաժանելու համար հիմք է այն հանգամանքը, թե տվյալ ապացույցը հնարավորություն է տալիս փաստերի գոյության կամ բացակայության մասին անել միայն որոշակի, թե մի քանի հավանական հետևություններ: Ընդ որում՝ անուղղակի ապացույցները միշտ էլ ապացուցողական փաստերի հայտնաբերման միջոց են, իսկ ուղղակիներն այն փաստերի, որոնք մտնում են ապացուցման առարկայի մեջ[136]:

---

[136] Տե՛ս ***Դիլբանդյան Ս., Հարությունյան Ա., Ղազինյան Գ. և ուրիշներ,*** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունք, Ընդհա-

Այլ կերպ ասած՝ ապացուցողական փաստերը դատավարությունում իրավաբանական չհամարվող փաստեր են, միջանկյալ փաստական տվյալներ, որոնք իրենց համակցությամբ վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս հանգելու որոշակի ներքին համոզմունքի գործի համար նշանակություն ունեցող իրավաբանական՝ նյութաիրավական և դատավարական փաստերի գոյության կամ բացակայության կապակցությամբ: Ընդ որում՝ ապացուցողական փաստերից յուրաքանչյուրն առանձին վերցրած, չի կարող ինքնուրույն հաստատել գործի լուծման համար նշանակություն ունեցող այս կամ այն հանգամանքը, սակայն մի քանի ապացուցողական փաստերի հաստատումը համապատասխան անուղղակի ապացույցների օգտագործմամբ հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին կամ դատարանին հնարավորություն է ընձեռում որոշակի հետևության հանգելու գործով իրավաբանական փաստերի մասին:

Հետևաբար՝ փորձագետի հավանական եզրակացությունը գործով կարող է օգտագործվել որպես անուղղակի ապացույց՝ հայտնաբերելու և հաստատելու համար մի շարք միջանկյալ, ապացուցողական փաստեր, որոնք էլ իրենց հերթին կարող են օգտագործվել գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Օրինակ՝ դատական հեղինակագիտական հետազոտության դիրքերից նկատենք, որ եթե վիճելի տեքստի հեղինակին որոշակիորեն նշելու փոխարեն հեղինակագետ-փորձագետը տեքստի լեզվական և մտավոր հատկանիշների հետազոտութ-

---

նուր մաս, Երևան, 2006, էջեր 289-290: ***Բալայան Է.,*** Ապացույցները, դրանց դասակարգումը, Իրավագիտության հարցեր, № 2, 1998, էջեր 97-100:

յան արդյունքների հիման վրա հետևություններ է անում, օրինակ, հեղինակի սոցիալական (խմբային) պատկանելության մասին՝ արձանագրելով հեղինակի խոսքի պատկանելությունը հայերենի այս կամ այն բարբառին, ապա դրանով անուղղակիորեն հաստատում է այդ բարբառը կրող կասկածյալի՝ դեպքին հնարավոր մասնակցության փաստը, որը պետք է հաստատվի գործով ձեռք բերված այլ ապացույցների համակցությամբ:

Այսպիսով՝ փորձագետի հավանական եզրակացությունը, ինչպեսև՝ որոշակին, գործով որպես ապացույց օգտագործելու համար պետք է համադրել գործով ձեռք բերված այլ փաստական տվյալների հետ և գնահատել ապացույցների ամբողջ համակցությամբ: Առանց այլ ապացույցների համակցությամբ գնահատելու՝ փորձագետի հավանական եզրակացության, որպես անուղղակի ապացույցի օգտագործումը մեղադրանքը հաստատելու համար՝ անթույլատրելի է: Իհարկե, փորձագետի հավանական եզրակացությունն ինքնին, առանց այլ ապացույցների համակցության, կարող է ունենալ որոշակի տակտիկական նշանակություն: Այն կարող է նախանշել քննության իրականացման սահմաններն ու նեղացնել հնարավոր այն անձանց շրջանակը, ովքեր կարող են ենթադրվել որպես վիճելի տեքստի հեղինակներ և, դրանով իսկ, հիմք հանդիսանալ այդ անձանց վերաբերյալ վարկածներ կառուցելու և նրանց նկատմամբ քննություն իրականացնելու համար:

Պետք է ավելացնել նաև, որ փորձագետի հավանական եզրակացությունը վարույթն իրականացնող մարմնին գործի համար նշանակություն ունեցող հանգամանքի վերաբերյալ որոշակի ներքին համոզմունքի հանգեցնելու նշանակության

տեսանկյունից ճիշտ է, զիջում է կատեգորիկ եզրակացությանը, սակայն այդ հանգամանքը չի նսեմացնում հավանական փարձագիտական եզրակացության ապացուցողական նշանակությունը քրեական դատավարությունում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ժամանակակից կրիմինալիստիկայում մեծ տարածում է գտել վիճակագրական վերլուծությունների և հավանականությունների տեսության օգտագործումը: Բանն այն է, որ դատական փորձագիտական գործունեությունը, ըստ էության, ուղղված է այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության հավանականության որոշմանը: Այլ կերպ ասած՝ փորձագետի խնդիրն է հետազոտվող օբյեկտների վերաբերյալ որոշակի վարկածի հավանականության հաստատումը կամ հերքումը, որը, ի վերջո, գնահատում և վերջնականորեն որոշում է դատարանը:

«Եթե դատարանը ձգտում է գործ ունենալ փաստերի հետ, ապա գիտությունը փաստերի հետ քիչ առնչություն ունի: Այն, վերջին հաշվով, կապված է հավանականության հետ»[137]:

Այս առումով փորձագիտական գործունեության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը դատարանի համար միայն խորհրդատվական բնույթ ունեցող հավանական ենթադրություն է, որը կոչված է օժանդակելու վերջինիս հատուկ գիտելիքներ պահանջող հանգամանքների պարզաբանման գործում: Բացի դրանից՝ դատարանի խնդիրը, ինքնին, բացարձակ ճշմարտության բացահայտումը չէ, այլ այնպիսի ճշմարտության, որը հաստատվում է գործով ձեռք բեր-

---

[137] Տե՛ս ***Olsson J.,*** Forensic Linguistics: An Introduction to Language, Crime, and the Law, Published by Continuum International Publishing Group, London, 2004, էջ 45:

ված ապացույցների վրա հիմնված դատարանի ներքին համոզմունքի ուժով: Հետևաբար, փորձագետի եզրակացությունն այն միջոցներից մեկն է միայն, որը թույլ է տալիս դատարանին ձևավորելու իր ներքին համոզմունքն օբյեկտիվ իրականության կապակցությամբ, իսկ փորձագիտական եզրակացության գիտական հիմնավորվածությունը փորձագետի հետևությունների այն հիմնական հատկանիշն է, որի հիման վրա դատարանը համոզվում է փորձագետի հավանական ենթադրության ճշմարտացիության հարցում:

Ինչպես արդեն նշել ենք, ժամանակակից կրիմինալիստիկայում հատուկ գիտելիքների կիրառման արդյունքում գործի հանգամանքների վերաբերյալ հետևությունների ձևավորման և գնահատման գործում մեծ տարածում է ստացել վիճակագրական վերլուծությունների և հավանականությունների տեսության կիրառումը: Ընդ որում, կրիմինալիստիկայում վիճակագրությունը կիրառվում է գործի քննության երկու փուլերում, որոնցից յուրաքանչյուրում այն կատարում է տարբեր դեր: Առաջինը՝ գործի մինչդատական քննության փուլն է, որտեղ վիճակագրությունն օգտագործվում է օգնելու նախնական քննությանը, մասնավորապես փաստական տվյալների և հետազոտության համար համեմատական նմուշների ձեռք բերման գործում: Երկրորդը դատական քննության փուլն է, որտեղ դատական վիճակագրությունը կիրառվում է ապացույցների մեկնաբանման ու գնահատման գործընթացում[138]:

---

[138] Տե՛ս ***Aitken C. G. G.,*** Statistics in Forensic Science, Part I. An Aid to Investigation, “Problems of Forensic Science”, Institute of Forensic Research in Krakow, 2006, Volume LXV, էջեր 53-67:

Ինչպես նշեցինք, դատական քննության ընթացքում, ինչպես նաև փորձագետի եզրակացության գնահատման գործում վիճակագրական մաթեմատիկական վերլուծությունները, ըստ էության, ուղղված են չափելու հետազոտությունների արդյունքում արված հետևությունների՝ իրականությանը համապատասխանելու հավանականության աստիճանը: Այլ կերպ՝ կրիմինալիստիկական վիճակագրությունը թույլ է տալիս որոշել առաջ քաշված վարկածների ճշմարտացիության հավանականության աստիճանն ու հետևություններ անել սխալ վարկածների հերքելիության հնարավորության աստիճանի մասին[139]:

Հավանականությունը որոշակի տեղեկատվության վրա հիմնված պնդման կամ ենթադրության ճշմարտացիության մեջ մեր հավատի աստիճանի իրատեսական չափն է: Ենթադրությունը, պնդումը կամ վարկածը, ինքնին, կարող է լինել ճիշտ կամ սխալ: Ընդ որում՝ որոշակի ենթադրության ճշմարտացիության մասին մեր վստահության աստիճանը չափվում է դրա հավանականության գնահատականի միջոցով[140]:

Հավանականության արժեքը կախված է այն ենթադրություններից և տեղեկատվությունից, որոնք օգտագործվում են այն գնահատելու համար: Հետևաբար, համապատասխան ենթադրության կամ պնդման հավանականությունը կարող է մի դեպքում այլ կերպ գնահատվել որոշակի փաստական տվյալների կամ ապացույցների օգտագործման պարագայում, իսկ մեկ այլ դեպքում՝ առանց դրանց օգտագործման՝ այլ կերպ:

---

[139] Տե՛ս ***Aitken C. G. G.,*** Statistical Interpretation of Evidence, In Siegel, J. A., Saukko, P. J., and Knupfer, G. C. (Eds.), Bayesian Analysis, Encyclopedia of Forensic Sciences, New York, 2000, Volume 2, էջեր 717-718:

[140] Տե՛ս ***Robertson B., Vignaux G. A.,*** Interpreting Evidence: Evaluating Forensic Science in Courtroom, Chichester, 1995, էջ 14:

Քրեական դատավարությունում փորձագետի խնդիրը միայն հարաբերական հավանականության պարզումն է, իսկ դատարանի և վարույթն իրականացնող մարմնի խնդիրը՝ հետագա հավանականության որոշումը:

Այս առումով փորձագետն ապացույցները գնահատում է երկու հնարավոր այլընտրանքային տեսանկյուններից.

ա) ապացույցի հավանականությունը, եթե մեղադրանքի կողմից առաջարկվող վարկածն է ճիշտ,

բ) ապացույցի հավանականությունը, եթե պաշտպանության կողմից առաջարկվող վարկածն է ճիշտ[141]:

Կարծում ենք՝ փորձագետի եզրակացության գնահատման գործում հավանականությունների տեսության դրույթների կիրառումը ՀՀ դատաքննչական և փորձագիտական գործունեության մեջ առավել խոր ուսումնասիրման կարիք ունի, քանի որ, ինչպես ցույց է տալիս օտարերկրյա պետությունների փորձը, նման դրույթների կիրառումն առավելապես բարձրացնում է փորձագիտական եզրակացությունների որակը և դրանով իսկ նպաստում արդարադատության խնդիրների հաջող կենսագործմանը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ որոշակի քրեական գործով փորձագետի եզրակացության ապացուցողական արժեքի և մյուս ապացույցների շարքում ունեցած տեղի որոշման համար դրա գնահատման իրավական ու գիտական չափանիշների համակարգը հիմնարար, ելակետային նշանակություն ունի:

---

[141] Տե՛ս ***Aitken C. G. G.,*** Interpretation of the Value of Evidence, “Problems of Forensic Science”, Volume XLVI, 2001, էջ 15:

ԳԼՈՒԽ 3.
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1. Փորձաքննությունների դասակարգման հիմքերն ու հիմնական տեսակները

Դատական փորձաքննությունների դասակարգումն ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն, քանի որ հնարավորություն է ընձեռում առավել խոր ուսումնասիրել դրանք, ինչպես նաև՝ որոշել դրանց մեթոդական և կազմակերպական ապահովման հարցերը:

Դատական փորձաքննությունները դասակարգվում են տարբեր հիմքերով, մասնավորապես՝ ըստ կիրառվող գիտելիքների բնագավառների (ճյուղի), կատարման տեղի և հաջորդականության, հետազոտման ծավալի, փորձագետների կազմի և այլն:

Չնայած փորձաքննությունների դասակարգման հիմքերի բազմազանությանը, դրանց ամբողջական և համակարգված ուսումնասիրման տեսանկյունից՝ կարծում ենք նպատակահարմար է դրանք պայմանականորեն դիտարկել հետևյալ հիմնական երկու խմբերով.

1. փորձաքննությունների տեսակները՝ ըստ քրեադատավարական հիմքերի,

2. փորձաքննությունների տեսակները՝ ըստ կիրառվող հատուկ գիտելիքների բնագավառների:

Առաջին խմբի մեջ մտնում են փորձաքննությունների բոլոր այն տեսակները, որոնք նախատեսված են քրեադատավա-

րական օրենսդրությամբ, իսկ երկրորդ խմբի մեջ՝ տարբեր բնագավառների փորձաքննությունների հիմնական տեսակները:

Այսպիսով, ՀՀ ՔԴՕ-ի առանձին նորմերով կարգավորվում են փորձաքննությունների տարբեր տեսակների կատարման պայմաններն ու առանձնահատկությունները:

Այս տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում փորձաքննությունների դասակարգումը, այսպես կոչված, ***պարտադիր և ոչ պարտադիր տեսակների***, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ ՔԴՕ 108-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն հանգամանքները, որոնք կարող են հաստատվել միայն՝ որոշակի ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով, այդ թվում՝ նաև որոշակի փորձաքննությունների տեսակներով:

ՀՀ ՔԴՕ 108-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքներից է նաև *առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը, որի վերաբերյալ* Վճռաբեկ դատարանը *Ա. Հարությունյանի* գործով արտահայտել է իր իրավական դիրքորոշումը՝ արձանագրելով, որ *«միայն որոշակի ապացույցների առկայությամբ հաստատվող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածում թվարկված հանգամանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը կարող է հաստատվել ոչ այլ կերպ, քան դատաբժշկական փորձագետի եզրակացությունը նախապես ստանալով և հետազոտելով: Այլ խոսքով՝ նշված դեպքում փորձաքննության նշանակումն ու կատարումը պարտադիր է, իսկ առողջությանը հասցված վնասի վերաբերյալ փորձագետի կողմից տրված*

եզրակացությանը որևէ փաստաթուղթ կամ ապացույցի այլ տեսակ չի կարող փոխարինել»[142]:

Սակայն, ինչպես արդեն նշել ենք վերը, քննչական ու դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում առանձին տեսակի քրեական գործերով պարտադիր բնույթ են ստանում նաև որոշակի տեսակի փորձաքննությունների կատարումը, թեև ՀՀ ՔԴՕ-ն այդ մասին ուղղակի նշում կամ պահանջ չի ներկայացնում, օրինակ, փաստաթղթաբանական փորձաքննության նշանակումը և կատարումը՝ կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու, ինչպես նաև կեղծ վճարային փաստաթղթեր պատրաստելու և իրացնելու վերաբերյալ գործերով *(ՀՀ ՔՕ 202-203-րդ հոդվածներ),* ավտոտեխնիկական փորձաքննության նշանակումը և կատարումը՝ տրանսպորտի երթևեկության անվտանգության և շահագործման կանոնների հանցավոր խախտումների վերաբերյալ գործերով *(ՀՀ ՔՕ 241-250-րդ հոդվածներ),* շինարարատեխնիկական փորձաքննությունների նշանակումը և կատարումը՝ լեռնահանքային, շինարարական կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնների խախտման վերաբերյալ գործերով *(ՀՀ ՔՕ 230-րդ հոդված)*, ինչպես նաև ՀՀ ՔՕ-ի բլանկետային դիսպոզիցիա պարունակող հոդվածներով գործերի քննության դեպքում, երբ դրանց կատարման մեխանիզմի պարզաբանման և արարքի որակման համար պահանջվում է որոշակի բնագավառի հատուկ գիտելիքներ, օրինակ, ատո-

---

[142] Մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արտեմ Արմենի Հարությունյանի գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի ՍԴ, 3/0226/01/14 որոշման 17-րդ կետը:

մային էներգետիկայի *(ՀՀ ՔՕ 227-229-րդ հոդվածներ)*, հրդեհատեխնիկայի*(ՀՀ ՔՕ 231-232-րդ, 297-րդ հոդվածներ և այլն)* բնագավառներից և այլն:

Ըստ կատարման տեղի՝ փորձաքննությունները բաժանվում են ***փորձագիտական հիմնարկներում կատարվող և փորձագիտական հիմնարկից դուրս կատարվող փորձաքննությունների:***

ՀՀ ՔԴՕ-ն նախատեսում է փորձաքննության կատարումն ինչպես փորձագիտական հիմնարկում *(ՀՀ ՔԴՕ 248-րդ հոդված)*, այնպես էլ փորձագիտական հիմնարկից դուրս *(ՀՀ ՔԴՕ 249-րդ հոդված)*՝ քննիչի որոշմամբ փորձագետ ճանաչված անհատների կողմից: Այս հարցը չի ազդում ստացված եզրակացությունների ապացուցողական նշանակության վրա, քանի որ բոլոր դեպքերում փորձագետը ղեկավարվում է իր հատուկ գիտելիքներով և իր տված եզրակացության գիտական և մասնագիտական հիմնավորվածության համար կրում է անհատական պատասխանատվություն:

Փորձագիտական հիմնարկում փորձաքննություն նշանակելու դեպքում քննիչը փորձաքննություն նշանակելու մասին իր կայացրած որոշումը, հետազոտման օբյեկտը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև քրեական գործն ուղարկում է փորձագիտական հիմնարկի ղեկավարին: Փորձաքննության կատարմանը մասնակցում է այն փորձագետը, ով նշված է որոշման մեջ: Եթե որոշման մեջ կոնկրետ փորձագետ նշված չէ, ապա փորձագիտական հիմնարկի ղեկավարը պետք է որոշի, թե տվյալ փորձագիտական հիմնարկի որ փորձագետն է կատարելու փորձաքննությունը: Փորձագիտական հիմնարկի ղեկավարը փորձագետին ծանոթացնում է ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվա-

ծով նախատեսված նրա իրավունքներին ու պարտականություններին, նախազգուշացնում է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին, կազմակերպում է փորձաքննության կատարումը, սակայն իրավունք չունի փորձագետին տալ ցուցումներ, որոնք կանխորոշում են հետազոտությունների ընթացքը և հետևությունների բովանդակությունը:

Այն դեպքում, երբ փորձաքննությունը նշանակվում է հիմնարկից դուրս, քննիչը փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացնելուց հետո իր մոտ է կանչում այն անձին, ում հանձնարարված է փորձաքննությունը, հավաստիանում է նրա ինքնության և ձեռնհասության մեջ, պարզում է փորձագետի հարաբերությունները կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, դատավարության այլ մասնակիցների հետ և ստուգում է, թե, արդյոք, չկան փորձագետին բացարկ հայտնելու հիմքեր: Փորձաքննություն նշանակած անձը փորձագետին հանձնում է փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, բացատրում է ՀՀ ՔԴՕ 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնում է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու, ինչպես նաև ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին: Այդ գործողությունները կատարելու մասին քննիչը կազմում է արձանագրություն, որը ստորագրում է փորձագետը և հաստատում է քննիչը: Արձանագրության մեջ նշվում են նաև փորձագետի արած հայտարարությունները և նրա միջնորդությունները: Փորձագետի միջնորդությունները մերժելու մասին փորձաքննություն նշա-

նակած անձը կայացնում է պատճառաբանված որոշում: Փորձաքննություն նշանակող անձը կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկային ներկայացնում է փորձագետին, երբ անհրաժեշտ է հետազոտել նրանց մարմինը կամ հոգեկան վիճակը կամ, եթե փորձաքննությանը նրանց մասնակցելն անհրաժեշտ է:

Ընդ որում՝ հարկ է նկատել, որ թեև ՀՀ ՔԴՕ-ն չի մատնանշում, թե որոշակիորեն ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ դեպքում անձի ձեռնհասությունը պարզելու համար, այնուամենայնիվ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ անհրաժեշտ է ձեռք բերել և որոշմանը կցել անձի բարձրագույն կամ մասնագիտական կրթությունը, գիտական աստիճանն ու կոչումը, գործնական հմտությունները, աշխատանքային ստաժը հավաստող բոլոր հնարավոր փաստաթղթերի պատճենները:

Փորձաքննություն նշանակած պաշտոնատար անձը երկու դեպքում էլ կարող է ներկա գտնվել համապատասխան հետազոտությունների կատարմանը, իսկ նրա թույլտվությամբ փորձաքննությանը կարող են ներկա գտնվել նաև կասկածյալը, մեղադրյալը և տուժողը, եթե դա չի խոչընդոտի գործի քննությանը: Ընդ որում՝ դատաբժշկական փորձաքննության ընթացքում դիահերձում կատարելիս, որպես կանոն, ներկա է գտնվում քննիչը:*(ՀՀ ՔԴՕ 248-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն):*

Ըստ հետազոտության ծավալի՝ փորձաքննությունները բաժանվում են ***հիմնականի և լրացուցիչի:***

ՀՀ ՔԴՕ-ն, ի թիվս սկզբնական, լրացուցիչ և կրկնակի փորձաքննության, կարգավորում է նաև համալիր և հանձնաժողովային փորձաքննությունների կատարման կարգը:

ՀՀ ՔԴՕ 245-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բարդ կամ կրկնակի փորձաքննությունները կարող են կատարվել միանձնյա կամ նույն մասնագիտությամբ փորձագետների հանձնաժողովի կողմից: Այս դեպքում, կողմի պահանջով, փորձագետների հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել իր կողմից մատնանշված փորձագետը: Փորձագետների հանձնաժողովը կազմում է եզրակացություն և ստորագրում այն՝ միասնական կարծիքի դեպքում: Տարաձայնության դեպքում յուրաքանչյուր փորձագետ կազմում է առանձին եզրակացություն՝ ընդգրկելով բոլոր կամ տարաձայնություններ առաջացրած հարցերը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու մասին որոշումը պարտադիր է փորձագիտական հիմնարկի ղեկավարի համար: Իսկ երբ փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկում՝ առանց հանձնաժողովային փորձաքննության պահանջի, ապա նրա ղեկավարը իրավասու է կազմակերպել հանձնաժողովային փորձաքննության կատարում:

ՀՀ ՔԴՕ 251-րդ հոդվածը նախատեսում է լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ և սահմանում, որ *«եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կարող են նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա*

կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ ուրիշ փորձագետի»:

Լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել *Ա. Հարությունյանի* գործով՝ արձանագրելով, որ *«կրկնում է իր նախադեպային իրավունքում արտահայտված այն դիրքորոշումը, որ եթե փորձագետի եզրակացությունը հիմնավորված, բավարար չափով հստակ կամ լրիվ չէ, ապա օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են, օրինակ, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը (տե՛ս mitatis mutandis Վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Օնիկի Խաչատրյանի գործով 2015թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման 17-րդ կետը):*

Վերահաստատելով Ա.Խաչատրյանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը և հաշվի առնելով համապատասխան օրենսդրական կարգավորումները՝ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն առաջանում է այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված է, կասկած չի հարուցում, սակայն պարզ և լրիվ չէ: Իսկ կրկնակի փորձաքննություն նշանակվում է, երբ փորձագետի եզրակացությունն ինքնին կամ իր հիմքում դրված հանգամանքների ուժով կասկածելի է կամ հստակ չէ: Այլ կերպ ասած՝ կրկնակի փորձաքննություն նշանակվում է, երբ փորձագետի եզրակա-

ցության հիմնավորվածությունը և արժանահավատությունը կասկածի տակ է դրվում»[143]:

Ի տարբերություն ՀՀ քրեադատավարական օրենսդրության, ՌԴ քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ լրացուցիչ դատական փորձաքննության նշանակումը կատարվում է ոչ միայն փորձագետի եզրակացության ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, այլ նույն քրեական գործով՝ նախկինում հետազոտված հանգամանքների հետ կապված նոր հարցերի առաջացման դեպքում *(ՌԴ ՔԴՕ 207-րդ հոդվածի 1-ին մաս):*

Որոշ հեղինակների կարծիքով, լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել նաև այն դեպքում, երբ ի հայտ են գալիս քրեական գործով արդեն հետազոտված հանգամանքների հետ կապված նոր հարցեր[144]: Այս հանգամանքն արդարացվում է նրանով, որ պրակտիկայում կարող են հանդիպել այնպիսի իրավիճակներ, երբ ի հայտ է եկել նոր հանգամանք, որը հաշվի չի առնվել փորձաքննության նշանակման ժամանակ, կամ էլ ի հայտ են գալիս հետազոտություն պահանջող նոր օբյեկտներ: Վերը նշվածը հաշվի առնելով՝ նպատակահարմար է ՀՀ ՔԴՕ 251-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ կերպ. *«Եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացությանը՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կամ եթե առաջանում է նախ-*

---

[143] Մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի Արտեմ Արմենի Հարությունյանի գործով 2016 թվականի նոյեմբերի 1-ի ՍԴ, 3/0226/01/14 որոշման 17-17.1-րդ կետերը:

[144] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 193:

կին հետազոտության հետ կապված լրացուցիչ հարցերի լուծման անհրաժեշտություն, կարող են նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ ուրիշ փորձագետի»:

Սովորաբար փորձագետի եզրակացությունը ոչ լրիվ է լինում, երբ փորձաքննությունը նշանակելիս կամ կատարելիս տեղ են գտել բացթողումներ, որոնք կարելի է լրացնել լրացուցիչ փորձաքննությամբ: Այդպիսիք կարող են լինել փորձաքննության լուծմանն առաջադրվող խնդիրների ճշգրիտ որոշման անհնարինությունը՝ հետազոտմանն անհրաժեշտ նյութերի անբավարարության պատճառով: Փորձագետին առաջադրվող հարցերի ոչ լրիվ շարադրանքը, որը կարող է պայմանավորված լինել նրանով, որ փորձաքննություն նշանակելու պահին քննիչը միշտ չէ, որ կարող է նախատեսել իր առաջադրած հարցերի լուծման հնարավորությունը: Ոչ բավարար չափով լրիվ լինելու պատճառով լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել նաև, երբ փորձագետի եզրակացությանը մեղադրյալի կամ դատավարության այլ մասնակցի ծանոթանալուց հետո միջնորդություն է ներկայացվում լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին:

Լրացուցիչ փորձաքննության նշանակման ոչ բավարար չափով պարզ լինելու շարժառիթը հետաքրքրական է նրանով, որ նման թերություն սովորաբար ունենում են այն եզրակացությունները, որոնց բովանդակությունը կամ հիմնավորումը լրիվ կամ մասնակիորեն քննիչին հասկանալի չէ:

Առաջին հայացքից ոչ պարզ կարելի է համարել այն եզրակացությունը, որը բովանդակում է տարատեսակ մանր վրիպակներ, որոնք փորձագետի անփութության արդյունք են:

Այս առումով օրենքի «ոչ բավարար չափով պարզ» արտահայտությունը որոշակի չի թվում, այլ կերպ ասած՝ անորոշ է: Ուստի՝ արդարացի է առաջարկը՝ այն դիտել եզրակացության մեջ հետևությունների գիտական հիմնավորվածության բացակայության տեսանկյունից[145]:

Լրացուցիչ փորձաքննություն կարելի է նշանակել նաև այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանում ստանալ կատարված հետազոտության մեթոդիկայի և դրա արդյունքների գիտական բացատրության վերաբերյալ:

Ակնհայտ է, որ եզրակացության առանձին անհասկանալի պահերը կարելի է վերացնել փորձագետի հարցաքննությամբ:

Ըստ կատարման հաջորդականության՝ փորձաքննությունները բաժանվում են *սկզբնականի և կրկնակիի*:

Լրացուցիչ փորձաքննությունը պետք է տարբերել կրկնակիից, որը ՀՀ ՔԴՕ 251-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«... կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել են ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները»*:

Նշված հոդվածի սույն կետի նկատմամբ կարելի է որոշ վերապահումներ անել: Այսպես, դիտարկենք հետևյալ ձևակերպումը. *«....երբ կասկած է հարուցում կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել են ոչ հա-*

---

[145] Տե՛ս ***Рахунов Р. Д.,*** Теория и практика экспертизы в советском уголовном процессе, М., 1953, էջ 195:

վաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները»:

Նախ նշենք, որ փորձագետի եզրակացությունը, ինչպես և ցանկացած ապացույց, գնահատում է այն նշանակող մարմինը: Այնուհետև, եթե ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել են ոչ հավաստի, դա փորձաքննությունը նշանակող մարմնի թերացումն է՝ կամ պետք է դրանք նախապես ստուգել, ճշգրտել, հետո նշանակել փորձաքննություն, կամ եթե, համենայնդեպս, դա չի արվել, նշանակվում է նոր փորձաքննություն (սկզբնական)՝ հավաստի ապացույցների հիման վրա: Այս դեպքում նաև փորձագետին փոխելու կարիք չկա:

Ինչ վերաբերում է վերջին հիմնավորմանը. *«խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները»*, հարկ ենք համարում նշել, որ այն առնվազն տարակուսանք է առաջացնում,քանի որ փորձագետը փորձաքննություն կատարելիս, ըստ էության, հնարավորություն չունի խախտելու դատավարական կարգը:

Օրենքը, որպես կրկնակի փորձաքննության հիմք, նախատեսում է փորձագետի եզրակացության հիմնավորված չլինելը: Փորձագետի եզրակացությունը գիտականորեն չհիմնավորված կարելի է համարել այն դեպքում, երբ, օրինակ, նրանում առկա է տրամաբանական հակասություն վերլուծության և համադրության (անալիզի և սինթեզի) միջև, կամ երբ տրվում են համընկնող բոլոր հատկանիշները, իսկ սինթեզում արվում է բացասական հետևություն կամ հակառակը: Եվ, վերջապես, երբ փորձագետի հետևությունները չեն բխում նրա կատարած վերլուծությունից և համադրությունից:

Կրկնակի փորձաքննությունը կարող է ավարտվել նոր հետևություններով, որը տարբերվում է սկզբնական փորձաքննության եզրակացությունից, ինչպես նաև սկզբնական հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցի գնահատականով, եթե այդ մասին որոշման մեջ առաջադրել է փորձաքննություն նշանակող անձը: Փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնելու շարժառիթները *(ՀՀ ՔԴՕ 251-րդ հոդվածի 2-րդ մաս)*: Նույն հոդվածն իրավունք է տալիս նախկին փորձաքննությունը կատարած փորձագետներին, ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն, միևնույն ժամանակ, նշում է, որ հետազոտմանը և եզրակացություն կազմելուն նրանք չեն մասնակցում:

Հոդվածի բովանդակությունից ելնելով՝ կարելի է ասել, որ կրկնակի փորձաքննությունը միջոց է համարվում սկզբնական փորձաքննության եզրակացության ստուգման և գնահատման համար՝ դրա գիտական հիմնավորվածության, լրիվության և հավաստիության տեսանկյունից:

Մյուս կողմից՝ կրկնակի փորձաքննությունը լրացնում է սկզբնական հետազոտության մեջ տեղ գտած բոլոր բացթողումներն ու անհարթությունները: Հենց այս և այլ հանգամանքներ էլ պայմանավորում են կրկնակի փորձաքննությունների տեղը և նշանակությունը դատական ապացույցների համակարգում:

Բոլոր դեպքերում, կարծում ենք, տակտիկապես նպատակահարմար է մինչև լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության նշանակումը հարցաքննել փորձագետին՝ ճշգրտելով կա-

տարված փորձաքննության կապակցությամբ վերջինիս դիրքորոշումը:

ՀՀ ՔԴՕ 252-րդ հոդվածի ուժով փորձագետի եզրակացությունը ստանալուց հետո փորձաքննություն նշանակած պաշտոնատար անձն իրավունք ունի հարցաքննել փորձագետին, եթե եզրակացությունը բավարար չափով պարզ չէ, ունի բացեր, որոնք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ կամ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կիրառած մեթոդները և հասկացությունները: Փորձագետի հարցաքննությունը կատարվում է ՀՀ ՔԴՕ 205-րդ, 206-րդ և 209-րդ հոդվածների պահանջները պահպանելով, այսինքն՝ վկայի հարցաքննության կանոններով: Հարցի նման կարգավորումը չի կարելի իրավաչափ համարել: Փորձագետը և վկան դատավարական տարբեր կարգավիճակներ ունեն, քրեական գործով վարույթին ներգրավվում են տարբեր հիմքերով և նպատակներով, հետևաբար՝ տարբեր են նրանց հարցաքննության առարկաները[146]:

Անշուշտ, թեև ՀՀ ՔԴՕ 252-րդ հոդվածը նախատեսում է փորձագետի հարցաքննության կարգն ու պայմանները, սակայն օրենսդրական բացթողում կարելի է համարել փորձագետի ցուցմունքները՝ որպես առանձին ապացույց չսահմանելը: Ընդ որում, ինչպես արդեն նշել ենք, Նախագծում փորձագետի ցուցմունքը նախատեսված է որպես ապացույցի առանձին տեսակ *(Նախագծի 86-րդ հոդված)*:

Փորձագետին չի կարելի հարցաքննել մինչև նրա եզրակացություն ներկայացնելը: Փորձագետի հարցաքննության

---

[146] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 195:

արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Այսպիսով, չնայած դատավարական ամրագրմանը, կարծում ենք, որ փորձագետի հարցաքննությունը մինչև լրացուցիչ կամ, առավել ևս, կրկնակի փորձաքննության նշանակումը տակտիկապես արդարացված է:

Այն դեպքերում, երբ քրեական գործով նշանակություն ունեցող որևէ հարցի պարզումը հնարավոր է միայն տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա պետք է նշանակել ***համալիր փորձաքննություն*** *(ՀՀ ՔԴՕ 246-րդ հոդված)*:

«Համալիր փորձաքննության շրջանակում պարզաբանված փաստական տվյալների համակցության հիման վրա փորձագետներից յուրաքանչյուրն իր հատուկ գիտելիքների սահմաններում մասնակցում է ընդհանուր եզրակացության ձևավորմանը»-նշված է ՀՀ ՔԴՕ 246 հոդվածի 2-րդ մասում: Ըստ նույն հոդվածի հաջորդ (3-րդ և 4-րդ) մասերի՝ փորձագետն իրավունք չունի ստորագրել համալիր փորձաքննության այն մասը, որը չի պատկանում իր գիտական իրավասությանը: Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց համալիր փորձաքննություն կատարելու պահանջի, ապա անհրաժեշտության դեպքում այդ հիմնարկի ղեկավարը կարող է կազմակերպել համալիր փորձաքննություն:

Պետք է նշել, որ ՀՍՍՀ 1961թ. ՔԴՕ-ն համալիր փորձաքննության կատարում չէր նախատեսում, չնայած որ այն լայն կիրառում ուներ քննչական, դատական և փորձագիտական

պրակտիկայում, բայց հարցի հստակ օրենսդրական կարգավորման բացակայությունը և քրեական դատավարությունում դրա տարբեր ընկալումն այն դարձրել էր դատավարական գիտության ամենադժվար և ժամանակակից հիմնախնդիրներից մեկը:

Գործող ՀՀ ՔԴՕ-ն, սահմանելով փորձաքննության այս տեսակը և տալով դրան որոշակի կարգավորում, վերջ տվեց տեսական տարաձայնություններին: Համալիր փորձաքննության օրենսդրական նախատեսումն օրինաչափ է, քանի որ ոչ միայն փորձաքննության յուրաքանչյուր տեսակի գիտական հնարավորությունները, այլ կատարման հետ կապված բազմաթիվ կազմակերպամեթոդական ու դատավարական հարցեր յուրաքանչյուր պահի որոշվում են օբյեկտիվ պատճառներով և, առաջին հերթին, գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակով:

Համալիր փորձաքննությունը, ըստ Ի. Լ. Պետրուխինի, փորձագիտական հետազոտությունների բարդ համակցություն է: *«Դրանցից յուրաքանչյուրը դատավարական առումով ինքնուրույն է, քանի որ այն իրականացնում է մասնագետը, իր գիտելիքների սահմաններում, որոնց չեն տիրապետում մյուս մասնագետները, ովքեր մասնակցում են համալիր փորձաքննության կատարմանը»*[147]:

Միևնույն ժամանակ այդպիսի փորձագիտական հետազոտությունները կապված են միմյանց հետ նպատակի միասնությամբ. այն է՝ դրանց օգնությամբ պարզաբանման ենթակա փաստական տվյալներն իրենց համակցությամբ հնարավո-

---

[147] Տե՛ս ***Петрухин И. Л.,*** Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 146:

րություն են տալիս կատարել ավելի լայն հետևություններ այն հարցերի վերաբերյալ, որոնք առաջադրել են քննիչը կամ դատարանը:

Ինչպես տեսնում ենք, որոշակի փորձագիտական հետազոտման ընթացքում կարող են կիրառվել տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներ ու մեթոդիկաներ: Ընդհանրապես փորձագիտական հետազոտման մեթոդիկան բնորոշվում է որպես գիտականորեն հիմնավորված մեթոդների, հնարքների ու տեխնիկական միջոցների (սարքավորումների) համակարգ[148]: Մասնագիտական գրականության, ինչպես նաև փորձագիտական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագիտական հետազոտման ընթացքում փորձագետը միևնույն հետազոտության ընթացքում կարող է կիրառել հետազոտման ինքնուրույն, առանձին մեթոդիկաներ, թեև, որոշ դեպքերում դրանք կարող են հաջորդել մեկը մյուսին կամ կիրառվել միաժամանակ՝ հետազոտման խնդիրներից ելնելով կամ հետազոտման ամբողջականությունն ապահովելու նպատակով[149]: Բնականաբար, տարբեր բնագավառի հատուկ գիտելիքների կամ հետազոտման տարբեր բնագավառների մե-

---

[148] Տե՛ս Назначение и производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов, ВНИИСЭ, отв. ред. ***Г. П. Аринушкин, А. Р. Шляхов,*** М., 1988, изд-во Юридическая литература, էջ 9:

[149] Տե՛ս Фотографические и физические методы исследования вещест¬венных доказательств, Под ред. ***Зюскина Н. М.*** и ***Киричинского Б. Р.,*** М., 1962; Криминалистическая экспертиза, Вып. 2, высшая школа МООП РСФСР, Под ред. ***Кисина М. В.,*** М., 1966; ***Эйсман А. А., Николайчик В. М.,*** Физические методы выявления невидемых текстов, Под ред. ***Вимберга А. И.,*** ВНИИК прокуратуры СССР, М., 1961; David Ellen, The Scientific Examination of Documents,Methods and techniques, Second edition, Bristol, PA, Taylor & Francis1997.

թոդիկաների միևնույն հետազոտության շրջանակներում կիրառման պարագայում առնչվում ենք համալիր փորձագիտական հետազոտությունների կատարման խնդրին, որի իրավական կարգավորման հարցը տվյալ դեպքում հիմնարար նշանակություն ունի:

Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ ՔԴՕ 246-րդ հոդվածի բովանդակությունը, որը վերաբերում է համալիր փորձաքննությունների կատարման կարգին: Մասնավորապես նշված հոդվածի 1-ին կետում սահմանված է. *«Եթե քրեական գործով նշանակություն ունեցող որևէ հարցի պարզաբանումը հնարավոր է միայն տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա պետք է նշանակել համալիր փորձաքննություն»*:

Հոդվածի այսօրինակ ձևակերպումից պարզ է դառնում, որ համալիր փորձաքննության կատարման համար պահանջվում են երկու տարբեր հիմքեր.

1. երբ որոշակի հետազոտություն կատարելու համար անհրաժեշտ են տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներ,

2. երբ որոշակի հետազոտություն կատարելու համար անհրաժեշտ է տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառում:

Առաջինի դեպքում խնդիրը պարզ է, սակայն երկրորդի պարագայում այն բարդանում է այն պատճառով, որ, ինչպես արդեն նշել ենք, միևնույն բնագավառի հետազոտության ընթացքում հնարավոր է միաժամանակ կիրառվեն հետազոտման բոլորովին ինքնուրույն, առանձին մեթոդիկաներ:

Փաստորեն, միևնույն բնագավառի հետազոտության կատարման ընթացքում, երբ անհրաժեշտություն է զգացվում միաժամանակ կիրառել տարբեր մեթոդիկաներ, պետք է կատարել համալիր փորձաքննություն: Ստացվում է, որ, օրինակ, փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտման ընթացքում, եթե փորձագետը կերագծման փաստի հայտնաբերման և վերացված տեքստի վերականգնման նպատակով միաժամանակ կիրառի լուսանկարչական մեթոդիկայի հնարքներ՝ ցայտերանգային (կոնտրաստային), լուսանկարում՝ անտեսանելի ինֆրակարմիր և այլ ճառագայթներում, այնուհետև կիրառի ֆիզիկա-քիմիական մեթոդիկաների հնարքներ՝ հետազոտվող փաստաթուղթը պատճենահանի դիֆուզիա-պատճենահանման եղանակով կամ ներկանյութը ենթարկի քիմիական ռեակցիաների կաթիլային եղանակով, ապա, վերը նշված նորմի տառացի մեկնաբանմամբ, պետք է նշանակվի համալիր փորձաքննություն:

Մեր կարծիքով՝ օրենքի նման ձևակերպումը ճիշտ չէ, քանի որ միևնույն բնագավառի հետազոտության ընթացքում, թեև միևնույն փորձագետը կարող է միաժամանակ կիրառել տվյալ բնագավառի տարբեր մեթոդիկաներ, սակայն դա հիմք չպետք է հանդիսանա համալիր փորձաքննություն կատարելու համար:

Մեր տեսակետով՝ նշված դրույթը միանգամայն տեղին կլինի, եթե խոսքը տարբեր ***բնագավառների*** (ընդգծումը՝ մերն է) մեթոդիկաների միաժամանակյա կիրառման մասին լինի, որը, սակայն, չի բխում հոդվածի ձևակերպումից: Ուստի այդ կապակցությամբ ճիշտ կլիներ հոդվածի քննարկվող կետը ձևակերպել հետևյալ կերպ. *«Եթե քրեական գործով նշանա-*

կություն ունեցող որևէ հարցի պարզաբանումը հնարավոր է միայն գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր բնագավառների մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա պետք է նշանակել համալիր փորձաքննություն»: Այս պարագայում միանշանակ պարզ է դառնում, որ խոսքը տարբեր բնագավառների հետազոտման մեթոդիկաների մասին է, որը և անխուսափելիորեն պահանջում է այլ բնագավառի մասնագետի մասնակցություն: Այս առումով նշենք, որ երբեմն, հատկապես, փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտման ընթացքում, առաջադրված հարցերի լուծումը, ինչպես նաև հետազոտման ամբողջականության ապահովումը պահանջում է այլ բնագավառի մեթոդիկաների կիրառում: Մասնավորապես փաստաթղթի պատրաստման վաղեմության հարցի պարզաբանման և այլ դեպքերում գրող նյութի քիմիական կազմի ու բաղադրության հետազոտման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում կիրառել քիմիայի բնագավառի հատուկ մեթոդիկաներ, որի ժամանակ միանգամայն տեղին է համալիր փորձաքննության նշանակումը: Որպես օրինակ, նշենք փորձագիտական պրակտիկայում հետազոտման ներկայացված անդորրագրերի ու ստացականների համալիր հետազոտումը, երբ փաստաթղթաբանը հետազոտել էր այդ փաստաթղթերի շտրիխների արտաքին կառուցվածքը և այլ հատկանիշներ՝ կիրառելով լուսանկարչական հնարքներ, ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենտային վերլուծության եղանակը, մանրադիտակային հետազոտման եղանակներ, իսկ թանաքի շտրիխների ներքին կազմի ու բա-

ղադրության ժամանակ՝ դրանց կատարման վաղեմության պարզաբանման նպատակով՝ կիրառվել էր գազահեղուկային քրոմատոգրաֆիայի և այլ քիմիական մեթոդներ շտրիխներում առանձին նյութեր հետազոտելիս[150]:

Եթե նույնիսկ ընդունենք, որ փորձագիտական հիմնարկում, որպես կանոն, փորձագետը որակավորվում է որոշակի մեթոդիկա կիրառելու իրավասությամբ, որն իրենից ենթադրում է որոշակի առանձին մեթոդների կիրառման հնարավորություն, ապա տվյալ պարագայում ևս խնդիրն ամբողջովին լուծված համարվել չի կարող, քանի որ այն կարող է ի հայտ գալ փորձագիտական հիմնարկից դուրս փորձաքննություն նշանակելիս, երբ անձը, ում վարույթն իրականացնող մարմնի պաշտոնատար անձը իր որոշմամբ ճանաչում է որպես փորձագետ, ընդհանրապես որևէ մեթոդիկայի կիրառման համար նախապես որակավորված է: Վերջինիս ձեռնհասությունն ու իրավասությունների շրջանակը որոշում է փորձաքննություն նշանակող մարմինը՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այս ենթատեքստում պետք է նշել, որ Նախագիծը շտկել է նշված խնդիրը, և քննարկվող ձևակերպումը տեղ է գտել Նախագծի 257-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ ***«Եթե վարույթի համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզումը հնարավոր է միայն տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների և հմտությունների կամ հետազոտության տարբեր բնագավառների մեթոդիկաների միաժամանակ-***

---

[150] Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթ №27990106, 31. 01. 2002 թ., ըստ քրեական գործի՝ № 53401201:

յա կիրառման հիման վրա, ապա քննիչը նշանակում է համալիր փորձաքննություն»:

Համալիր փորձաքննությունների քննարկման տեսանկյունից անդրադառնանք մեկ այլ կարևոր հարցի, որը, ըստ էության, կապված է նման փորձաքննությունների արդյունավետ իրականացման հետ: Համալիր փորձաքննությունների կատարմանը մասնակցում են մի քանի փորձագետ և, ինչպես արդեն նշել ենք, կիրառվում են տարբեր բնագավառի գիտելիքներ կամ տարբեր մեթոդիկաներ: Փորձաքննության ընթացքը համակարգելու, այն ուղղորդելու, ինչպես նաև տարբեր փորձագետների միջև աշխատանքի բաժանում կատարելու համար անհրաժեշտ է, որ փորձագետների կազմից մեկը ղեկավարի հետազոտման ընթացքը: Նկատենք, որ ղեկավարումը դատավարական կամ այլ բնույթ չի կրում, և տվյալ անձը բացի կազմակերպչական կամ համակարգողական բնույթի աշխատանքներից, որևէ այլ լիազորությամբ չի օժտվում: Այս դեպքում աշխատանքների համակարգումն ուղղակիորեն կապված է տվյալ փորձաքննության կատարման արդյունավետության հետ, քանի որ առանց մեթոդիկաների, հնարքների ու սարքավորումների կիրառման հաջորդականության որոշման, հազիվ թե հնարավոր լինի ժամանակին և որակով ավարտին հասցնել միաժամանակ իրականացվող հետազոտական աշխատանքները:

Այս առիթով դեռևս ԽՍՀՄ արդարադատության նախարարության 1972 թ.-ի դեկտեմբերի 6-ի փորձագիտական հիմնարկներում փորձաքննությունների կատարումը կազմակերպելու մասին որոշմամբ փորձագիտական հիմնարկի ղեկավարը կարող էր երկու և ավելի փորձագետների մասնակցութ-

յամբ կատարվող փորձաքննության համար նրանցից մեկին հանձնարարել համակարգելու մյուսների աշխատանքը[151]:

Համակարգողական աշխատանքի անհրաժեշտության մասին խոսվում է նաև մասնագիտական գրականության մեջ: Ընդ որում՝ իրավացիորեն նշվում է, որ համալիր հետազոտություններ կատարելիս անհրաժեշտ է նշանակել կամ փորձագետների կողմից իրենց կազմից ընտրել փորձագիտական հանձնաժողովի ղեկավար՝ հանձնաժողովի աշխատանքները համակարգելու համար[152]:

Բացի դրանից՝ մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ համալիր հետազոտության առավելությունը դրսևորվում է փորձագետների աշխատանքը համակարգելու, ընդհանուր պլանի համաձայն գործելու, տարբեր գիտատեխնիկական մեթոդները որոշակի հաջորդականությամբ կիրառելու հնարավորության ապահովման մեջ: Հետևաբար համալիր հետազոտություններ կատարելիս՝ աշխատանքները կոորդինացնելու նպատակով փորձագիտական խմբի համար նշանակվում է ղեկավար: Ղեկավարող փորձագետը մշակում է հետազոտությունների ընդհանուր պլանը, համակարգում է փորձագիտական խմբի աշխատանքը, նախագահում է փորձագետների նիստերը, փորձաքննության ընդհանուր ժամկետների սահմաններում որոշակիացնում է առանձին հետազոտությունների կատարման ժամկետները և վերահսկում է այդ

---

151 Տե՛ս ***Самарина Т. М.,*** Отражения данных экспертного осмотра вещественных доказательств в заключении эксперта, Теоритеческие и практические вопросы судебной экспертизы, Сборник научных трудов, вып. 38, ВНИИСЭ, М.,1979, էջ 5:

152 Տե՛ս ***Шляхов А. Р.,*** Процессуальные основы производства криминалистической экспертизы, М., 1962, էջ 48:

ժամկետների պահպանումը, ինչպես նաև կապեր է պահպանում այլ հաստատությունների ղեկավարների ու փորձաքննություն նշանակած մարմնի հետ: Սակայն ղեկավարը, ըստ էության, հարցեր լուծելիս դատավարական որևէ առավելությունից չի օգտվում[153]:

Այսպիսով՝ մասնագիտական գրականության, ինչպես նաև փորձագիտական պրակտիկայի վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ համալիր հետազոտություններ կատարելիս, երբ հետազոտությանը մասնակցում են տարբեր բնագավառի փորձագետներ, հետազոտման արդյունավետության ապահովման նպատակով, անհրաժեշտ է, որ փորձագետների խմբից որևէ փորձագետ նշանակվի ղեկավար՝ աշխատանքները համակարգելու համար: Հարցի կարևորությունը պահանջում է քրեադատավարական օրենսդրության մեջ դրան տալ իրավական կարգավորում, հատկապես, եթե հաշվի առնենք, որ նման փորձ արդեն արվել է, սակայն, ինչպես արդեն նշել ենք, հարցին լուծում տրվել է գերատեսչական ակտով ամրագրելու ձևով՝ ԽՍՀՄ արդարադատության նախարարության կողմից:

Մեր կարծիքով, համալիր փորձաքննությունների կատարման համար ունեցած նշանակության տեսանկյունից, քննարկվող հարցի իրավական կարգավորումը հրատապ հարց է, և որքան այդ հարցը կարգավորող իրավական ակտը բարձր ուժ ունենա, այնքան ավելի հետևողական ու նպատակային կիրականացվեն համալիր հետազոտությունները: Այս

---

[153] Տե՛ս Назначение и производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов, ВНИИСЭ, отв. ред. ***Аринушкин Г. П., Шляхов А. Р.,*** М., изд-во Юридическая литература, 1988, էջ 23:

իմաստով նպատակահարմար կլիներ, որպեսզի համալիր փորձաքննությունները կարգավորող ՀՀ ՔԴՕ-ի նորմերը դրույթներ պարունակեին այդ փորձաքննությունների հետազոտական աշխատանքների կատարումը համակարգող ու կազմակերպող անձի պարտադիր գործունեության մասին՝ այդ իրավունքը վերապահելով փորձագիտական հիմնարկի ղեկավարին, ով, հաշվի առնելով փորձագիտական աշխատանքի ստաժը, աշխատանքային փորձը տվյալ ոլորտում, ինչպես նաև կատարվող հետազոտության բնույթն ու առանձնահատկությունը, թե հատկապես որ բնագավառի հարցեր են առավել շատ շոշափվելու և այլն, փորձագետների խմբից կնշանակի խմբի ղեկավար:

Այսպիսով, մեր կարծիքով նպատակահարմար է ՀՀ ՔԴՕ 246-րդ հոդվածում ավելացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ. *«Փորձագիտական հիմնարկի ղեկավարը հետազոտական աշխատանքի ընթացքը համակարգելու նպատակով մինչև հետազոտությունն սկսելը հետազոտմանը մասնակցող փորձագետների կազմից նշանակում է փորձագետների խմբի ղեկավար»:* Համապատասխանաբար նշված դրույթը նպատակահարմար կլիներ ավելացնել Նախագծի 257-րդ հոդվածի 5-րդ մասում:

Կրիմինալիստիկայում և դատական փորձագիտության մեջ ընդունված է փորձաքննությունները դասակարգել նաև՝ ***ըստ դրանց կատարման ժամանակ օգտագործվող մասնագիտական գիտելիքների ճյուղերի***՝ առանձնացնել չորս մակարդակ.

1. կարգեր (տիպեր).
2. տեսակներ,

3. ձևեր,
4. տարատեսակներ (ենթատեսակներ)[154]:

Դատական փորձաքննությունների այդպիսի բաժանումը՝ հաշվի առնելով դրանց միջոցով լուծվող հիմնական խնդիրները, ունի հետևյալ նշանակությունը.

- օգնում է որոշել փորձաքննությունների տեսակները և ձևերը, որոնց կատարումը պետք է կազմակերպվի դատափորձագիտական հիմնարկներում, կանխատեսել նոր ուղղությունների ստեղծումը,
- դյուրացնել կարճաժամկետ և հեռանկարային գիտահետազոտական աշխատանքների պլանների մշակումը՝ փորձագիտական հետազոտության տեսության ու մեթոդիկայի զարգացման համար,
- նախորոշում է փորձագետ կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, նրանց իրավասությունը և մասնագիտացումը,
- օգնում է փորձաքննություն նշանակող անձին փորձաքննության համապատասխան տեսակի (ձևի) ճիշտ ընտրության հարցում:

Փորձաքննության կարգը կազմում են փորձագիտական հետազոտությունները, որոնք միավորվում են՝ ըստ դատական փորձաքննությունների տեսական ու մեթոդական հիմքերի ձևավորման աղբյուր ծառայող գիտելիքների և այդ գիտելիքների հիմքի վրա հետազոտվող օբյեկտների ընդհանրության: Այդպիսիք են, օրինակ, կրիմինալիստիկական փորձա-

---

[154] Մանրամասն տե՛ս ***Ենգիբարյան Վ. Գ.,*** Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, Մենագրություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջեր 55-60:

քննությունների կարգը, դատաբժշկական փորձաքննությունների կարգը և այլն:

Փորձաքննությունների տեսակները տարբերվում են՝ ըստ փորձագիտական հետազոտության առարկայի, օբյեկտի և, համապատասխանաբար, մեթոդիկայի: Օրինակ, քրեագիտական փորձաքննության մեջ տեսակի մակարդակով առանձնացվում են փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական, ձեռագրաբանական, հեղինակագիտական, տեխնիկական փորձաքննությունները, հետքաբանական, ձգաբանական, դիմանկարային փորձաքննությունները և այլն:

Փորձաքննության ձևը կազմում են կարգի տարրերը, որոնք տարբերվում են առարկայի յուրահատկությամբ՝ օբյեկտների ու մեթոդիկաների համար ընդհանուր կարգի առումով: Օրինակ, փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական փորձաքննության մեջ տարբերվում են փաստաթղթերի ռեկվիզիտների և փաստաթղթերի պատրաստման եղանակի փորձաքննությունները և այլն:

Փորձաքննության ենթատեսակները ձևի բաղկացուցիչ մասերն են, որոնք տարբերվում են փորձաքննության տվյալ ձևի առարկայի համար բնորոշ խնդիրների ուրույն խմբով և առանձին օբյեկտների կամ դրանց խմբերի հետազոտման մեթոդների ամբողջությամբ: Բոլոր դատական փորձաքննությունները կարելի է բաժանել տասներկու կարգերի.

1. քրեաբանական,
2. բժշկական և հոգեֆիզիոլոգիական,
3. ճարտարագիտատեխնիկական,
4. ճարտարագիտատրանսպորտային,
5. ճարտարատեխնոլոգիական,

6. տնտեսագիտական,

7. կենսաբանական,

8. հողագիտական,

9. գյուղատնտեսական,

10. սննդամթերքի,

11. բնապահպանական,

12. արվեստագիտական[155]:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող փորձաքննությունների տարբեր տեսակներ գտնվում են զարգացման տարբեր մակարդակներում: Դրանցից մի քանիսը գոյություն ունեն տասնամյակներ շարունակ, մի քանիսը նոր են ստեղծվել, մյուսները՝ դիտարկվում են դատական փորձաքննությունների ընդհանուր զարգացման հեռանկարում: Այս ենթատեքստում հարկ է նաև նկատի ունենալ նոր փորձաքննությունների իրականացման և դրանց փոխակերպման գործընթացի զարգացումը՝ փորձաքննությունների նոր տեսակների ի հայտ գալը, փորձաքննությունների ձևերի փոխակերպումն ինքնուրույն տեսակների:

Այդ պահանջով էլ պայմանավորված, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում զարգացնել հատուկ գիտելիքների լայն կիրառումը և փորձագիտական հիմնարկների

---

[155] Ընդ որում՝ յուրաքանչյուր փորձագիտական հիմնարկի համար գերատեսչական ակտերով սահմանվում են համապատասխան կարգեր: Օրինակ՝ ՌԴ արդարադատության նախարարի 2003 թ.-ի մայիսի 14-ի № 144 հրամանի առաջին հավելվածով հաստատվել են նախարարության ենթակայության տակ գործող բոլոր փորձագիտական հիմնարկների կարգերը՝ փորձաքննությունների այն տեսակները, որոնք կարող են կատարվել նշված հիմնարկներում:

զարգացումն ու զինումը ժամանակակից տեխնիկական միջոցներով:

Հայաստանի Հանրապետությունում այժմ գործում են մի քանի փորձագիտական կենտրոններ. ՀՀ արդարադատության նախարարության «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, ՀՀ առողջապահության նախարարության «Հայաստանի Հանրապետության դատական բժշկության գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունը, ՀՀ Պաշտպանության նախարարության «Ռազմական ոստիկանության փորձագիտական բաժին» ՊՈԱԿ-ը և ԵՊՀ «Կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոն»-ը:

§ 2. Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտներն ու խնդիրները: Փորձագետին առաջադրվող տիպային (հնարավոր) հարցերի շրջանակը՝ ըստ առանձին տեսակի փորձաքննությունների

§ 2.1. Ֆոտոտեխնիկական, դիմանկարային փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- թվային կամ ոչ թվային ֆոտոլուսանկար,
- թվային ֆոտոլուսանկար՝ ներկայացված լազերային սկավառակով:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- ֆոտոլուսանկարի/տեսապատկերի որակի լավացում,
- ֆոտոլուսանկարի/տեսապատկերի վրա պատկերված օբյեկտների և սուբյեկտների երկրաչափական չափսերի վերլուծություն,
- ավտոմատացված դիմանկարային նույնացում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

/Ֆոտոտեխնիկական փորձաքննություններ/

- Փորձաքննության ներկայացված թվային լուսանկարները ե՞րբ են ստեղծված, ինչպիսի՞ նկարահանող սարքով, ի՞նչ պայմաններում:
- Լուսանկարի վրա տպավորված օբյեկտները ի՞նչ չափերի են(տեղանքի զննության և ելակետային չափագրումների միջոցով):

- Փորձաքննության ներկայացված ֆոտոլուսանկարի/-տեսապատկերի արտադրության համարինչպիսի՞ լաբորատոր տեխնիկական միջոցներ են օգտագործվել:
- Փորձաքննության ներկայացված ֆոտոլուսանկարի/-տեսապատկերի վրա կա՞ն մոնտաժի կամ համակարգչային մշակման հետքեր:
- Հնարվորինս լավացնել թվային ֆոտոլուսանկարի/տեսապատկերի որակը:

/Դիմանկարային փորձաքննություններ/

- Փորձաքննության ներկայացված «Ա» ֆոտոլուսանկարը և «Բ» ֆոտոլուսանկարը պիտանի՞ են դիմանկարային նույնացման համար, թե ոչ:
- Փորձաքննության ներկայացված «Ա» ֆոտոլուսանկարի և «Բ» ֆոտոլուսանկարի վրա պատկերված անձը նո՞ւյն անձն է, թե՝ ոչ:
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված «Ա» տեսագրության xx:xx:xx ժամից xx:xx:xxժամն ընկած ժամանակահատվածում երևացող անձը և «Բ» ֆոտոլուսանկարի վրա պատկերված անձը նո՞ւյն անձն է, թե ոչ:
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված «Ա» տեսագրության xx:xx:xxժամից xx:xx:xxժամն ընկած ժամանակահատվածում երևացող անձը և * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված «Բ» տեսագրության xx:xx:xxժամից xx:xx:xxժամն ընկած ժամանակահատվածում երևացող անձը նո՞ւյն անձն է, թե ոչ:

- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված տեսագրության xx:xx:xxժամից xx:xx:xxժամն ընկած ժամանակահատվածում երևացող անձի/անձանց դիմանկարները պիտանի՞ են դիմանկարային նույնացման համար, թե ոչ:
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի տեսաերիզի վրա գրառված տեսագրության xx:xx:xxժամից xx:xx:xxժամն ընկած ժամանակահատվածում երևացող անձի/անձանց դիմանկարները պիտանի՞ են դիմանկարային նույնացման համար, թե ոչ: Եթե պիտանի են դիմանկարային նույնացման համար, ապա ներկայացված «Ա» ֆոտոլուսանկարի վրա պատկերված անձը և տեսաերիզի վրա գրառված տեսագրության xx:xx:xxժամից xx:xx:xx ժամնընկած ժամանակահատվածում երևացող անձը նո՞ւյն անձն է, թե՝ ոչ:

§ 2.2. Տեսաձայնագրային և աուդիոձայնագրային փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- տեսագրություն՝ լազերային սկավառակով,
- ձայնագրություն՝ լազերային սկավառակով,
- տեսաերիզ,
- ձայներիզ:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- տեսաձայնագրող սարքի որոշում,

- տեսագրության հետազոտություն՝ նրանում առկա մոնտաժի կամ համակարգչային մշակման հետքեր հայտնաբերելու նպատակով,
- տեսագրությունների թվայնացում (անալոգային տեսաազդանշանի ներկայացումը թվային տեսաազդանշանի տեսքով),
- կոնկրետ տեսապատկերի առանձնացում, որակի լավացում և հետազոտություն։

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

/Տեսաձայնագրային փորձաքննություններ/

- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված «Ա» տեսագրության xx:xx:xxժամիցxx:xx:xx ժամնընկած ժամանակահատվածում տեսապատկերների վրա երևացող անձի/անձանց դիմանկարները պարզեցնել և տրամադրել լազերային սկավառակի վրա։
- Հնարավո՞ր է արդյոք պարզել փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված «Ա» տեսագրության xx:xx:xxժամից xx:xx:xxժամն ընկած ժամանակահատվածում տեսապատկերների վրա երևացող ավտոմեքենայի պետհամարանիշը։
- Հնարավո՞ր է արդյոք պարզել փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված տեսագրությունում մոնտաժի կամ համակարգչային մշակման ենթարկվածհատվածներ առկա են, թե ոչ։

- Հնարավո՞ր է արդյոք պարզել փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված տեսագրությունը ինչ տեսակի տեխնիկական միջոցներով է տեսագրվել:
- Պարզել փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված տեսագրության xx:xx:xx ժամից xx:xx:xx ժամն ընկած ժամանակահատվածում երևացող «Ա» օբյեկտի երկրաչափական չափսերը(տեղանքի զննության և ելակետային չափագրումների միջոցով):
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի տեսաերիզը պարունակո՞ւմ է արդյոք տեսագրություններ, եթե այո, ապա թվայնացնել և տրամադրել տեսագրությունների պատճենը լազերային սկավառակի վրա:

/Աուդիոձայնագրային փորձաքննություններ/

- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված ձայնագրությունը ինչպիսի՞ տեխնիկական միջոցներով է ձայնագրվել:
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված ձայնագրությունը ինչպիսի՞ ակուստիկ միջավայրում է ձայնագրվել:
- Պարզել փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված ձայնագրության մեջ խոսող անձանց քանակը:
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված ձայնագրությունում մոնտաժի կամ համակարգչային մշակման ենթարկվածհատվածներ առկա են, թե ոչ, եթե այո, ապա հնա-

բավո՞ր է արդյոք պարզել, թե ինչ տեխնիկական և ծրագրային միջոցներով է այն կատարված։

- Տրամադրել փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված ձայնագրության մեջ լսվող խոսակցությունների վերծանումը։
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված «Ա» ձայնագրության xx:xx:xx-ից xx:xx:xx ընկած ժամանակահատվածում խոսող/ելույթ ունեցող անձը և «Բ» ձայնագրության xx:xx:xx-ից xx:xx:xx ընկած ժամանակահատվածում խոսող/ելույթ ունեցող անձը նո՞ւյն անձն է, թե՝ ոչ։
- Փորձաքննությանը ներկայացված * * * տեսակի լազերային սկավառակի վրա գրառված ձայնագրության մեջ լսվող անձի/անձանց ձայները ենթակա՞ են նույնացման, թե ոչ։
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի թվային ձայնագրիչը պարունակո՞ւմ է արդյոք ձայնագրություններ, եթե այո, ապա տրամադրել ձայնագրությունների պատճենը լազերային սկավառակի վրա։
- Փորձաքննության ներկայացված * * * տեսակի ձայնարիզը պարունակո՞ւմ է արդյոք ձայնագրություններ, եթե այո, ապա ապա թվայնացնել և տրամադրել ձայնագրությունների պատճենը լազերային սկավառակի վրա։

§ 2.3. Դատահաշվապահական և դատատնտեսագիտական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- հաշվապահական հաշվառման փաստաթղթեր,
- հաշիվ-ապրանքագրեր,
- ինվոյսներ, ապրանքագրեր,
- հաշվետվություններ, հայտարարագրեր:
- և ֆինանսական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթեր:

Փորձագիտական հետազոտման խնդիրներն ու փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման դրվածքի և նրա հաշվապահական հաշվառման բնագավառում գործող նորմատիվ ակտերի, հաշվապահական հաշվառման բնագավառի ընդհանուր պահանջներին համապատասխանության որոշմանը և սահմանված կարգից շեղումների բացահայտմանն ուղղված հարցեր:
- Ապրանքանյութական արժեքների կամ դրամական միջոցների պակասորդի կամ ավելցուկի առկայության և պատճառված նյութական վնասի չափի և նրանց առաջացման ժամանակաշրջանի որոշմանն ուղղված հարցեր:
- Հաշվապահական հաշվառման վարման կարգից շեղումների և նյութական վնաս հասցնելու միջև կապի առկայության, ինչպես նաև դրանց նպաստող հանգամանքների որոշմանն ուղղված հարցեր:

- Հաշվապահական հաշվառման տվյալների և այլ նյութերից (մեղադրյալների,կասկածյալների, վկաների ցուցմունքներ, ստուգման ակտեր, աուդիտորների եզրակացություններ և այլն) ստացված տեղեկությունների համապատասխանության որոշմանն ուղղված հարցեր:
- Ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանն պատճառված վնասին ուղղված հարցեր:
- Ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանն պատճառված վնասին ուղղված հարցեր:
- Կազմակերպության կողմից կազմված և տարածքային հարկային տեսչություն ներկայացված ամսեկան կամ եռամսյակային հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված տվյալներին ուղղված հարցեր:
- Կազմակերպության կողմից կազմված սկզբնական և ամփոփ փաստաթղթերում արտացոլված տվյալներին ուղղված հարցեր:

§ 2.4. Սննդամթերքի և խմիչքների փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- գործարանային պայմաններում արտադրված բոլոր տեսակի սննդային պահածոները,
- տնայնագործական եղանակով արտադրված բոլոր տեսակի սննդային պահածոները,
- գործարանային պայմաններում արտադրված բոլոր տեսակի սննդամթերքները,

- տնայնագործական եղանակով պատրաստված բոլոր տեսակի սննդամթերքները,
- գործարանային պայմաններում արտադրված բոլոր տեսակի ալկոհոլային խմիչքները,
- տնայնագործական եղանակով արտադրված բոլոր տեսակի ալկոհոլային խմիչքները,
- գործարանային պայմաններում արտադրված բոլոր տեսակի ոչ ալկոհոլային խմիչքները, հյութերը, նեկտարները,
- տնայնագործական եղանակով արտադրված բոլոր տեսակի ոչ ալկոհոլային խմիչքները, հյութերը, նեկտարները,
- բոլոր տեսակի սննդային կիսաֆաբրիկատները,
- ձուկը, ձկնամթերքը, կակղամորթերը, ոստրեները,
- մրգերը, հատապտուղները, բանջարեղենը,
- խմելու ջուրը, ինչպես նաև՝ շշալցված,
- սուրճը (բոված, կանաչ, աղացած, լուծվող), թեյը (տարբեր տեսակի)
- կաթը և կաթնամթերքը
- հացաբուլկեղենը և հրուշակեղենը,
- մեղրը, սննդային յուղերը և կարագները,
- խոհանոցային արտադրանքը (պատրաստի ուտեստները),
- ձավարեղենը և այլ սորուն արտադրանքը,
- կոնցենտրատները (խտածոները) և հոտային համեմունքները:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- արտադրության գործընթացում առաջացած խնդիրներ, որոնք բերում են նորմատիվային փաստաթղթերի պահանջներին անհամապատասխանություն,
- իրացման փուլում առաջացած անհամապատասխանություններ,
- նույնականացման համար կատարվող փորձաքննությունների համեմատական նմուշների առկայություն,
- համալիր փորձաքննություններ կապված պիտակավորմանն առնչվող խնդիրներին։

Սննդամթերքների փորձաքննությունները՝ ըստ անվտանգության ցուցանիշների՝

1. Ֆիզիկաքիմիական ցուցանիշներ (որոշումը՝ կոլորիմետրիկ, սպեկտրոֆոտոմետրիկ, ռեֆրակտոմետրիկ, նիտրատոմետրիկ և այլն եղանակներով)։
2. Մանրէաբանական (որոշումը՝ թեսթային միջավայրերում)։
3. Նույնականացման ցուցանիշներ (ընդհանուր փորձարկումներ)։
4. Այլ բնույթի ցուցանիշներ, որոնք կապված չեն ապրանքատեսակի արտադրության կամ պահպանման խնդիրների հետ, այլ ուրիշ ճանապարհով առաջացրած թունավորումներ։
5. Զանգվածային թունավորումների դեպքերում հարցադրում իրականացնել՝ ներկայացված փորձանմուշը համապատասխանում է արդյոք նորմատիվային փաս-

տաթղթերով սահմանված անվտանգության մանրէաբանական ցուցանիշներին, թե ոչ:

Անվտանգության ցուցանիշները նորմավորվում են կառավարության որոշումներով՝ տեխնիկական կանոնակարգեր, սանիտարական կանոններ և նորմեր, ԳՈՍՏ-եր, ՀՍՏ-ներ և տեխնիկական պայմաններ:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Ներկայացված օբյեկտը որ ապրանքային խմբատեսակին է պատկանում:
- Ներկայացված փորձանմուշը համապատասխանում է արդյոք ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին, թե ոչ: Տեխնիկական կանոնակարգեր առանձին ապրանքատեսակների խմբերի համար (միսմսամթերք, կաթ-կաթնամթերք, ալկոհալային արտադրանք, հացահատիկային արտադրանք, պիտակավորմանը վերաբերող, ՏՊ՝-տեխնիկական պայմաններ, ԳՕՍՏ-եր):
- Ներկայացված փորձանմուշը հանդիսանում է արդյոք գործարանային արտադրության, թե՝ ոչ: *Այս դեպքում անհրաժեշտ է ներկայացնել գործարանային արտադրության համեմատական նմուշը:*
- Ներկայացված փորձանմուշը նույնական է համեմատական նմուշի հետ, թե՝ ոչ:
- Ներկայացված փորձանմուշը համապատասխանում է պիտակի վրա նշված գրառումներին, թե՝ ոչ:

- Ներկայացված փորձանմուշը, եթե հանդիսանում է հասարակական սնունդ (կիսաֆաբրիկատներ, աղցաններ և այլն), ապա անվտանգության ցուցանիշներից պետք է դիտարկել՝ մանրէաբանական ցուցանիշները, որոնք չպետք է գերազանցեն թույլատրելի սահմանները, թարմությունը և համապատասխանությունը իրենց բաղադրատոմսերին։
- Ներկայացված նմուշը սպիրտ պարունակող է, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչքան է թնդության աստիճանը։

Նմուշառում իրականացնելու եղանակները համաձայն ԳՈՍՏ-երի, որպեսզի ապահովվի փորձաքննությանը ներկայացված նմուշի արձանագրության տարածումը խմբաքանակի վրա։

Փորձաքննությանը ներկայացվելիք նմուշների նմուշառման ԳՕՍՏ-եր՝

1. Գարեջրի նմուշառում ГОСТ 12786-86.
2. Կոնյակի և կոնյակի սպիրտի ГОСТ 14137-74.
3. Կարագի ГОСТ 26809.
4. Բուսական յուղերի ГОСТ 5471.
5. Մարգարինային արտադրանքի ГОСТ 976.
6. Հրուշակեղենային արտադրանքի ГОСТ 5904-82.
7. Հանքային ջրերի ГОСТ 18321, 232680-91.
8. Հացաբուլկեղենի ГОСТ 5667-65.
9. Հացի ГОСТ 5667, 27668.
10. Ալյուր 9404-60.
11. Հաց և հացաբուլկեղեն ՀՍՏ 33-94.
12. Հացահատիկի ГОСТ 13586.3-83.
13. Կերակրի աղ ГОСТ 13685-84.

14. Մեղրի ՀՍՏ 228-2003.
15. Շաքարի ГОСТ 12569.
16. Շաքարավազի ГОСТ 12569.
17. Խմելու ջրի ГОСТ 24481.
18. Կաթ, կաթնամթերքի ГОСТ 3622.
19. Մսի ГОСТ 72669-79, 23392-78.
20. Ձվի ГОСТ 182-99.
21. Երշիկեղենի ГОСТ 9792-73.
22. Հավի ГОСТ 1341-74.
23. Պահածոյացված մսամթերքի ГОСТ 8756.0.
24. Հյութերի ГОСТ 26313.

Մանրէաբանական հետազոտության համար նախատեսված նմուշառման կարգը:

Մանրէաբանական փորձաքննության համար փորձանմուշները պետք է վերցվեն ստերիլ տարաներով, պահպանելով տվյալ սննդատեսակի համար նախատեսված ջերմային պայմանները:

- Ջուր խմելու ցանցից՝ համաձայն նմուշառման ԳՈՍՏ-ի այն պետք է առնվազն 2-6 ժամվա ընթացքում (պահպանելով 1-5°Ñ ջերմաստիճանում) ներկայացվի մանրէաբանական հետազոտության:
- Ցածր ջերմաստիճաններում պահպանման համար նախատեսված սննդամթերքները պետք է տեղափոխվեն համապատասխան պահամաններով, որոնք ապահովում են ապրանքի պահպանման համար նախատեսված ջերմաստիճանը (օրինակ՝ պաղպաղակ, կիսաֆաբրիկատներ, սառեցված այլ սննդամթերքներ):

- Եթե փորձաքննությանը ներկայացված սննդամթերքները տարատեսակ են, ապա բացառել նրանց շփումները միմյանց հետ, միկրոօրգանիզմների մեկը մյուսին փոխանցվելուց խուսափելու համար:
- Եթե փորձաքննությանը ներկայացված սննդատեսակները պիտակապվորված են, ապա ներկայացնել հնարավորինս պահպանված պիտակներով փորձանմուշներ:
- Եթե փորձաքննությանը ներկայացված սննդատեսակները ժամկետանց են, ապա ըստ 21.06.2014թ. ՀՕ-135-Ն «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի դրանք արդեն իսկ համարվում են վտանգավոր, պիտանի չեն օգտագործման համար և ենթակա չեն փորձարկման:

§ 2.5. Համակարգչատեխնիկական փորձաքննություններ

Համակարգչատեխնիկական փորձաքննությունները նշանակվում և կատարվում են, մասնավորապես, օբյեկտի վիճակը որպես համակարգչային միջոց որոշելու, քննվող դեպքի համար այդ օբյեկտի դերը բացահայտելու, համակարգչի գործավարական բլոկների, համակարգչի լրացուցիչ (համալրող) սարքավորումների կոնստրուկտորական առանձնահատկություններն ու վիճակն ուսումնասիրելու, համակարգչում, մեքենայական կրիչների վրա պահվող տեղեկատվության հայտնաբերման, ջնջված տեղեկատվության վերականգնման և ուսումնասիրման նպատակով:

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- համակարգիչներ,
- հիշողության կրիչներ,
- բջջային սարքեր,
- թվային տեսագրիչներ,
- էլեկտրոնային գրանցամատյաններ,
- երթուղիչներ,
- ծրագրային ապահովումներ,
- գործավարական համակարգեր
- և այլն:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝
(նույնականացնող բնույթի)

- համակարգչային սարքերի հիմնական տեխնիկական հատկանիշների որոշում,
- հիշողության կրիչներից, բջջային սարքերից հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության հայտնաբերում (տեղեկատվության վերականգնում, հետազոտություն, վերծանում),

(դիագնոստիկ բնույթի)

- համակարգչային և բջջային սարքի աշխատունակության և նպատակային շահագործման համար պիտանելիության որոշում:

Ըստ հետազոտվող օբյեկտների և լուծվող խնդիրների, դատահամակարգչատեխնիկական փորձաքննությունները դասակարգվում են 4 himnakan տեսակների.

1) համակարգչային սարքերի փորձաքննություն,

2) համակարգչային ծրագրերի փորձաքննություն,

3) համակարգչային տեղեկատվության փորձաքննություն,
4) համակարգչային ցանցերի փորձաքննություն:

1. Համակարգչային սարքերի փորձաքննություն.

- համակարգիչների (սեղանի, դյուրակիր, պլանշետային) հետազոտություն,
- համակարգչի լրացուցիչ (համալրող) սարքավորումների (մոնիտոր, տպիչ, սկաներ, ստեղնաշար, մոդեմ, մկնիկ և այլն) հետազոտություն,
- ցանցի գործիքային միջոցների (սերվերներ, աշխատանքային կայաններ և այլն),
- հիշող սարքավորումների և տեղեկատվության մեքենայական կրիչների (մագնիսային և լազերային սկավառակներ, ֆլեշ քարտեր և այլն):

2. Համակարգչային ծրագրերի փորձաքննություն.

- համակարգչային համակարգի ծրագրային ապահովման հետազոտություն,
- կիրառական ծրագրային ապահովումների հետազոտություն:

3. Համակարգչային տեղեկատվության փորձաքննություն.

- ամենատարբեր ծրագրային միջոցներով ստեղծված առկա ֆայլերի հետազոտություն,
- ամենատարբեր ծրագրային միջոցներով ստեղծված, սակայն հետագայում ջնջված ֆայլերի վերականգնում և հետազոտություն:

4. Համակարգչային ցանցեր փորձաքննություն.

- համակարգչային ցանցերի հետազոտություն,

- համակարգչային սարքավորումներով կազմված ցանցերի հետազոտություն,
- էլեկտրոնային նամակների հետազոտություն,
- համացանցի օգտագործման հետազոտություն:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

1. Համակարգչային սարքերի փորձաքննություն.

(սարքի հիմնական տեխնիկական բնութագրի, տիպի և կիրառման հիմնական ոլորտի որոշում)

- Փորձաքննության ներկայացված սարքավորումն ի՞նչ մակնիշի և մոդելի է:
- Փորձաքննության ներկայացված սարքավորումն ի՞նչ տեխնիկական բնութագրեր ունի, ո՞րն է նշված սարքավորման կիրառման հիմնական ոլորտը:
- Փորձաքննության ներկայացված սարքավորումն ինչպիսի՞ ֆունկցիոնալ հնարավորություններ ունի, հնարավո՞ր է փորձաքննության ներկայացված սարքավորման միջոցով իրականցնել _____ (որևէ ֆունկցիոնալ գործողություն, օրինակ՝ կատարել գունավոր տպագրություն կամ կատարել լուսածրում և այլն):

○ *(սարքի տեխնիկական վիճակի որոշում)*

- Փորձաքննության ներկայացված սարքավորումը տեխնիկապես գտնվու՞մ է սարքին վիճակում, թե՝ ոչ, ինչպիսի՞ տեխնիկական թերություններ ունի փորձաքննության ներկայացված սարքավորումը:
- Փորձաքննության ներկայացված թվային տեսագրիչը սարքին է, թե՝ ոչ:

- Փորձաքննության ներկայացված բջջային հեռախոսը (պլանշետային համակարգիչը) սարքին է, թե՝ ոչ:
- Փորձաքննության ներկայացված համակարգիչը (դյուրակիր համակարգիչը) սարքին է, թե՝ ոչ:

2. Համակարգչային ծրագրերի փորձաքննություն.

(գործավարական համակարգի հիմնական բնութագրերի որոշում)

- Ի՞նչ ծրագրային ապահովում կամ գործավարական համակարգ է օգտագործում փորձաքննության ներկայացված սարքավորումը (այդ թվում՝ համակարգիչ, դյուրակիր համակարգիչ, պլանշետային համակարգիչ, թվային տեսագրիչ և այլն):

(ծրագրային ապահովման ֆունկցիոնալ հատկություններ-ի, կարգաբերումների հետազոտում և որոշում)

- Նշված ծրագրային ապահովումն ինչպիսի՞ ֆունկցիոնալ հնարավորություններ ունի, հնարավո՞ր է նշված ծրագրային ապահովման միջոցով իրականցնել _____ (որևէ ֆունկցիոնալ գործողություն, օրինակ՝ կատարել գրաֆիկական մշակումներ, տեսանյութերի մոնտաժում և այլն):

(ծրագրային ապահովման կեղծման հատկանիշների որոշում)

- Նշված ծրագրային ապահովումն ունի՞ արտոնագիր (լիցենզիա), թե՝ ոչ, եթե այո, ապա ո՞րն է վերջինիս արտոնագիրը (արտոնագրի բանալու արժեքը, համարը և այլն), ե՞րբ այն տեղադրվել և ի՞նչ գործածողի անվանումով է գրանցված:

- Փորձաքննության ներկայացված համակարգչում վնասաբեր ծրագրային ապահովումներ առկա են, թե՝ ոչ: Եթե այո, ապա ինչպիսի ծրագրային ապահովումներ են դրանք և ինչի համար են նախատեսված:
- Հետազոտելի օբյեկտի հիշողությունում առկա՞ են արդյոք նշված ծրագրային ապահովման արտոնագրի բանալիներ գեներացնելու համար նախատեսված ծրագրային միջոցներ (keygen):
- Նշված ծրագրային ապահովման ապօրինի օգտագործման վերաբերյալ ինչպիսի՞ հատկանիշներ են առկա փորձաքննության ներկայացված հետազոտելի օբյեկտում:
- Փորձաքննության ներկայացված ծրագրային ապահովումը (ֆայլը) հանդիսանում է արդյոք վնասաբեր ծրագրային ապահովում: Եթե այո, ապա ինչի համար է այն նախատեսված:

3. Համակարգչային տեղեկատվության փորձաքննություն.

(տեղեկատվության վիճակի որոշում)

- Փորձաքննության ներկայացված սարքավորումը կամ համակարգիչը ունի՞ արդյոք տեղեկատվության կրիչ, եթե այո, ապա ի՞նչ տեսակի տեղեկատվության կրիչ է և ինչպիսի՞ հիմնական բնութագրիչ հատկանիշներ այն ունի:

(ամենատարբեր ծրագրային միջոցներով ստեղծված առկա ֆայլերի հիմնական հատկանիշների որոշում)

- Փորձաքննության ներկայացված տեղեկատվության կրիչում նշված տեսակի (կամ որոշակի բնույթի տեղե-

կատվություն պահպանող, օրինակ՝ փաստաթղթեր պարունակող) ֆայլեր առկա՞ են, թե՝ ոչ:

- Նշված տեսակի ֆայլերի վերաբերյալ ի՞նչ տեղեկատվություն է պահպանված տեղեկատվության կրիչում (ծավալ, ստեղծման, փոփոխման ամսաթվեր, տեղակայման պանակ և այլն):
- Փորձաքննության ներկայացված տեղեկատվության կրիչում թաքնված կամ քողարկված ֆայլեր առկա՞ են, թե՝ ոչ, եթե այո, ապա ի՞նչ ֆայլեր են դրանք, որտե՞ղ են գտնվում, ի՞նչ հիմնական բնութագրեր ունեն:
- Փորձաքննության ներկայացված տեղեկատվության կրիչում գաղտնագրերով պաշտպանված ֆայլեր առկա՞ են, թե՝ ոչ, եթե այո, ապա ի՞նչ ֆայլեր են դրանք, որտե՞ղ են գտնվում, ի՞նչ հիմնական բնութագրեր ունեն, հնարավո՞ր է հայտնաբերել կամ շրջանցել նշված ֆայլերի գաղտնաբառերը, թե՝ ոչ:

(ամենատարբեր ծրագրային միջոցներով ստեղծված, սակայն հետագայում ջնջված ֆայլերի վերականգնում)

- Փորձաքննության ներկայացված տեղեկատվության կրիչում նշված տեսակի (կամ որոշակի բնույթի տեղեկատվություն պահպանող, օրինակ՝ փաստաթղթեր պարունակող) ջնջված ֆայլեր առկա՞ են, թե՝ ոչ, եթե այո, ապա վերականգնել այդ ֆայլերը:
- Նշված տեսակի ջնջված ֆայլերի վերաբերյալ ի՞նչ տեղեկատվություն է պահպանված տեղեկատվության կրիչում (ծավալ, ստեղծման, փոփոխման ամսաթվեր, տեղակայման պանակ և այլն):

- Փորձաքննության ներկայացված թվային տեսագրիչում քննությանը հետաքրքրող ժամանակահատվածին վերաբերող (նշել ժամանակահատվածը) տեսագրություններ կան, թե՝ ոչ, եթե այո ապա տրամադրել:
- Եթե փորձաքննության ներկայացված թվային տեսագրիչում քննությանը հետաքրքրող ժամանակահատվածին վերաբերող (նշել ժամանակահատվածը) տեսագրություններ չկան, ապա հնարավոր է դրանք վերականգնել, թե՝ ոչ: Եթե այո, ապա վերականգնել և տրամադրել նշված ժամանակահատվածին վերաբերող տեսագրությունները:
- Փորձաքննության ներկայացված թվային տեսագրիչի գրանցամատյանում տեսագրություններ ջնջելու վերաբերյալ գրառումներ առկա են, թե՝ ոչ:
- Փորձաքննության ներկայացված բջջային հեռախոսի ներքին հիշողության կրիչում, դրանում տեսադրված հիշողության կրիչում (առկայության դեպքում), ինչպես նաև բջջային հեռախոսաքարտում քննությանը հետաքրքրող տեղեկատվություն (նշել կոնկրետ) առկա է, թե՝ ոչ: Եթե այո, ապա տրամադրել:
- Փորձաքննության ներկայացված բջջային հեռախոսի ներքին հիշողության կրիչում, դրանում տեսադրված հիշողության կրիչում (առկայության դեպքում), ինչպես նաև բջջային հեռախոսաքարտում քննությանը հետաքրքրող ջնջված տեղեկատվություն (նշել կոնկրետ) առկա է, թե՝ ոչ: Եթե այո, ապա վերականգնել և տրամադրել:

4. Համակարգչային ցանցերի փորձաքննություն.

(համակարգչային սարքավորումների ցանցային կարգաբերումների որոշում)

- Փորձաքննության ներկայացված սարքավորումն ինչպիսի՞ ցանցային կարգաբերումներ ունի («IP» հասցե, ցանցի պատիչ, ուղղորդիչ և այլն)։

(համակարգչային սարքավորումներով կազմված ցանցի սխեմայի որոշում)

- Փորձաքննության ներկայացված սարքավորումը որևէ համակարգչային ցանցում շահագործվե՞լ է, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի՞ սխեմատիկ կառուցվածք է ունեցել այդ ցանցը, ի՞նչ տարրեր են դրանում ներգրավված եղել (համակարգիչներ, այլ ցանցային սարքավորումներ)։

(էլեկտրոնային նամակների սկզբնաղբյուրի որոշում, համակարգչային հարձակման տեսակի և սկզբնաղբյուրի որոշում)

- Ըստ տրամադրված գրանցամատյանների՝ նշված էլեկտրոնային նամակը ի՞նչ «IP» հասցեի կողմից է ուղարկվել, ե՞րբ է այն ուղարկվել և ի՞նչ բովանդակություն է ունեցել։
- Ըստ տրամադրված գրանցամատյանների՝ նշված ժամանակահատվածում նշված կայքը ենթարկվե՞լ է արդյոք համակարգչային հարձակման, թե՝ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տեսակի հարձակում է եղել, որքա՞ն է այն տևել, ո՞ր «IP» հասցեների կողմից է իրականացվել և ի՞նչ եղանակով։

(համացանցի օգտագործման որոշում)

- Փորձաքննության ներկայացված սարքավորման միջոցով օգտվե՞լ են արդյոք համացանցից, թե՝ ոչ, եթե այո, ապա ի՞նչ կայքեր են այցելվել, ե՞րբ և ի՞նչ մուտքանուններ ու գաղտնաբառեր են օգտագործվել այդ կայքեր մուտք գործելու համար։
- Փորձաքննության ներկայացված սարքավորման միջոցով իրականացվե՞լ է արդյոք էլեկտրոնային նամակագրություն համացանցի կիրառմամբ, թե՝ ոչ, եթե այո, ապա ի՞նչ ծրագրային ապահովումների միջոցով, ի՞նչ հաղորդագրություններ են ուղարկվել և ստացել, ե՞րբ և ի՞նչ օգտատերերի կողմից։

§ 2.6. Դատահոգեբանական փորձաքննություններ

Հոգեբանական փորձաքննությունների բաժնում իրականացվում են փորձաքննությունների հետևյալ հիմնական տեսակները՝ հոգեբանական և լինգվիստիկական /լեզվաբանական/, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթատեսակները։

◊ ***<u>Հոգեբանական փորձաքննություններ</u>***

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- Իրավական հարաբերությունների սուբյեկտի /մեղադրյալ, կասկածյալ, տուժող, վկա, հայցվոր, պատասխանող/ հոգեկան գործունեությունը իրավական նշանակություն ունեցող իրավիճակներում,
- սոցիալական փոխազդեցության և միջանձնային /ներխմբային և միջխմբային/ գործընթացները,

- հանցագործության իրավիճակների, ինչպես նաև արդարադատության համար այլ կարևոր իրադարձությունների վերաբերյալ ինֆորմացիայի աղբյուրները՝ ցանկացած նյութ, այդ թվում նաև գործի նյութերը /դեպքի վայրի զննության արձանագրությունը, մեղադրյալի, վկայի, տուժողի, կասկածյալի հարցաքննության արձանագրությունները, սթափության վերաբերյալ բժշկական տեղեկանքները և այլն/, որոնցում առկա են տվյալներ, որոնք ունեն հոգեբանական բովանդակություն կամ կարող են ենթարկվել հոգեբանական վերլուծության

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- բացահայտել անչափահաս մեղադրյալների կողմից սեփական գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու ունակության մակարդակը, դրանց վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու կարողությունը,
- բացահայտել հոգեպես առողջ տուժողի կողմից իր հետ կատարված գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու և դիմադրություն ցույց տալու կարողությունը,
- բացահայտել հակահիրավական գործողություն կատարելու պահին մեղադրյալի մոտ ֆիզիոլոգիական կամ կումուլյատիվ աֆեկտի, ինչպես նաև այլ հուզական վիճակների առկայությունը կամ բացակայությունը, որը կարող էր հետազոտվող իրավիճակում էականորեն ազդել նրա գիտակցության և վարքի վրա,

- բացահայտել անձի անհատական հոգեբանական այնպիսի առանձնահատկություններ, որոնք իրավական նշանակություն ունեցող իրավիճակում կարող էին էապես ազդել նրա վարքի և հոգեկան գործունեության վրա,
- բացահայտել այնպիսի հոգեբանական հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն երեխայի դաստիարակության իրավունքի հարցում,
- բացահայտել գործարք կատարելու պահին անձի կողմից սեփական գործողությունների նշանակությունը հասկանալու և ղեկավարելու կարողությունը,
- բացահայտել ինքնասպանության /ինքնասպանության փորձին/ նախորդող ժամանակահատվածում անձի հոգեվիճակը, ինչպես նաև նրա հոգեվիճակի և այլ անձանց /կասկածյալի, մեղադրյալի/ գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը,
- բացահայտել իրավական նշանակություն ունեցող իրավիճակում անձի մոտ հոգեբանական ազդեցության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը,
- բացահայտել անձի /հայցվոր/ հոգեկան գործունեության փոփոխությունները, ինչպես նաև նրա հոգեկան վիճակի և այլ անձանց /պատասխանող/ գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը,
- բացահայտել տարբեր ապրանքային նշանների, անվանումների և մտավոր սեփականություն հանդիսացող

այլ օբյեկտների միջև շփոթության աստիճանի նմանության առկայությունը կամ բացակայությունը,

- բացահայտել տրանսպորտային կամ արտադրական պատահարների ժամանակ անձի հոգեկան վիճակը և դրա ազդեցությունը գործունեության ղեկավարման ունակության վրա,
- բացահայտել վարքի հոգեֆիզիոլոգիական նշանների օգնությամբ քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները։

<u>◊Անչափահաս մեղադրյալների փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության հիմնական խնդիրն է բացահայտել անչափահաս մեղադրյալների կողմից սեփական գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու ունակության մակարդակը։

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Անչափահասի մոտ արդյոք առկա՞ է հոգեկանի զարգացման հապաղում, որը կապված չէ որևէ հոգեկան հիվանդության հետ, եթե այո, ապա ինչպե՞ս է այն արտահայտվում։
- Հաշվի առնելով անչափահասի հոգեկան զարգացման մակարդակը՝ կարո՞ղ էր արդյոք նա լիովին հասկանալ իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք։
- Անչափահաս մեղադրյալը իրեն մեղսագրվող արարքի պահին կարո՞ղ էր արդյոք հասկանալ իր գործողու-

թյունների փաստացի բնույթը և հասարակական վտանգավորությունը և կարո՞ղ էր ղեկավարել դրանք, եթե այո, ապա ի՞նչ չափով:

- Անչափահասն իր տարիքին, զարգացման մակարդակին և ստացած կրթությանը համապատասխան է ընկալում և վերարտադրում իրողությունները, թե՝ ոչ:
- Հաշվի առնելով անչափահասի հոգեկան զարգացման մակարդակը, անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ կարո՞ղ էր նա ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները և ճիշտ ցուցմունքներ տալ:

<u>ԾԲոնության /այդ թվում սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված/ հանցագործությունների փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության հիմնական խնդիրն է բացահայտել հոգեպես առողջ տուժողի կողմից իր հետ կատարված գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու և դիմադրություն ցույց տալու կարողությունը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Հաշվի առնելով տուժողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, ինտելեկտուալ և անձնային զարգացման մակարդակը, հոգեկան վիճակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը՝ կարո՞ղ էր արդյոք նա հասկանալ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը:

- Հաշվի առնելով տուժողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, հոգեվիճակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը՝ կարո՞ղ էր արդյոք նա դիմադրություն ցույց տալ:
- Տուժողին բնորո՞շ են այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին էապես ազդել հետազոտվող իրավիճակում նրա վարքի վրա:
- Իր նկատմամբ կատարված գործողությունների ընթացքում տուժող գտնվե՞լ է արդյոք այնպիսի հոգեվիճակում, որը կարող էր էապես ազդել հետազոտվող իրավիճակում նրա վարքի վրա:

<u>Հուզական վիճակների փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության հիմնական խնդիրն է բացահայտել հակահիրավական գործողություն կատարելու պահին մեղադրյալի մոտ ֆիզիոլոգիական /կումուլյատիվ/ աֆեկտի և այլ հուզական վիճակների առկայությունը կամ բացակայությունը, որոնք կարող էին հետազոտվող իրավիճակում էականորեն ազդել նրա գիտակցության և վարքի վրա:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Իրեն մեղսագրվող արարքը կատարելիս մեղադրյալը գտնվե՞լ է արդյոք ֆիզիոլոգիական կամ կումուլյատիվ աֆեկտի վիճակում:
- Իրեն մեղսագրվող արարքը կատարելիս մեղադրյալը գտնվել է արդյոք այնպիսի հուզական վիճակում /հոգե-

կան լարվածություն, ֆրուստրացիա, շփոթվածություն, սթրես և այլն/, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա։

- Մեղադրյալի ո՞ր անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա։
- Ձայնագրման կամ տեսաձայնագրման ընթացքում ինչպիսի՞ հոգեվիճակում է գտնվել փորձաքննվողը։

<u>◊Անհատական հոգեբանական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության ***հիմնական խնդիրն է*** բացահայտել անձի անհատական հոգեբանական այնպիսի առանձնահատկություններ, որոնք իրավական նշանակություն ունեցող իրավիճակում կարող էին էապես ազդել նրա վարքի և հոգեկան գործունեության վրա։

- Ինչպիսի՞ անհատական հոգեբանական առանձնահատկություններ ունի անձը, նրան բնորո՞շ են արդյոք այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնք կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա։
- Անձին բնորո՞շ են այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, որոնցով պայմանավորվել են նրա հակաիրավական գործողությունները։
- Հաշվի առնելով անձի հոգեկան զարգացման մակարդակը, անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ կարո՞ղ էր նա ճիշտ ընկալել գործի հա-

մար կարևոր հանգամանքները և ճիշտ ցուցմունքներ տալ:

- Ճանաչողական ոլորտի ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի տուժողը կամ վկան (հիշողություն, ուշադրություն և այլն):
- Հաշվի առնելով ներկայացված անձանց (նշել կոնկրետ) անհատական հոգեբանական առանձնահատկությունները և հետազոտվող իրավիճակում նրանց կողմից կատարված արարքները, նրանցիվ ով կարող էր հանդիսանալ հանցավոր խմբավորման լիդեր:

<u>ՕՔաղաքացիական գործերով փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության ***հիմնական խնդիրն է*** բացահայտել այնպիսի հոգեբանական հանգամանքներ, որոնք էական նշանակություն ունեն երեխայի դաստիարակության իրավունքի հարցում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Ինչպիսի՞ն են երեխայի փոխհարաբերությունները ծնողներից յուրաքանչյուրի կամ տվյալ գործով հայցվոր կամ պատասխանող հանդիսացող այլ անձանց հետ:
- Կարո՞ղ են արդյոք հայցվորի կամ պատասխանողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, արժեհամակարգը, դիրքորոշումները բացասական ազդեցություն ունենալ երեխայի զարգացման և հոգեկան վիճակի վրա:

- Հաշվի առնելով երեխայի և ծնողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները, արդյոք առկա է անհրաժեշտություն սահմանափակել երեխայի շփումը ծնողներից որևէ մեկի հետ:

<u>Ինտեսական և վարչական գործերով փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության ***հիմնական խնդիրն է*** բացահայտել գործարք կատարելու պահին անձի կողմից սեփական գործողությունների նշանակությունը հասկանալու և ղեկավարելու կարողությունը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Գործարքը կատարելիս կամ այլ փաստաթղթեր ստորագրելիս անձը կարո՞ղ էր արդյոք հասկանալ իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք:
- Հաշվի առնելով անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, հոգեվիճակը և հետազոտվող իրավիճակի բովանդակությունը՝ կարո՞ղ էր արդյոք նա ճիշտ ընկալել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները:
- Գործարքը կատարելիս կամ այլ փաստաթղթեր ստորագրելիս անձն ընդունա՞կ է եղել արդյոք կանխատեսել իր գործողությունների հետևանքները:

<u>Հետմահու և ինքնասպանության փորձի փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության ***հիմնական խնդիրն է*** բացահայտել մահվանը /ինքնասպանության փորձին/ նախորդող ժամանակահատվածում անձի հոգեվիճակը, ինչպես նաև նրա հոգեվիճակի և այլ անձանց գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը/բացակայությունը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Ի՞նչ հոգեվիճակում է գտնվել անձը մահվանը /ինքնասպանության փորձին/ նախորդող ժամանակահատվածում:
- Գոյություն ունի արդյոք պատճառահետևանքային կապ մեղադրյալի գործողությունների և տուժողի մահվանը /ինքնասպանության փորձին/ նախորդող հոգեվիճակի միջև:
- Հաշվի առնելով փորձաքննության ներկայացված գրության բովանդակությունը և ձեռագրի առանձնահատկությունները՝ ինչպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ են բնորոշ գրության հեղինակին (հնարավոր է վերլուծել միայն Ա4 ձևաչափի թուղթն ամբողջությամբ գրառված լինելու դեպքում):
- Հաշվի առնելով փորձաքննության ներկայացված գրության բովանդակությունը և ձեռագրի առանձնահատկությունները՝ ի՞նչ հոգեվիճակում է գտվել անձը գրառումները կատարելիս (հնարավոր է վերլուծել միայն

Ա4 ձևաչափի թուղթն ամբողջությամբ գրառված լինելու դեպքում):

<u>◊Տրանսպորտային և արտադրական պատահարների գործերով փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության հիմնական խնդիրն է բացահայտել տրանսպորտային կամ արտադրական պատահարների ժամանակ անձի հոգեկան վիճակը և դրա ազդեցությունը տեխնիկական գործունեության ղեկավարման ունակության վրա:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Վթարի պահին անձը գտնվե՞լ է այնպիսի հոգեվիճակում, որը կարող էր էապես ազդել մասնագիտական գործառույթների իրականացման վրա:
- Հաշվի առնելով անձի անհատական հոգեբանական առանձնահատկությունները և հոգեկան վիճակը՝ կարո՞ղ էր արդյոք նա ճիշտ գնահատել իրավիճակը /կամ դրա առանձին տարրերը/, ճիշտ որոշում կայացնել և իրականացնել այն:
- Անձի իմացական ոլորտի առանձնահատկությունները /ուշադրության, հիշողության, ընկալման առանձնահատկությունները, ռեակցիաների արագությունը և այլն/ ազդե՞լ են արդյոք նրա վարքի վրա հետազոտվող իրավիճակում:

- Անձի կամային ոլորտի առանձնահատկություններն ազդե՞լ են արդյոք նրա վարքի վրա հետազոտվող իրավիճակում:

<u>◊Հոգեբանական ազդեցության փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության ***հիմնական խնդիրն է*** բացահայտել իրավական նշանակություն ունեցող իրավիճակում անձի մոտ հոգեբանական ազդեցության հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Հետազոտվող իրավիճակում առկա՞ են արդյոք անձի նկատմամբ ուղղորդված հոգեբանական ազդեցության հատկանիշներ մեկ այլ անձի կողմից: Եթե այո, ապա ինչպիսի՞:
- Արդյո՞ք հոգեբանական ազդեցության հետևանքով անձի մոտ տեղի է ունեցել սեփական գործողությունների փաստացի բնույթը լիովին գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակության սահմանափակում, թե ոչ:
- Ձայնագրության կամ տեսաձայնագրության մեջ առկա են արդյո՞ք անձի նկատմամբ ուղղորդված հոգեբանական ազդեցության հատկանիշներ մեկ այլ անձի կողմից:

<u>◊Բարոյական վնասի փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության ***<u>հիմնական խնդիրն է</u>*** բացահայտել անձի /հայցվոր/ հոգեկան գործունեության փո-

փոխությունները, ինչպես նաև նրա հոգեկան վիճակի և այլ անձանց /պատասխանող/ գործողությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը կամ բացակայությունը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Ինչպե՞ս են անդրադարձել պատասխանողի գործողությունները հայցվորի գործունեության և հոգեկան վիճակի վրա:
- Հայցվորի ո՞ր անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էական ազդեցություն ունենալ պատասխանողի գործողությունների հետևանքով նրա սուբյեկտիվ ապրումների խորության և ուժգնության վրա:
- Գոյություն ունի՞ արդյոք պատճառահետևանքային կապ հայցվորի հոգեկան վիճակի և պատասխանողի գործողությունների միջև:

<u>●Լինգվիստիկական /լեզվաբանական/ փորձաքննություն</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- գրավոր տեքստ,
- բանավոր տեքստ:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունների վերլուծություն,
- լսարանի վրա գրավոր կամ բանավոր խոսքում առկա տեղեկատվության ազդեցության բացահայտում,

- բանավոր խոսքի՝ ըստ բառապաշարի իմաստային և ոճական վերլուծություն, տվյալ իրադրության մեջ կիրառության, արտասանության և հնչարտաբերման, ձայնի տոնի, հնչերանգի առանձնահատկությունների վերլուծություն,
- գրավոր խոսքի՝ ըստ բառապաշարի իմաստային և ոճական նրբերանգների, բառակազմական, խոսքիմասային և շարահյուսական առանձնահատկությունների վերլուծություն,
- տեքստի կազմի մեջ մտնող նախադասությունների շարահյուսական, ոճական առանձնահատկությունների վերլուծություն և գնահատում,
- բանավոր կամ գրավոր խոսքի հաղորդակցական առանձնահատկությունների, լսարանի վրա ազդեցություն թողնելու միտումների գնահատում,
- տարբեր տեքստերի համեմատություն, դրանց նմանությունների և տարբերությունների բացահայտում, նույնականության առկայության գնահատում:

<u>◊Գրավոր և բանավոր խոսքի փորձաքննություն</u>

Տվյալ ենթատեսակով փորձաքննության ***հիմնական խնդիրն է*** վերլուծել գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները՝ որպես հեղինակի մասին տեղեկատվության աղբյուր, ինչպես նաև բացահայտել գրավոր կամ բանավոր խոսքում առկա տեղեկատվության ազդեցությունը լսարանի վրա:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Հետաքննվող տեքստը պարունակու՞մ է արդյոք բռնության, թշնամության, ատելության կոչեր։
- Հաշվի առնելով անձի ինտելեկտուալ զարգացվածության մակարդակը, բանավոր և գրավոր խոսքի առանձնահատկությունները, անհատական հոգեբանական առանձնահատկությունները և դեպքի հանգամանքները՝ հանդիսանում է արդյոք փորձաքննվողը հետազոտվող տեքստի հեղինակը (հարցադրումը հարկավոր է առաջադրել հոգեբանական-լինգվիստիկական համալիր փորձաքննության շրջանակներում)։

<u>◊Շփոթության աստիճանի նմանության փորձաքննություն</u>

Այս ենթատեսակի փորձաքննության **հիմնական խնդիրն է** բացահայտել տարբեր ապրանքային նշանների, անվանումների և մտավոր սեփականություն հանդիսացող այլ օբյեկտների միջև շփոփության աստիճանի նմանության առկայությունը/բացակայությունը։

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Արդյո՞ք առկա է շփոթության աստիճանի նմանություն դիտարկվող անվանումների կամ ապրանքանշանների միջև։
- Ի՞նչ ընդհանուր կամ տարբերվող գծեր (գրաֆիկական, հնչյունային, իմաստային և այլն) ունեն դիտարկվող անվանումները կամ ապրանքանշանները։

§ 2.7. Էկոլոգիական փորձաքննություններ

1.Հողա-երկրաբանական օբյեկտների էկոլոգիական վիճակի հետազոտություն:

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- իրեղեն ապացույցների վրա եղած հողի շերտանստվածքներ,
- տեղանքի կոնկրետ մասի նմուշներ,
- հողի ստուգիչ նմուշներ /տեղանքի կոնկրետ մասի խնդրի լուծման ժամանակ/:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- հողի մասնիկների հայտնաբերումը և դրանց ախտորոշումը,
- հողի շերտանստվածքի տեղայնացումը,
- հողի օբյեկտների ընդհանուր սեռային և խմբային պատկանելիության որոշումը,
- հողի շերտանստվածքների պատկանելիության պարզում որևէ տեղային հատվածին /անհրաժեշտ նյութերի տրամադրումից հետո/:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Ապօրինի գործունեության արդյունքում ի՞նչ չափի վնաս է պատճառվել հողային ռեսուրսներին:
- Ապօրինի գործունեության արդյունքում ի՞նչ չափի վնաս է պատճառվել ընդերքին և նրանում պարփակված օգտակար հանածոներին:

- Տնտեսական գործունեության, կամ բնական աղետների արդյունքում ի՞նչ չափի վնաս է պատճառվել հողային ռեսուրսներին: (հողային ռեսորսների աղբոտում, ախտոտում, դեգրադացիա):
- Տնտեսական գործունեության արդյունքում ի՞նչ չափի վնաս է պատճառվել ընդերքին և նրանում պարփակված օգտակար հանածոներին, շրջակա միջավայրին (թափոնների տեղադրում, մթնոլորտային օդի ախտոտում, բուսականությանը պատճառված վնաս):
- Հանքավայրերի շահագործման ընթացքում լեռնահատկացման և հողահատկացման քարտեզներով հատկացված նշանակետերը պահպանվա՞ծ են թե ոչ: Խախտման դեպքում ի՞նչ վնաս է հասցվել շրջակա միջավայրին:

/Հողագիտական հետազոտություններ/:

- Ներկայացված առարկաների վրա կան արդյոք հողային ծագում ունեցող քսվածքներ:
- Ունեն արդյոք (նշվում են համեմատվող նյութերը) ընդհանուր սեռային և խմբային պատկանելիություն:
- Պիտանի են արդյոք առարկաների վրայի քսվածքները, տեղանքի կոնկրետ տեղամասի կամ շինության հետ դրանցով նույնականացման համար (տրվում է տեղայնացված տեղամասի բացատրությունը, տեղանքի հետ դրանց կապելու ճանապարհով, նշվում են դրա չափսերն ու սահմանները):
- Առկա են արդյոք հողի մեջ կողմնակի խառնուրդներ, ներառումներ և այլն:

- Ներկայացված օբյեկտների վրա կան արդյոք հողի շերտանստվածքներ,
- ինչպիսին է դրանց տեղակայումը:
- Կրող օբյեկտների վրա հայտնաբերված մասնիկները ունեն արդյոք հողային ծագում:
- Պիտանի են արդյոք այդ մասնիկները համեմատական հետազոտության համար:
- Կրող օբյեկտների վրա եղած հողի շերտանստվածքները պատկանում են արդյոք դեպքի վայրի կամ այլ վայրի հողին:
- Հողի շերտանստվածքների մեջ կան արդյոք ոչ հողային ծագում ունեցող մասնիկներ /մանրաթել, ներկանյութ և այլն/, որոնք կբնութագրեն տեղանքի առանձնահատկությունները:

2/ ***<u>Ջրային օբյեկտների էկոլոգիական վիճակի հետազոտություն:</u>***

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Ապօրինի ջրօգտագործման արդյունքում ի՞նչ չափի վնաս է պատճառվել ջրային ռեսուրսներին:
- Ապօրինի ջրօգտագործման արդյունքու ի՞նչ չափի վնաս է հասցվել շրջակա միջավայրին:
- Ապօրինի տնտեսական գործունեության արդյունքում ի՞նչ վնաս է պատճառվել ջրային ռեսուրսներին:

- Տնտեսական գործունեության (առանց ջրօգտագործման թույլտվության, ջրօգտագործման թույլտվության ծավալների գերազանցում, ջրերի ոչ նպատակային:
- օգտագործում) արդյունքում ի՞նչ վնաս է հասցվել ջրային ռեսուրսներին:
- Տնտեսական գործունեության արդյունքում (ջրերի ախտոտում) ի՞նչ չափի վնաս է հասցվել ջրային ռեսուրսներին, շրջակա միջավայրին:
- Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության պատճառների հետազոտում և վնասի գնահատումը:

3/ <u>Մթնոլորտային օդի էկոլոգիական վիճակի հետազոտություն:</u>

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Ապօրինի գործունեության /արտանետումների/ արդյունքում ի՞նչ չափի վնաս է պատճառվել մթնոլորտային օդին:
- Ապօրինի գործունեության /արտանետումների/ արդյունքում ի՞նչ չափի վնաս է հասցվել շրջակա միջավայրին:
- Տնտեսական գործունեության (արտանետումների նորմերի գերազանցում) արդյունքում ի՞նչ չափի վնաս է հասցվել մթնոլորտային օդին:

- Տնտեսական գործունեության (արտանետումների նորմերի բացակայություն) արդյունքում ի՞նչ չափի վնաս է հասցվել շրջակա միջավայրին.

4. Բուսական և կենդանական աշխարհ

Բուսաբանական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- ծառեր,
- թփեր ,
- այլ բուսատեսակներ:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- ծառերի, թփերի այլ բուսական օբյեկտների տեսակային պատկանելիությունը,
- փորձաքննությանը ներկայացված ծառերի տարիքի որոշումը,
- փորձաքննությանը ներկայացված ծառերի կողմերի հատման վաղեմության որոշումը,
- ծառի/ծառախումբի հատման տարին և ամիսը
- փորձաքննության ներկայացված փորձանմուշների մեկ ամբողջություն հանդիսանալու/չհանդիսանալու փաստը,
- ծառի կենսական վիճակը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Տնտեսական գործունեության արդյունքում բուսական աշխարհին (անտառներ, հատուկ պահպանվող տա-

ռածքներ, կանաչապատ տարածքներ) ի՞նչ չափի վնաս է հասցվել:

- Ապօրինի գործունեության արդյունքում բուսական աշխարհին (անտառներ, հատուկ պահպանվող տարածքներ, կանաչապատ տարածքներ) ի՞նչ չափի վնաս է պատճառվել:

Բուսական ծագում ունեցող օբյեկտների փորձաքննության մասով՝

- Ինչպիսին է կրող – օբյեկտների վրայից առգրավված և փորձաքննությանը ներկայացված իրեղեն ապացույցի բնույթը /նրանց անհատական պատկանելիությունը/:
- Հանցագործության վայրից և կասկածյալի հագուստների վրայից առգրավված մասնիկները ունեն արդյոք ընդհանուր խմբային պատկանելիություն:
- դեպքի վայրի հետազոտությամբ հայտնաբերված վնասված ծառերը, որ տեսակին են պատկանում, վնասված ծառերը ինչ տարիքի են:
- Դեպքի վայրում հայտնաբերված ծառերի ոչնչացումը և վնասումը բերել է արդյոք դրանց աճի ամբողջությամբ դատարեցման:
- Ծառերի վնասման և ոչնչացման արդյունքում հասցվել է արդյոք վնաս շրջակա միջավայրի օբյեկտներին, եթե այո ապա ինչպիսի և ինչավ է այն արտահայտվում:
- Հնարավոր է արդյոք շրջակա միջավայրի օբյեկտների նախնական վիճակի վերականգնում, եթե այո ապա դրա համար ինչպիսի միջոցառումներ են անհրաժեշտ կատարել:

- փորձաքննության ներկայացված հողի մեջ կանեփի բույսի արմատներ, տերևներ և սերմեր կան, թե ոչ:
- Ներկայացված բուսական թփերը իրենցից ինչ են ներկայացնում և ինչ տեսակի բույսերի են պատկանում:
- Ներկայացված բուսական թփերը հանդիսանում են արդյոք թմրամիջոցներ, եթե այո, ապա որ տեսակին են դասվում և որքան է կազմում դրանց քաշը:
- Առգրավված և փորձաքննությանը ներկայացված մանրացված կանեփանման կանաչ զանգվածը իրենից թմրամիջոց ներկայացնում է, թե ոչ եթե այո ապա ինչ տեսակի և ինչ քաշի:
- Փորձաքննության ներկայացված սերմերը պատկանուն են արդյոք թմրանյութ պարունակող բույսերի, եթե այո ապա ինչ տեսակի:
- Փորձաքննության ներկայացված բուսական թփերը հանդիսանում են արդյոք կակաչի ծղոտներ, եթե այո, ապա նշել ծղոտների և թմրամիջոց հանդիսացող մյուս մասերի առանձին քաշերը:
- Փորձաքննության ներկայացված բույսերի գլխիկները հանդիսանում են արդյոք կակաչի գլխիկներ, եթե այո, ապա ինչ տեսակի:
- Փորձաքննության ներկայացված բուսական ծագում ունեցող թփերը հանդիսանում են արդյոք կակաչի թփեր թե ոչ:
- Ներկայացված բույսերը պատկանում են արդյոք մշակումն արգելված բույսերի շարքին թե ոչ:

<u>Կենդանական ծագում ունեցող նյութերի (իրերի) փորձաքննություններ</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- կենդանիների մազերը:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- օբյեկտի դասի /կարգի/ որոշումը,
- փորձաքննության ներկայացվող օբյեկտների սեռային պատկանելիության որոշում, այսինքն՝ կենդանիների, որ տեսակին են դրանք պատկանում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Տնտեսական գործունեության արդյունքում կենդանական աշխարհին ի՞նչ չափի վնաս է հասցվել:
- Ապօրինի գործունեության արդյունքում կենդանական աշխարհին ի՞նչ չափի վնաս է պատճառվել:

<u>Մանրաթելերի և գործվածքների փորձաքննություններ</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- եզակի մանրաթելերը,
- տեքստիլ նյութերը /գործվածք, տրիկոտաժ, արհեստական մորթի/,
- առանձին տեքստիլ նյութերը, կամ դրանց հավաքածուն /անկողնային պարագաներ, գորգեր, ավտոմեքենաների նստատեղերի ծածկոցներ և այլ թելային ծագում ունեցող օբյեկտներ/:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- օբյեկտների վրա մանրաթելերի հայտնաբերում,

- համեմատվող օբյեկտների ընդհանուր սեռային /խմբային/ պատկանելիության որոշում,
- մասի պատկանելիությունն ամբողջական կտորին/ գործվածքին,
- հագուստների վրա վնասվածքների առաջացման պայմաններն ու պատճառները /մեխանիկական, ջերմային, քիմիական/,
- գործվածքի կազմի մեջ մտնող մանրաթելերի տեսակային պատկանելիության և տոկոսային հարաբերության որոշումը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Կան արդյոք ներկայացված հագուստների վրա օտար մանրաթելեր, եթե այո, ապա դրանք պիտանի են համեմատական հետազոտության համար, ինչպիսին է դրանց առաջացման մեխանիզմը:
- Եթե կան, ապա տուժողի հագուստների վրա հայտնաբերված օտար մանրաթելերը ունեն ընդհնուր սեռային /խմբային/ պատկանելիություն կասկածյալի հագուստի գործվածքի կազմի մեջ մտնող մանրաթելերի հետ, թե ոչ և հակառակը:
- Ներկայացված հագուստները և սպանության գործիքը գտնվել են արդյոք փոխադարձ շփման մեջ:
- Կան արդյոք հանցագործության գործիքի վրա մանրաթելեր, որոնք առաջացել են տուժողի հագուստի գործվացքի կազմի թելերից:

- Փորձաքննությանը ներկայացված գործվածքը ինչպիսի մանրաթելեյին կազմ ունի (բնական, քիմիական, խառը) և որոշել դրանց տոկոսային հարաբերությունը:
- Փորձաքննությանը ներկայացված գործվածքը (գործվածքները) համապատասխանում է (են) հաշիվ ապրանքագրում նշված գործվածքի (գործվածքների) ցուցանիշներին, թե ոչ:

§ 2.8. Ֆիզիկատեխնիկական հետազոտություններ և քիմիական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- ավտոմեքենաների, շինարարական, նկարչական ներկեր և լաքաներկապատ այլ օբյեկտներ,
- նավթամթերքներ և քսայուղեր,
- զարդեր, մետաղադրամներ, տարբեր մետաղական օբյեկտներ, հանքային ապարներ, հողային զանգվածներ և այլն,
- բուսական զանգվածներ, այդ թվում ծխախոտային խառնուրդներ, դեղահաբեր, պինդ, փոշենման և հեղուկ վիճակում գտնվող նյութեր, դատարկ տարաներ նյութերի հետքերով (ներարկիչներ, կաթոցիչներ, սրվակներ, թասեր և այլ կրիչներ),
- հեղուկ, պինդ և մածուցիկ վիճակում գտնվող նյութեր, քսվածքներ, մետաղանման օբյեկտներ, ցանկացած այլ ֆիզիկաքիմիական հատկանիշներով նյութեր:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- հետազոտելի լաքուներկերի և ծածկույթների տեսակի որոշում և նույնականացում,
- նավթամթերքների և քսայուղերի, դրանց հետքերի համեմատական հետազոտություն,
- հետազոտելի օբյեկտների մետաղական բաղադրակազմի որոշում,
- հետազոտելի օբյեկտներում թմրանյութերի և հոգեմետ, թունավոր նյութերի հայտնաբերում և դրանց քանակական որոշում,
- անհայտ ծագման նյութերի քիմիական բաղադրության որոշում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Փորձաքննության ներկայացված օբյեկտների (օրինակ՝ հագուստ, կոշիկ և այլն) վրա ավտոմեքենայի ներկածածկույթի քսվածքներ, միկրոմասնիկներ կան, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի որակական հատկանիշներ ունեն, քանի շերտերից են բաղկացած, համապատասխանում են արդյոք փորձաքննության ներկայացված ավտոմեքենայի ներկածածկույթին, թե՝ ոչ:
- Փորձաքննության ներկայացված ավտոմեքենաների վրա կան արդյոք փոխադարձ շփման հետևանքով առաջացած ներկածածկույթի քսվածքներ, թե ոչ, եթե այո, ապա օր. X ավտոմեքենայի վրա հայտնաբերված քսվածքը (քսվածքները) իր որակական հատկանիշնե-

րով, շերտերի քանակով համապատասխանում է օրինակ՝ Y ավտոմեքենայի ներկածածկույթին, թե՝ ոչ:

- Փորձաքննության ներկայացված օբյեկտների (օրինակ՝ հագուստ, կոշիկ և այլն) վրա ավտոմեքենայի քսայուղի (նավթամթերքի) հետքեր կան, թե՝ ոչ:
- Փորձաքննության ներկայացված օբյեկտը (օրինակ՝ մածուցիկ կամ թափանցիկ հեղուկ) հանդիսանում է արդյոք նավթամթերք, եթե այո, ապա ինչ տեսակի և քանակի:
- Փորձաքննության ներկայացված օբյեկտները (օրինակ՝ զարդեր, մետաղադրամներ, տարբեր մետաղական օբյեկտներ և այլն) ինչպիսի բաղադրություն ունեն/իրենց բաղադրության մեջ ինչ մետաղներ են պարունակում, որքան է դրանց տոկոսային պարունակությունը:
- Փորձաքննության ներկայացված օբյեկտների վրա (օրինակ՝ հագուստ և այլն) մետաղացման հետքեր կան, թե ոչ, եթե այո, ապա ինչ մետաղների կողմից են թողնված:
- Փորձաքննության ներկայացված նյութը թմրանյութ, հոգեմետ կամ թունավոր նյութ հանդիսանում է, թե՝ ոչ: Եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Եթե փորձաքննության ներկայացված նյութը թմրանյութ կամ հոգեմետ նյութ է, ապա որքան է կազմում դրա քաշը:
- Փորձաքննության ներկայացված նյութում որքան է կազմում թմրակտիվ կամ հոգեմետ ակտիվ բաղադրատարրերի պարունակությունը:

- Փորձաքննության ներկայացված օբյեկտների վրա թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի հետքեր կան, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Փորձաքննության ներկայացված ծխախոտի գլանակի մնացորդներում թմրանյութերի հետքեր կան, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Փորձաքննության ներկայացված նյութերը ունեն արդյոք ընդհանուր ծագման աղբյուր՝ ըստ աճման վայրի, պատրաստման եղանակի (տեխնոլոգիայի), պահպանման պայմանների և այլն:
- Փորձաքննության ներկայացված նյութերը կազմել են արդյոք մեկ ամբողջություն:
- Եթե փորձաքննության ներկայացված օբյեկտը թմրամիջոց կամ հոգեմետ/հոգեներգործուն/ նյութ է, ապա ինչ եղանակով է դա պատրաստվել, գործարանային, թե տնայնագործական:
- Պ.Պողոսյանի մոտից հայտնաբերված դեղնականաչավուն բուսական զանգվածը և Պ.Պետրոսյանի մոտից հայտնաբերված դեղնականաչավուն բուսական զանգվածը թմրամիջոց հանդիսանում են, թե՝ ոչ, եթե այո, ապա դրանք նույնասեռ են և նախկինում կազմել են արդյոք մեկ ամբողջություն, թե՝ ոչ:
- Փորձաքննության ներկայացված դատարկ սրվակում թմրամիջոցների հետքեր կան, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչ տեսակի և ինչ բաղադրությամբ թմրամիջոցների են:

- Փորձաքննության ներկայացված տարայում առկա նյութը, թունավոր նյութ հանդիսանում է, թե՝ ոչ, եթե այո, ապա՝ ինչ տեսակի:
- Փորձաքննության ներկայացված օբյեկտներում թունավոր նյութերի հետքեր առկա են, թե՝ ոչ, եթե այո, ապա՝ ինչ տեսակի:
- Փորձաքննության ներկայացված օբյեկտներն իրենց ֆիզիկաքիմիական հատկանիշներով համընկնում են արդյոք փորձաքննության ներկայացված համապատասխան գործարանային նմուշներին, թե՝ ոչ, եթե այո, ապա որ հատկանիշներով, եթե ոչ, ապա՝որ հատկանիշներով:
- Ինչ են իրենցից ներկայացնում և ինչպիսի քիմիական բաղադրություն ունեն փորձաքննության ներկայացված օբյեկտները (օրինակ՝ փոշենման զանգված, հեղուկ, մածուցիկ զանգված, քսվածքներ, մետաղանման օբյեկտներ, ցանկացած այլ ֆիզիկաքիմիական հատկանիշներով նյութեր):
- Փորձաքննության ներկայացված օբյեկտները (օդեկոլոններ, այլ բուրավետ նյութեր, յուրահատուկ հոտ կրող այլ օբյեկտներ) իրենց հոտաբանական հատկանիշներով համընկնում են արդյոք որպես նմուշ ներկայացված օբյեկտներին (գործարանային արտադրության օդեկոլոններ, այլ բուրավետ նյութեր, յուրահատուկ հոտ կրող այլ օբյեկտներ, դեպքի վայրից ներկայացված օդի նմուշներ և այլն), թե՝ ոչ, եթե այո, ապա՝ որ հատկանիշներով, եթե ոչ, ապա՝ որ հատկանիշներով:

ԴԱՏԱՔԻՄԻԱԿԱՆ (ԹՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ) ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- մեզ,
- արյուն,
- մազ:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- արյան փորձանմուշում թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի հայտնաբերում, նույնականացում, առկայության փաստի հաստատում ,
- արյան փորձանմուշում ալկոհոլի /էթիլ սպիրտի/ հայտնաբերում, առկայության փաստի հաստատում,
- մեզի փորձանմուշում թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի հայտնաբերում, նույնականացում, առկայության փաստի հաստատում,
- մեզի փորձանմուշում ալկոհոլի /էթիլ սպիրտի/ հայտնաբերում, առկայության փաստի հաստատում,
- մազի փորձանմուշում թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի հայտնաբերում, նույնականացում, առկայության փաստի հաստատում, օգտագործման վաղեմության գնահատում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Անձից վերցված մեզի փորձանմուշի մեջ հայտնաբերվել են արդյո՞ք թմրամիջոց հանդիսացող նյութ/-եր/ և/-կամ հոգեմետ/հոգեներգործուն/ նյութ/-եր/: Եթե այո, ապա՝ ի՞նչ տեսակի: Հնարավորության դեպքում պարզել

հայտնաբերված նյութի/երի/ օրգանիզմ ներմուծման հնարավոր ժամկետը:

- Անձից վերցված մազի փորձանմուշի մեջ հայտնաբերվել են արդյո՞ք թմրամիջոց հանդիսացող նյութ/-եր/ և/-կամ հոգեմետ/հոգեներգործուն/ նյութ/-եր/: Եթե այո, ապա՝ ի՞նչ տեսակի: Հնարավորության դեպքում պարզել հայտնաբերված նյութի/երի/ օրգանիզմ ներմուծման ժամկետը: Ինչպիսի՞ն է օգտագործման վաղեմությունը:
- Անձից վերցված արյան փորձանմուշի մեջ հայտնաբերվել են արդյո՞ք թմրամիջոց հանդիսացող նյութ/-եր/ և/-կամ հոգեմետ/հոգեներգործուն/ նյութ/-եր/: Եթե այո, ապա՝ ի՞նչ տեսակի: Հնարավորության դեպքում պարզել հայտնաբերված նյութի/երի/ օրգանիզմ ներմուծման հնարավոր ժամկետը:
- Անձից վերցված արյան փորձանմուշի մեջ հայտնաբերվել է արդյո՞ք ալկոհոլի՝ էթիլ սպիրտի առկայություն, եթե այո, ապա՝ ի՞նչ քանակի: Որոշել հարբածության աստիճանը և սթափությունը:
- Անձից վերցված մեզի փորձանմուշի մեջ հայտնաբերվել է արդյո՞ք ալկոհոլի՝ էթիլ սպիրտի առկայություն, եթե այո, ապա ի՞նչ քանակի: Համադրելով նույն ժամկետում նմուշառված արյան և մեզի մեջ հայտնաբերված էթիլ սպիրտի քանակները, պարզել հայտնաբերված էթիլ սպիրտի օրգանիզմ ներմուծման հնարավոր ժամկետը:

§ 2.9. Դատաձգաբանական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- գործարանային արտադրության և ինքնաշեն եղանակով պատրաստված, մինչև 12.7մմ տրամաչափի բոլոր տեսակի և մոդելների ձեռքի հրազեն (ինքնաձիգ, գնդացիր, ողորկափող հրացան, կարաբին և այլն),
- փամփուշտներ, փամփուշտի մաս հանդիսացող կրակված գնդակներ և պարկուճներ,
- կրակոցի հետևանքով տարբեր առարկաների և արգելքների վրա առաջացած հետքեր /բացառությամբ կենսաբանական ծագման օբյեկտներից՝ մարդ, կենդանի և այլն/:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

դասակարգման

- հրազենի կամ զինամթերքի հետազոտվող օբյեկտների պատկանելիության որոշումը

դիագնոստիկ

- զենքի տեսակի, մոդելի տրամաչափի պարզումը,
- զենքի պատրաստման եղանակի (գործարանային կամ ինքնաշեն) պարզումը,
- զենքի սարքինության և կրակելու համար պիտանելիության որոշումը,
- զենքի հրազենայնությունը,
- զենքի ձևափոխման և դրա մեջ առկա մասերի փոփոխման փաստի պարզումը,

- առաջադրված կոնկրետ պայմաններում, առանց ձգանը սեղմելու զենքից կրակոցի կատարման հնարավորության պարզումը,
- փամփուշտների տեսակի և մոդելի (գնդակներ, պարկուճներ) պարզումը,
- կրակելու համար փանփուշտների պիտանելիության պարզումը,
- որսորդական փամփուշտների լիցքավորման եղանակի (գործարանային կամ ինքնաշեն) պարզումը, նույնացման,
- փամփուշտներով, գնդակներով, պարկուճներով զենքի տեսակի որոշումը,
- զենքի կոնկրետ նմուշի որոշումը կրակված գնդակների և պարկուճների վրա առկա հետքերով,
- դետալների պատկանելիությունը կոնկրետ հրազենին,
- կրակված պարկուճների և գնդակների փոխպատկանելիությունը:

<u>իրավիճակային</u>

- կատարված կրակոցի ուղղության և հեռավորության պարզումը,
- վնասվածքն առաջացնող գնդակի տրամաչափի պարզումը,
- կրակոցի արգասիքների հայտնաբերումը,
- կրակոցի պահին զենքի և վնասված օբյեկտի փոխադարձ դիրքի որոշումը,
- արգելքի վրա հրազենային վնասվածքի առկայության փաստի պարզումը:

<u>վերականգնողական</u>

- հրազենի վրա ոչնչացված գործարանային գրառումների և դաջվածքների վերականգնում

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

/Զենքի հետազոտություն/

- Փորձաքննության ներկայացված առարկան հրազեն հանդիսանում է, թե՝ ոչ:
- Ինչ տեսակի, նմուշի է վերաբերվում տվյալ հրազենը:
- Փորձաքննության ներկայացված առարկան սարքին է, պիտանի է արդյոք կրակոց արձակելու համար, թե ոչ: Եթե անսարք է, ինչում է կայանում անսարքությունը:
- Ինչպիսին է ներկայացված հրազենի տրամաչափը:
- Գործարանային, թե տնայնագործական եղանակով է պատրաստված տվյալ հրազենը:
- Փորձաքննությանը ներկայացված զենքից առանց ձգանը սեղմելու ինքնաբերաբար հնարավոր է արդյոք կրակոց արձակվի, թե՝ ոչ:
- Հնարավոր է արդյոք ներկայացված զենքից կատարել կրակոց որոշակի տրամաչափի փամփուշտով:
- Ինչպիսին է տվյալ զենքի ներթափանցման ուժը /կամ թռիչքի առավելագույն հեռավորությունը, կամ նշանառու կրակոցների հեռավորությունը, ինչպիսի մահառու ուժ ունի/:
- Ինչ տեսակի զենքի մաս է հանդիսանում ներկայացված դետալը:

- Փորձաքննության ներկայացված զենքից վերջին մաքրումից հետո կրակոց արձակվել է, թե՝ ոչ:
- Վերջին մաքրումից հետո զենքի փողից կրակոց արձակվել է թե՝ ոչ:
- Վերջին կրակոցից հետո ինչքան ժամանակ է անցել:
- Չեն ենթարկվել արդյոք ոչնչացման զենքի մասերի վրա առկա դաջվածքները, եթե այո ապա կոնկրետ որոնք են ենթարկվել:
- Ինչ համարներ է ունեցել ներկայացված զենքը մինչև դրանց ոչնչացումը:
- Ինչն է հանդիսացել որսորդական հրացանի փողի պատռվածքի պատճառը:
- Օգտագործվել է արդյոք տվյալ պարկը հետազոտությանը ներկայացված հրազենը պահելու համար:
- Հնարավոր է արդյոք տվյալ զենքի նմուշից ինքն իրեն պատճառել հրազենային վնասվածք և եթե այո, ապա ինչ պայմաններում /եղանակով/:
- Ներկայացված զենքը վերափոխման ենթարկվել է, եթե այո, ապա որ դետալներն են փոխվել կամ վերափոխվել:

/Ռազմամթերքի, գնդակների, մանրագնդակների, կոտորակների, միջնորմերի, պարկուճների հետազոտություն/:

- Փորձաքննության ներկայացված պարկուճները և գնդակները ինչ մակնիշի և տրամաչափի են, ինչ մակնիշի և տրամաչափի հրազենից կրակելու համար են նախատեսված:

- Գործարանային, թե տնայնագործական եղանակով են պատրաստված և ինչ մակնիշի և տրամաչափի հրա-զենից են կրակված:
- Փորձաքննության ներկայացված պարկուճները և գնդակները նույն հրազենից են կրակված, թե՝ տար-բեր:
- Փորձաքննության ներկայացված պարկուճները և գնդակները չեն կրակվել արդյոք անհամապատաս-խան տրամաչափի զենքից:
- Եթե տարբեր հրազեններից են կրակված, ապա պար-զել, թե քանի հրազենից են կրակված և կրակված են արդյոք այն հրազենից, որի համար նախատեսված են, թե մեկ այլ տեսակի և տրամաչափի հրազենից:
- Փորձաքննության ներկայացված պարկուճը և գնդակը նախկինում մեկ ամբողջություն են կազմել, թե՝ ոչ:
- Նշված պարկուճը և գնդակը փորձաքննությանը ներ-կայացված զենքից են կրակված, թե՝ ոչ:
- Փորձաքննության ներկայացված փամփուշտներն ինչ մակնիշի և տրամաչափի են:
- Փորձաքննության ներկայացված փամփուշտները ինչ մակնիշի և տրամաչափի հրազենից կրակելու համար են նախատեսված:
- Փորձաքննության ներկայացված փամփուշտները գործարանային, թե տնայնագործական եղանակով են պատրաստված:
- Փորձաքննության ներկայացված փամփուշտները պի-տանի են կրակ արձակելու համար և ռազմամթերք հանդիսանում են, թե՝ ոչ:

- Ներկայացված գնդակը /պարկուճը/ կրակվել է ներկայացված զենքից, թե ոչ:
- Դեպքի վայրում հայտնաբերված կոտորակն ինչ համարի է, ինչ եղանակով է պատրաստված:
- Հայտնաբերված կոտորակն իր չափերով ու պատրաստման եղանակով համապատասխանում է ներկայացված կոտորակի չափերին:
- Ներկայացված առարկան հանդիսանում է արդյոք որսորդական փամփուշտի խից, ինչ տրամաչափի զենքից է այն կրակված:
- Ինչ վառոդով է եղել լիցքավորված փամփուծտը, որի մաս է հանդիսանում տվյալ պարկուճը:
- Ներկայացված մետաղի կտորը չի հանդիսանում արդյոք գնդակի մաս, եթե այո, ապա ինչ տիպի և նմուշի է վերաբերվում այդ գնդակը:
- Ինչպիսին է գնդակի վրա առկա դեֆորմացիայի /ների/ առաջացման պատճառը:
- Ինչպիսին է պարկուճի վրա առկա վնասվածքի /ների/ առաջացման պատճառը:
- Հետազոտման ներկայացված գնդակը ռիկոշետի ենթարկվել է, թե՝ ոչ:
- Ելնելով պարկուճի հատակին առկա հետքերից կրակելու ժամանակ վրիպում /օսեչկա/ տեղի ունեցել է, թե՝ ոչ:
- Չի պատրաստվել արդյոք ներկայացված ինքնաշեն արկը տվյալ առարկայի օգտագործմամբ:
- Ներկայացված ինքնաշեն արկի /ինքնաշեն գնդակի, կոտորակի, մանրագնդակի/ քիմիական բաղադրու-

թյունը միասեռ է արդյոք, որոշակի անձի մոտ խուզարկությամբ հայտնաբերված մետաղի կտորի հետ:

- Միասեռ են արդյոք իրենց համարով, պատրաստման եղանակով և քիմիական բաղադրությամբ տվյալ կոտորակը /կամ մանրագնդակը/ և ներկայացված նմուշը:
- Չի ծառայել արդյոք հետազոտման ենթակա առարկան որպես ինքնաշեն միջնորմ:
- Ինչ նյութից է պատրաստված միջնորմը:
- Չի հանդիսանում արդյոք միջնորմի նյութը ներկայացված առարկայի /թղթի կամ գործվածքի կտորի / մաս:
- Չեն պատրաստվել արդյոք տվյալ միջնորմերը միևնույն /թղթի, ստվարաթղթի կամ քաթանի կտոր/ առարկաներից:
- Դեպքի վայրում հայտնաբերված միջնորմի մասերը և փամփուշտի մեջ առկա միջնորմի մասերը չեն կազմել արդյոք նախկինում մեկ ամբողջություն:

/Կրակոցի հետքերի հետազոտություն/

- Առարկայի /արգելք, հագուստ, ավտոմեքենա/ վրա-հայտնաբերված վնասվածքն իր բնույթով հրազենային է, թե՝ ոչ:
- Չեն առաջացել արդյոք վնասվածքները գնդակով /կոտորակով, մանրագնդակով/:
- Քանի կրակոցի հետքեր կան հետազոտվող օբյեկտի վրա:
- Ինչ տրամաչափի գնդակի ազդեցությունից է առաջացել վնասվածքը:
- Ինչ տարածությունից է կատարվել կրակոցը:

- Տուժողի հագուստների վրա առկա են արդյոք մոտիկ տարածությունից կատարված կրակոցի հետքեր:
- Որտեղից է կատարվել կրակոցը:
- Ինչ ուղղությունից է/կամ անկյան տակ է/ կատարվել կրակոցը:
- Ինչպիսի ուղղություն ունի առարկայի վրա առկա վնասվածքի խողովակը:
- Տվյալ վնասվածքը հանդիսանում է գնդակի ներգործությունից առաջացած մուտքի, թե ելքի վնասվածք:
- Չեն առաջացել արդյոք վնասվածքները մեկ կրակոցի արդյունքում:
- Ելնելով հրազենային վնասվածքների բնույթից ինչ հաջորդականությամբ են պատճառվել վնասվածքները:
- Չի առաջացել արդյոք տվյալ վնասվածքը գնդակի ռիկոշետի հետևանքով:
- Ինչպիսի արկով է պատճառվել վնասվածքը /գնդակ, կոտորակ/:
- Ինչպիսի փոխադարձ դիրքում են գտնվել զենքը և վնասված օբյեկտը կրակոցի պահին: *Եթե վնասվածք կրողը մարդու մարմինն է, ապա հարցին պատասխանելու համար նշանակվում է դատաձգաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննություն:*
- Կարող էր արդյոք տուժողը ինքն իրեն վնասվածք պատճառեր տվյալ զենքից: *Տվյալ հարցին պատասխանելու համար նշանակվում է դատաձգաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննություն:*

- Առարկայի /արգելք, հագուստ, ավտոմեքենա/ վրա կան արդյոք կրակոցների արգասիքներ, թե՝ ոչ:

§ 2.10. Ձեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական փորձաքննություններ

1. <u>Ձեռագրաբանական փորձաքննություններ</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- ձեռագիր տեքստ /տառային, թվային/,
- կարճ գրառում /տառային, թվային/,
- ստորագրություն:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- նույնացում /իդենտիֆիկացիոն/,
- ախտորոշում /դիագնոստիկ/:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Ում կողմից /որոշակի անձանց շրջանակից/ են կատարվել տեքստը, առանձին գրառումները /տառային, թվային/:
- Միևնույն, թե տարբեր անձանց կողմից են կատարվել մի քանի փաստաթղթերում տեղավորված տեքստերը /առանձին գրառումները/, ստորագրությունները կամ միևնույն փաստաթղթի առանձին հատվածները:
- Ում կողմից է կատարվել որոշակի անձի անունից ստորագրությունը՝ իր, թե ենթադրյալ կատարողներից որևէ մեկի:

- Ինչ պայմաններում կամ ինչ վիճակում է կատարվել հետազոտելի տեքստը /ստորագրությունը/:
- Տեքստը կատարված չէ արդյոք դիտավորյալ փոփոխված ձեռագրով:

2.Հեղինակագիտական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- ձեռագիր և տպագիր տեքստերի հեղինակի գրավոր խոսքը:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- նույնացում /իդենտիֆիկացիոն/,
- ախտորոշում /դիագնոստիկ/:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Ով է հանդիսանում /որոշակի անձանց շրջանակից/ տպագիր կամ ձեռագիր տեքստի /դրա առանձին հատվածների/ հեղինակը:
- Միևնույն, թե տարբեր անձինք են հանդիսանում տպագիր կամ ձեռագիր տեքստերի /դրանց առանձին հատվածների/ հեղինակը:
- Ինչպիսին է տեքստի հեղինակի լեզվային մշակույթի և կրթության մակարդակը:

3.Փաստաթղթաբանական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- ցանկացած տեսակի փաստաթղթեր,

- փաստաթղթերի պատրաստման միջոց հանդիսացող սարք-սարքավորումներ և գործիքներ:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- փաստաթղթերի և/կամ ռեկվիզիտների իսկության համապատասխանելիության ուսումնասիրության,
- նույնականացում,
- փաստաթղթերում առկա ձեռագիր գրառումների և ստորագրությունների կատարման վաղեմության որոշում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

/Փաստաթղթի պատրաստման եղանակի և միջոցի/

- Ինչ եղանակով են պատրաստված փաստաթղթի ձևաթղթերը (Պոլիգրաֆիական, քսերոպատճենահանման, համակարգչային տպիչներով և այլն):
- Փորձաքննությանը ներկայացված փաստաթղթերը պատրաստվել են արդյոք միևնույն եղանակով:
- Հետազոտելի փաստաթղթի պատրաստմանը չի օգտագործվել արդյոք մեկ այլ փաստաթղթի հատվածներ:
- Ներկայացված թղթադրամները կամ արժեթղթերը համապատասխանում են դրանց թողարկման պետական ստանդարտներին, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչ եղանակով են դրանք պատրաստված:
- Փաստաթղթում առկա կնիքի և շտամպի դրոշմները, ինչ եղանակով են կատարվել:

/Սկզբնական բովանդակության վերականգնում/

- Փաստաթղթում առկա գրառումները ենթարկվել են արդյոք կերագծման, ջնջման կամ վերծածկվել ներկայութերով, եթե այո, ապա կոնկրետ որ գրառումները:
- Ինչ բովանդակություն ունեն գունազրկված փաստաթղթում առկա գրառումները, կնիքի և շտամպի դրոշմները:
- Առկա են արդյոք տեքստի ներհիրված պատկերներ նախորդ և հաջորդ էջերում:
- Ինչպիսին է եղել այրված փաստաթղթում առկա գրառումների բովանդակությունը:
- Ինչպիսին են եղել պատառոտված փաստաթղթերի սկզբնական տեսքը և բովանդակությունը:

/Մասերի կատարման հաջորդականության/

- Ներկայացված փաստաթղթում ինչ հերթականությամբ են կատարված կնիքի /շտամպի/ դրոշմները, ձեռագիր և տպագիր գրառումները:

/Մեքենագրական և համակարգչային տեքստի/

- Փորձաքննությանը ներկայացված փաստաթղթում առկա տպագիր գրառումներն ինչ եղանակով են կատարվել՝ մեքենագրական, թե՝ համակարգչային:

/Լրացուցիչ տպագրման եղանակով տեքստի փոփոխման փաստի որոշում/

- Ներկայացված փաստաթղթում առկա են արդյոք հավելագրված գրառումներ, նշաններ, թվեր և այլն, եթե այո, ապա որ հատվածներում ինչպիսին է եղել սկզբնական բովանդակությունը կամ գրառումը:

- Ներկայացված փաստաթղթում առկա գրառումները կատարվել են միևնույն գրելագործիքով /ներկանյութով/, թե՝ ոչ:

/Գրամեքենայի նույնացում/

- Ներկայացված փաստաթուղթը կամ կոնկրետ հատվածը կատարված են արդյոք ներկայացված գրամեքենայով:
- Ներկայացված փաստաթղթերը կամ կոնկրետ հատվածները կատարված են արդյոք միևնույն գրամեքենայով, թե՝ ոչ:

/Տպագրական սարքի տեսակի որոշում/

- Ինչ եղանակով է կատարված ներկայացված փաստաթուղթը՝ տպարանային, քսերոպատճենահանման, մեքենագրական, համակարգչային (շիթային, լազերային) տպիչով, թե մեկ այլ եղանակով:

/Համակարգչի տպիչի նույնացում/

- Փորձաքննությանը ներկայացված փաստաթուղթը կատարվել է արդյոք ներկայացված համակարգչային տպիչով, թե ոչ:
- Փորձաքննությանը ներկայացված փաստաթղթերը կատարվել են արդյոք միևնույն համակարգչային տպիչով, թե ոչ:

/Կնիքների և դրոշմակնիքների հետազոտություն, դրոշմի նույնացում և կնիքի դրոշմի պատրաստման եղանակի որոշում/

- Փորձաքննությանը ներկայացված փաստաթղթում առկա կնիքի /շտամպի/ դրոշմն ինչ եղանակով է կատարված:

- Փորձաքննության ներկայացված փաստաթղթում առկա կնիքի /շտամպի/ դրոշմը կատարված է արդյոք ներկայացված կնիքով /շտամպով/, թե՝ ոչ:
- Ինչ եղանակով է կատարվել կնիքի դրոշմը՝ համակարգչային տպիչի, քսերոպատճենահանման, թե՝ մեկ այլ եղանակով:
- Եթե դրոշմը կատարվել է համակարգչային տպիչով, ապա ինչպիսի /լազերային, թե շիթային/:

/Պատառոտված և այրված փաստաթղթերի մասով/

- Ինչպիսին է եղել այրված փաստաթղթում առկա գրառումների բովանդակությունը:
- Ինչպիսին են եղել պատառոտված փաստաթղթերի սկզբնական տեսքը և բովանդակությունը.
- Փորձաքննությանը ներկայացված պատառոտված փաստաթղթերի մասնիկները նախկինում կազմել են մեկ ամբողջություն, թե՝ ոչ:

/Դրոշմանիշերի և արժեթղթերի /ալկոհոլային խմիչքների և ծխախոտի ակցիզային դրոշմանիշերի/ հետազոտություն/

- Ներկայացված թղթադրամները, մետաղադրամները կամ արժեթղթերը համապատասխանում են պետական ստանդարտներին, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչ եղանակով են դրանք պատրաստված:

/Փաստաթղթի նյութի նույնացում/

- Ներկայացված տեքստի բոլոր հատվածները կատարվել են նույն ներկանյութով, կամ գրելագործիքով, թե՝ ոչ, եթե ոչ, ապա որ հատվածն ինչպիսի ներկանյութով կամ գրելագործիքով է կատարված:

- Փորձաքննության ներկայացված փաստաթղթի թուղթն իր որակով և բաղադրությամբ արդյոք տարբերվում է ներկայացված նմուշների թղթի որակից և բաղադրությունից:

/Վաղեմության հետազոտություն/

- Փաստաթղթում առկա ձեռագիր գրառումները (ստորագրությունները) երբ են կատարվել:

§ 2.11. Ճարտարագիտատեխնիկական փորձաքննություններ

Կազմակերպության ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնում հիմնականում իրականացվում են նախաձեռնող մարմնի որոշմամբ նշանակված՝ շինարարության բնագավառում, արդյունաբերության որոշ ճյուղերում տեղի ունեցած արտադրական դժբախտ դեպքերի վերաբերյալ՝ անվտանգության տեխնիկայի դատատեխնիկական փորձաքննություններ: Բաժնում կատարվում են նաև բնական գազով աշխատող գազասարքավորումների, գազատեղակայանքների շահագործման պայմանների խախտումների հետևանքով առաջացած՝ մարդկանց ածխածնի մոնոքսիդից (շմոլ գազից) թունավորման, մահվան դեպքերի, ինչպես նաև հեղուկ կամ բնական գազի արտահոսքի և այն փակ տարածքում կուտակման հետևանքով տեղի ունեցած պայթյունների, ավտոգազալցակայաններում տարբեր տեսակի պայթյունների (*ավտոմեքենաների լիցքավորման ժամանակ, կամ լցակայանի սարքավորումների սրահում*) վերաբերյալ նախապատրաստված նյութերով, կամ արդեն իսկ հարուցված քրեական գործերով փորձաքննություններ:

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- սարքեր, սարքավորումներ, մեքենաներ, գործիքներ, հոսքային գծեր,
- նրանց մասեր և բեկորներ,
- անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ,
- հումք, նյութեր, արդյունաբերական արտադրանք,
- փաստաթղթեր /ակտեր, լուսանկարներ, գծագրեր/,
- անվտանգության տեխնիկայի հրահանգներ և կանոններ,
- սարքավորումների, սարքերի փաստաթղթեր և այլն։

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- սարքերի, սարքավորումների, հոսքային գծերի և մեքենաների վիճակի որոշում, նրանց պիտանելիության ստուգում հետագա աշխատանքների համար և անսարքությունների ու խափանումների պատճառների հայտնաբերում,
- արտադրությունում, շինարարությունում, գազի տնտեսությունում, կենցաղ-սպասարկման և այլ բնագավառներում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտման և դրանց հետևանքով տեղի ունեցած վթարների կամ դժբախտ դեպքերի միջև պատճառահետևանքային կապի որոշում,
- արտադրությունում տեխնոլոգիական պրոցեսների ուսումնասիրություն և դրանց շեղումների պատճառների բացահայտում,

- հավաքակցման, վերանորոգման և այլ աշխատանքների ժամանակ օգտագործվող արդյունաբերական արտադրանքի որակի որոշում,
- դժբախտ դեպքերի և վթարների մեխանիզմների բացահայտում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Ինչն է հանդիսանում դեպքի անմիջական պատճառը:
- Անվտանգության տեխնիկայի կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումներ թույլ տրվել են, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի և ում կողմից /գործատուի կամ տուժողի/, կոնկրետ ինչ խախտումներ են թույլ տրվել:
- Դեպքի պատճառ կարող էր հանդիսանալ աշխատանքային տեղի կամ աշխատանքային գրաֆիկի որ ճիշտ կազմակերպումը, թե՝ ոչ:
- Դատելով դժբախտ դեպքի վայրի իրադրությունից պաշտպանական միջոցներ /նաև անհատական պաշտպանիչ միջոցներ/ եղել են, թե՝ ոչ, եթե այո, ապա դրանք համապատասխանում են արդյոք անվտանգության տեխնիկայի պահանջներին:
- Առկա է արդյոք պատճառահետևանքային կապ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների և տեղի ունեցած դժբախտ դեպքի միջև, եթե այո, ապա ով է հանդիսացել աշխատանքի անվտանգության ապահովման պատասխանատու անձը:
- Տվյալ բնակարանի (առանձնատան) ներտնային գազամատակարարման համակարգի գազաֆիկացման, շա-

հագործման, գազօգտագործման անվտանգության կանոնները համապատասխանում են տեխնիկական կանոնակարգի պահանջներին, թե խախտված են, եթե խախտված են ապա ում կողմից՝ մատակարարի թե սպառողի, սպասարկողի կողմից անհրաժեշտ տեխնիական սպասարկում կատարելու դեպքում հնարավոր էր խախտումները բացահայտվեին, թե՝ ոչ:

- Որն է ներտնային գազամատակարաման համակարգում տեղադրված գազասարքավորումներից բնական գազի արտահոսքի կամ թերայրման անմիջական տեխնիկական պատճառը:
- Տեղի ունեցած պատահարը (թունավորումը) ինչպիսի խախտումների հետևանքով է առաջացել, ովքեր են պատասխանատու բացահայտված խախտումների համար:
- Կազմակերպության ներկաթսայատան գազասպառման համակարգում կան խախտումներ՝ առկա են կատարողա-տեխնիկական փաստաթղթեր, նախագծերը կազմվել են տրված տեխնիկական պայմանների և պահանջներին համապատասխան:
- Ներկաթսայատան գազի կաթսաների այրման համար օդի մատուցման, օդափոխության և այրման արգասիքների /ծխագազերի/ հեռացման համակարգերը համապատասխանում են արդյոք տեխնիկական կանոնակարգի պահանջներին, թե՝ ոչ:
- Ստորգետնյա և վերգետնյա գազատարի տեխնիկական սպասարկման աշխատանքները կատարվել են տեխնիկական կանոնակարգի, գազի տնտեսության

անվտանգության նորմեր սահմանող այլ տեխ. կանոնների և կազմակերպության ստանդարտներին համապատասխան, թե՝ ոչ։

- Ստորգետնյա և վերգետնյա գազատարի շահագործման ընթացքում պրոֆիլակտիկ պլանային վերանորոգման, ախտորոշման և տեխ. վիճակի գնահատում իրականացվել է, թե՝ոչ;
- Ներտնային գազսպառման համակարգում պարբերաբար տեխնիկական սպասարկում, սեզոնային տեխ. սպասարկում իրականացվել է, թե՝ ոչ, եթե այո, ապա այն իրականացվել է ըստ սպասարկող կազմակերպության ստանդարտի պահանջներին համապատասխան, թե ոչ, եթե ոչ, ապա ինչումն է կայացել թերացումները։

§ 2.12. Դատահետքաբանական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- մարդու կողմից թողնված հետքեր՝ ձեռքի հետքեր, ոտնահետքեր, ատամների, շրթունքների, մաշկածածկույթի, եղունգների կողմից թողնված հետքեր,
- կենդանիների կողմից թողնված հետքեր՝ ատամների, ճանկերի, թաթերի և այլն,
- գործիքների և մեխանիզմների կողմից թողնված հետքերի /մեխանոսկոպիա/ սարքավորումների և դրանց բաղկացուցիչ տարրերի կողմից թողնված հետքեր, փականներ, կնիքներ, մասսայական թողարկման արտադրանքներ, հագուստներ և դրանց վրա առկա հետքեր, ձեռնոցներ և դրանց կողմից թողնված հետքեր,

- տրանսպորտային միջոցների և դրանց դետալների կողմից թողնված հետքեր՝ տրանսպորտային հետքաբանական նույնականացում:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

նույնականացող /իդենտիֆիկացիոն/

- օբյեկտի կողմից թողնված հետքերով նույնականացում և խմբային պատկանելիության՝ այդ թվում ծագման ընդհանուր աղբյուրի որոշում,

դիագնոստիկ

- հետքերի առաջացման մեխանիզմի որոշում՝ հետքերի առաջացման պահին օբյեկտների փոխազդեցությունը,

սառը և նետողական զենքի հետազոտություն

- ներկայացված առարկայի սառը զենքի պատկանելիության խնդրի, տեսակի, պատրաստման եղանակի, որոշում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

/Մարդու կողմից թողնված հետքեր/.

- Ներկայացված առարկաների վրա կա արդյոք մարդու ձեռքի հետք: Եթե այո, ապա դրանք պիտանի են նույնացման համար, թե՝ ոչ: Եթե պիտանի են թողնված են արդյոք փորձաքննությանը ներկայացված «Ա»-ի կողմից, թե մեկ այլ անձի կամ անձանց կողմից:
- Ում կողմից են թողնված ներկայացված առարկայի վրա հայտնաբերված ձեռքի հետքերը:
- Որ ձեռքով (ձեռքի որ հատվածով), որ մատով է թողնված հետքերը՝ ներկայացված օբյեկյեկտի վրա:

- Հետքերի առաջացման մեխանիզմը, ինչ գործողության արդյունքում են թողնվել:
- Մարդու ոտքի, կոշիկի, թե կենդանու հետք է հանդիսանում փորձաքննությանը ներկայացված հետքը:
- Չի հանդիսանում ներկայացված հետքը, մարդու բոբիկ ոտքի հետք, եթե այո, ապա այն չի հանդիսանում արդյոք «Ա»-ի ոտնահետքը:
- Ինչ մոդելի և տեսակի կոշիկով է թողնված հետքը, ոտքի չափերը:
- Նույն, թե տարբեր կոշիկով է թողնված դեպքի վայրում հայտնաբերված հետքերը:
- Չեն թողնվել արդյոք դեպքի վայրում հայտնաբերված հետքերը քաղ. «Բ»-ի կոշիկներով:

/Առարկաների, գործիքների և մեխանիզմների կողմից առաջացած հետքեր/

- Ներկայացված օբյեկտի վրա կան արդյոք կողմնակի առարկայի ներգործության հետքեր:
- Պիտանի է արդյոք ներկայացված հետքը համեմատական հետազոտության համար:
- Ինչ գործողության հետևանքով է առաջացել հետքը:
- Ինչ տեսակի գործիքի ներգործության հետևանքով է առաջացել հետքը:
- Մեկ թե մի քանի գործիքների ներգործության միջոցով է առաջացել հետքը (հետքերը):
- Պատրաստված են արդյոք ներկայացված առարկաները նույն սարքավորումների վրա կամ նույն գործիքի օգնությամբ (ներգործությամբ):

- Որ շաղախով է շաղախվել ներկայացված օբյեկտը (Այս հարցը լուծվում է միայն այն դեպքում, երբ անցքը մինչև վերջ բացված չէ):
- Ինչ ուղղության ներգործության հետևանքով են առաջացել գործիքի կամ սարքավորման հետքերը:

/Կողպեքների և փականների հետազոտություն/

- Ներկայացված կողպեքի մեխանիզմը սարքին վիճակում է, թե՝ ոչ, եթե ոչ ինչն է անսարքության պատճառը: Որքանով է ազդում անսարքությունը կողպեքի պահպանական հատկության վրա:
- Ներկայացված կողպեքի մեխանիզմի տարրերի (դետալների) վրա կա արդյոք կողմնակի առարկայի թողնված հետք (հետքեր), այդ հետքերը կարող էին առաջանալ կողմնակի առարկայի ներգործության հետևանքով:
- Բացվել է կամ կարող էր բացվել կողպեքը ներկայացված բանալիով, առարկայով, ագռավուկով:
- Ինչ գործողությունների հետևանքով են վնասվել կողպեքը, ինչ եղանակով է այն բացվել:
- Ինչ տիպի գործիքով է թողնված հետքերը կողպեքի վրա կամ ջարդվել կողպեքը:
- Չի ջարդվել արդյոք կողպեքը ներկայացված գործիքի ներգործության հետևանքով:
- Հնարավոր է բացել հսկիչ կողպեքը՝ առանց խախտելու հսկիչ ներդրված թերթը:
- Գտնվել է արդյոք հետազոտման ներկայացված կողպեքը շահագործման մեջ:

/Հագուստի հետազոտություն/

- Հանդիսանում են արդյոք հայտնաբերված հետքերը հագուստի կողմից թողնված, եթե այո, ապա պիտանի են արդյոք համեմատական հետազոտության համար:
- Ինչ բնույթի վնասվածքներ կան հագուստի վրա:
- Ինչ տիպի գործիքի, առարկայի ներգործության հետևանքով են առաջացել հետքերը:
- Վնասվածքները կարող էին առաջանալ հետազոտության ներկայացված առարկյի միջոցով:
- Հագուստի վրա առկա հետքերը և վնասվածքները առաջացե են ներկայացված առարկայի ներգործության հետևանքով:
- Հետազոտության ներկայացված հետքերում հանդիսանում են արդյոք ձեռնոցի հետք, եթե այո ապա հետքերը, պիտանի են նույնացման համար թե ոչ:

/Ձեռնոցներ հետազոտություն/

- Ինչ տիպի և տեսակի (գործվածք, կաշվե, ռետինե) ձեռնոցի միջոցով են թողնված հետքերը:
- Ինչպիսի գործողության հետևանքով են առաջացել հետքերը:
- Չեն առաջացել արդյոք հետազոտվող հետքերը կասկածյալի մոտից առգրավված ձեռնոցից:

/Լայն սպառման արտադրության օբյեկտների հետազոտություն/

- Ինչ սարքավորման վրա (միջոցով) է պատրաստվել ներկայացված արտադրանքը:
- Դեպքի վայրում հայտնաբերված արտադրանքի տեսակները և առգրավված արտադրանքի տեսակները

պատրաստված չեն արդյոք նույն սարքավորման կամ դրա առանձին մասերի օգտագործմամբ:

/Մասերով ամբողջի որոշում/

- Ներկայացված օբյեկտն ինչ առարկայի մաս է կազմում:
- Ներկայացված օբյեկտները նախկինում մեկ ամբողջություն կազմել են թե՝ ոչ:
- Ինչ եղանակով են մասնատված առարկայի մասերը:
- Հետազոտվող օբյեկտները կարող էին մասնատվել ներկայացված առարկայով (գործիքով):

/Խցանափակման հետազոտություն/

- Ինչ եղանակով (մեխանիզմով) է կատարված խցանափակումը, ինչպիսի սարքավորումներ կարող էին օգտագործվել:
- Տարբեր խմբաքանակներից վերցված նմուշները խցանափակված չեն արդյոք նույն սարքավորումով:
- Ինչ եղանակով, գործարանային, թե ինքնաշեն սարքավորման միջոցով են խցանափակված ներկայացված իրեղեն ապացույցները:
- Հետազոտվող օբյեկտների վրա պիտակները փակցված են գործարանային, թե ինքնարար եղանակով:

/Տրանսպորտային միջոցների հետքերի փորձաքննություն/

- Ենթարկվել են փոփոխության կամ ոչնչացվել է նույնացման համարները՝ ներկայացված տրանսպորտային միջոցի թափքի վրա, եթե այո, ապա ինչ բովանդակություն է ունեցել համարը:
- Ենթարկվել են փոփոխության կամ ոչնչացվել է նույնացման համարները՝ ներկայացված տրանսպոր-

տային միջոցի շարժիչի վրա, եթե այո, ապա ինչ բովանդակություն է ունեցել համարը:

- Նույնացման համարների տեղադրման հարթակի վրա առկա են արդյոք մեխանիկական ներգործության հետքեր, եթե այո ապա ինչ գործիքով կամ սարքավորումով են դրանք առաջացել:
- Պարզել ներկայացված ավտոմեքենայի արտադրության տարին մոդելը և տեսակը:
- Ներկայացված ավտոմեքենայի վրա ինչպիսի վնասվածքներ կան, որտեղ են տեղակայված և ինչի հետևանքով են առաջացել:
- Ավտոմեքենայի վրա վրաերթին բնորոշ վնասվածքներ կան թե՝ ոչ, եթե այո, ապա դրանք որտեղ են տեղակայված:
- Ավտոմեքենայի վրա վերատեղադրված, փոխարինված դետալներ կան թե՝ ոչ:
- Ներկայացված բեկորները հանդիսանում են ավտոմեքենայի վրա տեղադրվող դետալի բեկորներ, թե՝ ոչ:

<u>/Սառը զենքի հետազոտություն/</u>

- Փորձաքննությանը ներկայացված դանակը հանդիսանում է արդյոք սառը զենք, թե՝ ոչ:
- Ինչ եղանակով է պատրաստված ներկայացված դանակը:
- Ծակող կտրող գործիք (օրինակ սուրիկեն) քաղաքացուց առգրավված առարկան հանդիսանում է արդյոք սառը զենք թե՝ ոչ: Փորձաքննության ներկայացված մետաղյա թիթեղները հանդիսանում են արդյոք սառը զենք, թե՝ ոչ:

- Ինչ տարատեսակի զենք են համարվում:
- Ներկայացված թիթեղներն ինչ եղանակով են պատրաստված:
- Ջարդող-փշրող գործիքներ (օրինակ նունչակներ) քաղաքացի –յանից առգրավված առարկան հանդիսանում է արդյոք սառը զենք, թե՝ ոչ:
- Ինչ եղանակով է պատրաստված տվյալ առարկան:

§ 2.13. Ավտոտեխնիկական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- տրանսպորտային միջոցները (ՏՄ) (բացառությամբ երկաթգծային, օդային և ջրային տրանսպորտի), տրանսպորտային կցորդները և կիսակցորդները, ՏՄ-ի դետալները, հանգույցները, ագրեգատները,
- ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը, պատահարի վայրում թողնված հետքերը, քրեական գործի նյութերը, որոնք չեն պահանջում իրավական գնահատում (ճանապարհատրանսպորտային դեպքի վայրի զննության,
- տրանսպորտային միջոցի զննության և այլ իրեղեն ապացույցների զննության և քննչական փորձարարության մասին արձանագրությունները):

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

ՃՏՊ-ի հանգամանքների հետազոտության

- ՏՄ-ի շարժման արագությունների և ուղղությունների որոշումը,

- ընդհարված ՏՄ-ի միջև ազդող ուժերի ուղղությունների որոշումը,
- ՏՄ-ի արգելակային և կանգառման ուղիների, ինչպես նաև կանգառման ժամանակի որոշումը,
- դեպքի վայրից ՏՄ-ի, հետիոտների և այլ օբյեկտների հեռավորության որոշումը քննությամբ (դատարանի) առաջադրված պահերին,
- արգելակմամբ կամ շրջանցմամբ ՃՏՊ-ի կանխման տեխնիկական հնարավորության որոշումը քննությամբ (դատարանի) առաջադրված պահերին,
- ՃՏՊ-ի տարբեր պահերին ՏՄ-ների փոխադարձ դիրքերի որոշումը,
- ՏՄ-ների կողմից որոշակի կոնկրետ տեղամասերի հաղթահարման ժամանակի որոշումը,
- երթևեկության համար վտանգի առաջացման պահի որոշումը, եթե դրա համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջվող վերլուծություններ,
- ՏՄ-ի և խոչընդոտի փոխադարձ դիրքերի որոշմումն այն պահին, երբ դեռ վարորդն ունեցել է պատահարը կանխելու տեխնիկական հնարավորություն,
- երթևեկության անվտանգության ապահովման տեսակետից «Ճանապարհային երթևեկության կանոնների» (ՃԵԿ) և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» (ՃԵԱԱՄ) ՀՀ օրենքի որ պահանջներով պետք է ղեկավարվեր վարորդը և ինչպես նա պետք է գործեր ստեղծված ՃՏՊ-ի հանգամանքներում,

- ՏՄ-ի կառավարման հետ կապված վարորդի կոնկրետ ինչպիսի գործողությունները, սկսած երթևեկության համար վտանգի առաջացման պահից, կարող էին կանխել ՃՏՊ-ի առաջացումը և դրանք ՃԵԿ-ի կամ ՃԵԱԱՄ ՀՀ օրենքի կոնկրետ որ պահանջներով են նախատեսված,
- տեխնիկական տեսակետից վարորդի գործողությունների համապատասխանությունը (անհամապատասխանությունը) ՃԵԿ-ի կամ ՃԵԱԱՄ ՀՀ օրենքի տեխնիկական պահանջներին,
- տեխնիկական տեսակետից վարորդի գործողությունների (անգործության) և պատահարի առաջգման միջև եղած պատճառական կապի պարզումը,
- ճանապարհի երթևեկելի մասի կցման որակի որոշումը;
- ճանապարհի երթևեկելի մասի կցման որակի համապատասխանելիության որոշումը տեխնիկա-նորմատիվային փաստաթղթերի պահանջներին,
- ճանապարհային նշանների և նշագծումների տեղաբաշխման համապատասխանելիության որոշումը տեխնիկա-նորմատիվային փաստաթղթերի պահանջներին,
- ՏՄ-ի վարորդի տեղից դիտողականության և տեսանելիության որոշումը՝ հաշվի առնելով ՃՏՊ-ի վայրի լանդշաֆտը (բնապատկերը) և ճանապարհի պրոֆիլը,
- ճանապարհի անբավարար վիճակի և ՃՏՊ-ի միջև պատճառական կապի որոշումը

<u>ՏՄ-ների տեխնիկական վիճակի</u>

- ՏՄ-ների, դրանց դետալների, հանգույցների և ագրեգատների տեխնիկական վիճակի, աշխատունակության, դրանց շահագործման համար պիտանելիության պարզումը,
- անսարքությունների առաջացման պատճառների ու ժամանակի, դրանց հայտնաբերման հնարավորության պարզումը,
- անսարքությունների և տեղի ունեցած ՃՏՊ-ի առաջացման միջև պատճառական կապի որոշումը:

<u>Տրանսպորտային հետքաբանական</u>

- ՃՏՊ-ի մեխանիզմի որոշումը,
- ընդհարման ժամանակ ՏՄ-ների փոխազդեցության մեխանիզմի որոշումը,
- հետիոտների (կենդանիների) և անշարժ խոչընդոտների նկատմամբ վրաերթի մեխանիզմի որոշումը,
- ընդհարման պահին ՏՄ-ի փոխադարձ դիրքի անկյան և հարվածի ուղղության որոշումը,
- երթևեկելի մասի սահմանների և առանցքի նկատմամբ ՏՄ-ների փոխադարձ դասավորվածության որոշումը,
- ՏՄ-ների ընմդհարման կամ հետիոտների նկատմամբ վրաերթի տեղի որոշումը,
- ընդհարման ժամանակ ՏՄ-ի շարժման մեջ գտնվելու կամ անշարժ լինելու փաստի պարզումը,
- ՏՄ-ի վրա հետիոտներին վնասվածքների հասցման տեղի որոշումը,

- ՏՄ-ի վրա առկա վնասվածքների բնույթով վթարի պահին ՏՄ-ի սրահում առկա անձանց գտնվելու տեղի որոշումը,
- ընդհարման սկզբնապահին ՏՄ-ների միմյանց հետ հպման մեջ մտած մասերի պարզումը,
- ՏՄ-ի անվադողերի, արգելակային ճկուն խողովակների ու պարուրակային միացությունների վնասման առկայության, ժամանակի և պատճառների որոշումը,
- ՃՏՊ-ից հետո ՏՄ-ի դետալների անսարքությունների առաջացման փաստի որոշումը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Տրանսպորտային միջոցներից յուրաքանչյուրի ավտովարորդը ՃԵԿ-ի պահանջներին հակասող գործողություններ թույլ տվել է, թե՝ ոչ, եթե այո, ապա ում կողմից, ինչպիսի խախտումներ են թույլ տրվել և դրանք ինչ պատճառական կապի մեջ են գտնվում տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման հետ:
- Առաջադրված պայմաններում՝ տեխնիկական տեսակետից երթևեկության մասնակից տրանսպորտային միջոցների վարորդներից կոնկրետ որի գործողություններով է պայմանավորված եղել վթարային իրավիճակի առաջացումը:
- Տեխնիկական տեսակետից երբ է առաջացել վտանգավոր իրավիճակը և վարորդներից յուրաքանչյուրն առանձին պատահարը կանխելու տեխնիկական հնա-

բավորություն ունեցել է, թե՝ ոչ, եթե այո, ապա այդ նպատակով ինչ գործողությունների պետք է դիմեր, որ չի դիմել, և ՃԵԿի որ կետերով պետք է ղեկավարվեր, որ չի ղեկավարվել:

- Ըստ դեպքի վայրում առկա հետքերի՝ /արգելակման, գլորման, սահքի/ որոշել ընդհարմանը մասնակից տրանսպորտային միջոցների արագությունները պատահարին նախորդող պահին և հետագա հետազոտությունը կատարել փորձագիտական հետազոտությամբ որոշված արագությամբ:
- Եթե պատահարի պարագաներում վարորդի ընտրած արագությունը գերազանցում է առկա պայմանների համար սահմանված թույլատրելի առավելագույն արագությունը, ապա նշված հանգամանքը տվյալ պատահարի առաջացման հետ տեխնիկական տեսակետից պատճառական կապի մեջ է, թե՝ ոչ:
- Ինչպիսին է փորձաքննությանը տրամադրված տրանսպորտային միջոցների ղեկային և արգելակային համակարգերի տեխնիկական վիճակը և ընդհանրապես, նշված տրանսպորտային միջոցները որևէ տեխնիկական անսարքություն ունեն, թե՝ ոչ, եթե այո, ապա դրանք երբ են առաջացել և ինչի հետևանքով:
- Եթե հայտնաբերվել են անսարքություններ, ապա դրանք պատահարի առաջացման պատճառ հանդիսացել են, թե՝ ոչ:
- Եթե հայտնաբերվել են տեխնիկական անսարքություններ և դրանք առաջացել են պատահարին նախորդող պահին կամ գոյություն են ունեցել մինչև պատահարը,

ապա վարորդը նախապես կարող էր դրանք հայտնաբերել, թե՝ ոչ:

- Տվյալ ճանապարհատրանսպորտային իրադրության պայմաններում տրանսպորտային միջոցի վարորդը վրաերթը կանխելու տեխնիկական հնարավորություն ունեցել է, թե՝ ոչ,
- Տեխնիկական տեսակետից հետիոտնը ՃԵԿ-ի պահանջներին հակասող գործողություններ թույլ տվել են, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչումն է այն արտահայտվել
- Տրանսպորտային միջոցի վարորդը արգելակման, կողանցման /շրջանցման/ միջոցով հնարավորություն ունեցել է արդյոք կանխելու տվյալ վթարի և կամ վրաերթի առաջացումը:
- Տրանսպորտային միջոցի /ների/ վարորդի կողմից ընտրած արագությունը համապատասխանում է տվյալ պայմանների /ճանապարհային, մթնոլորտային/ համար սահմանված արագությանը թե՝ ոչ, եթե ոչ ապա, վարորդի կողմից ընտրած արագությունը պատճառական կապի մեջ է արդյոք վթարի /վրաերթի/ առաջացման հետ, թե՝ ոչ:

§ 2.14. Մշակութաբանական փորձաքննություններ

Կերպարվեստի բնագավառի փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- գեղանկարներ,
- գրաֆիկական աշխատանքներ,
- օֆորտներ,

- լիտոգրաֆիաներ,
- քանդակներ,
- սրբապատկերներ։

<u>Դեկորատիվ կիրառական արվեստի բնագավառի փոր-ձաքննություն</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- զարդեր,
- ճենապակյա առարկաներ,
- հաղճապակյա առարկաներ,
- բյուրեղապակյա առարկաներ,
- դեկորատիվ առարկաներ՝ փայտից, խեցիից, ապակուց, քարից, թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղից։

<u>Երաժշտական գործիքների փորձաքննություն</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- լարային գործիքներ,
- փողային գործիքներ,
- հարվածային գործիքներ,
- ստեղնաշարային գործիքներ։

<u>Գրքարվեստի բնագավառի փորձաքննություն</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- գրքեր,
- մագաղաթներ,
- կրոնական տպագրական գրականություն։

<u>Հին դրամների փորձաքննություն</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- թղթադրամներ,
- մետաղադրամներ,
- հուշամեդալներ,

- ժետոններ,
- պարգևատրման մեդալներ։

Փորձագիտական հետազոտման հիմնական խնիրներն ու փորձագետին առաջադրվող հարցերի շրջանակը

- Անվանումը, վերնագիրը։
- Հեղինակը,
- Վարպետը, արտադրողը, հրատարակիչը,
- Տիպը, ուղղությունը, դպրոցը,
- Ստեղծման ժամանակը և վայրը,
- Իսկությունը /բնօրինակ կամ կեղծ լինելը/,
- Նյութը,
- Ֆիզիկական չափերը / երկարությունը, լայնությունը, բարձրությունը, տրամագիծը, քաշը, հարգը/
- Արժեքի էթնիկական պատկանելությունը,
- Ստեղծագործողի էթնիկական պատկանելությունը,
- Տեխնիկական-տեխնոլոգիական բնութագիրը/ֆիզիկա-քիմիական, կենսաբանական փորձաքննությունների արդյունքները/
- Կատարման տեխնիկան
- Հեղինակի ստորագրությունը,
- Դրոշմը, կնիքը, արձանագրության հատուկ նշանները,
- Առարկայի պահպանվածությունը/ամբողջական, մասնակի, վերականգնված՝ մանրամասն նկարագրությամբ/
- Առարկայի մշակութային նշանակությունն ու կարևորությունը
- Առարկայի գինը կամ շուկայական արժեքը։

<u>Գեղագիտական փորձաքննություններ</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- մարդու դեմք:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրներն ու փորձագետին առաջադրվող հարցերի շրջանակը

- ➢ փորձաքննություն անցկացման ընթացքում պարզաբանել այն հարցը, թե վնասվածքից ստացած վերքի կամ վերքերի ապաքինումից հետո մնացած սպին կամ սպիերն առաջացրել են արդյոք տուժողի մոտ դեմքի անջնջելի այլանդակում, թե՝ ոչ:

<u>Բացի վերոգրյալից մշակութաբանական փորձաքննությունների բաժնում կատարվում են նաև հետևյալ փորձաքննություններ՝</u>

1. Հնագիտական:
2. Հեղինակային իրավունքների խախտում:
3. Արտոնագրային իրավունքների խախտում:
4. Դեմքի անջնջելի այլանդակում:
5. Տեսանյութերի և ձայնագրությունների բնույթի որոշում:

<u>Հնագիտական հետազոտություն</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- դամբարանադաշտեր,
- գերեզմանատների տարածքներ,
- խաչքարեր,
- հնագիտական առարկաներ և դրանց բեկորներ,
- եկեղեցիներ,
- մատուռներ,
- այլ կրոնական և աշխարհիկ շինություններ,
- հնավայրեր,

- ամրոցներ,
- վանական համալիրներ,
- հուշարձաններ,
- միջնադարյան բնակատեղիներ։

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրներն ու փորձագետին առաջադրվող հարցերի շրջանակը՝

- ➢ Հետազոտվող տարածքն իրենից պատմամշակույթային արժեք ներկայացնում է, թե՝ ոչ, այնտեղ առկա են արդյոք մշակույթային առանձնակի արժեք ներկայացնող առարկաներ, թե՝ ոչ։
- ➢ Ներկայացվող դամբարանադաշտն արդյոք հանդիսանում է հուշարձանների տարածք, թե ոչ, այն մտնում է արդյոք պահպանական գոտու մեջ, թե՝ ոչ։
- ➢ Ինչ բնույթի հուշարձանների /դամբարանադաշտի/ վնասում է տեղի ունեցել, դրանք վնասվել են բնական երևույթների ազդեցությամբ, թե պատճառվել են որևէ մեխանիկական ներգործությամբ կամ տեխնիկայի գործադրմամբ։
- ➢ Որտեղ է դամբարանադաշտի կոնկրետ վնասման տեղակայումը և վնասման չափերը։
- ➢ Որքան է կազմում քանդման հետևանքով դամբարանադաշտին պատճառված վնասի չափը։
- ➢ Պատճառված վնասը վերականգնման ենթակա է, թե՝ ոչ։

<u>Տեսանյութերի բնույթի որոշում</u>

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- տեսասկավառակներ,
- լուսանկարներ,

- համացանցային կայքեր։

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրներն ու փորձագետին առաջադրվող հարցերի շրջանակը

➢ հետազոտության ընթացքում պարզաբանել այն հարցը, թե փորձաքննությանը ներկայացված տեսանյութերն ինչ բնույթի են՝ պոռնոգրաֆիկական, էրոտիկ, թե այլ բնույթի /կենցաղային/։

§ 2.15. Ապրանքագիտական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- արդյունաբերական /ոչ պարենային/ ապրանքներ, արտադրանք, հումք, նյութ, սարք-սարքավորում, մեքենա-մեխանիզմներ, ուղեկցող փաստաթղթեր և այլ օբյեկտներ,
- տրանսպորտային միջոցներ, գյուղատնտեսական տեխնիկա,
- պարենային ապրանքներ, ապրանքների ուղեկցող փաստաթղթեր,
- այլ օբյեկտներ, այդ թվում՝ ոչ նյութական, ծառեր, կենդանիներ և այլն,
- անշարժ գույք, շինարարական աշխատանքներ։

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- արդյունաբերական /ոչ պարենային/ ապրանքների, արտադրանքի, հումքի, նյութի, սարք-սարքավորումների, մեքենա-մեխանիզմների, ուղեկցող փաստաթղթերի և այլ օբյեկտների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,

- տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- պարենային ապրանքների, ապրանքների ուղեկցող փաստաթղթերի հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- այլ օբյեկտների, այդ թվում՝ ոչ նյութական, ծառերի, կենդանիների և այլ օբյեկտների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- անշարժ գույքի, շինարարական աշխատանքների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Որքա՞ն է կազմում փորձաքննությանը ներկայացված օբյեկտի շուկայական արժեքը:
- Պարզել ներկայացված իրերի շուկայական արժեքները ներկա դրությամբ:
- Որքա՞ն է կազմում ներկայացված զարդերի շուկայական արժեքները ինչպես զարդ, այնպես էլ որպես մետաղ:
- Որքա՞ն է կազմում համապատասխան օբյեկտի վնասման հետևանքով առաջացած նյութական վնասի չափը հետազոտման ժամանակահատվածի դրությամբ:
- Որքա՞ն է կազմել ծառերի (բույսերի) շուկայական արժեքները հետազոտման ժամանակահատվածի դրությամբ:

- Որքա՞ն է կազմել ծառերի (բույսերի) եկամտաբերությունը:
- Որքա՞ն է կազմում պատճառված վնասի վերականգնման ծախսերը:
- Համապատասխանում է արդյոք հետազոտման ներկայացված նմուշը տեխնիկական բնութագրի պահանջներին:
- Որքա՞ն է կազմում բնակարանի շուկայական արժեքը:
- Որքա՞ն է կազմում Կլկլաշեն թաղամասում գտնվող անշարժ գույքից Գեղեցիկ Մստոյան Բուլվերսիկին պատկանող 2/5 մասի շուկայական արժեքը:
- Որքա՞ն է կազմում վերը նշված ավտոմեքենայի այրման հետևանքով պատճառված նյութական վնասի չափը:
- «Տոյոտա Կոռոլա» մակնիշի ավտոմեքենան հրդեհից հետո հնարավո՞ր է վերանորոգել, թե ոչ, եթե այո, ապա որքան է կազմում ավտոմեքենայի վերանորոգման շուկայական արժեքը:
- Որքա՞ն է կազմում ավտոմեքենայի մնացորդային արժեքը՝ հաշվի առնելով, որ փորձաքննության կատարման պահին դրա մաշվածության աստիճանը:
- Որքա՞ն է կազմում փորձաքննությանը ներկայացված ավտոմեքենայի միջին շուկայական արժեքը առկա ապրանքային տեսքով:
- Որքա՞ն նյութական վնաս է պատճառվել փորձաքննությանը ներկայացված ավտոմեքենայի սեփականատիրոջը տվյալ ավտոմեքենայի անսարքությունները և վե-

ը նշված մեխանիկական վնասվածքները պատճառելու հետևանքով:

- Փորձաքննությանը ներկայացված «Օպել Աստրա 1.4I» մակնիշի, ավտոմեքենան գտնվում է արդյոք ամբողջական կոմպլեկտավորված և սարքին վիճակում, թե ոչ, եթե ոչ, ապա կոնկրետ ինչ անսարքություններ են առկա:
- Ավտոմեքենան վերանորոգելու և վնասված պահեստամասերը փոխարինելիս նոր, չօգտագործված պահեստամասերով փոխելու դեպքում որքա՞ն կարժենա պատճառված վնասը, իսկ օգտագործված պահեստամասերով փոխարինելիս՝ որքան:
- Ո՞րքան է կազմում տվյալ ապրանքատեսակի մանրածախ շուկայական արժեքը:
- Ո՞րքան է կազմում տվյալ ապրանքատեսակի մեծածախ շուկայական արժեքը:
- Ո՞րքան է կազմում անշարժ գույքին (բնակարան, առանձնատուն, հողատարածք, արտադրական, հասարակական շենք-շինություններ և այլն) պատճառված վնասի չափը և դրա վերականգնման ծախսը:
- Ինչպիսի՞ փաստացի բնութագրեր ունի տվայլ ապրանքատեսակը:
- Ապրանքի որակի հետազոտում՝ զգայարանային (օրգանոլեպտիկ եղանակով), որակի համապատասխանությունը ՀՀ և միջազգային ստանդարտներին:
- Համապատասխանու՞մ է արդյոք տվյալ հետազոտելի օբյեկտի որակը, տվյալ ապրանքային խմբի համար գործող ստանդարտի պահանջներին:

- Համապատասխանու՞մ է արդյոք տվյալ ապրանքի բնութագերը փաթեթի վրա առկա մակնշման կամ ուղեկցող փաստաթղթերի տվյլաներին:
- Ինչպիսի՞ ստանդարտներով և կանոնակարգերով է որոշվում տվյալ ապրանքի որակը:
- Արդյո՞ք տվյալ փաթեթավորումը համապատասխանում է պահանջվող ստանդարտներին, արդյո՞ք այն ճիշտ է փաթեթավորված ոչնչացումից զերծ պահելու համար:
- Ի՞նչ կանոնակարգերով է սահմանվում տվյալ արտադրանքի պահպանման և տեղափոխման կարգը:
- Արդյո՞ք ապրանքի մակնիշավորումը համապատասխանում է իրականությանը, եթե՝ ոչ, ապա ի՞նչով է այն տարբերվում,
- Արդյո՞ք բեռնագրում կամ հաշիվ ապրանքագրում նշված ապրանքների արժեքները համապատասխանում են գործող շուկայական արժեքներին:
- Արդյո՞ք արտադրանքի վրա առկա են թերություններ և կոնկրետ ի՞նչ բնույթի են:
- Արդյո՞ք փորձաքննության ներկայացված ապրանքի վրա առկա թերությունները ազդում են տվյալ ապրանքի որակի և տիպավորման վրա, որը սահմանված է նորմատիվներով, եթե՝ այո, ապա ի՞նչպես, և այլն:

§ 2.16. Հրդեհատեխնիկական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- արդյունաբերական /ոչ պարենային/ ապրանքների, արտադրանքի, հումքի, նյութի, սարք-սարքավորումների, մեքենա-մեխանիզմների, ուղեկցող փաստաթղթերի և այլ օբյեկտների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- պարենային ապրանքների, ապրանքների ուղեկցող փաստաթղթերի հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- այլ օբյեկտների, այդ թվում՝ ոչ նյութական, ծառերի, կենդանիների և այլ օբյեկտների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- անշարժ գույքի, շինարարական աշխատանքների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում:
- հրդեհի ազդեցությանն ենթարկված և դրա ջերմային ներգործության վնասող գործոնների հետևանքով ձևափոխված ֆիզիկական օբյեկտը,
- տարաբնույթ առարկաները, մեքենաները և դրանց ընդհանրությունները,
- տարբեր նշանակության կառույցները և կոնստրուկցիաները,

- տարբեր նյութերի կամ առարկաների պահուստները (շինություններում կամ բաց տարածքում),
- բնության օբյեկտները՝ անտառները, գյուղատնտեսական ցանքատարածքները, հողի բուսածածկույթը և այլն,
- մարդիկ և կենդանիները, որոնք տուժել են հրդեհի ընթացքում ինչպես ջերմային ներգործությունից, այնպես էլ այրման արգասիքների թունավոր կամ մեկուսացնող գործողությունից:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- արդյունաբերական /ոչ պարենային/ ապրանքների, արտադրանքի, հումքի, նյութի, սարք-սարքավորումների, մեքենա-մեխանիզմների, ուղեկցող փաստաթղթերի և այլ օբյեկտների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- պարենային ապրանքների, ապրանքների ուղեկցող փաստաթղթերի հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- այլ օբյեկտների, այդ թվում՝ ոչ նյութական, ծառերի, կենդանիների և այլ օբյեկտների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում,
- անշարժ գույքի, շինարարական աշխատանքների հետազոտություն՝ այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների որոշում:

- հրդեհի օջախի (այրման առաջացման առաջնային վայրի) պարզաբանումը,
- հրդեհի առաջացման պատճառի պարզաբանումը, որը ներառում է առաջնային բոցավառված նյութի, բոցավառման ջերմային էներգիայի աղբյուրի և պայմանների պարզաբանումը,
- հրդեհի տարածման ուղիների պարզաբանումը, հաշվի առնելով առաջնային բոցավառված առարկայի և այն շրջապատող առարկաների փոխտեղակայումը, առարկաների նյութերի հրդեհավտանգավոր հատկանիշները, այրման պրոցեսների և այրման գազանման արգասիքների ու այրման գոտուց արտանետվող շիկացած պինդ մասնիկների տարածման ջերմա- և գազադինամիկական առանձնահատկությունները, հրդեհաշիջմանը մասնակից մարդկանց գործողությունների և մեխանիզմների կամ դրանց համակարգերի, ինչպես նաև եղանակային և այլ գործոններ ներգործությունը հրդեհի տարածման վրա,
- հրդեհի տևողության պարզաբանումը,
- էլեկտրական ցանցի, սարքավորումների և սարքվածքների աշխատանքում վթարային ռեժիմների առնչության պարզաբանումը բռնկման բերած ջերմային աղբյուրի առաջացմանը,
- բոցավառմանը սարքավորումների և ագրեգատների առնչության պարզաբանումը, որոնք իրենց աշխատանքի ընթացքում օգտագործում կամ առաջացնում են բաց կրակ կամ ուժեղ տաքացրած գազեր, մետաղներ և այլն,

- հրդեհի առաջացմանը բերած կազմակերպատեխնիկական պատճառների պարզաբանումը՝ հրդեհի առաջացման հետ պատճառական կապի մեջ գտնվող անձանց գործողությունները կամ անգործությունը, հրդեհի արագ կամ սրընթաց տարածմանը նպաստող պայմանների ստեղծումը, հրդեհաշիջման աշխատանքների և վտանգավոր գոտուց մարդկանց տարհանման դժվարացումը կամ անհնարինությունը և այլն,
- մարդկանց գործողություններում հրդեհի առաջացման կազմակերպատեխնիկական պատճառի հետ կապված հրդեհային անվտանգության ապահովման պահանջներից շեղումների առկայության կամ բացակայության պարզաբանումը:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

Փորձագետին առաջադրվող հարցերի ձևակերպմանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են.

- հարցերը պետք է դուրս չգան փորձագետների և մասնագետների մասնագիտական գիտելիքների սահմաններից,
- հարցերը պետք է լինեն կոնկրետ և հնարավորինս կարճ, որպեսզի բացառվի հարցի ոչ միանշանակ հասկացությունը կամ երկիմաստությունը,
- հարցերը պետք է հերթագայեն ըստ տրամաբանական հետևողականության: Սկզբից ձևակերպվում են նրանք, որոնց պարզաբանումներից կախված են մյուսների լուծումները,

- հարցաշարը պետք է լինի առավելագույնս ամբողջական,
- այն հարցերի շարադրումը, որոնց պարզաբանումն ելնելով գիտության զարգացման ներկա մակարդակից հնարավոր չէ կամ առաջարկվող հարցաշարերի մեխանիկական արտագրումն անթույլատրելի են:

Փորձագետին առաջադրվող բոլոր հարցերն անհրաժեշտ է խմբավորել ըստ դրանց առարկայական հատկանիշների: Արդյունքում ձևավորվում են հինգ խումբ հիմնական (առարկայական) հարցեր:

Հարցերի ***առաջին խումբը*** վերաբերվում է հրդեհի առաջացման (օջախի) և ժամանակի, ինչպես նաև այրման ուղղվածության պարզաբանմանը.

- որտե՞ղ և ե՞րբ է առաջացել հրդեհը, և ինչպիսի՞ ուղիներով է կրակը տարածվել,
- ինչպե՞ս է տարածվել այրումը (ներքևից վերև, վերևից ներքև, հորիզոնական, թե քությամբ և այլն),
- ինչո՞վ է բացատրվում տվյալ տեղում կառուցվածքային տարրերի կամ այլ այրվող նյութերի առավելագույն ամբողջական այրումը:

Հարցերի ***երկրորդ խումբը*** վերաբերվում է հրդեհի հանգամանքների պարզաբանման հետ կապված տեխնիկական տվյալների որոշմանը.

- ինչպիսի՞ն է որոշակի նյութի բոցավառման կամ ինքնաբոցավառման ջերմաստիճանը,
- ինչպիսի՞ նյութեր էին այրվում տվյալ բնույթի բոցի, ծխի պայմաններում,

- ինչպիսի՞ն է այս կամ այն նյութի այրման նվազագույն ջերմաստիճանը,
- առաջանում են արդյո՞ք կայծեր որոշակի առարկաների մեխանիկական ներգործության (շփման, հարվածի) արդյունքում,
- կարող էր արդյո՞ք որոշակի պայմաններում (օրինակ, ջեռուցման խողովակից) տեղի ունենար տվյալ այրվող նյութերի և առարկաների ինքնաբոցավառում,
- կարող էր արդյո՞ք տեղի ունենար որոշակի նյութերի և առարկաների ինքնաբոցավառում հրդեհի առաջացմանը նախորդած պայմաններում և այլն:

Հարցերի ***երրորդ խումբը*** կապված է հրդեհային անվտանգության կանոնների խախտման փաստի որոշման հետ.

- թույլ են տրվել արդյո՞ք տեխնիկական պայմանների խախտումներ էլեկտրալարերի, լուսավորման և ուժային սարքավորումների, տաքացնող սարքերի, օդափոխման համակարգերի մոնտաժման ժամանակ,
- եթե այդպիսի խախտումներ եղել են, ապա կոնկրետ ինչու՞մ և դրանք ունեն արդյո՞ք առնչություն կրակի բռնկման և տարածման հետ,
- հրդեհային անվտանգության ինչպիսի՞ միջոցներ ձեռք չեն առնվել կոնկրետ եռակցման աշխատանքների կատարման ժամանակ,
- համապատասխանում են արդյո՞ք որոշակի անձի գործողությունները տվյալ իրավիճակում համապատասխան ակտում շարադրված տեխնիկական պահանջներին և այլն:

Չորրորդ խումբ. Այստեղ խմբավորված են այն հարցերը, որոնք վերաբերվում են հրդեհի առաջացման անմիջական՝ տեխնիկական պատճառի պարզաբանմանը.

- կարող էր արդյո՞ք հրդեհն առաջանալ հրդեհի օջախում հայտնաբերված նյութերի և առարկաների ինքնաբոցավառումից,
- հանդիսանում է արդյո՞ք էլեկտրացանցում կարճ միացումը, գերծանրաբեռնվածությունը, մեծ անցումային դիմադրությունը հրդեհի պատճառ,
- հրդեհը չի հանդիսացել արդյո՞ք պայթյունի հետևանք կամ պայթյունը՝ հրդեհի և այլն:

Հինգերորդ խումբն ընդգրկում է հակահրդեհային տեխնիկայի տեխնիկական վիճակին վերաբերվող հարցերը.

- հրդեհի ժամանակ տվյալ օբյեկտի ինքնաշխատ հակահրդեհային սարքավորումներն ի՞նչ պատճառով չեն աշխատել,
- հրդեհաշիջման ժամանակ ճիշտ է արդյո՞ք կիրառվել շիջման մարտական տեխնիկան և այլն:

Փորձագետին առաջադրված հարցերի պարզաբանման համար պետք է տրամադրվեն բոլոր անհրաժեշտ նյութերը, որոնց թվին են դասվում.

- դեպքի վայրի զննության արձանագրությունը, կից լուսանկարչական հավելվածով և սխեմաներով,
- Ականատեսների, վկաների, մեղադրյալների հարցաքննության արձանագրությունները,
- քննչական փորձարարությունների արձանագրությունը,

- հրդեհի ֆիքսման ժամանակի վերաբերյալ տեղեկանքը (քաղվածք հրդեհի մեկնման մատյանից),
- հրդեհի գերատեսչական քննության ակտը,
- հրդեհի մասին ակտը, որտեղ հիմնավորվում է հրդեհի առաջացման հավանական պատճառը,
- այրված կամ կրակից վնասված օբյեկտի նախագիծը, հրդեհի պահին քամու ուղղության և ուժգնության, ինչպես նաև աշխարհագրական կողմերի նշմամբ,
- օբյեկտի արտաքին /տրանսֆորմատորային ենթակայանից/ և ներքին /առգրավված էլեկտրական հաղորդալարերի, էլեկտրասարքերի և սարքավորումների տեղակայման նշումով/ էլեկտրասնուցման մանրամասն էլեկտրական սխեմանները,
- հրդեհի պահին օբյեկտում առարկաների տեղակայման սխեման, հրդեհի վերականգնումը և ներսակողմի առավել բացված նախագիծը,
- սարքավորումների տեխնիկական վիճակի մասին ակտերը, դրանց տեխնիկական անձնագրերը, գծագրերը և լուսանկարները, տեխնոլոգիական պրոցեսների քարտեզները,
- այլ փաստաթղթեր,
- իրեղեն ապացույցները /հետազոտման օբյեկտները/:

§ 2.17. Պայթունատեխնիկական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- պայթուցիկ նյութեր և դրանց պայթյունի արգասիքներ,
- պայթուցիկ նյութեր պարունակող արտադրանքներ և դրանց մնացորդները գործարկումից հետո,
- պայթուցիկ նյութեր պարունակող արտադրանքների պայթյունի հետքեր:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- պայթյունի փաստի հաստատման, դեպքի վայրի իրավիճակի առարկաների վրա պայթյունային ազդեցության հետքերի բացահայտման, պայթյունի հետքերի տեղակայման և պայթյունից առաջացած ավերածությունների մասշտաբի, պայթված սարքավորման առանձին բեկորների, հանգույցների, դետալների և առարկաների հնարավոր պատկանելիության հաստատման խնդիրները,
- պայթած սարքավորման կառուցվածքի տեսակի պարզաբանման խնդիրներ՝ դրա պատկանելիությունը պայթունատեխնիկական փորձաքննության առարկաների որոշակի խմբին՝ ռազմամթերքներին, պայթուցիկ սարքավորումներին և այլն, լիցքի նյութի տեսակի և զանգվածի, դրա պայթեցման եղանակի ու միջոցների, գործարկման եղանակի և այլ բնութագրերի,
- պայթյունի նախապատրաստման և իրականացման հանգամանքների, դրա իրական և հնարավոր հետևանքների (պայթյունի օջախի, տուժածների և իրավիճակի առանձին առարկաների հնարավոր գտնվելու

վայրի, պայթյունի դեպքում վտանգավոր խոցման բնույթի և շառավղի, ինքնաբերական պայթյունի հնարավորության որոշում և այլն) պարզաբանմանն ուղղված խնդիրներ, ինչպես նաև այլ տեղերում այլ ժամանակ տեղի ունեցած պայթյունների նախապատրաստման և իրականացման համեմատական վերլուծություն: Այդ խմբին է դասվում նաև պայթյունատեխնիկ-փորձագետի եզրահանգումները պայթուցիկ սարքավորումն պատրաստող անձի մասնագիտական հմտությունների, որակավորման, հատուկ գիտելիքների բնագավառի և մակարդակի մասին:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

Փորձագետին առաջադրվող հարցերի ձևակերպմանը ներկայացվող ընդհանուր պահանջներն են.

- հարցերը պետք է դուրս չգան փորձագետների և մասնագետների մասնագիտական գիտելիքների սահմաններից,
- հարցերը պետք է լինեն կոնկրետ և հնարավորինս կարճ, որպեսզի բացառվի հարցի ոչ միանշանակ հասկացությունը կամ երկիմաստությունը,
- հարցերը պետք է հերթագայեն ըստ տրամաբանական հետևողականության: Սկզբից ձևակերպվում են նրանք, որոնց պարզաբանումներից կախված են մյուսների լուծումները,
- հարցաշարը պետք է լինի առավելագույնս ամբողջական,

- այն հարցերի շարադրումը, որոնց պարզաբանումն ելնելով գիտության զարգացման ներկա մակարդակից հնարավոր չէ կամ առաջարկվող հարցաշարերի մեխանիկական արտագրումն անթույլատրելի են:

Ելնելով պայթյունատեխնիկական փորձաքննության առարկայից և խնդիրներից պարզաբանման համար կարող են առաջադրվել հետևյալ հարցերը.

/Ըստ պայթեցված արտադրանքի կառուցվածքի/.

- Պայթյունի վայրից առգրավված բեկորների և առարկաների վրա առկա են արդյոք պայթյունի արգասիքներ, եթե այո, ապա ինչպիսի պայթուցիկ նյութի:
- Պայթյունի վայրից առգրավված բեկորները և առարկաները հանդիսանում են արդյոք պայթեցված պայթուցիկ սարքավորման կամ ռազմամթերքի մասեր:
- Եթե տեղի է ունեցել ռազմամթերքի պայթյուն, որոշել կառուցվածքը, տեսակը և պայթուցիկ նյութի զանգվածը:
- Ինչպիսի եղանակով է պայթեցվել ռազմամթերքը, ինչպիսին է դրա պայթյունի ժամանակ վտանգավոր խոցման շառավիղը և բնույթը:
- Եթե տեղի է ունեցել պայթուցիկ սարքավորման պայթյուն, ապա ինչպիսին է դրա կառուցվածքը:
- Ինչպիսին է դրա պայթեցման եղանակը և պայթեցման միջոցի տեսակը:
- Պայթուցիկ սարքավորման կառուցվածքում եղել է արդյոք ապահովող-գործադրող մեխանիզմ, թե ոչ, և պայթուցիկ սարքավորման գործադրման ինչպիսի եղանակի համար է այն նախատեսված եղել:

- Ինչպիսին է տվյալ պայթուցիկ սարքավորման պայթյունի ժամանակ վտանգավոր խոցման շառավիղը և բնույթը։
- Տիրապետել է արդյոք պայթուցիկ սարքավորումը պատրաստող անձը հատուկ գիտելիքների կամ մասնագիտական հմտությունների և որ ոլորտի։

/Ըստ կաղապարի/

- Հանդիսանում են արդյոք պայթունի վայրից /կամ տուժողի մարմնից/ հանված բեկորները պայթուցիկ սարքավորման կամ ռազմամթերքի կաղապարի /իրանի/ բեկորներ։
- Ինչպիսի տեսք /ձևը, չափերը, նյութը/ ուներ պայթուցիկ սարքավորման կամ ռազմամթերքի իրանը։
- Ինչպիսի արտադրանք է օգտագործվել որպես պայթուցիկ սարքավորման կաղապար /իրան/։

/Ըստ պայթեցման և գործողության մեջ դնելու եղանակների/

- Ինչպիսի եղանակ է օգտագործվել պայթեցված արտադրանքի պայթեցման համար։
- Ինչպիսի պայթեցման միջոց է օգտագործվել տվյալ արտադրանքում։
- Ինչ է օգտագործվել որպես հոսանքի աղբյուր։
- Ինչպիսին են պայթուցիկ սարքավորման էլեկտրական շղթայի սխեման և բաղկացուցիչ էլեմենտները։
- Ինչպիսին է տվյալ պայթուցիկ սարքավորման գործողության մեջ դնելու եղանակը։
- Օգտագործվել է արդյոք տվյալ պայթուցիկ սարքավորման մեջ ապահովող-գործադրող մեխանիզմ, թե ոչ,

դրա գործողության սկզբունքը, պայթուցիկ սարքավորման գործադրման ինչպիսի եղանակի համար է այն նախատեսված եղել:

/Ըստ պայթյունի պայմանների և հանգամանքների/

- Կարող էր տեղի ունենալ պայթյուն քաղաքացի Պ-ի ցուցմունքներում բերված պայմաններում:
- Կարող էր նշված պայմաններում /տեղափոխում, հարված, թափահարում, տաքացում և այլն/ տեղի ունենալ պայթուցիկ սարքավորման կամ ռազմամթերքի գործարկումը:
- Առկա էր արդյոք իրական վտանգ մարդկանց կյանքի և առողջության համար, որոնք պայթյունի պահին պայթյունի օջախից գտնվում էին *այսինչ* հեռավորության վրա:
- Կարող էր արդյոք տեղի ունեցած պայթյունը բերել պատերի քանդման, դռների դուրսնետման, քաղաքացի Պ-ին *այսինչ* վնասվածքների հասցման և այլն:
- Չի հանդիսանում արդյոք ներկայացված սխեման ապահովող-գործադրող մեխանիզմի գծագիր, համապատասխանում է արդյոք այն օգտագործված պայթուցիկ սարքավորման ապահովող-գործադրող մեխանիզմին և կառուցվածքի ինչպիսի չափանիշներով:
- Նույնական են արդյոք և ինչպիսի հատկանիշներով քաղաքացի Պ-ի պատրաստված և տվյալ դեպքում օգտագործված պայթուցիկ սարքավորումները:
- Առկա են արդյոք քաղաքացի Պ-ի ձեռքերից վերցված քսուկներում պայթուցիկ նյութերի մնացորդներ, ինչպիսի պայթուցիկ նյութերի, դրանց կիրառման ոլորտը:

Փորձագետին առաջադրված հարցերի պարզաբանման համար պետք է տրամադրվեն բոլոր անհրաժեշտ նյութերը, որոնց թվին են դասվում.

- դեպքի վայրի զննության արձանագրությունը, կից լուսանկարչական հավելվածով և սխեմաներով, որոնց վրա պետք է նշված լինեն առգրավված օբյեկտների տեղակայումը,
- Ականատեսների, վկաների, մեղադրյալների հարցաքննության արձանագրությունները,
- քննչական փորձարարությունների արձանագրությունը,
- պայթեցրած օբյեկտի նախագիծը,
- տուժողների առկայության դեպքում դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունները,
- այլ փաստաթղթեր,
- իրեղեն ապացույցները /հետազոտման օբյեկտները/:

Պայթյունատեխնոլոգիական փորձաքննություններ (նախատեսվող)

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- պայթյունի ներգործությանն ենթարկված և դրա վնասող գործոնների (հարվածող կամ սեղմման ալիք, փշրտող, բեկորային և ջերմային գործողություններ) հետևանքով ձևափոխված ֆիզիկական օբյեկտը,
- նյութերի ֆիզիկաքիմիական և պայթյունավտանգ հատկությունները,
- կառուցվածքները կամ սարքավորումները, որոնցում պահվում կամ շրջանառվում են պայթուցիկ նյութերը արտադրության և կիրառման փուլերում, ինչպես նաև

պաշտպանության ոլորտի և լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունները, որտեղ վերջիններս օգտագործվում են,

- կառուցվածքները, մեքենաները, ագրեգատները և ցանցերը, որոնք օգտագործում կամ աշխատանքի ընթացքում ստեղծում են այրվող գազեր կամ պինդ նյութերի փոշիներ կամ հեղուկ այրվող նյութերի օդային կախույթներ, ինչպես նաև գազեր տեղափոխող կամ դրանցող բնակելի և արտադրական շինությունները սնուցող ձեռնարկությունները և արդյունաբերական համակարգերը, սննդամթերքների վերամշակման, կահույքի և տեքստիլ ձեռնարկությունները և դրանց տեխնոլոգիական հոսքագծերը և արտադրության այլ տեսակները,
- մեքենաները և ագրեգատները, որոնց իրանների մեջ պահվում, տեղափոխվում կամ շրջանառվում են բարձր ճնշման տակ սեղմված գազեր։

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- պայթյունի էներգիայի արտանետման վայրի (որը հաճախ ավանդաբար անվանում են «պայթյունի էպիկենտրոնի») պարզաբանումը,
- պայթյունի բնույթի պարզաբանումը՝ «քիմիական», «ֆիզիկական» կամ «ֆիզիկաքիմիական»,
- պայթյունի տեխնիկական պատճառի պարզաբանումը։

§ 2.18. Դատաբժշկական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- մարդու դիակ,
- կենդանի անձ,
- բժշկական փաստաթղթեր,
- գործի նյութեր,
- մարդու օրգաններ և/կամ հյուսվածքներ կամ դրանց կտորներ,
- կենսաբանական ծագման իրեղեն ապացույցներ:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- իրավական պրակտիկայում առաջացած բժշկական և կենսաբանական բնույթի հարցերի ուսումնասիրություն և պարզաբանում՝ դատաբժշկական փորձաքննությունների բաժնում իրականացվող փորձաքննությունների արդյունքում,
- ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության և կանխարգելիչ բուժմիջոցառումների որակի բարելավում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը՝

- Ինչպիսի մարմնական վնասվածքներ են առկա փորձաքննվողի մարմնի վրա:
- Պարզել մարմնական վնասվածքների բնույթը, տեղակայությունները, պատճառման մեխանիզմը և հաջորդականությունը, վաղեմությունը:
- Պարզել վնասվածքները պատճառած առարկայի կամ գործիքի առանձնահատկությունները, վնասվածքները

պատճառվել են մեկ, թե մի քանի առարկայով և/կամ գործիքով:

- Պարզել առողջությանը պատճառված վնասի ծանրությունը ինչպես մարմնական վնասվածքների համակցությամբ, այնպես էլ յուրաքանչյուր վնասվածքով առանձին-առանձին:
- Մարմնական վնասվածքները կարող էին արդյոք պատճառվել որոշման մեջ նշված հանգամանքներում, ներկայացվող առարկայով կամ գործիքով:
- Ինչպիսին է մարմնական վնասվածքները պատճառած վնասող ներգործության տեսակը (հարված, սեղմում, շփում և այլն), վնասող ուժի ազդեցության տեղը, վնասող ներգործությունների քանակը և ուղղությունները:
- Ինչպիսին է եղել տուժողի և հարձակվողի/ների/ փոխադարձ դիրքը վնասվածքները պատճառելու պահին:
- Կարող էին արդյոք վնասվածքները պատճառվել տուժողի կողմից ինքն իրեն, թե՝ ոչ:
- Մարմնական վնասվածքները կամ դրանցից որոշները կարող էին արդյոք առաջանալ մարմնի սեփական հասակի բարձրությունից (կանգնած կամ դրան մոտ դիրքից) վայր ընկնելու հետևանքով, եթե այո, ապա որ վնասվածքները, *(սույն հարցն առաջադրելիս անհրաժեշտ է փորձաքննությանը տրամադրել նաև վայր ընկնելու մատնանշվող տեղանքի՝ դեպքի վայրի զննության արձանագրությունը լուսանկարչական հավելվածով):*
- Տուժողի դեմքի շրջանում տեղակայված մարմնական վնասվածքի/ների/ ապաքինման արդյունքում կմնա արդյոք անջնջելի հետք, թե՝ ոչ:

- Փորձաքննվողը կույս է, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչ վաղեմություն ունի կուսաթաղանթի ամբողջականության խախտումը, հնարավոր է խախտումը տեղի ունենար որոշման մեջ նշված հանգամանքներում և վաղեմությամբ:
- Եթե կուսաթաղանթի ամբողջականությունը խախտված չէ, ապա ելնելով դրա անատոմիական առանձնահատկություններից, հնարավոր էր սեռական հարաբերություն առանց կուսաթաղանթի անատոմիական ամբողջականության խախտման:
- Փորձաքննվողի հեշտոցում (մարմնի այլ շրջաններում) սերմնէակներ կան, թե՝ ոչ, եթե այո, որոշել դրանց խմբային պատկանելիությունը:

Կոնկրետ դեպքի բնույթից ելնելով դատաբժշկական փորձաքննությանը կարող են առաջադրվել նաև բժշկական բնույթի տարաբնույթ այլ հարցեր:

Առողջական վիճակը պարզելու նպատակով դատաբժշկական փորձաքննությանն առաջադրվող հիմնական հարցերի շրջանակը

- Հետազոտվողի մոտ ինչպիսի վնասվածքներ, հիվանդություններ կամ դրանց անբարենպաստ հետևանքներ (ախտաբանական վիճակներ) են առկա, ինչպիսին է դրանց առաջացման վաղեմությունը:
- Հետազոտվողը ներկայումս տառապում է արդյոք նրա վերաբերյալ ներկայացված բժշկական փաստաթղթերում նշված հիվանդությամբ/ներով/, թե՝ ոչ:

- Եթե ներկայումս հետազոտվողը չի տառապում ներկայացված բժշկական փաստաթղթերում նշված (նախկինում նրա մոտ ախտորոշված) հիվանդությամբ/ներով/, ապա հնարավոր է նա նախկինում տառապեր նշված հիվանդությամբ /ներով/, իսկ ներկայումս՝ ոչ:
- Կարող էր արդյոք հետազոտվողը նախկինում տառապել ախտորոշված հիվանդությամբ և մինչ ներկայիս ժամկետն ընկած ժամանակահատվածում ինքնուրույն (առանց բժշկական միջամտության) կամ բուժում ստանալու միջոցով տեղի ունենար բարելավում կամ լիարժեք ապաքինում, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչ հնարավոր բժշկական միջամտության արդյունքում:
- Պարզել, թե առկա առողջական վիճակում հետազոտվողը կարող է արդյոք կատարել որևէ ինքնուրույն գործողություն, մասնակցել քննչական կամ դատավարական գործողություններին, գտնվել որոշակի պայմաններում, թե՝ ոչ:
- Հետազոտվողը տառապում է արդյոք պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությամբ/ներով/, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի:
- Ինչպիսի հնարավոր (առավել հավանական) անբարենպաստ հետևանքներ կարող է ունենալ հետազոտվողի մոտ առկա ախտաբանական վիճակը և ինչ հնարավոր ժամկետներում:
- Առկա առողջական վիճակում հետազոտվողը բուժման կարիք ունի, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի և ինչ պայմաններում:

Տարբեր դեպքերում (նաև դիակի դատաբժշկական կամ գործի նյութերով հանձնաժողովային դատաբժշկական) փորձաքննություններ նշանակելիս փորձաքննությանն առաջադրվող հիմնական հարցերի շրջանակը

- Որն է հանդիսացել տուժողի մահվան պատճառը (վնասվածքը, թե հիվանդությունը), երբ է վրա հասել մահը:
- Մարմնական վնասվածքներից որոնք են հանգեցրել մահվան՝ գտնվելով անմիջական պատճառական կապի մեջ տուժողի մահվան հետ, իսկ որոնք՝ ոչ:
- Պարզել, թե մահվան հետ անմիջական պատճառական կապի մեջ չգտնվող մարմնական վնասվածքները առողջությանը ինչ ծանրության վնաս պատճառող վնասվածքների շարքին են դասվում յուրաքանչյուր վնասվածքով առանձին-առանձին:
- Եթե պատճառվել են մի քանի մարմնական վնասվածքներ, ապա նշված բոլոր վնասվածքները արդյոք համակցությամբ են բերել մահվան, թե մահվան ինքնին կարող էր բերել հայտնաբերված վնասվածքներից որևէ մեկը:
- Ինչպիսին է եղել տուժողի դիրքը վնասվածքները ստանալու պահին:
- Որքան ժամանակ կարող էր դիակը գտնվել հայտնաբերման վայրում, մահվանից հետո դիակի սկզբնական դիրքը փոփոխվել է, թե՝ ոչ, եթե այո, ապա որ հատկանիշներն են վկայում այդ մասին (*սույն հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է պարտադիր փորձա-*

քննությանը տրամադրել դեպքի վայրի զննության արձանագրությունը՝ լուսանկարչական հավելվածով):

- Վնասվածքները պատճառվելուց հետո կարող էր արդյոք տուժողը կատարել որևէ ինքնուրույն նպատակաուղղված գործողություն (քայլել, տեղաշերժվել, բղավել և այլն):
- Պարզել դիակի վրա առկա մարմնական վնասվածքների բնույթը, տեղակայությունները, պատճառման մեխանիզմը և հաջորդականությունը, ինչ առարկայով կամ գործիքով են դրանք պատճառվել:
- Մահվանից որքան ժամանակ առաջ են պատճառվել հայտնաբերված մարմնական վնասվածքները, որոնք են պատճառվել կենդանության օրոք և որոնք հետմահու:
- Կան արդյոք հատկանիշներ, որոնք հնարավորություն տան դատել վնասվածքները պատճառած առարկայի /ների/ առանձնահատկությունների մասին:
- Ինչպիսին է եղել վնասող ուժի ներգործության տեղը, ազդեցության ուղղությունը:
- Մահը վրա է հասել վնասվածքները ստանալուց անմիջապես հետո, թե որոշակի ժամանակ անց, եթե այո, ապա վնասվածքները ստանալուց որքան ժամանակ անց կարող էր վրա հասնել մահը:
- Կան արդյոք այնպիսի հատկանիշներ, որոնք վկայեն իր իսկ գործողությունների արդյունքում վնասվածքների առաջացման մասին, թե առկա են հատկանիշներ, որոնք վկայում են կողմնակի ներգործության հետևանքով վնասվածքների առաջացման վերաբերյալ:

- Ինչպիսին է տուժողի արյան պատկանելիությունը:
- Մահվանը նախորդող ժամանակահատվածում տուժողը ալկոհոլ օգտագործել է, թե՝ ոչ, եթե այո, ապա մահվանը նախորդող պահին ինչ աստիճանի ալկոհոլային հարբածության վիճակում է գտնվել:
- Մահվանը նախորդող ժամանակահատվածում տուժողը թմրանյութ օգտագործել է, թե՝ ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Մահվանը նախորդող ժամանակահատվածում տուժողը սնունդ օգտագործել է, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի և մահվանից որքան ժամանակ առաջ:
- Համապատասխանում են արդյոք բժշկական փաստաթղթերի տվյալները դիակի դատաբժշկական փորձաքննության արդյունքներին, եթե ոչ, ապա ինչումն է կայանում անհամապատասխանությունը:

Ավտոտրանսպորտային վնասվածքների դեպքում.

- Հայտնաբերված մարմնական վնասվածքները կարող էին արդյոք առաջանալ տրանսպորտային պատահարի հետևանքով, եթե այո, ապա տրանսպորտային միջոցի ինչ տեսակով և դրա որ մասերով կարող էին ադպիսիք պատճառվել:
- Ներբանային մակերեսից ինչ բարձրության վրա են տեղակայված դիակի վրա հայտնաբերված վնասվածքները:
- Դիակի վրա առկա են արդյոք տրանսպորտային միջոցի ներգործությանը բնորոշ վնասվածքներ կամ հետքեր:

- Կան արդյոք վնասվածքներ, որոնք վկայեն տուժողի մարմնի վրայով տրանսպորտային միջոցի անիվի վրաանցման մասին:
- Եթե վնասվածքները պատճառվել են վրաերթի արդյունքում, ապա ինչ դիրքում է գտնվել տուժողը վրաերթի պահին, նրա մարմնի որ կողմից է վրաերթը կատարվել (աջից, ձախից, առաջից, հետևից) և ինչ ուղղությամբ:
- Ինչպիսին են եղել վրաերթի փուլերը և ինչ հաջորդականությամբ են պատճառվել տուժողի մարմնական վնասվածքները:
- Արդյոք հայտնաբերված բոլոր վնասվածքները պատճառվել են մեկ անգամյա վրաերթի հետևանքով, թե կան կրկնակի վրաերթի մասին վկայող հատկանիշներ, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Տառապել է արդյոք տուժողը տեսողական կամ լսողական որևէ հիվանդությամբ, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Կարող էին արդյոք հայտնաբերված մարմնական վնասվածքներն առաջանալ գետնին վայր ընկնելու հետևանքով՝ առանց տրանսպորտային միջոցի հետ կոնտակտի մեջ մտնելու, եթե այո, ապա ինչ ուղղությամբ վայր ընկնելու հետևանքով:
- Կարող էին արդյոք հայտնաբերված մարմնական վնասվածքներն առաջանալ շարժվող տրասպորտային միջոցից վայր ընկնելու հետևանքով:
- Հայտնաբերված մարմնական վնասվածքները կարող էին պատճառվել ներկայացվող տրանսպորտային մի-

ջոցի նշված հատվածներով, եթե այո, ապա որ հատվածներով:

- Կան արդյոք շարժվող տրանսպորտային միջոցի կողմից տուժողի մարմնի քարշ տալու մասին վկայող հատկանիշներ, թե՝ ոչ:
- Վթարին նախորդող պահին ավտոտրանսպորտային միջոցի սրահում գտվող անձանցից ով որ նստատեղն է զբաղեցրած եղել, ով է եղել վարորդի նստատեղին *(սույն հարցն առաջադրելիս նպատակահարմար է նշանակել համալիր դատաբժշկական և քրեագիտական փորձաքննություն)*:
- Տուժողի վնասվածքները կարող էին առաջանալ կոնկրետ դեպքում ներկայացվող դեպքի վայրում և հանգամանքներում:

Բարձրությունից վայր ընկնելու դեպքերում.

- Մարմնական վնասվածքները կարող էին պատճառվել որոշակի բարձրությունից վայր ընկնելու և գետնի մակերևույթին բախվելու հետևանքով, թե՝ ոչ:
- Կան արդյոք մարմնական վնասվածքներ կամ հատկանիշներ, որոնք վկայեն մինչև վայր ընկնելն արդեն իսկ մահվան վրա հասած լինելու մասին (խեղդելու, թունավորման, հրազենային վնասվածքի կամ այլ ներգործության հետևանքով):
- Պատճառվել են արդյոք մարմնական վնասվածքները միաժամանակ, թե՝ ոչ, մարմնի որ մակերեսով է տեղի ունեցել գետնի հետ համահարվածումը:
- Վնասվածքները կարող էին առաջանալ ներկայացվող դեպքի վայրում աստիճանական վայր ընկնելու արդ-

յունքում *(սույն հարցն առաջադրելիս անհրաժեշտ է փորձաքննությանը տրամադրել դեպքի վայրի զննության արձանագրությունը՝ լուսանկարչական հավելվածով):*

- Կան արդյոք այնպիսի մարմնական վնասվածքներ, որոնք ունենան պատճառման այլ մեխանիզմ:

Սուր գործիքներից վնասվածքների դեպքերում.

- Վնասվածքները պատճառվել են արդյոք սուր գործիքով, եթե այո, ապա ինչ վաղեմությամբ:
- Ինչ առանձնահատկություններ կարող է ունենալ վնասվածքները պատճառած սուր գործիքը:
- Վնասվածքները կարող էին արդյոք պատճառվել ներկայացված դանակով, թե դրանք պատճառվել են մեկ այլ սուր ծակող-կտրող գործիքով:
- Վնասվածքները պատճառվել են մեկ, թե մի քանի սուր գործիքով, եթե այո, ապա ինչ հատկանիշներից ելնելով:
- Կան արդյոք հատկանիշներ, որոնք վկայեն մեկ սուր գործիքի բազմակի ներգործությունների մասին, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Ինչպիսին է վնասվածքների պատճառման հաջորդականությունը:
- Վնասվածքները կարող էր տուժողը պատճառել ինքն իրեն:

Հրազենային վնասվածքների դեպքերում.

- Տուժողին պատճառվել են արդյոք հրազենային վնասվածքներ, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչպիսի (միջանցիկ, կույր, թե շոշափվող):
- Վնասվածքները եղել են գնդակային, բեկորային, թե կոտորակային:
- Վնասվածքները պատճառվել են արդյոք հատուկ նշանակության գնդակով, եթե այո, ապա ինչ հատկանիշներ են վկայում այդ մասին:
- Տուժողին քանի հրազենային վիրավորում է պատճառվել, որտեղ են տեղակայվել հրազենային գնդակային մուտքի և որտեղ ելքի վնասվածքները, քանի մուտքի և քանի ելքի վնասվածքներ են առկա և ինչպիսին են դրանց փոխդասավորվածությունը:
- Վնասվածքներից որն է պատճառվել առաջին կրակոցից:
- Վնասվածքները պատճառվել են մեկ, թե մի քանի հրազենային զենքերից արձակված կրակոցներով:
- Վնասվածքները պատճառվել են ավտոմատ կրակահերթով, թե առանձին կրակոցներով:
- Ինչպիսի հյուսվածքներ և օրգաններ են վնասվել հրազենային գնդակային վիրավորման շրջանում՝ վերքայի խողովակի ընթացքով, ինչպիսին է եղել կրակոցի ուղղությունը:
- Ինչ տրամաչափի զենքից /երից/ արձակված կրակոցներով են պատճառվել հրազենային վնասվածքները:

- Ինչպիսին են եղել կրակոց/ներ/ արձակողի/ների/ և տուժողի փոխադարձ դիրքերը հրազենային վնասվածքները ստանալու պահին:
- Ինչ հեռավորությունից են պատճառվել հրազենային վնասվածքները:
- Հրազենային վնասվածքները տուժողը կարող էր արդյոք պատճառել ինքն իրեն, թե՝ ոչ:
- Առկա են արդյոք այնպիսի հատկանիշներ, որոնք վկայեն, որ գնդակը վնասվածքները պատճառելուց առաջ անցել է որևէ արգելքի միջով, թե՝ ոչ:
- Կան արդյոք գազային ատրճանակից կամ անգնդակ փամփուշտով կրակոցի արձակման հատկանիշներ (վնասվածքային փոփոխություններ), թե՝ ոչ, եթե այո, ապա վնասվածքները քանի կրակոցի հետևանքով կարող էին պատճառվել:
- Հայտնաբերված վնասվածքները կարող էին պատճառվել պայթունի հետևանքով, եթե այո, ապա ինչպիսի հատկություններ է ունեցել պայթուցիկ սարքը:
- Պայթուցիկ սարքի նկատմամբ ինչ հեռավորության վրա և ինչ դիրքում է գտնվել տուժողը պայթյունի պահին:
- Ըստ տեղակայությունների և առաջացման մեխանիզմի՝ համապատասխանում են արդյոք տուժողի հագուստների և մարմնական վնասվածքները միմյանց, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչ պատճառով *(սույն հարցը առաջադրելիս նպատակահարմար է նշանակել համալիր դատաբժշկական և հագուստների քրեագիտական փորձաքննություն):*

- Կան արդյոք այնպիսի հատկանիշներ, որոնք վկայեն վնասվածքները ստանալիս պայթյունի օջախի և տուժողի միջև պատնեշի առկայության մասին:
- Տուժողի վնասվածքները կարող էին առաջանալ կոնկրետ դեպքում ներկայացվող դեպքի վայրում և հանգամանքներում:

Մեխանիկական շնչահեղձության դեպքերում.

- Արդյոք տուժողի մահը վրա է հասել շնչահեղձության հետևանքով:
- Մեխանիկական շնչահեղձության որ տեսակից է վրա հասել մահը (կախումից, օղով խեղդումից, ձեռքով կամ ձեռքերով խեղդումից, շնչուղիների փակումից փափուկ առարկաներով, որովայնի և կրծքավանդակի սեղմումից, ջրահեղձումից, թե շնչուղիների փակումից օտար մարմնով):
- Արդյոք մահը վրա է հասել կախումից, թե կախումը տեղի է ունեցել հետմահու, եթե այո, ապա որն է հանդիսացել տուժողի մահվան պատճառը:
- Ինչպիսի բնույթ և տեղակայություն ունի տուժողի պարանոցի շրջանի ճմլման ակոսը (փակ, ընդհատվող, հորիզոնական, վերել, միակի, երկակի և այլն):
- Տվյալ դեպքում տեղի է ունեցել կախում, թե խեղդում օղով:
- Դիակը որքան ժամանակ է գտնվել կախված վիճակում:
- Ելնելով ճմլման ակոսից, պարզել օղի բնույթը:

- Արդյոք մահը վրա է հասել ձեռքով կամ ձեռքերով խեղդելու հետևանքով, եթե այո, ապա ինչ հատկանիշներ են վկայում այդ մասին:
- Խեղդումը կատարվել է մեկ, թե երկու ձեռքերով, եթե մեկ, ապա աջ, թե ձախ ձեռքով, պարանոցը սեղմվել է մեկ, թե բազմակի անգամ:
- Արդյոք մահը վրա է հասել կրծքավանդակի և որովայնի սեղմման հետևանքով, եթե այո, ապա նկարագրել հնարավոր մեխանիզմը:
- Արդյոք մահը վրա է հասել օտար մարմնով շնչառական ուղիների փակումից, եթե այո, ապա ինչ առարկայով և կան արդյոք հատկանիշներ, որոնք մատնանշեն, որ օտար մարմինը տուժողի շնչուղիներ է մղվել մեկ այլ անձի կողմից:
- Կարող է արդյոք տուժողի անօգնական վիճակը (հիվանդություն, հարբածություն և այլն) նպաստել օտար զանգվածի (օրինակ փսխման մասսաների) անցմանը շնչուղիներ:
- Արդյոք մահը վրա է հասել ջրահեղձումից, թե ջրում մահը վրա է հասել մեկ այլ պատճառից, եթե այո, ապա ինչպիսի *(ջրահեղձման դեպքում տվյալ ջրում ջրահեղձման հնարավորության հաստատման համար անհրաժեշտ է փորձաքննությանը տրամադրել նաև տվյալ տեղանքի ջրից փորձանմուշ՝ դիատոմային պլանկտոնների նույնականացման համար)*:
- Արդյոք տեղի չի ունեցել դիակի գցում ջրի մեջ, եթե այո, ապա որն է հանդիսացել տուժողի մահվան պատճառը:

- Կարող էր արդյոք որևէ պատճառ նպաստել ջրահեղձմանը (վնասվածք, հարբածություն, հիվանդություն և այլն), եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Տուժողի մոտ առկա է արդյոք ողնաշարի և/կամ ներքին օրգանների վնասվածքներ, եթե այո, ապա այդպիսիք կարող էին առաջանալ ջրի վրա ցատկելու կամ ընկնելու հետևանքով:
- Որքան ժամանակ է դիակը գտնվել ջրում *(սույն հարցի առաջադրման դեպքում փորձագետին անհրաժեշտ է ներկայացնել տեղեկություններ ջրի ջերմաստիճանի, ջրային տարածքի բնութագրի, դիակի հայտնաբերման ժամանակի, ջրից հանելուց հետո դիակի զննության արդյունքների վերաբերյալ և այլն):*
- Ինչպիսին է ջրից հանված դիակի վրա հայտնաբերված մարմնական վնասվածքների պատճառման մեխանիզմը, կարող էին արդյոք այդպիսիք առաջանալ դիակի ջրում գտնվելու ընթացքում կամ տուժողի մարմնի ջրի մեջ ընկնելու կամ ջրից հանելու հետևանքով:
- Ելնելով դեպքի հանգամանքներից կարելի է արդյոք համարել, որ մահը վրա է հասել ներշնչվող օդում թթվածնի քանակի պակասից *(եթե ենթադրվում է նման մեխանիզմով մահվան մասին, ապա անհրաժեշտ է հետազոտել դիակի հայտնաբերման միջավայրի օդում թթվածնի պարունակությունը):*

Էլեկտրահարությունների կասկածի դեպքերում

- Արդյոք տուժողի մահը վրա է հասել էլեկտրահարությունից, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչ տեսակի էլեկտրա-

հարությունից է մահը վրա հասել (տեխնիկական, թե մթնոլորտային):

- Մարմնի որ հատվածն է կոնտակտի մեջ մտել հաղորդչի հետ, որի հետևանքով տեղի է ունեցել էլեկտրահարությունը:
- Ինչ դիրքում է գտնվել տուժողը էլեկտրահարության պահին:
- Տուժողի մարմնի որ շրջանով է անցել էլեկտրական հոսանքը (որն է հանդիսացել հոսանքի անցման ուղին):
- Մաշկածածկույթների էլեկտրոնիշերի շրջաններում կան արդյոք մետաղացման հետքեր, որոնք վկայեն հաղորդչի մետաղական կազմի մասին:
- Տուժողի վնասվածքները կարող էին առաջանալ կոնկրետ դեպքում ներկայացվող դեպքի վայրում և հանգամանքներում:

Այլ ֆիզիկական գործոնների ազդեցության կասկածի դեպքերում

- Արդյոք մահը վրա է հասել այրվածքներից, թե ջերմային ազդեցությունը տեղի է ունեցել հետմահու:
- Ինչի հետևանքով են առաջացել այրվածքները՝ բոցի, տաք հեղուկի, թե գազերի ազդեցությունից:
- Կան արդյոք դիակի վրա այլ արտաքին ներգործության հետքեր:
- Արդյոք մահը վրա է հասել օրգանիզմի գերտաքացման հետևանքով, եթե այո, ապա ինչ հատկանիշներից ելնելով, եթե ոչ, ապա որն է հանդիսացել տուժողի մահվան պատճառը:

- Դիակի վրա հայտնաբերված վնասվածքները (վերջույթների ոսկրերի, կողոսկրերի կոտրվածքները, գանգի ճաքերը, գանգի խոռոչի արյունազեղումները և այլն), կարող էին արդյոք հանդիսանալ բարձր ջերմաստիճանի ազդեցության հետևանք, թե այդպիսիք առաջացել են այլ մեխանիզմով:
- Արդյոք մահը վրա է հասել ցրտահարությունից, թե՝ ոչ, եթե այո, ապա ինչ հատկանիշներից ելնելով:
- Կարող էին արդյոք տվյալ դեպքում ցրտահարությունից մահվան վրա հասնելուն նպաստել որևէ կոնկրետ գործոններ, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Արդյոք հայտնաբերված վնասվածքները (գանգի ոսկրերի ճաքերը և այլն) հանդիսանում են ցածր ջերմաստիճանի ազդեցության հետևանք, թե այդպիսիք ունեն առաջացման այլ մեխանիզմ:

Թունավորման կասկածի դեպքերում

- Արդյոք տուժողի մահը վրա է հասել թունավորումից, եթե այո, ապա ինչ նյութից է առաջացել թունավորումը:
- Ինչ քանակով է ընդունվել (ներմուծվել) թունավոր նյութը և ինչ վաղեմությամբ:
- Ինչ եղանակով է տուժողի օրգանիզմ ներմուծվել թունավոր նյութը (ստամոքս-աղիքային տրակտով, թոքերով, անվնաս մաշկածածկույթով, թե ներարկման ձևով):
- Նպաստել են արդյոք տուժողին մահվան վրա հասնելուն նրա մոտ առկա հիվանդությունները, օրգանիզմի վիճակը, արտաքին պայմանները, թե՝ ոչ:

- Հնարավոր է արդյոք թունավոր նյութը տուժողի օրգանիզմ հայտնվեր հետմահու (գտնվելու միջավայրից, դիակի հերձման ընթացքում):
- Թունավոր նյութն ընդունելուց հետո տուժողը մինչև մահն ընկած ժամանակահատվածում կարող էր կատարել ակտիվ նպատակաուղղված ինքնուրույն գործողություններ, թե՝ ոչ:
- Ինչպիսին է թունավորման ծագումը՝ բակտերիալ, թե ոչ բակտերիալ:
- Եթե թունավորումը բակտերիալ ծագման է, ապա ինչ խմբի միկրոօրգանիզմներով է այն առաջացել:
- Եթե թունավորումը ոչ բակտերիալ է, ապա այն չի առաջացել արդյոք քիմիական, կենդանական կամ բուսական ծագման որևէ թունավոր նյութի պարունակությամբ սննդի կիրառման հետևանքով:

Կոնկրետ դեպքի բնույթից ելնելով դատաբժշկական փորձաքննությանը կարող են առաջադրվել նաև բժշկական բնույթի տարաբնույթ այլ հարցեր:

Բուժաշխատողների մասնագիտական գործունեության վերաբերյալ գործի նյութերով հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություններ նշանակելիս առաջադրվող հիմնական հարցերի շրջանակը

- Ինչպիսի հիվանդություններ կամ վնասվածքներ են առկա եղել հիվանդի մոտ:
- Ճիշտ և ժամանակին են արդյոք ախտորոշվել առկա հիվանդությունները կամ վնասվածքները, կիրառվել են արդյոք հետազոտությունների բոլոր հնարավորությունները լիարժեք ճիշտ ախտորոշման համար, եթե

ոչ, ապա ինչպիսի հետազոտություններ էր անհրաժեշտ կատարել, որոնք չեն կատարվել:

- Եթե ախտորոշումը դրվել է ոչ ճիշտ կամ ոչ ժամանակին, ապա բուժանձնակազմը ունեցել է արդյոք հնարավորություն ճիշտ ախտորոշման համար:
- Ախտորոշմանը համապատասխան, ճիշտ և ժամանակին է արդյոք կատարվել բուժումը, եթե ոչ, ապա ինչպիսի թերություններ, բացթողումներ կամ սխալներ են թույլ տրվել և ում կողմից:
- Ճիշտ է արդյոք կազմակերպվել հիվանդի բժշկական օգնությունը և սպասարկումը, եթե ոչ, ապա ինչպիսի թերություններ կամ բացթողումներ են թույլ տրվել, ում կողմից և ինչ հետևանքների են դրանք հանգեցրել:
- Վիրահատության կատարման անհրաժեշտություն և ցուցումներ եղել են, թե՝ ոչ, մինչվիրահատական շրջանի բուժմիջոցառումները ճիշտ են կատարվել, թե՝ ոչ:
- Վիրահատությունը ժամանակին և տեխնիկապես ճիշտ է կատարվել, թե՝ ոչ, եթե ոչ, ապա ինչպիսի թերություններ, բացթողումներ կամ սխալներ են թույլ տրվել, ինչ անբարենպաստ հետևանքների են դրանք հանգեցրել:
- վիրահատության ընթացքում կիրառված անզգայացման մեթոդը ճիշտ է ընտրվել, թե ոչ, անզգայացմանը հիվանդը ճիշտ է նախապատրաստվել և անզգայացումը ճիշտ է կատարվել, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ հետևանքների է դա հանգեցրել,
- Ճիշտ են արդյոք կատարվել հիվանդի հետվիրահատական հսկողությունը և բուժումը:

- Եթե բուժումը կատարվել է ոչ ճիշտ կամ ոչ լիարժեք, ապա ինչ հետևանքների է դա հանգեցրել:
- Որն է հանդիսացել հիվանդի մահվան պատճառը:
- Բուժանձնակազմը հնարավորություն ունեցել է արդյոք կանխարգելել հիվանդի վիճակի ծանրացումը և մահվան ելքը, եթե այո, ապա ինչպիսի բուժմիջոցառումներ պետք է կատարվեին, որ չեն կատարվել:
- Հիվանդի բժշկական օգնության և սպասարկման ընթացքում եթե թույլ են տրվել թերություններ և բացթողումներ, ապա կա արդյոք անմիջական պատճառահետևանքային կապ դրանց և անբարենպաստ ելքի միջև:
- Նշանակված դեղամիջոցների կիրառումը հիվանդին ցուցված եղել է, թե այդպիսիք եղել են հակացուցված, եթե այո, ապա կոնկրետ որ դեղամիջոցը /ները/:
- Ճիշտ են ընտրված արդյոք դեղամիջոցների դեղաչափերը, կիրառման հաճախականությունը, զուգորդումները և բուժման տևողությունը:
- Հիմնավորված է եղել արդյոք կիրառված բուժման մեթոդը, թե ակարելի էր ընտրել այլ ավելի էֆեկտիվ և անվտանգ բուժման մեթոդ:
- Ինչն է հանդիսացել հիվանդի առողջությանը պատճառված վնասի կամ մահվան վրա հասնելու հիմնական պատճառը՝ հիվանդության, կամ վնասվածքի ծանրությունը, թե բժշկական օգնության և սպասարկամ ընթացքում թույլ տրված սխալները, թերությունները և բացթողումները:

- Պատշաճ ձևով են արդյոք լրացվել հիվանդի վերաբերյալ կազմված բժշկական փաստաթղթերը, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ խախտումներ են թույլ տրվել:
- Հիվանդի բժշկական օգնության և սպասարկման ընթացքում (հետազոտման, ախտորոշման, բուժման և բժշկական օգնության կազմակերպման) եթե թույլ են տրվել թերություններ, բացթողումներ կամ սխալներ, ապա դրանց արդյունքնում հիվանդի առողջությանը վնաս պատճառվել է, թե ոչ, եթե այո, ապա ծանրության ինչ աստիճանի *(սույն հարցն անհրաժեշտ է առաջադրել բժշկական օգնության և սպասարկման ոչ մահվան ելքով դեպքերում):*

Կոնկրետ դեպքի բնույթից ելնելով դատաբժշկական փորձաքննությանը կարող են առաջադրվել նաև բժշկական բնույթի տարաբնույթ այլ հարցեր:

§ 2.19. Դատակենսաբանական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- արյուն,
- սերմնահեղուկ,
- թուք,
- քրտինք,
- մեզ:

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- հեղուկ արյան խմբային պատկանելիության որոշում,

- արյան առկայության հաստատում, նրա տեսակային և խմբային պատկանելիության որոշում, համեմատական հետազոտության իրականացում,
- սերմնահեղուկի առկայության հաստատում, նրա տեսակային և խմբային պատկանելիության որոշում, համեմատական հետազոտության իրականացում,
- քրտինքի առկայության հաստատում, նրա տեսակային և խմբային պատկանելիության որոշում, համեմատական հետազոտության իրականացում,
- թքի առկայության հաստատում, նրա տեսակային և խմբային պատկանելիության որոշում, համեմատական հետազոտության իրականացում,
- մեզի առկայության հաստատում, նրա տեսակային և խմբային պատկանելիության որոշում, համեմատական հետազոտության իրականացում:

Փորձագետին առաջադրվող հնարավոր հարցերի շրջանակը

- Փորձաքննության ներկայացրած իրեղեն ապացույցի վրա տեղակայված կասկածելի հետքը արյուն է թե՝ ոչ /սերմնահյութ, թուք, քրտինք, մեզ/:
- Եթե այո պատկանում է մարդու, թե կենդանու:Եթե կենդանու որոշել տեսակը:
- Ինչ խմբային պատկանելիություն ունի: Պիտանի է համեմատական հետազոտության, թե՝ ոչ: /թուք, քրտինք, մեզ/:
- Հանդիսանում են արդյոք հայտնաբերված և առգրավված օբյեկտները կենդանիների մազեր:

- Առաջարկվող կրող առարկաների վրա կան արդյոք կենդանիների մազեր:
- Հայտնաբերված մազերը եթե կենդանու մազեր են ապա որոշել կենդանու ցեղը (տեսակը):

ԴՆԹ-նույնականացման փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- ԴՆԹ պարունակող միջավայրի (մարդու օրգաններ և/կամ հյուսվածքներ կամ դրանց կտորներ, կենսաբանական ծագման իրեղեն ապացույցներ՝ արյուն, թուք, մեզ և այլն):

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- ԴՆԹ նույնականացում,
- վիճելի հայրության, մայրության որոշում:

§ 2.20. Շինարարատեխնիկական փորձաքննություններ

Փորձագիտական հետազոտման հիմնական օբյեկտները՝

- Նախագծման, շահագործման, քանդման, վերակառուցման, քանդման և կառուցման փուլերում գտնվող շենքերը, կառույցները, շինությունները, ինժեներական կառուցվածքները, դրանց համալիրները, դրանց հետ ֆունկցիոնալ կապված հողատարածքները,
- բազմաբնակարանային շենքերում գտնվող բնակարանները, տարածքները, բնակելի տները և դրանց հողատարածքները շինությունների կոնստրուկտիվ տարրերը,

- նախագծանախահաշվային փաստաթղթերը, շինարարական կապալի պայմանագրերը, իրականացված աշխատանքների վերաբերյալ կազմված կատարողական, ծածկված աշխատանքների և փորձարկման ակտերը,
- իրականացված շինարարական աշխատանքների բնույթը, ծավալը, որակը և դրանց կատարման համար անհրաժեշտ շինանյութերը,
- ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվ ակտերը, ստանդարտները, տեղեկագրերը, հրահանգները,
- անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների ամբողջությունը, անշարժ գույքին հասցված վնասվածքները, դրանց բնույթը և առաջացման աղբյուրները,
- քրեական և քաղաքացիական գործերում առկա փաստաթղթերը և տվյալները, որոնք չեն պահանջում իրավական գնահատում

Փորձագիտական հետազոտման հիմնական խնդիրները՝

- Շենքերի, շինությունների կառուցման, վերակառուցման, վերանորոգման աշխատանքների համապատասխանության պարզում նախագծերին, տեխնիկանորմատիվային փաստաթղթերին,
- անշարժ գույքի և բաժնեմասերի գնահատումը, անշարժ գույքի վարձավճարի չափի որոշում, բաժնետերերի միջև անշարժ գույքի բաժանման, բաժանքների տարանջատման և բաժանման տեխնիկական հնարավորության պարզում,
- անշարժ գույքի տեխնիկական վիճակի որոշում, անշարժ գույքին հասցված վնասվածքների հետևանքով

պատճառված վնասի, դրանց առաջացման պատճառների և աղբյուրների որոշման հետ առնչվող հարցերը:

Փորձաքննությունների ընդհանրացված տեսակները

- Անշարժ գույքից (բնակարաններ, առանձնատներ այլ անշարժ գույք օբյեկտներ) առանձին գույքային միավորի առանձնացման հնարավորության հետ կապված փորձաքննություններ
- Անշարժ գույքի օգտագործման համար սերվիտուտի և սահմանափակումների առաջացման հետ կապված փորձաքննություններ
- Անշարժ գույքի պետական գրանցման, կադաստրային տվյալների և փաստացի օգտագործվող անշարժ գույքի (հողամաս, շենք-շինություններ) տվյալների միջև անհամապատասխանությունների, ինչպես նաև անշարժ գույքի հետ կապված տիրապետման իրավունքների այլ խատումների փորձաքննություններ
- Պետական և համայնքային բյուջեի ֆինանսավորմամբ, պետական կարգավիճակ ունեցող ներդրումներով իրականացված և իրականացվող քաղաքաշինական-շինարարական ծրագրերի հետ կապված փորձաքննություններ
- Մասնավոր ներդրումներով իրականացված քաղաքաշինական և շինարարական ծրագրերի հետ կապված փորձաքննություններ
- Շենք-շինությունների, կառուցվածքների ինժեներական ցանցերի և մայրուղիների տեխնիկական վիճակի հետազոտության հետ կապված փորձաքննություններ

- Քաղաքացիական, քրեական ապահովագրական գործերով անշարժ գույքին պատճառած վնասի հետ կապված փորձաքննություններ (հրդեհ, ջրալցումներ, կլիմայական բնույթի ազդեցություններ, տեխնոգեն տարբեր պատճառներով առաջացած, տեխնիկական վիճակի վատթարացում կամ շահագործման, օգտագործման պայմանների նվազեցում և սահմանափակում)
- Կառուցապատման, բնակավայրերի հաստատված գլխավոր հատակագծերի ժամանակավոր գործող հողօգտագործման սխեմաների, պահանջների ապահովման փորձաքննություններ, քաղաքաշինական գործող նորմերի կիրառման և ապահովման հետ կապված փորձաքննություններ
- Շինարարատեխնիկական աուդիտ կապված ներդրումների արդյունավետության հետ, նախագծողի կամ կապալառուի առաջարկների հիմնավորվածության վերլուծություն

Ընդհանրացված տեսակի փորձաքննությունների կատարման ընթացքում պարզաբանվող հանգամանքների շրջանակը:

- Ազատ, տարբեր նպատակային նշանակության հողամասերի առանձնացումներ:
- Կառուցապատված հողամասերի, շինությունների առանձնացումներ (բնակելի, հասարակական, արտադրական և այլ շենք շինություններ) :
- Բազմաբնակարան շենքերի բնակարանների առանձացումներ:

- Առանձնացման համար անհրաժեշտ որոշակի վերակառուցման-վերահատակագծման շինարարական աշխատանքների բնութագրում, ծավալների և անհրաժեշտ ծախսերի հաշվարկում:
- Անշարժ գույքի օգտագործման, շահագործման, պահպանման, խոչընդոտող քաղաքաշինական-գույքային իրավունքների խախտման պատճառների առաջացման, առկայության հանգամանքների վերլուծություն:
- Սերվիտուտի և սահմանափակումների պայմանների սահմանում և այն հիմնավորված լինելու հանգամանքների վերլուծություն:
- Հողամասերի համադրումներ:
- Շենք-շինությունների, կառույցների ներքին և արտաքին համադրումներ:
- Լիազոր մարմինների կողմից անշարժ գույքի իրավունքների ճանաչման որոշումների համապատասխանությունը օրենսդրությանը:
- Ինքնակամ (պետական գրանցում չունեցող) օգտագործվող հողամասերի հետ կապված խնդիրներ:
- Ինքնակամ շինարարության իրականացնելու կամ պետական գրանցում չունեցող շենք-շինությունների հետ կապված խնդիրներ:
- Ժառանգության իրավունքի իրագործման հետ կապված խնդիրներ:
- Քաղաքաշինական գործունեություն իրականացնող՝ կառուցապատող-պատվիրատու, կապալառու, նախագծային, քաղաքաշինական տեսչության, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնողների

գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին:

- Կատարված շինարարական աշխատանքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, կապալի պայմանագրին կամ կատարման ենթակա պայմանագրային՝ ծավալաթերթին:
- Փաստացի կատարված շինարարական աշխատանքների ծավալների և պայմանագրային-նախագծային ծավալների համադրում, ինչպես նաև աշխատանքների դիմաց կատարված վճարումների ըստ փաստացի կատարված աշխատանքների համեմատական վերլուծություն:
- Կառուցված և շահագործման ընդունված օբյեկտների քաղաքաշինական, տեխնիկական բնութագրերի ապահովման վերլուծություն:
- Քաղաքաշինական ծրագրերի նպատակային և ներդրումային հիմնավորվածության վերլուծություն:
- Պայմանագրով նախատեսնված ծավալներից ավել իրականացված, կամ լրացուցիչ իրականացված շինարարական աշխատանքների գործող օրենսդրության համապատասխան իրականացնելու վերլուծություն, և այդ աշխատանքների կատարման անհրաժեշտության տեխնիկական հիմնավորվածության վերլուծություն:
- Ընդունման – հանձնման կատարողական ակտերում չընդգրկված շինարարական աշխատանքների ծավալների արձանագրում և այդ աշխատանքների արժեքի հաշվարկում պայմանագրային առկա գների շրջանակներում, կամ շինարարական աշխատանքների արժեքի

հաշվարկում նորմատիվային ակտերով սահմանված կանոնակարգի համաձայն:

- Գնումներիի գործընթացով նախագծային, շինարարական աշխատանքների կատարման պայմանագրային պարտավորությունների պատվիրատու-կապալառու կողմերի կողմից ապահովման վերլուծություն:
- Կառուցապատման (նոր օբյեկտների շինարարության) ընթացիկ և կապիտալ վերանորոգման, վերակառուցման-վերահատակագծման, շինարարական աշխատանքների իրականացում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:
- Աշխատանքների տարանջատումը ըստ նոր կապիտալ շինարարության, վերակառուցման, կապիտալ-ընդացիկ վերանորոգման չափորոշիչների համաձայն:
- Առանց քաղաքաշինական ծրագրային և թույլատրող փաստաթղթերի, սահմանված կարգով կնքված կապալի պայմանագրի առկայության, կատարված աշխատանքների ծավալների և գործող գներով նրանց արժեքների վերլուծություն:
- Կատարված շինարարական աշխատանքների դիմաց վճարումների համեմատական վերլուծություն:
- Իրականացված աշխատանքների տեխնիկական բնութագրերի վերլուծություն, օբյեկտների որպես ամբողջականություն տեխնիկական հետազոտություն:
- Շինարարական աշխատանքների կատարման, կապալի պայմանագրով սահմանված պատվիրատու-կապալառու կողմերի պարտավորությունների ընթացիք և ամբողջական կատրման վերլուծություն:

- Պատվիրատու-կապալառու կողմերի պարտավորությունները մեկ անձի շրջանակում համատեղման պայմաններում կատարված շինարարական աշխատանքների ձևակերպման-փաստաթղթավորման, ծախսերի և նյութածախսի ձևակերպման տեխնիկական և արժեքային վերլուծություն:
- Կառուցապատման ծրագրերի շահագործման ընդունման համապատասխանությունը գործող քաղաքաշինական օրենսդրությանը:
- Շենք-շինությունների ընդհանուր տեխնիկական վիճակի գնահատում:
- Շենք-շինությունների առանձին կառուցվածքների և տարրերի վնասվածության գնահատում, բնորոշում առաջացման պատճառների պարզաբանում:
- Սեյսմանվտանգության և կայունության բնութագրերի և հուսալիության գնահատում:
- Հուսալիության վերականգնման հնարավորության և նպատակահարմարության որոշում:
- Բազմաբնակարան շենքերում, կենցաղային բույթի, ներքին ինժեներական ցանցերի ոչ ճիշտ օգտագործման պատճառով բնակարաններին, բնակարանների առանձին տարրերին տեխնիկական վնասվածության բնութագրում և ծավալների արձանագրում:
- Նախկին վիճակի և շահագործման նախկին վիճակի շահագործման պայմանների վերականգնման համար պահանջվող շինարարական աշխատանքների որոշում և այլ աշխատանքների կատարման արժեքի հաշվարկում:

- Առանձնատներին, տնտեսական և այլ նշանակության շենք-շինությունների բնական, տեխնոգեն և երրորդ անձերի որևէ գործողության պատճառով հասցրած վնասի բնութագրում, տեխնիկական վիճակի բնութագրում, նախկին վիճակի վերականգնման համար պահանջվող շինարարական աշխատանքների սահմանում և նրանց կատարման արժեքի հաշվարկում:
- Պետական կամ համայնքային գույքին ինժեներական ցանցերին, բարեկարգման օբյեկտներին հասցված վնասի բնութագրում:
- Շինարարության իրականացման ընթացքում շինարարական աշխատանքների կազմակերպման և կատարման կանոնների խաղտման հետևանքով օբյեկտներին կամ հարակից շենք-շինություններին հասցրած վնասի տեխնիկական բնութագրի որոշում և վերականգնման համար պահանջվող շինարարական աշխատանքների սահմանում:
- Շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունների բնութագրում և նրանց առաջացման պատճառների որոշում (նախագծային շեղումներ, անորակ աշխատանքներ և այլն):
- Հողամասերի նպատակային, գործառնական և օգտագործման պահանջների ապահովման հարցադրումներ:
- Կառուցապատման վերաբերվող պետական և համայնքային մարմինների ընդունած որոշումների համապատասխանությունը գործող օրենսդրությանը:
- Կառուցապատման համար տրամադրված հողամասերի տրամադրման գործառույթների ընթացքում հո-

ղային և քաղաքաշինական գործող օրենսդրության ապահովում:

- Կառուցված կամ կառուցվող օբյեկտների առկա քաղաքաշինական միջավայրում տեղակայման գործող նորմերին համապատասխանությունը:
- Նախնական պայմանավորվածության կամ պայմանագրով նախատեսված արժեքների ավելացման հիմնավորվածության փորձաքննություններ:
- Ներդրումների արդյունավետության և նպատակային օգտագործման փորձաքննություններ և տեխնիկա-տնտեսական տվյալների վերլուծություն:
- Քաղաքաշինական ծրագրերի ընդհանուր ելակետային հիմնավորվածության փորձաքննություններ:

Փորձագետին առավել հաճախ առաջադրվող հարցերի շրջանակը

- Հնարավոր է արդյոք հողամասից առանձնացնել գույքային միավոր՝ բաժնեմասի չափի համապատասխան պահպանելով հողամասի նպատակային և գոռծառնային նշանակությունը:
- Հնարավոր է արդյոք անշարժ գույքից առանձնացնել առանձին գույքային միավոր (միավորներ) ըստ համասեփականատերերի բաժնեմասերի:
- Հնարավոր է արդյոք բնակարանից առանձնացնել առանձին գույքային միվոր (միավորներ) առանց գույքին էական վնաս պատճառելու:

- Հնարավոր է արդյոք բնակարանից առանձնացնել առանձին գույքային միվոր (միավորներ) համասեփականատերերի միջև փոխհամաձայնության հիման վրա:
- Գույքային միավորներից առանձին գույքային միավորների առանձնացման համար ինչ բնույթի և ծավալի շինարարական աշխատանքներ պետք է կատարվեն, աշխատանքների կատարման համար պահանջվող ծախսերի հաշվարկով:
- Առկա են արդյոք գույքի օգտագործման համար հարկադիր սերվիտուտ կիրառել այլ գույքային միավորների նկատմամբ:
- Ինչ պատճառներով են առաջացել գույքային միավորի օգտագործմանը խոչընդոտող հանգամանքները:
- Սերվիտուտի և սահմանափակումների առաջադրված պահանջները հիմնավորված են գործող օրենսդրության պահանջների և նորմերի համաձայն:
- Առկա է արդյոք հարակից հողամասերի միջև համադրման հանգամանքը:
- Պարզել հողերի համադրման առաջացման պատճառները:
- Ինչ պտճառներով է փաստացի տիրապետման մեջ գտնվող հողամասի տարածքը տարբերվում պետական գրանցման փաստաթղթերով ներկայացված տվյալներից:
- Առկա է արդյոք տարբեր սեփականատերերին պատկանող շենք-շինությունների միջև համադրման և գույքը ոչ հիմնավորված օգտագործման հանգամանքը:

- Լիազոր մարմինների կողմից տրված որոշումների համաձայն հողամսերի և շինությունների նկատմամբ իրավունքների տրամադրումը բխում է գործող օրենսդրության պահանջներին:
- Լիազոր մարմինների կողմից ընդունված որոշումների հետևանքով խախտվել է անձերի կողմից իրենց տիրապետման տակ գտնվող գույքից օգտվելու պայմանները:
- Փաստացի տիրապետման ներքո գտնվող անշարժ գույքից (հողամաս, շենք-շինություն) որն է համարվում պետական գրանցմամբ ճանաչված անշարժ գույք և որքանն է համարվում պետական գրանցում չունեցող ինքնակամ գույք:
- Անշարժ գույքի շինարարություն իրականացնելու կամ նախկինում իրականացնելը համապատասխանում է այդ բնագավառը կարգավորող օրենսդրական և նորմատիվային պահանջներին:
- Անշարժ գույքի տիրապետումը փաստացի վիճակում համաատասխանում է ժառանգության իրավունքով սահմանված պահանջներին:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում պահպանվել են արդյոք քաղաքաշինական նորմերի պահանջները:
- Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և հեղինակային հսկողության գործառույթները և փաստաթղթային ձևակերպումներն իրականացվել են համապատասխան նորմատիվային ակտերով սահմանված կարգերին համապատասխան:

- Նախագծա- նախահաշվային փաստաթղթերի կազմը համաձայնեցումը և հաստատումը, փորձաքննությունն իրականացվել են գործող օրենսդրությամբ սահմանված կարգերին համապատասխան:
- Փաստացի կատարված շինարարական աշխատանքները համապատասխանում են նախագծային բնութագրերին և ծավալներին:
- Փաստացի կատարված աշխատանքները համապատասխանում են գնումների գործընթացով հաստատված և պայմանագրին կից ծավալաթերթ-նախահաշվին:
- Փաստացի կատարված շինարարական աշխատանքները և կատարողական ընդունման-հանձնման ակտերով ներկայացված ծավալների համեմատական համադրում:
- Որքան է կազմում փաստացի կատարված աշխատանքների պայմանագրային արժեքը ըստ ծավալաթերթ-նախահաշվի ընդունված միավոր արժեքների և ծավալների տարբերության առկայության դեպքում (ավել կամ պակաս) որքան է կազմում ավել վճարված գումարը կամ պակաս վճարված գումարը:
- Քաղաքաշինական ծրագրի իրագործման արդյունքում կառուցված օբյեկտը համապատասխանում է նախագծով նախատեսված շահագործման և օգտագործման տեխնիկական բնութագրերի ապահովման տեսանկյունից:

- Շինարարության ընթացքում կատարված ծավալա-հատակագծային փոփոխությունները հիմնավորված են թե՝ ոչ:
- Շինարարության իրականացման ընթացքում ինչ ծավալի աշխատանքներ են իրականացվել նախագծով նախատեսնված և պայմանագրով սահմանված ծավալներից ավել (կամ պակաս):
- Նախագծով չնախատեսնված աշխատանքների իրականացումը կատարվել է համապատասխան պայմանագրային պայմանների, նախագծային լուծումների փոփոխությամբ:
- Լրացուցիչ աշխատանքների կատարումը հիմնավորված է, թե՝ ոչ:
- Լրացուցիչ աշխատանքների վճարումը իրականացվել է գործող օրենսդրությանը համապատասխան, թե՝ ոչ:
- Ընդունման-հանձնման կատարողական ակտերում չընդգծված, սակայն փաստացի կատարված շինարարական աշխատանքների արժեքի որոշում՝ հիմք ընդունելով պայմանագրով հաստատված աշխատանքների միավոր արժեքները:
- Ընդունման-հանձնման կատարողական ակտերում չընդգծված փաստացի կատարված աշխատանքների արժեքի հաշվարկում քաղաքաշինության բնագավառում կիրառվող նորմատիվային կարգերին համապատասխան:
- Քաղաքաշինական գործունեության մեջ ներգրաված կողմերի (կառուցապատող, պատվիրատու, կապալառու, հսկողություն իրականացնող, նախագծային կազ-

մակերպություններ, օբյեկտի ընդունում իրականացնող մարմիններ) կողմից իրենց լիազորությունները և պարտավորությունները իրականացվել են գործող օրենսդրության պահանջների համապատասխան:

- Քաղաքաշինական գործունեության մեջ ներգրաված կողմերի կոցղմից ոչ պատշաճ իրենց պարտավորությունները կատարելու պատճառով հետևանքների սահմանում:
- Քաղաքաշինական ծրագիրը իրականացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան (սահմանված կարգով հատատված նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, ճարտարապետա-հատակագծային առաջադրանք, շինարարության թույլտվություն և այլ թույլատրող քաղաքաշինական փաստաթղթեր):
- Կատարված շինարարական աշխատանքները իրականացվել են նախագծային պահանջներին համապատասխան:
- Քաղաքաշինական ծրագիրը իրականացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան (սահմանված կարգով հատատված նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, ճարտարապետա-հատակագծային առաջադրանք, շինարարության թույլտվություն և այլ թույլատրող քաղաքաշինական փաստաթղթեր):
- Կատարված շինարարական աշխատանքները իրականացվել են նախագծային պահանջներին համապատասխան:

- Սահմանված կարգով և բովանդակությամբ պայմանագրի բացակայության դեպքում կատարված շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկում ըստ քաղաքաշինության ոլորտի համար սահմանված շինարարական աշխատանքների արժեքը գործող գների հաշվարկման կարգի համաձայն:
- Փաստացի կատարված շինարարական աշխատանքների ծավալների որոշում այդ աշխատանքների համապատասխանությունը նորմատիվատեխնիկական պահանջներին:
- Առանց սահմանված կարգով հաստատված պայմանագրային գնի կամ աշխատանքների միավոր արժեքների, փաստացի կատարված շինարարական աշխատանքների արժեքի որոշումը գործող գների որոշման կարգի համաձայն:
- Ելակետային անհրաժեշտ տվյալների բացակայության դեպքում կառուցված շինարարական օբյեկտների արժեքի հաշվարկումը խոշորացված գների կիրառման կարգով:
- Պատվիրատուի կողմից կապալառուին վճարված գումարները համարժեք են փաստացի կատարված աշխատանքների ծավալներին և արժեքներին:
- Շինարարական աշխատանքների համար օգտագործված շինանյութերը համապատասխանում են նախագծով տրված բնութագրերին:
- Կատարված շինարարական աշխատանքների բնութագրերը համապատասխանում են նախագծով նախատեսնված պահանջներին:

- Քաղաքաշինական ծրագերի իրագործման ընթացքում պատվիրատու- կապալառու կողմերը ապահովել են պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը, և նրանց ոչ պատշաճ կատարման դեպքում ինչ հետևանքներ են առաջացել
- Կատարված շինարարական աշխատանքների փաստաթղթային ձևակերպումները կատարվել են գործող օրենսդրությանը սահմանված կարգով:
- Կատարված շինարարական աշխատանքների արժեքների ձևավորումը և ծախսերի իրականացումը հիմնավորված է, թե՝ ոչ:
- Անշարժ գույքը (շենք-շինություններ, կառուցվածքներ) ինչ աստիճանի վնասվածության աստիճան ունի:
- Շենք- շինությունների առանձին կոնստրուկտիվ կառուցվածքները այլ տարրերն ինչ տեխնիկական վիճակում են գտնվում:
- Շենք-շինությունների ընդհանուր տեխնիակական վիճակի և նրա առանձին կառուցվածքների տեխնիկական վիճակի վատթարացումը ինչ պատճառներով է տեղի ունեցել:
- Շենք-շինությունների սեյսմոանվտանգության և կայունության գնահատում:
- Ինչ անհրաժեշտ աշխատանքներ պետք է կատարվեն շենք-շինությունների սեյսմոկայունության կամ տեխնիկական վիճակի վերականգնման համար, և այդ աշխատանքների նպատակահարմարության և հիմնավորվածության բնորոշում:

- Ներքին ինժեներական ցանցերի ոչ ճիշտ օգտագործման պատճառով բնակարանի ներքին կառուցվածքներին հասցրված վնասը ինչ ծավալներ է կազմում և վնասի տեխնիկական բնութագրերի սահմանում:
- Ինչ տեսակի և ծավալի շինարարական աշխատանքներ է անհրաժեշտ կատարել նախկին վիճակի վերականգնման համար:
- Որքան է կազմում նախկին վիճակի վերականգնման համար պահանջվող շինարարական աշխատանքների արժեքը հաշվարկում:
- Անշարժ գույքին հասցրած վնասվածությունը ինչ ծավալներ է կազմում և տեխնիկական վիճակի վատթարացման բնութագրերի սահմանում:
- Անշարժ գույքի կառուցվածներին նախկին վիճակի վերականգնման համար ինչ ծավալի և տեսակի շինարարական աշխատանքներ են պահանջվում:
- Անշարժ գույքի տեխնիկական վիճակի վերականգնման համար պահանջվող շինարարական աշխատանքների համար ինչ ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ կամ այդ աշխատանքների ինչ արժեք կունենան ընթացիկ գներով հաշվարկման դեպքում:
- Կառուցապատման համար տրամադրված հողամասերի վերաբերյալ որոշումները համապատասխանում են քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին:
- Կառուցապատման համար տրամադրված հողամասերն օգտագործվել են ըստ իրենց նպատակային և գործառնական նշանակության:

- Կառուցապատման համար տրամադրված հողամասը և նրա վրա իրականացվող կառուցապատման աշխատանքները համապատասխանում են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին:
- Կառուցված կամ կառուցվող օբյեկտների շինարարությամբ ապահովված են քաղաքաշինական միջավայրի փաստացի վիճակում ճարտարապետական կառուցապատման նորմատիվային պահանջները:
- Քաղաքաշինական ծրագրերի ընդհանուր տեխնիկական և ներդրումային նախատեսված ծավալները համարժեք են ծրագիր իրագործողի ելակետային տվյալներին և պահանջներին, և այդ ծրագրերի ընդհանուր հիմնավորված լինելը: